



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

1-	Ա. ԱԼԻՔԵԱՆ .....	Բանաստեղծութիւններ
13-	Ն. ՁԱՐԽՈՒՏԵԱՆ .....	Մահապարտը
22-	Փ. ՃԵՐԱՆՆԱՆ .....	Բարձունքներուն
22-	»           » .....	Ես արդեօք ո՞ւր կը մնայի
23-	»           » .....	Խոհակայծ
25-	ՇԱՀԱՆԴՈՒԽՏ .....	Ապու Իլիաս
36-	Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ .....	Մանիշակային
36-	»           » .....	Նրբ դուն կու գաս
37-	»           » .....	Հակասութիւններ
38-	Գ. ԱՔԷԼԵԱՆ .....	Աննա հարսը
51-	Գ. ԳՈՅՈՒՆԵԱՆ .....	Pneuma
52-	»           » .....	Հեկատէ
55-	Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ .....	Փրոֆ. Յովհաննէս Զէքիանանի հետ
74-	ՄԱՐՈՒՇ .....	Անգլիական արդի բանաստեղծութիւնը
88-	ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ .....	Յառաջաբան
93-	* * * .....	Մշակութային կորուստ մը
94-	Ժ. ՂԱՐԻՊԵԱՆ .....	Պ. Սնականի «Ժնջպէս Հայհոյեմ...»ը
97-	Յ. ԿԱՐԱՊԵՆՏ .....	Ժիրայր Աթթարեանի «Վերջը... յաջորդ- ողջ» գիրքը
103-	* * * .....	Մշակութային լուրեր

---

Կողքի խորհրդասպասկեր՝ **ՌՌԲԵԲՏ ԷԼԻԲԵԿԵԱՆԻ**

---

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍԻԻ

ԼԱ. ՏԱՐԻ 3-4 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 1992 ՊԵՅՐՈՒԹ

### Ա ԱԻԲԵԱՆ

#### ՆՈՅՆՈՒԹԵԱՆ ԸՂԶԱՆՔ

Կեանքը՝ խար ու խոտի մի սրընթաց հրդեհ  
Քամիների հովտում, իսկ դէմը՝ մութ թառուտ...  
Ահ, կարեմա՛լ կորգել գեթ վայրկեաններ պատեհ  
Եւ լուռ, որդիական հլուքեամբ օր աուր  
Խոստովանել հողին, թէ ինքն արդար է միշտ,  
Եթէ ծիլով անգամ չի սփռուել սեմիդ:

—Հո՛ղ, հո՛ղ, որ երկնքից անելի ես հնչել  
Եւ ծով ու ովկիանից առանել ես գոռ,  
Թէեւ լսում ես, երբ թէկուզ մանրիկ մի ծեղ  
Դառնում է մեծ միջիդ շշմշալիք հսկող,  
Որ շուրջդ աստղերի, ինչպէս վարդ ու հասկի,  
Պայծառութիւնն ես բռն հիմուն՝ մուշկ ու մետաքս,  
Եւ չես թողնում, որ հէ՛ք մրջիւնն անգամ պասքի,  
Արեւներիդ ներքոյ արիւն-բրտիմբ մտած՝  
Հո՛ղ, հո՛ղ, ասա՛, փրկի՛չ, ասա՛, միա՛կ գթած,  
Կեանքն այս՝ խար ու խոտի հրդեհն այս սրընթաց,

12000

JUN 2010

Դա՛շն է կամֆիդ բոցին եւ ձուլուա՛ծ է նրան,  
Թէ՛ Բո ամենալոյս յտարոյկից դուրս ցայտած  
Մի մղեղ է կայծի, մի կիսայրեա՛ց ծղան:

**ՄԱՆԿՈՒԹԻՒՆ**

Ո՛չ վախերի վարմի պրկումն է նուագում,  
Ո՛չ հիացֆի հաւքերի տարմը մանկութեան.  
Լսի՛ր, ինչո՛ւ իմ մէջ կապոյտ մի աւագուտ  
Աւելի է յուրթի, Բան արտ ու անդաստան,  
Ուր անձրեւներն են միշտ շաղում լոյս ու լագուր,  
Եւ տարածում են Բամիներ, ինչպէս արկեան  
Արօտներում՝ գառնուկներու հօտն ասմագուն:

Ո՛չ կածաններն են ճապաղում տարակուսոտ,  
Ո՛չ հետքերի թեթեւ դրոշմը մանկութեան.  
Լսի՛ր, ինչո՛ւ ջնջումների Բարաբոսով  
Ձի տափանում իմ գիւղակի անձուկ ճամբան,  
Որ ժայռերում մերթ մազլցի, մերթ սողէսող  
Հագի՛ւ էլնի դարը վերջին, եթէ նրան  
Ձեռք չմեկնի առաջին հիւղն իր պարտէզով:

Ո՛չ ժամերն են կեանքի վտիտ կոնից Բաղած,  
Ո՛չ էլ օրերն ու տարիները մանկութեան.  
Լսի՛ր, բոցի թափահարմամբ մի աբաղաղ  
Ժամանակի թառիմ այգն է երգում միայն՝  
Այգաբացի բխումն ու փառքն անշամանդաղ,  
Ցրցըբնելով իր շուրջ բարակ մոխրի նման  
Լոյսում լուծուած ամենայն մութ ու մթնշաղ:

**ԿՈՒԺԵՐ**

Կուժն աղբիւրի ճամբին կը կուտրուի:  
Առած



Մենք մեր կուժերն ենք կուտրում ոչ թէ ճամբին աղբիւրի,  
Այլ անանուն բրուտի ձեռքից հազի՛ւ ընդունած,

20552-246 digitised by A.R.A.R.@ 141-2001

Երբ որ յախում յոյգերի պերախմանը գերի՝  
Գարնանագայր գետեր ենք ընդմշարում մեր դիմաց:

Ահ, մեր դիմաց, եւ ոչ իսկ մեր ոտքի տակ, մեր կողքին,  
Որ մեր բուտերը գոնէ, սափորների պէս անթուրծ,  
Մխրնէինք նրանց մէջ, չերկիւղելով, թէ հոգին  
Զառիթափին գոյութեամ չի ոտոցի գէթ մի ուրց  
Մեր հրակէզ մատներից քամուած կուց ու կաթիլով:

Եւ գնում ենք առխարխափ աւագուտում մեր ներքին  
Պարսաւորուած մեղուի պէս, որ հարսնօրէն կայքելով,  
Ողկուզօրէն կառչելով մի ծեր ծառի խոնջէնքին,  
Սարսըռում է, անփեթակ ամայքներից վախեցած,  
Մինչ բրուտը անանուն, նստած դուրգի դէմ բարի՝  
Ձեռքերի մէջ կաւարոյր շրջշրջում է մի խեցաւ  
Իր կուծերից, կոտըրուած ոչ իսկ նամբին աղբիւրի:

#### ԼԵՌՆՈՏ ԳԻՒՂՆ ԱՅՍ...

Լեռնոտ գիւղն այս ամբողջ իր վաղեմի վանքի  
Նախապաշարմամբ է ապրում օրն իր կարծես...

Տես կածանն այս ճապուկ, որ բերում է հանգիստ  
Փոթորկօրէն բնդուն անդունդներ ու բերծեր,  
Երբ վանքին է մի պահ հաւասարում հեռուստ,  
Տագնապում է յանկարծ ու երկմտում ու դեռ  
Սեղմունելով լերան զարիթափին ժեռուտ,  
Խաչ է հանում արագ, ինչպէս ժամուոր մի ծեր,  
Եւ երկիւղած մտնում մի գիւղամերձ լորուտ:

Տարածութիւնը, ուր փեթակում է մեղուն,  
Եւ սագեր են վայրի սուգում սաղմոսօրէն,  
Ղօղանջների զամբիւղ-խոյակներ է պեղում,  
Ինչպէս ծուխ ծիրանի եւ վաղմջուց ցորեն:

Տներն, ինչպէս սոնու աշնանային կոներ,  
Ամէն այգաբացին հայեացքներով խորշկէն  
Սպասում են լոխ, որ մէկ բերան գոնէ  
Աւանդութեան հեռուից շողեր «Զարթիւ» երգեն:  
Իսկ երբ մութն է հագիւ լցնում բակ ու գոմեր,  
Նրանք յուշիկ փակում ու մնջում են մէկէն,

Քանզի արեւային ժամացոյցի միակ  
Աչքում շաղում են ողջ շրջակայքն ու մարդիկ,  
Եւ նա անգոր արդէն նշելու ժամն յտակ՝  
Իր սլաքն է հակում վարսանդի պէս վարդի,  
Սպասելով ինքնին տների հետ համակ,  
Որ գունէ մէկ բերան շողեր երգեն «Ձարթիք»,  
Մինչ կը մտնեն ծուար քարէ իր կոպի տակ  
Ժամերն օրուայ, ինչպէս ծիծեռնակ ու տորդիկ:

#### ԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Կար ժամանակ որ ունէի ես կայուն  
Ոստղի նման կապտակարկառ մի թախիծ,  
Որ մտածման ու յոյզի մէն մի թռչուն  
Թայրտալով իր թռիչքն էր թողնում ինձ:

Հիմա էլ ինձ այցելում են ապաքէն  
Յոյզ ու խոհի տարմահաւ ու ապոնակ,  
Սակայն գուցէ վարմն է արդէն ծակտակէն,  
Որ չի պահում թախիծն իր որսը բռնած:

Եւ ես փախչում եմ հովի պէս ծագէ ծագ:

#### ԱՀԱ ՔՈՒՆԸ ՆՈՐԷՆ

Լ.Ս.ԻՍ

Ահա բունը նորէն մշուշօրէն գոցեց  
Դէմքիդ ծիծաղախիտ կղզու բացերն ամէն:  
Այդ ի՞նչ, ի՞նչ աղօթքով վանեմ քեզնից գուցէ,  
Ինձ դրժելու եկած երազի քաջք ու հէն:

Տարտարոս է պեղում բունըդ գիշերն ի բուն  
Եւ դարձնում է քեզ անհուպ Երիդիկէ,  
Ստիպելով, որ ես յաւարի խուլ ոգուն  
Ովտեմ եւ ամէն ուխտ իսկոյն արշտկեմ:

Ու հաւատամ այսօր, վաղը, երէկ, այսօր,  
Թէ իջնելով հնչուն քնիդ սանդուղքն ի վար,  
Կը գգամ մութըդ նոյնքան բնակելի ու նոր,  
Ինչքան դրսում ծագող պնդովի լոյսն օրուսյ:

### ՏԱՐԻՔ

Երբ որ տարիքը, պոկուած թոյլի նման ժանգատը,  
Մի ջրհորի մածուցիկ տղամախիսում է կարծես,  
Արդէն քո օրը ոչ թէ տանուտէր է ու տնտես,  
Այլ տարանցիկ մայրուղու իջեանում մի եկուոր:

Քո սեփական հողն արդէն ծառիդ թափած խաշամի  
Մահովն անգամ չի սնում, զլանալով բռնն իսկ քեզ,  
Եւ մանկութիւնն է թում մի հեռաւոր մերկ պարտէզ,  
Որ ծփծփում էր ծաղկանց մի տարաշխարհ հեամի:

Սի՛րտ, սի՛րտ, որ քո խաւարում, ինչպէս մի խոյ գաւառում,  
Պաշտպանում ես ողջ մարմնով բոցը մումիդ մարմրուն,  
Ահ, ի՛նչ սաստիկ է փչում ժամանակի ցուրտ քամին:

Ժքնքում է բոցըդ դեռ, սակայն պատրոյզը անգամ  
Երկմտում է, թէ արդեօք նրա ծխոտ ծխարումին  
Ի՛նքն է դեռ հոյզ հասցրնում, մերկանալով յարածամ:

### ՆՈՅՆ ԲԱՆՏԻ ԿԱՐՕՏ

Թողէ՛ք, որ ծնունեմ թէկուզ հացի տակ  
Փոթը սփռոցի կոկելու համար,  
Որ, ըստ մեր նախնեաց, քաջքերն են ի չար  
Ցանում, որ խախտեն տան անդորրը տա՛հ:  
Թողէ՛ք, որ ծնունեմ իբրեւ հեզ մի սէզ,  
Որպէսզի յիշեմ գէթ մի միջատի  
Ծիրը թռիչքի, յիշեմ մի բզէզ,  
Որ գնդասեղիմ չորանալու պէս,  
«Կարմիր գրքի» մէջ գուցէ նարնատի  
Վաղը, ահ, վաղն իսկ՝ յախտեմնապէս:

Թողէ՛ք, որ մրգի մութ կորուսեան մէջ  
 Մոլորուած գէթ մի կորիզի սիրոյն,  
 Յանուն մի կանչի, որ դէմք է փնտռում  
 Փակուելու, ինչպէս բեղմնատը անէջ,  
 Եւ դեռ սոխակի բոյնի պէս թափուր  
 Մէկ բառի, թէկուզ մէկ բառի համար  
 Ծնունդ ես, քայլեմ դէպի արեւմար  
 Օրերիս շրշուն տերեւաթափում:

### ՀՐԱԺԵՇՏՆԵՐ

Հրածեշտներ, որ կարծես թէ դարձաք միայն  
 Մի հեռատը նոնաստանի սօսափ ու հով,  
 Ես ձեզ ինչո՞վ փոխարինեմ գէթ մէկ վայրկեան,  
 Մայրամուտները ձեր բոլոր՝ ի՞նչ այգեբով:

Ծառն իր մրգի տեսիլով է մեղմում ծաղկի  
 Հրածեշտի թախիծը լուրթ, ասին՝ ալիքով:  
 Ձեռներըս իմ ձեռները չեն, որ մերթ ծագի  
 Այնտեղ մի դող, ձեր գրկումները ոգեւով:

Եթէ քայլում եմ տակաւին ու չեմ գայթում  
 Տարիների տարափի տակ՝ որքո՞նկ ասպետ,  
 Ուրեմն դեռ շփոթում եմ մի շուրփ, մի տուն  
 Ձեր ստուերի, մեր երագի՞ր դղեակի հետ:

### ՎԱՐԱՆՔ

Բայց ո՞վ գիտէ. մեր մէջ հեշտա՞նքն է ծորում,  
 Թէ՞ տառապանքը խունկ խորիսխն աստղերի.  
 Դալարաւէ՞տ ավերմ ի վար, թէ՞ վայրի  
 Քերծերի դէմ է գուպարում մեր առուն:  
 Եւ ո՞ր ջուրն է ըմպում մեր հողն ախորժով՝  
 Փայտափեռեկ շի՞թը, թէ՞ ցօղն երկնատը,  
 Իսկ ա՞յլ է մեր հատապտուղը, երբ որ  
 Ածուն նրա դառնում է խոր մի խորշում:



Ի՞նչ երկբայտ եմ խորհուրդներն արդարեւ,  
 Որ մեր հովիտն են լիացնում գոյութեան.  
 Թուով է, թէ նրանց ծաղիկը միայն  
 Դիպուածո՛վ է ծառերը մեր զարդարել:

### ՄԻ ԿՆՈՋ

Բնակարը դէմքիդ, ուր մեղուներ են յածում,  
 Հպանցելով վարդերին ու թառելով ակացուն,  
 Թափուր ու լուռ է, ինչպէս երկինքն այն, որ իր ծոցում  
 Նոր է դրել ճանապարհ թռչունների վերջին չուն:

Միջնադարեան տաղերի սիրատենչիկ ու թախծուն  
 Սոխակն այնտեղ չի դառնում վարդի վարար տարվածուն,  
 Մերթ կռունկներ են միայն բարձր-բարձր թեւածում  
 Եւ մերթ իջնում են, գուցէ տեսնելով լուռ մի արցունք:

Եւ դարձաբձում է այնտեղ մանուածապատ մի կածան,  
 Որ չի յիշում, թէ ովքեր իր վրայով անց կացան,  
 Չբողնելով, որ խտն իր աչք բանայ գէթ ու հասնի

Մինչեւ ավերը ծիծղուն այն լճակի գեղանի,  
 Որ արբունքի խրտուֆից հագիւ ելած, ահ, քանի՜  
 Մանուկներ են նուրիացել, սուգուն ի քանի՜ պատանի:

### ԼՃՆԿԻ (1)

Ինչպէս եթէ թառտներ խուլ աղմկեն,  
 Թօթափելով սաղարթն իրենց բովանդակ,  
 Այդպէս խշշաց, արձակեց բիր յովատակ  
 Գարնանային առաջին ջաղրը մէկէն:  
 Իր ծառն ի վեր սուրաց սկիւռն ու մտաւ

1.- *Լճնկի*. - Մանկական խաղ, որ կը բաղկանայ գետնին վրայ գծուած սանդ-  
 դաճեւ բառակուսիէ մը, ուր յատկապէս աղջնակները մէկ ոտքի վրայ  
 ուստոստելով քարի կամ աղիւսի պզտիկ բեկոր մը կը մղեն դէպի խոր-  
 շերը: Եթէ բեկորը դպչի գիծերուն կամ դուրս գայ բառակուսիէն, խաղը-  
 դը կը պարտուի: Ճրանսերէն՝ *marcèle*:

Փչակէն ներս եւ մեծ, ներմակ սունկի պէս  
Դնչիկն իր դուրս հանած՝ դիտեց, ունկնդրեց  
Արհաւիրքն այս՝ ահիւ, դողիւ, երկմտած:

Բողկուկ ու թեւ քրջեցին թիւ թիթեռներ,  
Եւ ջրորդանը լորձնաշուրթ ջրվիժեց,  
Արբելով սեւ մայթին վրայ կաւինէ  
Լընկի մը, գոր կարծես արեւն էր բաներ,  
Ոստայնի պէս խորշկէն՝ մէջէն նիւղերուն,  
Ուր կը խխմէր աղիւսի փերթ մը, վրան  
Ոստոստիւնը ժապաւէնի մը շուշան,  
Կարն վարտի՛ի մը բացսփումը սիրուն,  
Հրնիւններու, ճիչերու վանկ ու ծուէն  
Եւ դեռ նայուածք մը լի ջաղքի շամբուտով,  
Նայուածք մը մերթ համակերպիկ, մերթ վրդով,  
Նայուածք մը թաց՝ գոց փեղկի մը ետեւէն:

#### ԱՍՏՂԻԿ

Երբ խարոյկներից թէ՛ ծործոր, թէ՛ սար  
Գարնան գիշերում լոյս հագան ու հուր,  
Հայ կտրիններից մէկն հծծեց.- Տեսա՛յ:  
Միւսները, երկմիտ, շշմջացին.- Ո՛ւր:

Բայց խարոյկների լոյսից նոյն պահին  
Մէզի վիժակով անջատուեց մի կիրն,  
Ուր Արածանին խորհուրդ էր ու վին,  
Ուր Արածանին բխում էր մէզից:

Բխում էր մէզից, նողփում, փրփրում  
Եւ պղպջում էր մերկ դիցուհու շուրջ,  
Որի մարմինը՝ մի արբշիւս փարում,  
Ջրից երկնելու հեշտանք էր յուշում:

Եւ պոկում էին, Բշում գետն ի վար  
Իր ծղիներից շլացքներ ոսկու,  
Ափի երկայնքին դառնալով Բժուար  
Եւ ծիծղուն կղզեակ՝ ջրի մեղմ հոսում:

Ու այնպէ՛ս էին ծփծփում փողփող  
Կրծքերը, կարծես դիցուհուց բաժան,

Ինչպէս լողալով երամից զատուող  
Մի մարի մրտիմ եւ մի վարուծան:

Տարափում էին վարսերն յորդելակ  
Ու բացում, ինչպէս զազպէնը զազին,  
Ուր պարանոցն էր պաղպաջին համակ,  
Ինչպէս կաղնուտում խոնաւ ցարասին:

Եւ ներբաններից դէպի կոմբ ու պորտ  
Ստուերներ էին անում ելեւէջ  
Ու միշտ, հասնելով բումբերին տարփոտ,  
Խտանում, լցում ցալլ՞ ու ազումէջ:

Եւ լոյստուերոտ, ինչպէս թաց հազնի,  
Ափ ելաւ շտապ հայոց դիցունին  
Ու քայլեց դէպի «Սենեակ Վահագնի»,  
Աչքն Յարդագողի թաց նանապարհին...

Խարոյկներն հանգան: Թէ՛ ծործոր, թէ՛ սար  
Մթնեցին, միւնչդեռ կիրեր լոյս հազա:  
Հայ կտրիներնից մէկն հարցրեց.- Տեսա՞՞ր:  
Միւսներն ակամայ գոչեցին.- Հա՛րկաւ:

#### ՆԱԶԵՆԻԿ

Ասում են, թէ ես գեղեցիկ եմ յոյժ  
Եւ կախելով, երգում եմ ձեռամբ,  
Բայց գեղեցկութիւնս աղէտի վերյուշ  
Դարձաւ ինձ համար, իսկ երգըս վրաս  
Ժողովեց միայն ցիների երամ:

Ասում են, թէ ես այգ եմ, արշալոյս,  
Եւ թէ իմ պարն է մսեղէն աղօթք,  
Բայց այլ ցոլ՞ո՞վ է միթէ նշուլում  
Վերջալոյսը, քան աչքերն այս աղօտ,  
Եւ մի՞թէ հոգոս տաղն ու մեղեդին  
Մարմնիս հեթանոս ծնծղաների դէմ  
Ձեռն հնչում այնքան բարձր ու հեշտին,  
Որ ես խորանիս ծնրադրող չունեմ:

Ասում են... Բայց ես մի հարն եմ միայն՝  
Փողահարութեամբ վարմն ընկած կնգում,  
Որ իր նիգերով, շիթելով արեան  
Փխրած հողում է թափում, սնմում,  
Անիծելով իր ոսկերն ու նամբան:

Եւ վարձակ եմ դեռ՝ չորուկ պատիճում  
Քամուց խշշացող մի սերմ շուշանի,  
Թէպէտ ինձ լոկ այդ ձայնն է շշնջում,  
Թէ մի տեղ հոգիս գուցէ հող ունի՝  
Եւ գարնանային ամպերի մէջ թաց՝  
Մանուկ անձրեւներ, բոյրեր հոլանի:

Եւ աչքերիս դէմ անձրեւ, լոյս ու ամպ  
Եւ ոունցերիս մէջ հողիս բոյրն անծիր՝  
Եշխշում եմ ես սրտով ու ձեռամբ...  
Բայց ո՛վ էլ լինես, արի՛, փարատի՛ր,  
Վարանքըս, վախըս, ահրս վերջապէս,  
Թէ մի օր, ինչպէս տնանկ տարագիր,  
Այս տեսիլով էլ կը կոնծեմ ես...

### ՀՈՒՓՍԻՄԷ

Միայն մի մեծ ծառ՝ մի ստուար կնճնի,  
Որպէս բարեգութ, թիկնաւտ դոկից,  
Ծածկում էր կեանքը լճուած հնձանի  
Քաղաքի, մարդկանց, մեղքերի աչքից:

Այնտեղ, ծնրադիր, երեսուն վեց կոյս  
Աղօթում էին, որ Հոփսիսմէն  
Իր Աստուծոյ մէջ գտնի յրախոյս,  
Գտնի սփոփանք, յոյս ու ասպաէն,  
Երբ վաղը իրեն, բարշ տալով փողոց,  
Տանեն հեթանոս արբային հայոց:

Ներս մտաւ այնժամ ուլունքավանառ  
Կոյսը՝ վերջինը սուրբ ուխտից նրանց,  
Որ խմբի չոր հացն հոգալու համար  
Ողջ գիշեր, հողէ մի կանթեղ վառած՝  
Ուլունք էր յետում, իսկ ցերեկն ի բուն  
Շարում էր նամբին շէն, շուկայ ու տուն:

Բոլորը իրենց գլուխն առան վեր,  
 Ի մի բերելով եւ լաչակօրէն  
 Կապելով իրար աղօթքի ծայրեր:  
 Եւ յանկարծ նրանց աչքի դէմ նորէն,  
 Կարծես ջրի մէջ, ծփծփաց Աստուած,  
 Մի պատառ հացի կերպարանք առած:

Բայց ձեռնունայն էր դարձել վերստին  
 Կոյսը ուխտակից, որ այսօր նաեւ  
 Շուկայ էր տարել այն յուշ-մատանին,  
 Որ Գայանէի սէրն էր խնայել՝  
 Աստուծոյ փառքի լոյսից խստամբեր  
 Խունացած, թօշմած աշխարհիկ մի սէր:

Նա ուլունքներն իր գցեց մի անկիւն  
 Ու նստեց կփռն, խոնջ, թշուառ, փոշոտ:  
 Եւ մէկէն թուաց, թէ այս իրիկուն  
 Խաղողի չանչի թաց, թթուաշ մի հոտ  
 Փչեց աղօթքի բառերից, որ դեռ  
 Լոտ յածում էին հնձանում անտէր:

Ու երբ վեր առաւ գլուխն իր կամաց,  
 Նրա աչքերից նրագի պղտոր  
 Նշոյլի դողով մի հայեացք ծորաց  
 Եւ հպանցելով դէմքերը բոլոր,  
 Սաթի պէս դեղին պսպղաց, յամեց  
 Հոփսիւմէի բիրբրում նամէս:

Հայեացքն այդ կարծես կտտանք էր համակ,  
 Հոգսի պատի դէմ՝ ջղածից բախում,  
 Հայեացքն այդ կարծես սաստ էր, խղճի թակ,  
 Որ սոսկման գանգից տագնապ էր շաղում,  
 Հայեացքն այդ կարծես ձեռք էր անձկալիր,  
 Որ թախանձում էր. «Անսա՛, ընդունի՛ր...»:

Թուաց, թէ մինչ այդ յաջողակ բամին  
 Թիւր գոգաւորեց առագաստ ու ծով:  
 Բայց հրամայեց Տէրն իսկոյն հողմին,  
 Եւ Հոփսիւմէն, ի բաց վանելով  
 Հայեացքն այդ որպէս գայթանքի մի կոշ,  
 Վնոեց վերջնօրէն ու շնչաց. - «Ո՛րջ»:

Նոյն ակնթարթին դիտուեց արբան,  
 Խոր-Վիրապն օձոտ այդ նոյն միջոցին

Սուրբ մկրտութեան դարձաւ առազան,  
Ուր հաւատքի ժեռ ժայրից նետուեցին  
Դարեր, վեհ այրեր ու Աւարայրներ,  
Ջրդեղելով կուռ ոգու մի պատկեր:

Նոյն ակնթարթին հնձանից անայց  
Դէպի Արագած թռաւ մի կանթեղ,  
Ուր երեսուն եօթն անմեղ կուսանաց  
Արին-արցունքն էր լցուած իւղի տեղ,  
Եւ նոյն վայրկեանին մի այր Բաջիմաց  
Վարձագրեց. «Կոյս մի յարժունի տոհմէ,  
Ջի անուն նորա էր Հոփսիմէ...»:

ԱՐՐԱՀԱՄ ԱՂԻՔԵԱՆ

(«ՀԵՁ ԻՐԻԿՈՒՆ» անտիպ գիրքէն)

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

# Մ Ա Հ Ա Պ Ա Ր Տ Ը

(ԳՒՌԻՆ Ա.)

Նահանջող զինիքը կրթոս սիրուհիի մը պէս կը փարէր հսկայ շէնքին սեցած քարերուն, որովհետեւ երկնոս այգարացը սկսած էր պաշարել այդ մութ գանձուածը, որուն ընդերքներուն մէջ, երկաթէ ձողերով վահագակուած՝ մարդիկ կը քաւէին իրենց մեղքերը: Ոմանք՝ արրեցած ժամանակի միօրինակութենէն, մահը կը տեսնէին հետաւոր պարտկի մը պէս, ուրիշներ կ'երազէին անխորհրդիկ հնարքներ կամ աննախընթաց աղէտներ, որոնք պիտի փշրէին իրենց շրթանները եւ խորտակէին զիրենք շրջապատող ամբակուս պարիսպները:

—Մա'րդ էի եւ զրկուեցայ մարդու պէս ապրելու իրաւունքէն,— կը գանգատէր մէկը:

—Երիտասարդ էի եւ անխոհեմ: Եղբայրներս չափըտակեցին իրաւունքներս եւ զիս նետեցին մեղքի եւ անօրինութեան ճամբուն վրայ,— կը յայտարարէր երկրորդ մը:

—Տարուեցայ կեռ ընդ հմայքէն, անոր համար զործեցի ոճիրներ եւ զողջայ գոհարեղէններ: Առաւ գոհարեղէնները, զարդարուեցայ եւ աւելի գեղեցկացայ: Օր մըն ալ փախաւ օրիշ մարդու մը հետ: Զաննք բռնեցի յանցանքի վրայ եւ վրէժս լուծեցի,— կը կրկնէր երրորդ մը:

Բակին մէջահզը, ստուերներու քուրջերով շրջապատուած կառափնաբանը կը ցցէր անհեթեթ կենդանիի իր կմախքը: Սեւեր հագած մարդիկ՝ խմբուած այդ հրէշին շուրջը, երկիւզածութեամբ կը սպասէին զոհին՝ մատուցանելու համար իրենց արիւնոս պատարազը օրէնք կոչուած Մուրիի խորանին վրայ:

Շոտանկիւն գանակը, բարակ լուանով մը զսպուած, կախուած կը մնար իր ուղղանիկ երկու յենարաններուն վերը, կտորուած մահիկի մը պէս: Դահլիճը գայն մաքրած, սրբած ու իւղոսած էր եւ հիմա, ծունկի եկած տախտակամածին վրայ, օճառով եւ խոզանակով կը շփէր արեան չորցած հետքերը:

Հսկայ շէնքին մութ ընդերքներուն մէջ ճայցին յանկարծ զրան մը ժանգոտած ծիւնիկները: Կառափնաբանին շուրջը հաւաքուած մարդիկը սարսուռ մը զգացին իրենց ողնայարին ամբողջ երկայնքին եւ զուրս գալով իրենց կնդ լրջութենէն՝ նայեցան դէպի այն կողմը, ուրկէ կու գար իրարու քսուող ժանգոտած մետաղներուն ճոխնը:

Բայց արդէն հսկայ շէնքին աչքերը սկսած էին լուսատրօսիլ: Իրենց խուցերուն նեղ լուսամուտին առջեւ խռնուած բանտարկեալները կը նայէին բակին կողմը: Քիչ հաքը, հանդիսաւոր պատարազ պիտի մատուցուէր մարդկային օրէնքի եւ արդարութեան:

Վառուող լուսերուն հետ, բանտին հաստ պատերուն ծակոթիկներէն լուսեցաւ թեթեւ շշուկ մը, որ շուտով վերածուեցաւ ազմուկի, դարձաւ ժիւղ ու փոթորիկ ու յանգեցաւ բարբարոս համանուագի մը, որուն կը խառնուէին զայլընթիւ, բարոսութեան եւ զղջումի բացազանութիւններ: Եւ երկու հագար բանտարկեալները սկսան երգել միանգամայն տխուր ու վայրազ երգ մը ի պատի իրենց այն ընկերոջ, որ պիտի մեկնէր դէպի անծանօթ աշխարհ մը, մոլորակը ներկիչ հաք իր կարմիր արիւնով:

Ծուցերէն մէկուն առջիւ, սեւազգեստ մարդոց ուրիշ խումբ մը կը սպասէր: Կար ընդհանուր դատախազը, փաստաբանը, պետական բժիշկը, ոստիկանապետ մը, երկու պաշտօնեաներ եւ զինեալ պահակներ:

Ետտ չանցած, քացուեցաւ խուցին դուռը եւ դուրս ելաւ քահանան: Անոր կը հետեւէր մահապարտը:

Քահանան ծեր էր, մահապարտը՝ երիտասարդ: Անոր աչքերուն կարմրութիւնը ցոյց կու տար, որ ամբողջ գիշերը անքուն մնացած էր, հակառակ իրեն տրուած քնաբեր դեղերուն: Ճամբորդի մը պէս, որ պիտի մեկնի հեռաւոր երկիր մը այլեւս չվերադառնալու համար, ան ուզած էր մէկիկ-մէկիկ ապրիլ կեանքէն իրեն բաժին մնացած վայրկեանները, զանոնք լեցնելով անցեալի ուրախ եւ տխուր միջատակներով:

Ընդհանուր դատախազի ազդանշանին վրայ, խումբը սկսաւ շարժիլ: Երկու պահակներ կը քայլէին առջեւէն: Անոնց կը հետեւէր մահապարտը: Քահանան կը քայլէր անոր աջ կողմէն եւ բնկուած ձայնով մը կ'արտասանէր ննջեցեալներուն յատուկ աղօթքը: Ետեւէն կու գային պաշտօնական անձնատրութիւնները: Անոնք լուռ էին ու տխուր ո՛չ թէ որովհետեւ մարդ մը պիտի մեռնէր իրենց կիրարկած օրէնքներուն պատճառով, այլ անոր համար, որ շատ կանուխէն ելած էին իրենց տաքուկ անկողիններէն եւ այս յաւելեալ լուրջութեան համար ո՛չ մէկ հատուցում պիտի ստանային:

Դէպի բակ տանող միջանցքին երկաթէ դուռը քացուեցաւ եւ թափօրը գտնուեցաւ յանկարծ կառափնարանին առջեւ, որուն վրայ իջած էր թիթեւ մը:

Երիտասարդը սարսուց մինչեւ ոսկորներուն ծուծը, երբ գտնուեցաւ մահուան մեքենային առջեւ եւ զարձաւ քահանային կողմը: Դէպի յախտեմականութիւն տանող ճամբուն սկիզբը, այս ծիրունին կը մնար իբր միակ հարազատը եւ նեցուկը:

Աղջամուղջին մէջ, սեւ խամածիկները անհանգիստ շարժումներ կ'ընէին, կը փոփոխային իրարու սկանչին՝ փարատելու համար գիրենք կրծող անձկութիւնը: Բոլորն ալ բնագոյային վախ մը կը զգային զօրխային այս մեքենային անճոռնի կատային առջեւ, որ հրէշի մը պէս կը կանգնէր շրջափակին կեդրոնը:

Այգը կը պահուէր տուններու զանգուածներուն մէջէն: Պէտք էր անպարեկ եւ կանխել ազգաբազին արշաւը: Ոճրագործները եւ արգարութիւնը չեն արտօրի լոյսէն եւ իրենց արարքները կը գործեն մութին մէջ:

Դուրսը, շրջափակի բարձր պատէն անդին, կեանքը սկսած էր խլրտալ: Ուտեստեղէն փոխադրող ինքնաշարժները սկսած էին երթնելով:

Մահապարտը մտաբերեց դուրսի կեանքը: Այս ժամուն, սրճարանները կը բանային իրենց զանգը: Սոյսահակները կը շտկէին սեղանները եւ աթոռները: Թարմ ֆրուասաններուն եւ խարկուած սուրճին բոլոր կ'առնէր ամբողջ թաղը: Ներս կը մտնէին առաջին յաճախորդները՝ ընդհանրապէս համեստ գործաւորներ...: Կեանքը հոն էր, իրմէ քանի մը մեթր անդին, թանկը պատերուն միւս կողմը, իր քաղցր ու անդիմադրելի հրապուրտով:

Յանկարծ պահակները զինք հրեցին զէպի անճոռնի հրէշին բազուկները: Քնաչրջիկի մը պէս բարձրացաւ փայտէ ստիճանները եւ գտնուեցաւ տախտակամածին վրայ, իր գողցութային զագաթը:

Եւ այս ժամանակաւոր ու ահարկու բեմին վրայ գծագրուեցան երեք սխուէթներ՝ մահապարտը, զահիճը եւ կառափնատը, որուն երախին մէջ կը փայլէր պողպատէ եռանկլին սկուայ մը, որ պիտի տար մահուան սոսկալի համբոցը: Այս երեք կերպարանները կը խորհրդանշէին մարդկային արգարութեան անհուն ողբերգութիւնը:

Քահանան եւ զահիճին օգնականներէն մէկը հետեւեցան մահապարտին եւ տեղ առին տախտակամածին վրայ:



—Վերջին փափաք մը սևի՛ւս յայտնելիք,— պտտաց ձայն մը վարի խաւարէն:  
Մահապարտը կարծեց, որ ձայնը կու գար հեռուներէն եւ նայեցաւ վեր: Իրեն  
աշնպէս թուեցաւ, որ միջոցը լայնցած էր իր եւ կենդանի մարդկութեան միջեւ:  
Կառափնատին կտր ափնոցը բաց էր կրկնուրի փորուած մէկ ալքին պէս, իսկ վերը,  
եռանկիւն դանակը, իր շարագուշակ փալտով, կը բռնարարէր երկիւնքը՝ թրքական  
կիտուած մահիկի մը պէս:

—Անմե՛զ եմ, եւ դուք անմեղ մը պիտի սպաննէք,— պտտաց յուսալով, որ մա-  
հացող գիշերը կրնայ իր ձայնը տանել մինչև վերը, հա՛ն՝ ուր կը բազմի Կատար-  
եալ Արդարութիւնը:

—Այդ խօսքը հարիրը անգամ լսած եմք,— արձագանգեց վարէն նոյն ձայնը,—  
ուրիշ փափաք մը ունի՛ս:

Փափաք մը ունէր անշուշտ, բայց այդ փափաքը խեղճած էին իր մէջ՝ գինք  
բարձրացնելով այս տախտակամածին վրայ: Ինք երիտասարդ էր տակաւին եւ կ'ու-  
զէր մէկ բան միայն՝ ապրիլ...: Ու գիտնալով հանգերէ, որ ձայնը կու գար վարէն,  
ան զուխը վերջուց մարդոց աստղերուն կողմը:

—Ոյ՛նչ,— ազագակեց հեծկտալով,— ոչի՛նչ կը փափաքիմ:  
Վարը, սեւազգեստ մարդոց խումբին մէջ տիրեց խոր լռութիւն, յետոյ լսուեցան  
շուկներ: Յանկարծ նոյն ձայնը կրկին բարձրացաւ.

—Մահապարտը յայտնեց վերջին փափաքը, ուրեմն, դահ՛ի՛ճ, կատարէ՛ պաշ-  
տօնդ...

Դահ՛ի՛ճը երկու ձեռքերով ճնշեց մահապարտին ուսերուն եւ վայն ծուկի բերաւ  
խտուա սախտակամածին վրայ: Այդ երկվայրկեանին երեսասարդը զգաց, որ ինք  
ոչնչութիւն մըն էր, չարիքի շիւղ մը՝ վեց միլիաւ մարդոց անտարբերութեան ան-  
տառին մէջ:

Օգնականներէն մէկը կապեց մահապարտին երկու ձեռքերը եւ սեւ լաթով մը  
խափանեց անոր աչքերը: Հիմա, կը մտար վայն պառկեցնել հորիզոնական տախ-  
տակին վրայ, զուխը մտցնել ակնոցին մէջ ու եռանկիւն դանակը արձակել անոր  
պարանոցին վրայ: Երկու վայրկեանէն ամէն բան վերջացած պիտի ըլլար եւ մա-  
հապարտին զուխը, բաժնուելով մարմնէն, պիտի զլորէր թեփով լեցուն սակափն  
մէջ:

Դահ՛ի՛ճը վերջին անգամ մը ոտուզեց ամէն բան եւ մահապարտին դէմքը դար-  
ձուց կառափնատին կողմը, վայն փորին վրայ պարկեցնելու համար: Արդէն օգնա-  
կանը կառչած էր մահապարտի ոտքերուն, երբ յանկարծ դուռ մը շաւեց հսկայ շէն-  
քին ընդերքներուն մէջ: Դէպի չըջափակ տանող միջանցքին մէջ ստի ձայնի լըս-  
ւեցան եւ համազգեստաւոր պաշտօնեայ մը յայտնուեցաւ հսկայ դրան քառանկիւնին  
մէջ: Ան ազագակելով կը վազէր կառափնատին կողմը: Այնքան շնչասպառ էր, որ  
քստերը գիրար կը հրճակէին կոկորդին մէջ:

—Պարո՛ն տնօրէն, նախարա՛րը...

Վերը, մահուան տախտակամածին վրայ, դահ՛ի՛ճը կը շարունակէր իր գործը:

—Պարո՛ն տնօրէն,— կակաղեց շնչասպառ պաշտօնեան,— ներքին գործոց նա-  
խարարը անձամբ հեռաձայնեց... ան կ'ուզէ ձեզի հետ խօսիլ... ան ըստե, որ պէտք  
է կեցնէք...

Տնօրէնը չհասկցողի պէս նայեցաւ պաշտօնեային երեսը:

—Նախարարը այս ժամուն հեռաձայնեց, որ...

—Գեցնէր գործադրութիւնը եւ իրեն հետ կապ պահէր...

Բանտին տնօրէնը բան մը փոխաց դատարանին ականջին եւ ան, զլուխով  
հաւանութեան նշան մը ընկէ՛լ հաք, պտտաց.

—Դահ՛ի՛ճ, վերէն հրահանգուած է, որ սակափտի գործադրութիւնը ցնոր տնօրէ-  
նութիւն:

Դահլիճը հեռացուց մահապարտը կառափնատէն եւ քակեց ակնակապը: Բանախն անտրեւը վազելով կորուսած էր հսկայ շէնքին ընդերքներուն մէջ: Անոր քացակալութիւնը երկար չտեւեց: Ան շուտով վերագարձաւ եւ հրահանգեց.

— Դահլիճ, մահապատիժին գործադրութիւնը յետանգում է անորոշ ժամանակով մը: Մահապարտը վերագարձուցէք իր խուցը:

Երիտասարդը՝ տարուած մահուան հետ ունենալիք իր ժամագրութենէն, բան մը չհասկցաւ պատահածէն եւ անշարժ մնաց իր տեղը: Յետոյ քնաչըջիկի մը պէս իջաւ վար: Պահակները անմիջապէս շրջապատեցին զինք եւ առաջնորդեցին իր խուցը: Այն ատեն միայն մահապարտը հասկցաւ, որ հոգէտա հրեշտակը ձգած էր իր օձիկը:

Ան կրկին քալեց անհատնում միջանցքներէ, բարձրացաւ աստիճաններ: Խուցերուն զոց դուռներուն ետեւէն կը լսէր բանտի իր ընկերներուն փսփուտքը: Որքա՞ն ուրախացաւ, երբ վերագտաւ իր խուցին չորս պատերը, ուր այնքան տառապած էր: Ենտուցաւ հին մահճակալին վրայ ու երկար շունչ մը քաշեց:

Այդ վայրկեանին իր զլուխը արդէն անշատուած պիտի ըլլար ծարմիրէն: Այդ զագափարը սարսուռացուց իր էութիւնը: Եթէ նախարարը քիչ մը աւելի ուշացած ըլլար, եթէ յրաբեր պաշտօնեան զայլժամ ըլլար աստիճաններուն վրայ, եթէ հեռավարի զիծը խանգարուած ըլլար, այս պահուն ինք երկնցած պիտի ըլլար ո՛չ թէ իր մահճակալին վրայ, այլ՝ հասարակ փայտէ այդ զագաղին մէջ, որ կը սպասէր շրջափակին մէկ անկիւնը:

Խուցին մէջ շատ բան չէր փոխուած. մահճակալը, լուացարանը, պատին ամբարցած քառակուսի տախտակը, որ իբր սեղան կը ծառայէր, իրենց տեղն էին: Միայն իր անձնական առարկաները եւ զիրքերը ծրարուած էին ու զրուած անկիւն մը: Իր մահէն ետք անոնք պիտի յանձնուէին իր ամէնէն ծօտիկ ազգականին: Այդ էր իր ամբողջ ժառանգութիւնը:

Երկար ատենէ ի վեր այս խուցը եղած էր իր աշխարհը: Այսօր, անոր չորս պատերը լուռ էին եւ դուրսի ձայները կը կորսուէին անոր քարերուն ծակիկներուն մէջ:

Հոս կը գտնուէր յանցանք մը քաւելու համար, գոնէ այդպէս ըսած էր դատարարը: Ինք հիմա դարձած էր ուղ մտեալ մը, որովհետեւ, երբ զինք տարած էին խուցէն կառափնարան, բանտի տոմարին մէջ անունը շնչուած էր եւ անոր դէմը գրուած էր մահուան թուականը:

Ծակատակները անորոշ կը մնար: Կառափնարանը տակալին կանգնած էր քակին մէջ եւ դահլիճը կը սպասէր նոր հրահանգի: Մէկ վայրկեանէն միւսը կրնային զինք հանել խուցէն եւ յանձնել մահուան գործիքին:



Այս մտորումները երկար չտեւեցին: Խուցին զուռը կրկին քացուեցաւ եւ բանտապահը զինք հրախրեց հետեւելու իրեն: Գուրսը սպասող չորս պահակները շրջապատեցին զինք: Սովորաբար երբ յանցապարտ մը խուցէն դուրս կը հանուի, անոր ձեռքերը անմիջապէս կը կապեն: Բայց չորս զինեալ պահակներուն ներկայութիւնը աւելորդ կը դարձնէր այդ զգուշութիւնը:

Վանդակապատ ծանր դուռներ կը քացուէին իրենց առջեւ: Կարեցին փախուղիկ նմանող միջանցք մը: Այս փախուղին բանտին կեդրոնական շէնքը կը միացնէր այն թեւին, ուր կը գտնուէին վարչական գրասենեակները:

Բարձրացան աստիճաններ, կրկին քալեցին նրբանցքի մը մէջ, որուն ծայրը կը գտնուէր զոց դուռ մը: Բանտապահը զարկաւ դուռը: Ներսէն լուռեցաւ ձայն մը: Բանտապահը քացաւ դուռը: Ինք եւ զինեալ պահակները մնացին դուրս: Երիտասարդը, ներս մտաւ:

Կը զանուէր ընդարձակ սրահի մը մէջ: Բարձր պատուհաններ գրաւած էին փո-  
ղոցին կողմը նայող պատը: Գեմի կողմը շարուած էին ապակեպատ գրադարաններ:  
Մրահին կեդրոնը, քառանկիւն հսկայ սեղանի մը ետեւը տեղ առած էին հինգ  
անծանօթներ: Երիտասարդը մէկ ակնարկով հասկցաւ, որ անոնք կարեւոր անձնա-  
ւորութիւններ էին:

Բանտին տնօրէնը նստած էր գրան աշ կողմը, փոքրիկ սեղանի մը առջեւ:  
Հինգ անձնավորութիւններուն զեմքերը խիստ էին, բայց ո՛չ խոժոռ: Կեդրոնը  
նստած անձնավորութիւնը կը թղթատէր կարծիր կողքով թղթածրար մը: Երիտա-  
սարդը զուշակեց, որ այդ թղթածրարի պիտակին վրայ գրուած էր իր անունը:

Բանտին տնօրէնը ութի ելաւ, աթոռ մը զետեղեց սեղանէն քանի մը մեթր հե-  
ռու: Կենտրոնի անձնավորութիւնը, որ միւսներէն քիչ մը աւելի տարիքոտ էր, վեր-  
ցուց ակնոցը ու շեշտակի նայեցաւ երիտասարդին աչքերուն մէջ:

—Արման Վանասիան,— քաւ,— 27 Ապրիլ 2010ի նախաձրտիւնը, Ճոն Քե-  
նետի պողոտայի մայթին վրայ, ատրճանակի երեք հարուածներով սպաննած ես  
Թուրքիոյ հանրապետութեան զենպանը: Այս արարքը գործիչ էր, ատրճանակի  
նետած ես զետնի եւ փախուտ տալու ո՛չ մէկ փորձ ըրած ես: Դատարանին առջեւ  
խտտոտկանած ես ոճիւրդ եւ փաստարանիդ արդիւած ես մեղմացուցիչ պարագաներ  
պատրուակիլ: Ինչու՞:

—Փաստարանս կ'ուզէր զիս մահապատիժէն փրկել՝ զիս ներկայացնելով իր  
անհատարակչիս մը, որ տարիներէ ի վեր կը ստապի յաճախանքներէ: Ան ուզեց  
նաեւ իմ արարքիս տալ զգացական բնոյթ մը՝ զայն վերածելու համար սիրային  
ոճիւրի մը: Իբր թէ զենպանը եւ ես կը սիրէինք նայն կիներ, որ զիս լքելէ ետք կե-  
նակցած է զենպանին հետ, եւ ես, ստորուած հիւանդադին նախանձէ, սպաննած եմ  
իմ հակառակորդս:

—Փաստարանդ իրաւունք ունէր: Եթէ չհակառակէիր անոր ռազմավարութեան,  
կ'ազատէիր մահապատիժէն եւ օր մըն ալ զուրս կ'ըլլէիր բանտէն:

—Փաստարանիս առաջարկած այդ զասական եւ շինձու պատճառարանութիւն-  
ները կը նսեմացնէին արարքիս բնոյթը եւ մեծութիւնը: Ես ունէի մեղմացուցիչ  
պարագաներուն զերազոյնը, բայց ան չէր կրնար զիս փրկել մահէն: Հաւանարար  
տեղեակ էր իմ ժողովուրդիս, հայ ժողովուրդին պատմութեան: Հոն պէտք է փնտռէք  
իմ արարքիս մեղմացուցիչ պարագաները: Ի՞մ վկաներս՝ ծեր, կիներ, երիտասարդ եւ  
մանուկ այսօր կ'մտաբ զարձած են եւ կը պտկին անապատի աւազներուն տակ:

—Մենք հոս չենք եկած քաղաքական հարցիւր լուծելու, ոչ ալ վերաբնութեան  
ենթարկելու ոճրագատ ստեանին արձակած վճիռը: Մեզի համար եւ օրէնքին առջեւ  
զուն մահապարտ մըն ես:

—Ձեր օրէնքը ոճիր որակեց իմ արարքս եւ զիս զտտապարտեց մահուան, մինչ-  
զեւ ես գործադրեցի փերագոյն արդարութեան վճիռը: Ես սպաննեցի իմ անմեղ եղ-  
բայրներուս եւ քոյրերուս զահիճներուն ներկայացուցիչը:


—Քաղաքակրթուած մեր աշխարհին մէջ արդիւած է մարդ անհատը գտնել,  
զտտապարտել եւ գործադրել իր արձակած վճիռը: Այդ պաշտօնը կատարելու հա-  
մար նշանակուած են ատեաններ, զատատրներ եւ զահիճներ: Արման Վանասիան,  
եթէ այս վայրկեանիս տակաւին ողջ կը մնաս, այդ կը պարտիս մեզի, այսինքն՝  
մեր կազմակերպութեան: Մահապատիժի գործադրութիւնը առկախուած է, բայց կը  
մնայ ի զօրու: Կատարիւարանը տակաւին կանգուն է, եւ զահիճը կը սպասէ իր զօ-  
հին: Բայց վերջնական լուծումը քեզմէ կախում ունի:

—Ինչպէ՞ս մահապարտ մը կրնայ փոխել իր հակատաղիբը:

—Այդ կը հասկնաս շուտով: Մենք հոս եկած ենք քեզի ներկայացնելու առա-  
ջարկ մը: Եթէ ընդունիս, մահապատիժը պիտի առկախուի մինչեւ քեզմէ մահը:

—Եթէ այդպէս է, ձեր առաջարկը ընդունուած համարեցէք: Այս վայրկեանիս  
կրնամք բան մը մերժել եւ կրթիւ պիտիս երկարել ետանկիւն գանակիլ:

191-2001



— Որեւէ որոշում անելէ առաջ, ականջ դիր մեր ըսածներուն: Թղթածրարդ աչքէ անցուցի՛նք: Մնած եւ Փարիզ, 25 Մարտ 1988ին: Հօրմէ եւ մօրմէ որք եւս Մէկ հատիկ քուրդ կորսնցուցած եւ քանի մը տարի առաջ, Համալսարանին մէջ եղած եւ փայլուն ուսանող մը: Ուսուցիչներդ կը վկային, որ ունիս քննարկող եւ վերլուծող միտք մը: Տիեզերքի կազմութեան եւ կիսաէթերի մասին առաջարկած եւ եզակի եւ յանդուգն տեսութիւններ: Աստղաբնագիտութիւնը ալլեւա զաղտնիք չունի քեզի համար: Եթէ զործած լըլլայիր այդ գաստապարտելի արարքը, այժմ պիտի նկատուէիր աշխարհի ամէնէն խոտմնալից միտքերէն մէկը...

—Այդ օրերուն կը կարծէի, որ գիտութիւնը ամէն բան է եւ անկէ դուրս ոչինչ գոյութիւն ունի: Բայց յետոյ հասկցայ, որ հակառակ իր անշահախնդրութեան եւ օգտակարութեան, գիտութիւնը չէր կրնար փրկել մարդկութիւնը, ա՛յն մարդկութիւնը, որ հազարամեակներէ ի վեր կը տառապի խարխափելով խաւարին մէջ եւ կը փնտռէ լոյս մը: Այդ լոյսը, պարոննե՛ր, կը կոչուի Արդարութիւն, եւ կը պարունակէ ծարր արարածին բոլոր ձգտումները եւ երազները: Այնպէս որ, էթէ կ'ուզէք, որ մեր խօսակցութիւնը շարունակուի, ոճիք մի՛ որակէք արարք մը, որ զործուած է Գերագոյն Արդարութեան անունով:

—Նորէն կը կրկնե՛մ, մենք հոս չենք հաւաքուած քաղաքական հարց մը լուծելու, ալլ՝ առաջարկ մը ներկայացնելու:

—Այն ատեն ինձի ըսէ՛ք, թէ զուք ո՞վ էք եւ որո՞ւն անունով կը խօսիք:

—Մեր խօսակցութիւնը կրնայ երկար տեւել: Տեղ առ աթոռին վրայ: Եթէ կը փափաքիս՝ կրնաս զլանիկ մը ծխել:

Երիտասարդը նստաւ աթոռին վրայ: Բանտին տնօրէնը ելաւ տեղէն եւ իրեն հրամցուց զլանիկ մը:

—Դուն հաւանարար լսած ես ԱՆՋՐՊԵՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ մասին. մենք անոր ներկայացուցիչներն ենք, աւելի ճիշդը՝ այդ կազմակերպութեան ԲՆԱԿԵՑՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ յանձնախումբի անդամները:

—Ես ի՞նչ է այդ կազմակերպութեան առաքելութիւնը եւ նպատակը:

—Ամբողջով ազգերու զործակցութիւնը, եւ լուծում մը գտնել մարդկութեան զոյատեւման եւ բարգաւաճման սպառնացող զտարութիւններուն:

—Մէկ խօսքով՝ ՄԻԱԾԵԱԼ ԱԶԳԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ պէս թատերախումբ մը, ուր ձախողած քաղաքապետներ եւ աշկիբտ գիւանազէտներ ճառեր կը խօսին լաւ մարդուած թութեաններու պէս եւ իրենք գիրենք կը հուշակեն փոքր ու անիրաւուած ազգերու արտոյաններ: Մեր ազնի աշխարհացաւ այդ ճարտար եւ սեռամէջ ատենաբանութիւններէն: Եթէ ձեր կազմակերպութիւնն ալ խօսքերու եւ ճարտասանութեան հողմաղաց մըն է, այն ատեն երթամ ու զուրիս յանձնեմ կառավարութիւն: Դասի՛նք բազմաճառ ընտանիքի հայր է, թող երկար չսպասէ եւ երթայ իր գործին: Հիմա հասկցայ ձեր միտքը: Դուք կ'ուզէք իմ ազգս զրկել արարքիս ապահովելիք նպատէն: Դուք կ'ուզէք մարել այն քոյրը, որ սկսած է բռնկիլ մեր երիտասարդներուն սրտերուն մէջ: Գլխատու՛մս անհանդիստ պիտի ընէ մեր թշնամին: Եթէ մեռնիմ, աշխարհ պիտի իմանայ, թէ ինչո՞ւ սպաննեցի այդ զեսպանը եւ ինձի իրաւունք պիտի տայ: Ձեր նպատակը իմ մահապատիժս տակախել չէ, ալլ զիս անհետացնել է:

—Կը սպասի այս առարկութեան,— ըսաւ յանձնախումբին նախագահը,— ո՛չ, մեր կազմակերպութիւնը թատերախումբ մը չէ, ոչ ալ խօսքերու հողմաղաց: Մենք կը ներկայացնենք աշխարհի տասը մեծագոյն պետութիւնները եւ հետեւարար աշխարհի ամբողջ մարդկութիւնը. քաղաքական հարցերը մեզ չեն հետաքրքրեր: Մենք կ'ուզենք զուրիս հանել մեզի վստահուած առաքելութիւնը: Մենք չենք ուզեր եւ չենք կրնար նահանջնել արարքիդ իմաստը, որովհետեւ ամէն ինչ կատարուած է արդէն: Դուրսի աշխարհին համար, Արման Վանտայիան արդէն մեռած է Թուրքիոյ զեսպանը հաճախեալ ըլլալուն համար: Եթէ ըսածներդ ճիշդ ըլլային, մենք կը միջամը-

աէինք աւելի առաջ: Հիմա քննի պիտի ստանք այս առտուան թերթերը: Չանոնք աչքէ անցար եւ սես, թէ անոնք ի՛նչ կը գրեն քու մասիդ: Անկէ ետք կը շարունակենք մեր խօսակցութիւնը:

Բանտին տնօրէնը բացառ խոշոր պաշտուակ մը եւ անոր մէջէն հանելով արցակ մը օրաթերթեր, սուսա Արժանին:

—Այդ օրաթերթերը մենք արդէն կարգացինք: Բոլորն ալ իրենց ստաշին էջին մեծ մասը յատկացուցած են քեզի: Բոլորն ալ շատ խիստ կը գոնեն քու դէմք արձակուած վճիռը եւ կը մեղադրեն դատաւորները: Անոնք կը խօսին նաեւ հայ ազգին կրած շարժարանքներուն մասին, սպանդներուն մասին, տեղահանութիւններուն մասին:

—Բայց ոչ ցեղասպանութեան:

—Ենդասպանութեան մասին ալ կը խօսին: Եթէ չես հաւատար, կարգա՛ւ Վիպերասիոն» օրաթերթին այս յօդուածը: Պարոն տնօրէն, հանձնէ՛ք ինձի տալ Վիպերասիոն» օրաթերթին այս օրուան թիւը:

Բանտին տնօրէնը պայտասակէն հաննց օրաթերթ մը եւ դրաւ նախագահին առջեւ:

—Ահա՛, ինչ կը գրէ այդ օրաթերթին խմբագրապետը քու մասիդ. «Ճարանակաւ կան արդարութիւնը գոն մըն ալ անցուց թուրքերու կողմէ 1915ին խոզխոզած մէկ ու կէս միլիոն անմեղ մահատակներուն վրայ: Այս անտու, այգարացիք, Արման Վանտալեան կառափնարամ բարձրացաւ մէկ հասիկ դահիճ սպաննած ըլլալուն համար: Անդին՝ իր մէկ ու կէս միլիոն անմեղ եղբայրներուն եւ Բոլորներուն դաւիճները անպատիժ կը մնան եւ կը վայելեն Արեւմտեան երկիրներու յարգանքը եւ բարեկամութիւնը: Այսպէսով, ո՛չ միայն Արեւմուտը, այլեւ ամբողջ աշխարհը մեղաակից կը դառնայ 20րդ դարու անաշխն ցեղասպանութեան: Այդբացէն ի վեր, ո՛չ միայն մասուլը, այլեւ աշխարհի ձախնափիւտի եւ պատկերասփիւտի բոլոր կայանները կը խօսին հայ երիտասարդի մը մասին, որ կհանքը զոհած է վրէժը լուծելու համար իր զարատը ազգին դէմ գործուած անարգարութեան: Ի՛նչ կը սպասէք ասկէ աւելի:

Արման Վանտալեան ուշի-ուշով մտիկ ընելէ ետք նախագահին ընթերցումը, աչք մը նետնց միւս օրաթերթերուն վրայ եւ միտքը հանդարտեցաւ:

—Ես՛տ ուրախ եմ, որ մահէն առաջ տեղեկացայ այս բաներուն: Ես՛տ շնորհակալ եմ, պարոն նախագահ: Ասոր փոխարէն, պատրաստ եմ իմանալու ձեր անաշարկը:

—Մեզի ըսիր, որ աշխարհի մէջ ոնէ մէկը չունիս, ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ եղբայր եւ ոչ քուր: Բայց հաւանաբար ունիս սիրուհի մը, անձ մը, որուն սէր խոտացած ես:

—Այո՛, ունիմ սիրուհի մը, որ ինձի յաւիտենական սէր խոտացած է, կ'սպրի ուրիշ երկրի մը մէջ: Բայց բանտարկուելէս ի վեր ան լուռ կը մնայ: Կը վախնամ, որ իրարու խոտացած մեր սէրը չէ դիմացած այս երկար, ըսենք՝ այս յաւիտենական բաժանումին:

—Մեծ եւ անկեղծ սէրերը չեն ընկրկիր մահուան առջեւ իսկ: Ի՛նչ փաստ ունիս, որ սիրուհիդ քեզ մոռցած է:

—Որովհետեւ բանտ մտնելէս առաջ, ան ամէն շաբաթ կը գրէր ինձի: Տարիէ մը ի վեր անկէ երկուտը մը չեմ ստացած:

—Քիտես, որ ամբաստանակներուն արդիւրուած է դուրսէն որեւէ քան ստանալ: Բանտ մտնելէդ ետք, սիրուհիդ շարունակած է քեզի գրել: Ահա՛ անոր նամակները: Հիմա, քանի մը ժամուան համար պիտի ընդհատենք մեր նիստը: Եստ յոգնած եւ յուզուած կ'երեւիս: Փնա՛ խուցի, քիչ մը հանգիստ ըրէ: Կարգա՛ւ օրաթերթերը, կարգա՛ւ նաեւ սիրուհիդ նամակները: Յետմիջօրէին կը շարունակենք մեր խօսակցութիւնը: Այժմ ցտեսութիւն:

*Նախագահը թղթածրարէն հանեց արցակ ձը եամակներ եւ գանձը երկարեց Արժանին: Գուրը սպասող պահակները դինք տուջնորդեցին իր խուցը...*



«Այս խուցը իմ աշխարհս եղած է երկար ատենէ ի վեր: Այսօր, ամոր պատերը լուռ են եւ սխտոր: Անոնք կը զգան, որ շուտով պիտի կորսնցնեն մտերիմ մը:

Հոս կը գտնուիմ յանգամով մը քանիտ համար. այդպէս ըսաւ դատաւորը, երբ արձակեց իր մահալիւծը: Սակայն ի՞նչ որ ի՞նք ո՞նի կ'որակէ, ի՞նչի համար արարար արարք մըն է:

Հիմա արդարութեամբ համար կը ձկատուիմ ողջ-մեռեալ մը, որովհետեւ, երբ զիս խոցէս հանելով տարիմ կատարիմարան, բանտիմ տոմարիմ մէջ, անունիս սկզբ կարմիր մելամով գրուեցաւ մահուան թուակամը:

Ձեմ գիտե՞ր ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրս: Կառափնարանը տակաւիմ կանգուն կը մժայ բակիմ մէջ եւ դահիճը ինձի կը սպասէ: Ապագայիս ատրե՛ր քաշուած է անորոշութեամբ վարագոյրը, քայց անցեալիս հեռանկարները կը պատկանիմ ինձի եւ ո՛չ ոք կրնայ խափանել անոնց յատկութիւնը:

Անցեալս, ժայս եւ առաջ, դո՛ւն ես, Պերեմի՛ս: Կարդացի բոլոր մամակ-ներդ եւ հոգիս վերացաւ: Կարծես մտած ես դէմս: Խուցս դարձած է վար-բա՛մ դահիճ մը, ուր ներկայութիւնդ կը մտազայթէ, կը շոգշողայ: Երբ մեր նայուածքները իրարու հանդիպիմ, բիբերուք մէջ կը տեսնեմ սիրոյ աղօտ ցոլքերը:

Մտայ էր կեանքիս ուղիմ, երբ յայտնուեցար անակնկալ գարնան պէս: Պերեմի՛ս, բո՛յրս, սիրուի՛ս, աշխարհս քուրաներում մէջ կեանքիս կապարը վերածուեցաւ ռակի՛, եւ միապազաղ ատրե՛սա՝ վարդերով ցանուած պարտէ-գի:

Դուն ինձի համար միակն էիր եւ անգտանելիմ: Հիմա որ իրարմէ բաժնուած ենք ծովերով, ճամբաներով եւ պարիսպնե-րով, մեր սիրտերը իյարու աւելի մօտիկ են, քան երբ կը գտնուէիմք դէմ-յամոյիման:

Քեզմէ հեռացայ, որովհետեւ ուրիշ սիրուի մը զիս կը կանչէր: Գիտե՛ս, դուն շնախանձեցար ամոր, որովհետեւ ան միսէ ու ռակորէ էակ մը չէր:

Ան կը կոշուէր Արդարութիւն: Ան շատ աւելի պահամըկոտ էր, քան ամէ-նէն քմայքոտ կիմը: Անոր սիրահարները պէտք է երիտասարդ ըլլան եւ ան-կեղծ:

Անոնք, որ կը գործեն Գերագոյն Արդարութեան անունով, անպայման կ'իյնան մարդկային արդարութեան ձեռքը: Ասիկա կը ճշմանակէ, որ մոյմ անունը կրող այդ երկու գաղափարները, զիրար կը հակասեն:

Մեր դարատր իրաւունքները եւ սրբութիւնները ոտնակոխուած էին. մեր ազգիմ դէմ գործուած էր զանգուածային եւ անբաւելի ոճիր մը: Ե՛նեմք՝ գո-հերս, ո՛չ միայն անտեսուած էիմք, այլեւ՝ ամբաստանուած հագար յան-ցանքներով, որովհետեւ մեր թշնամիմ գորատր էր եւ յարգուած՝ աշխարհի բոլոր պետութիւններու կողմէ: Ան արոտ աւ ճայն ունէր միջազգային բոլոր ատենաներում մէջ եւ ո՛չ մէկ երկիր կը համարժակէր անկէ հաշիւ պահանջէ:

Համայնական այն անտարբերութիւնը, մեր միլիոնատր մահատակներում ճակատագիրը, ընդվզում եւ գայրոյթ կը ստեղծէր մեր սիրտերում մէջ:

Այդ օրերում, ես ուսանող էի Փարիզի Գիտութեանց համալսարանիմ մէջ: Քանի մը հայ ընկերներով կազմած էիմք խմբակ մը եւ ամէն անգամ, որ ատիքը ներկայանար, մեր շուրջը կը հաւաքէիմք մեզի համակիր օտար ուսա-նողներ եւ անոնց կը բացատրէիմք մեր ազգիմ անցեալը եւ ներկայում:

Երբ համալսարանական ֆունդիւնները վերջացան, մեր խմբակիմ հանդիպումները անլի կանոնաւոր դարձան: Այդ հանդիպումներէն մէկուն ընթացքիմ, մեր ընկերներէն մէկը յայտնեց, որ իր յաջորդ նիստին ՄԱԿի յանձնախումբերէն մէկը պիտի ԲՅՆէր անխրատած ժողովուրդներու հարցը: Ան անեցուց, որ Հայկական Հարցիմ ԲՅՆարկումը մաս պիտի չկազմէր օրակարգին, որովհետեւ թրքական կատավարութիւնը այդ պահանջած էր:

Ուրիշ ընկեր մը անաշարկեց շննդալից արարով մը ցնցել հանրային կարծիքը եւ ստիպել ՄԱԿի յանձնախումբը, որ չսնտեսէ մեր հարցը: Երկար վիճաբանութիւններէ ետք որոշուեցաւ ահաբեկել Փարիզի թրքական դեսպանը:

Այդ պաշտօնը ինծի վիճակուեցաւ:  
Յաջորդ օրը զացի ուսումնասիրելու դեսպանատան շրջակայքը:  
Թրքական դեսպանատունը կը գտնուի Քեմետի պողոտայիմ վրայ: Ամէն ատու, ժամը տասիմ մօտերը, դեսպանը կ'իջնէր ինքնաշարժէն եւ Բայելով կը բարձրանար մուտքի աստիճանները: Ամբողջ մէկ ու կէս վայրկեան, ամ կը մնար կատարեալ թիրախ մը արձակելիք փամփուշտիս:

Զորեկաբար օր մը, զիրք բռնեցի դեսպանատան մայրիմ վրայ: Ընկերներէս մէկը պիտի սպասէր փողոցի մը անկիւնը եւ պիտի միջամտէր, եթէ իրեն Օշան ընէի:

Դեսպանը պիտի ժամանէր հիմզ վայրկեանէն: Քանի մը շարաթ անաջ, այս մարդը չէի ճանչնար: Տարբեր պայմաններու մէջ, պիտի չնկատէի իսկ անոր գոյութիւնը: Զայն չէի ատեր անհատապէս, բայց որովհետեւ ան կը ներկայացնէր այն պետութիւնը, որ կ'ուրանար իր ոնիրները եւ կ'ուզէր մոնաքոքեան անգով ծածկել մեր միլիոնաւոր գոնեռուն յիշատակը, պիտի ենթարկուէր մահափորձի:

Երբ ինքնաշարժը յայտնուեցաւ փողոցիմ ծայրը, դանդաղ Բայելով ըսկըսայ յառաջանալ դէպի դեսպանատան մուտքը: Ինքնաշարժը կանգ անաւ մայրիմ եզերքը...

Ծտեկի դուռը բացուեցաւ: Զեռքս տարի գրպանա: Դուռը իմ կողմս ըլլալով չէի տեսներ իջնուլիմ ամբողջ մարմինը: Վարորդը կանգնած էր մայրիմ վրայ: Ան երկու ձեռքերը երկարեց ներս ու բռնելով աղջնակի մը մէջքէն զայն դրաւ մայրիմ վրայ: Յետոյ յայտնուեցաւ միջիմ տարբերով կիմ մը ու վերջապէս՝ դեսպանը:

Կնոջ եւ աղջնակիմ ներկայութիւնը անգամալուծած էր զիս: Կը վախճայի, որ դեսպանիմ ուղղելիք փամփուշտս կրնար անոնցմէ մէկը վիրատրել կամ սպաննել, թէեւ անոնք երբեք չէին խնայած մեր մայրերը եւ Բոյրերը: Ծս Գերագոյն Արդարութեան գործիքն էի եւ չէի կրնար սխալ թիրախ մը հարանածել:

Երբ ինքզինքնս գտայ, անոնք արդէն մտած էին դեսպանատունէն ներս: Ընկերս ո՛չ մէկ դիտողութիւն ըրաւ: «Եթէ տեղդ ըլլայի, հասանարար ճոյն բանը ընէի», ըսաւ:

Շարաթ մը ետք կատարեցի անախտութիւն: Այս անգամ դեսպանը անանձիմ էր: Երբ, ինքնաշարժէն իջնելէն ետք, կը բարձրանար աստիճանները, ատրճանակը հանեցի գրպանէս եւ արձակեցի մահացու փամփուշտը: Ան չէր գիտեր, որ իր կեանքը շարաթով մը երկարած էր՝ շնորհիւ իր աղջնակիմ եւ կնոջ ներկայութեան:

Փոխանակ նետանալու, մնացի անշարժ: Փողոցիմ մէջ իրարանցում կը տիրէր: Ընկերս կը մնար իր դիրքիմ վրայ եւ ինծի Օշան կ'ըմէր, որ հետանամ: Բայց արդէն ուշ էր»:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Փ. ՃԵՐԱՆԵԱՆ

## Բարձունքներուն

Բարձունքներ կան,  
Ուր բար ու աստղ  
Կը գրուցեն  
Լուսագալի մը շուրթերուն ամմատոյց.

Եւ մտայոյց գազաթներէն  
Շուրթեր կ'իյնան  
Մեր աչքերուն  
Վաղմջական սալաբարիւն,  
Արթնցնելէն  
Յարդագողի ռոմաձայներն սպիտակ...

Երիվար մը  
Եթէ անցնի մրրկայոյց,  
Սմբակներու բոսորձայն թոխչիւն  
Քա՛ր ու քամբա՛ր  
Կ'ալեկոծին.

Ու կ'առկայծի մշեմին,  
Այն կրակոյզ հնագոյն,  
Ջոր դարէ դար սովոր էին  
Ծածկել իրենց սրտերուն,  
Հայոց տիկնայք փափկասուն...

Մի՛թէ բառը շուքն է ծաղկին,  
Այգաբացը՝ խոստովանա՛նքն աստղերուն...

## Ես արդեօք ո՞ւր կը մնայի

Եթէ լեռներն որոշէին  
Ա՛յ անիւի բարձրանալ,  
Ջորերն եթէ սուգուէին



Սալումէի որդան կարմիր շուրթերուն,  
Մեռեալ ծովու սաղմոսները ունկնդրելու,

Ես արդեօք ո՛ւր կը մնայի:

Բարձունքներո՛ւն. –  
Ուր ծիծառը  
Կը սղագրէ  
Վաղնջական փաղափշամբեր ավերուս:

Կտուրներու շուրթէն գաղջ  
Կ'իյնայ նշռլ մը գումայթ՝  
Ծամերուդ ծով հիւսկերուն,

Ուր երեկոն կը բողբոջի ցօղումներէն ծանրախոհ.  
Համբոյրի մը աղաւնաթել գգուանքով՝  
Ես կը լսեմ ոտնաձայնը լուսնակին...

Վիհերո՛ւն մէջ անյատակ. –  
Ուր վարդերու իրիկնաթեք փունջերով,  
Կ'ալեծփին տարածքները մեր աչքերու մթութեան...

Քամիները  
Կը մանկանան  
Մայրամտող քաղաքի մը դռներուն,  
Իրենց արցունքն արտասուելէն  
Մեր գունաթափ այտերուն.  
Յիշատակի քամիները իրենց դէմքը  
Միայն քարին կ'ընծայեն  
Եւ բառերու բիրեղաձայն արձագանգը՝  
Մեր շուրթերուն...

Օ՛, գոյութիւնս միմակ,  
Քայլերուդ խօ՛ղ դղիքդէն կ'արթննայ եւեթն ստուերիս,  
Ուր մերք ընդ մերք մեկնաբանել կը փորձէ  
Անխօս բառերն իմ անգամ...

## Խոհակայծ

Ժամանակի անթուակիր շիրմին ներքեւ,  
Երագիս մէջ ինչո՞ւ համար  
Ննջեցեալը ես կը փնտռեմ տակաւին:

Մի՞թէ այսպէս  
Զգուշացմամբ նշաններ ես կ'որոնեմ՝  
Մեռեալի դէմք՝ ցոյց տալու,  
Այն հեռաւոր մեռելներէն,  
Որոնք չունին յուշապատկեր մը ամգամ:

Նախնադարեան նշույլին տակ աստղերուն,  
Կ'արձանագրեմք  
Թուականներ ծննդեան...

Կը պատահի, որ տերեւ մը  
Յուզավառէ շրթները մեր՝  
Անակնկալ թաւալումն իր եղանակաւորելու:

Հարագատի խաւարամած ներաշխարհէն  
Բիւր տրոփներ մեզի կու գան,  
Գիշերով մը խորհրդաւոր  
Մեր կոպերուն տակ ծածկելու  
Իրենց աստղերն աստանդական...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

# ԱՊՈՒ ԻԼԻԱՍ

Հինդ տարի անցած էր արդէն Մամիրայի ամուսնութենէն, բայց տակաւին կը մնար ամուլ: Լեռուոր ազգականի մը զաւակն էր ամուսինը՝ Ժամիրը, առողջ ու առույգ, բարեհմէ կազմով երիտասարդ մը, հեզ ու հանգարտաբարոյ, կեռճը հանգէպ սիրով տոգորուած: Մամիրա, գեղջկական գեղեցկութեամբ պարմանուհի մը, գեղեցկութիւն մը, որ չէր բացատրուեր սիրուն, գնքոյշ կամ նուրբ հասկացողութիւններով, շաղախուած էր «կարծր» գեղեցկութեամբ մը, զոր կարելի էր անուանել «լեռնային գեղեցկութիւն»... Ժամիրի պէս կարծր, բայց նոյն առանձն փխրուն, ժիրեղային փայլով: Աւերջը կանաչ, գորտխտի բնկորներ ըլլային կարծես, արեւի ճառագայթէն փայլատակող: Դէմքին թուի ու պիւրկ մաշկը կը ցուցար, ինչպէս առուակին շուրերը՝ արեւին ճառագայթներէն ցուցիկ: Զլապիրկ, արագաշարժ, անուական շարժուիւններ լիւնցնող, Ֆիզիքական ամրապինդ կազմուածք մը, որ հեղինակութիւն կը պարտադրէր:

Ամուսինին շահը կը բաւարարէր ընտանիքին որապահակը: Մշակի արդար ու քրտնաշան աշխատանքով արդունաւորուած վաստակ մը, որ զոհունակութիւն կու տար թէ՛ Մամիրային եւ թէ՛ իրենց ծնողքին:

Մամիրա թէնէ կ'սպրէր զիւրին մէջ, գեղջկուհիի խանդով եւ հաւատարմութեամբ՝ զիւրին աւանդութիւններուն եւ անզիր օրէնքներուն հանդէպ, սակայն ներքին բաղանք մը իր մտասեւեուումը կը կեդրոնացներ քաղաքին վրայ: Սըր-

տին սլաքները դէպի քաղաք կ'ուղղուէին: Ամառները, երբ զիւրազանցները քաղաքէն զիւր կը խուժէին, Մամիրա նախանձով կը հետեւէր անոնց կենցաղային առօրեային, անոնց ճշակուած նիստ ու կացին, ու երբ աշունը կը մօտենար եւ քաղաքացիները կը վերադառնային քաղաք, այդ օրերուն ինքնա կը ցանկար ըլլալ քաղաքացի ու երթալ քնակիլ քաղաքին մէջ, եթէ նոյնիսկ փոքր բնակարան մը պիտի ըլլար իր տունը: Մամիրա երբեմն կը դրսեւորէր իր ներաշխարհը կրծող քաղանքը, ամուսնոյն ականջին լսելի դարձնելով սա խօսքերը.

—Սա՛ ժամիր, մենք ալ քաղաք երթանք, թերեւս բան մը կը փոխուի մեր կեանքին մէջ...

«Բան մը» քաջատրութիւնը կը նշանակէր այն կրծող ցաւը, որ կը սաստկանար օրերու հոլովութիւն հետ՝ զաւակ մը չկարենայ ծնանելու պատճառով: Մամիրա կը կարծէր եւ համոզուած էր, որ քաղաքի ծննդաբան մասնագետ բժիշկները պիտի յաջողէին վերջ տալ իր հոգեւէնի մզաւանջին: Մթնոլորտի եւ շրջապատի փոփոխութիւնը հաւանաբար պիտի հոգեփոխէր նաեւ զինք: Մայրանալ էր Մամիրայի երազը. արդար իրատուութիւն մը, որմէ չեն կրնար հրամարիլ զրեթէ բոլոր ամուսնացող կիները: Ինք առույգ ու առողջ (նոյնպէս՝ ամուսինը) եւ չկարենա՞ր մայրանալ... մինչ զրացի, ազգական, ծանօթ թէ անծանօթ կիներ, ամանք կասկածելի առողջութեամբ, տգեղ թէ գեղեցիկ, զա-

ակներ կը ծնանէին: Բնութեան ասեղծըւածն էր այդ, զոր Սամիրա չէր կըրնար լուծել...

Ամէն օր՝ նոյն անօրհան, անաւատ կանուխ Սամիրա կը կթէր կովը, կը շոյէր հորթուկը, կը նախանձէր նոյնիսկ մայրացած կովուն, որուն պարարտ ու փքուած ստիկներէն յորգարուխ կաթ կը հոսէր: Սամիրա կը յուզուէր այդ արարողութեան պահուն: Յետոյ կ'երթար աղբիւր, կուժով պահ ջուր բերելու: Աղբիւրին մօտիկ՝ պուրակին մէջ կը լսէր զրացի պատանի հովիտին սրինգին երգը, նայուածքը կը զարձնէր ցից ժայռին, որուն շուքին նստած կ'ըլլար հովիւ աղակը՝ Սեսիւնը, շրջապատուած իր ուխարներով, գառնուկներով, այծներով եւ ուղեբով: Կը նկատէր Սեսիւնի ուրախութիւնը, ապա թէ ոչ աղակը պիտի չկարճնար աշխուժով նուազի... Աղբիւրի մօտէն ձայն կու տար աղակին, կարծես հասունացած մարդ մը ըլլար ան եւ կը քարեւէր հետեւ հետու:

—Ալլա մաաթ, ես Սեսիւ... (Աստուած հեազ, ո՞վ Սեսին)

Բարեւ մը միայն, որուն Սեսին կ'արձագանգէր. «Ալլա եղիֆազի? Խալիթ Սաւիրա...», եւ մտքով կ'երջանկանար հովիւը, թէ իր սրինգին ձայնով հետաքրքրուողներ կան, թէ սրինգին ձայնը հասած է մինչեւ աղբիւր, մինչեւ խալիթ Սամիրային ապանջը:

Գիւղերու մէջ, զուռ-զրացի ընդհանրապէս զիրար կ'անուանէին մօրաքոյր, քեռի, հօրեղբայր մակդիրներով, ինչ որ հարապատուօթիւն կը ստեղծէր, զիւրի բնակչութիւնը վերածելով մէկ գերզատանի:

Այդ օրերուն Սամիրա կը կրկնէր իր առաջարկը, թախանձազին խնդրելով Ժեմիլին.

—Ես Ժեմիլ, աշնան մենք ալ քաղաք երթանք, զնա՛ տուն մը վարձէ... Թիշկներուն հետ տնտեսիկը, զո՛ն ալ, ե՛ս ալ, հաւանաբար արդեւնք մը կու տայ... Թերեւս Աստուած կ'օգնէ, փոփոխութիւն մը...

—Քաղաքին մէջ ի՛նչ զօրծ պիտի աշխատիմ, ես՛ Սամիրա... մեր պար-

տէկները ի՛նչ պիտի ըլլան, ո՞վ պիտի մշակէ, ո՞վ պիտի կթէ կովը... մալլա ծերացած է...

—Ալլա Գերիմ (Աստուած պարմած է), ես Ժեմիլ, զոնէ մէկ-երկու տարի անցընենք քաղաքին մէջ... վերջապէս, հոն փորձառու մարդոց կը հանդիպինք...

Ուրիշ օր մը, հնարք մը գտած ըլլալու գոհուեակութեամբ, Սամիրա ըստ սմուսանոյն.

—Ե՛կնքի մը պահակն ալ չես կըրնար ըլլալ...

Ընտանեկան խաղաղութիւնը խանգարուած էր. խուսափելու համար յաւելիալ բարդութիւններէ, Ժեմիլ լուս համակերպութեամբ հետեւեցաւ կնոջ քայլերուն: Փոխադրուեցան քաղաք, բնակութիւն հաստատելով արուարձանային փոքր բնակարանի մը մէջ: Ըստ Սամիրայի նախատեսութեան, Ժեմիլ զարձաւ գործարանի մը պահակը:

Անհաճոյ էր այս աշխատանքը: Ժեմիլ կ'երազէր իր զիւղը, հարապատ միջակայքը:



Օրերը, տարիները սահեցան արագ. ոչ մէկ փոփոխութիւն Սամիրայի կեանքին մէջ: Ծննդաբան թիշկներուն հետ յաճախակի հանդիպումները, անոնց վարձանումները՝ յաճախ սուղ այցեղիներով, զուր շանքեր եւ ապարդիւն սպասումներ եղան: Սամիրա մտահոգ էր իր տարիքով: 10 տարի անցած էր ամուսնութենէն, եղած էր 30 տարեկան, եթէ քանի մը տարի ես ամուլ մտար, յոյսը բուրբոսին պիտի ցնդէր... Բայց ի՛նչ կարելի էր ընել: Այցեկած էր բազմաթիւ սրբաբայեր, ուխտեր կատարած, միայն թէ Աստուած զուակ մը տար...

Օր մը, հայելիին գիմաց երբ կը յարգարուէր, Սամիրա խորունկ կնճիռ մը նշմարեց ճակատին կեղրոնը. սիրտը կարծես զուրս պիտի թուէր կրծքավանդակէն: Քաղաքը յոյնացուցած էր զինք, կարօտցած էր զիւղը: Ամուսինը արդէն

կը դժգոհէր զործարանի պահակութիւնէն. Հոն քանտարիում էր ան, ու օրն ի օրն կ'երազէր իր հարազատ զիւրը, ծննդավայրը: Օր մը, Ժեմիլ սրտնեղած ըսաւ կնոջը.

— Ես Սամիրա, չորս տարի վայելեցինք այս փաղաքը. դո՛ւ հասնուածքէն... մեր երազները չիրականացան: Աստուած եթէ ուզէ, զիւրին մէջ ալ կը մայրացնէ քեզ: Ես յոյսեցայ այս թուահաւոր մթնոլորտէն. առաւօտէն միշտ ու զիւր թունաւոր կապեր ներշնչելով թոքերս մաշեցի... երթաւք, Սամիրա, տո՛ւն երթաւք, մեր պարտեզներուն եւ աղբիւրներուն վերադառնաւք...



Քաղաքէն զիւր «մոլոր» եղաւ թեթեւ: Ինքնաշարժին մէջ Սամիրա կը մտածէր զիւրին, զրացիներուն, աչգիներուն, մրգաստաններուն եւ կոճուն մասին: Եղանակը գարուն էր: Սամիրայի այնպէս թունկաւ, թէ Սեսիլի սրինգին կանել զինք կը հրաւիրէ արտաւայր, թէ՛ ոչխարի հօտը արգէն կ'արածի զիւրի սարերուն եւ արտաւայրերուն մէջ, թէ՛ ինք կուծն ուսին կը վերադառնայ աղբիւրէն, նոյնիսկ ձայնեց Սեսիլին.

— Այլա մասով, ես Սեսիլ...

Հազիւ հասած զիւրի սահմաններուն, անուշ հով մը շոյեց Սամիրայի այտերը, աչքերը սեւեռեց հորիզոնին, որ կապոյտ էր՝ պայծառութեամբը փայլող արեւին: Նոյնքան ուրախ էր Ժեմիլ, որ Տ-Վ տարիներու բանտարկութենէն ետք կը վերադառնէր իր ազատութիւնը:

Ինքնաշարժը մասս զիւր, տեսաւ ճամբորդի առաջին տուները, ուր լուսթիւնը իրական էր. քնակիչ մշակները գացած էին գաշտերը, իրենց աշխատանքին: Հազիւ տուն մտած՝ Սամիրայի ականջը շոյեց Սեսիլի սրինգին «Մի-ժամե՛ն, Կենջ հուսթեան մէջ բան մը խլրտաց. այնքան մօտն էր Սեսիլ... Որքա՞ն քաղցր էր զիւրը ու որքա՞ն սաղստեղի՛ք՝ փաղաքը, ուր մարդիկ հե-

փոտ առօրեայով իրենց շունը կը հասցընէին, ի զին պատառ մը հացի... Երեւաններու ձայն հասաւ ականջին, նորածինի ու մանկան ճիւղեր, որոնք ազօթքի մը երանութիւնը ներշնչեցին:

Երբ տուն մտաւ, ոչ ոք կար քնակելներէն: Որտեղ էր, կենտրոն ու կենդանացը եւս գացած էին պարտեզը շրեյու կամ ցարիւրը հաւաքելու: Կարօտը լիցուցած էր սիրտը, զայն պայթեցնելու լափ: Առաջին մտածումը զնայ Սեսիլին, անոր ոչխարներուն եւ աղբիւրի պաղ շուրիկն ուղեց ծարաւը յազեցնել աղբիւրի շուրու: Կարծես մոռցած էր ամուսնոյն ցրտութիւնը, որ հազիւ տուն մտած՝ երկարեցաւ զնայելը փոռած կարպետին վրայ ու փնայաւ: Երկար զնայելուի ի վեր անտուն էր:

Սամիրա ուզողուցաւ զէպի կածանները, որոնք զինք պիտի տանէին երազուած աղբիւրին: Սեսիլի սրինգին ձեղնակն իր քայքայը շոյեցուց. աղբիւրէն առաջ երթամ Սեսիլին, բարեւ մը ըսեմ պատանի հովիտին, որ օրս բարութեամբ լեցուի, մտածեց Սամիրա կեղծկական նախապաշարուածով: Նոյն ատեն խորհուրդ մը կը ծնէր ուղեղին մէջ. ո՛վ զիտէ որքան մեծցած է Սեսիլ անցնող չորս տարիներուն...

— Այլա մասով, ես Սեսիլ...

Հովիւը ալլայեցաւ կնոջական ձայնէն: Ո՛վ էր այդ անծանօթ կինը, որ մտեցմօրէն կը բարեւէր: Երբեք չէր լսած այնքան քնքոյշ բարեւ մը իր մանկութեան օրերէն ի վեր:

— Ի՞նչ ապշած կը նայես, ես Սեսիլ, դեռ չճանցա՞ր, խաթի Սամիրան եմ:

Սեսիլ ճանչցաւ զբացի Սամիրան, ու սրինգը զննելով խոտիկ վրայ, բազուկները լայն քայքայ զիմաւորեց իրեն վաղ ծանօթ կինը, որուն ղեմքին վրայ տառապանքը իր գրողը գրած էր, եւ որուն ձագերուն մէջ քանի մը սպիտակ թիւղեր անցնալի սեւաթուր թարթութեան գաւաճանած էին:

— Որքա՞ն մեծցեր ես, ես Սեսիլ, կարգին այր մարդ զարեւր ես, պիտեղք քուսած եմ ու կ'արժէ համբուրել զանոնք... սմայլա, թիկունքդ լայնեցեր է:

այս ի՞նչ մարմին, ես Սեսին, հսկայ մը գարձեր ես... վայելած ես Սաննիին օչն ու շուրք, իսկ մենք, մղլոտած քաղաքին թունաւոր փոշին շնչեցինք 4-5 տարի...

— Զուր տնդ գացիք, ես խալթի Սամիրա, — ըսաւ հովիւր կնոջ կանաչ աչքերուն սեւեւելով, կարծես հոն կորսւած քան մը փնտռելով: Անկրազարձաւ, թէ Սամիրայի աչքերուն զըմբուխները կը լողային արցունքի մէջ...

— Ես յանի է, զիւզը կարօտցած ես... Է՛հ, այս զով սարերը, Սաննիը կը մոռցուի... Ըսէ՛, ե՛ս խալթի Սամիրա, աճէնէն շատ որո՞ւ կարօտցար...

— Ինչ սուտ խօսիմ, ես Սեսին, սրինգիդ ձայնը միշտ կը հնչէր սկանձիս, ու մաքով միշտ քովդ էի... զուն պատանի էիր, քայց դիտէի, որ շուտ մծծցած էիր մեր զիւղին կապոյտ երկինքին օրհնութեամբ, Սաննիին շուրքերուն զօրութեամբ: Ձեմ սխալած, հսկայ մը դարձեր ես, ո՞վ կրնայ քեզ տապալել... անօթի եմ, ես Սեսին, քա՛ց պաշարիդ ծրարը, ուսնեք...

Սեսին կախուած էր Սամիրայի շրթունքներէն, զիս սեւեւած անոր խօս աչքերուն, ու չզիտցաւ, թէ ինչպէս իր մկանուտ բազուկները զրկեցին Սամիրայի մէջքն ու իրանը... ու ինչպէս ծառին պտուղը հովին շարժումէն կ'իջնայ գետին, ճիշդ այդպէս երկուքով մէկ մարմին դարձած թաւալեցան խոտերուն վրայ: Գաւնուկ մը հեզօրէն կը դիտէր այս արտասովոր տեսարանը... Սեսինի փափուկ պէխերը շոյեցին Սամիրայի թուխ այտերը, երկար մնացին երանութեան զոդին մէջ:

Անոնք չպցային իսկ, որ այդ զիրկընգիսաւնումի ինքնամոռաց պահուն, իրենց կողքէն անցաւ դրացի մըրգաստանին մէջ շրտուք կատարող մշակ Նեմիլը: Ոչխարները կը մայլէին արտասովոր մայիւնով, ու լեռը կը ցատկըռտէին՝ կրակի վրայ կոխած ըլլալին կարծես... Երբ Նեմիլին քայծր հասաւ կը եւ լայն քահին շուքը ինկաւ միանալ զոյգին վրայ, ինչպէս ամառնային ամպի կտորի շուք, Սամիրա շփեց կոպերը՝ կարծելով, թէ ճանճ մը անցաւ աչքերուն վրայէն...

Յետոյ, քունէ արթնցածի պէս, նստեցան, պահ մը եւ լուս մնացին: Քիչ ետք Սեսին քացաւ պաշարին ծրարը, կերան թարմ լաւաշով կակուղ պանիրը, նոր քաղուած վարունգն ու լուինկը, կշտանալէ ետք լուս նայեցան իրարու, իսկ Սեսինը, սրինգը ձեռք առնելով՝ նուագեց Սամիրայի սիրած մԱրժանէսն:



Սամիրայի եւ Սեսինի առաջին եւ փոթորկոտ հանդիպումէն ետք, օրերը սահեցան գեղեցիկ կեանքի մը քուրք խոստումներով: Այլեւս տան մէջ քանտարկուիլը անիմաստ էր Սամիրայի նման կենսունակ կնոջ մը եւ երիտասարդութեան սահմանէն ներս նոր մուտք գործած, փորձառութիւններու եւ փորձութիւններու հետամուտ առեւտր Սեսինին համար: Քաղաքէն զտուած, զիւղին խորհուրդներուն կարօտցած Սամիրան առուօտ կանուխ կ'ըլլէր սուրնէն՝ պարտէզին եւ մրգաստանին մէջ մշակի զործերով զբաղելու, միշտ մտուիլը Սեսինի առօտապալարին, աղբիւրին: Միրահարութեան քաղցր խենթութեան անձնատուր էին երկուքն ալ: Անփորձ հովիւր նոր կը ծանօթանար կնոջական մարմնի. հրապուրներուն, իսկ կեանքէն որոշ փորձառութիւն քաղած Սամիրային համար բախտի նոր էջ մը կը քացւէր՝ չկարգացուած զիրքի մը անմանօթ խորհուրդներուն նման:

Սամիրայի ներաշխարհէն լուռող ձայն մը կը թեւադրէր չհանդիպիլ Սեսինի, որ սկսած էր ամէնօրեայ մտածումներուն առանցքը դառնալ, շարժարի կողմին Կուզէր մտնալ այն սաստանալական պահը, որուն յիշատակն իսկ կ'ամայնէր զինք... Ինչո՞ւ այդպէս եղաւ, ինչո՞ւ նետուեցաւ պատանութեան նոր դուրս եկած երիտասարդին զիրկը, հմայուած անոր առողջ ու կայտառ տեսքէն, վառվառն աչքերէն: Ինչ անուն տար այն անծանօթ ուժին, որ զինք մղած էր դէպի «օտար» զիրկը, մեղանշելով ամուսնական իր մաքուր

ուխտին զէմ: Իր սրբունը վարձադրեց Սամիրա. ա՛յ չիշնց Սեսինը, մոռնալ պարտադրեց ինքնիրեն, ինչպէս մայր կատուն, որ կը մոռնայ իր դիեցուցած ձագերը, զանոնք կաթէ կտրելէ հոգ երեսի վրայ ձգելով: Սամիրա կարծրացուցած էր իր սիրտը, սրպէտղի տեղի շտար գիւղացիներու շար լեզուներուն արձակման, բամբասանքին...



Անցած էր օրերուը, վախճանին կը մտանալ ամառը: Գիւղացիները սկըսած էին պատրաստել իրենց ճամպրուկները, գոյթերը, ուսանողները կը դիմէին քաղաք, գյուղացական տարեշրջանը սկսելու: Ձմեռնամուտի աշխատանքները արդէն սկսած էին: Սամիրա կը կաստորէր իր բնակարանը, զոր երեսի վրայ ձգած էր շորս-հինգ տարի: Երբ վառարան, փայտերու առատ պահեստ, պարէն ու պաշար: Սաննիին փէշին ձմեռը խիստ ցուրտ կ'ըլլար: Ոչ մէկ բան պէտք էր ձգել պատահականութեան:

Ուշ աշնան գիւղացիները իրենց օտքերը կը քաշեն պարտէզներէն, բլուրներէն, սարերէն: Իրիկնային հանգիստները կը վերսկսին: Մինչև ուշ գիշեր կը զրուցեն գիւղի ընտանիքներուն միջև պատահած մանր-մուկ գէպքերու, նորութիւններու, նշանուցաներու եւ մտրիկ սպազային կատարուելիք պահանջներու մասին: Սամիրայի տան աչքիւններէն է նաև հովի Սեսին, որ բարեկամացած է իրենց նախկին դրացի ամձօ Ժեմիլին, անոր հետ թղթախաղի կամ նարտի խաղերուն կը նստէր, վայելելով Սամիրայի գուրգուրուտ հերթասիրութիւնը, կենսութիւն շերտ մթնոլորտի մը մէջ:

Այդ օրերուն, Սամիրայի ֆիզիքական առաքին մէջ որոշ փոփոխութիւն մը ակններու զարձաւ. դրացի կիներ յաճախ կ'ակնարկէին ույզ երևույթին.

— Տեսա՞ր, քաղաքէն վերադարձէլ ի վեր որքա՞ն փոփոխեցար: Երբ Պէլրութէն եկար, պէղնած-թռնած էիր, հիմա

վարդի պէս ծաղկեցար. խնձորի պէս կ'որոցար...

Ուրիշ մը, յուսատու քաղցրութեամբ, քողածածուկ կ'ակնարկէր.

— Ես՞ Սամիրա, այնքա՞ն կ'որոցար, որ կարծես... եթէր ամառ ես...

— Մեր գիւղին օգէն է, — ուրախ կ'աւելցնէր ամուսինը, նոյն առան ներքին թագուն զոհունակութեամբ...

Գրացի կիներուն յարաճուն նկատողութիւնները Սամիրայի մարմինն ձեւափոխման եւ գիրութեան մասին, կասկած արթնացրին նաև իր մտքին մէջ: Ամուսնոյն հետ խորհրդակցելէ հոգ, փոխաց նրթայ Պէլրութ՝ «իւր բժիշկին հետ տեսակցելու, քննութեան ենթարկելու»:

Սամիրան երբ բժիշկին զարմանատունն զուրս կ'նլլէր, արդէն տարաշխարհիկ երջանկութիւն մը կ'ապրէր: Կը կարծէր, թէ լսածը երազ էր... Բայց, այո՛, «հինգ օւ կէս ամառ յղի ես» կրկնած էր բժիշկը եւ թելադրած զգուշութիւն՝ հաւանական արկածներէ խուսափելու համար:

Թեմիշօրէին գիւղ վերադարձած էր. ամուսինը սրտատրոփ գինք կը սպասէր: Հազիւ ներս մտած՝ գիրկընդխառնուեցաւ անոր հետ օւ հեկեկալով ըսաւ.

— Ես Ժեմիլ, Աստուած մեր ձայնը լսեց... Մար Թաքլային ուխտեր կատարած էի... Մար Թաքլան մեր սրբուհին է... բժիշկը ըսաւ որ... ըսաւ որ... որ... Մար Իյիսային ալ, շատ մոռ վառեցի...

— Ի՞նչ ըսաւ բժիշկը, — ուրախութեանն շղարգիւ հարցուց ամուսինը.

— Ըսաւ որ... ուշագրութիւն քրէ... ըսաւ... ծանր տակառ կամ կուժ մի՛ շաղկեր, կո՛վը դուն մի կի՛նր, կռնակիք վրայ պառկէ, իսկ երեկոնները գիւղի պարտէզներուն մէջ պտտէ...

— Անկէ գիւրիս թ'նչ կալ... ձրի խորհուրդ տուած է բժիշկը...



Ձմրան կիսուն Սամիրան ծնունդ տուաւ մանչ գաւակի մը, զոր կուցին Իյիսաւ Այս անունը ընտրելուն պատ-

ճառը այն էր, որ երբ Սամիրա ուխտեր կը կատարէր սուրբերուն, կ'ըսէր. «Եթէ աղջիկ զուակ մը ունենամ՝ կ'անուանեմ Թաքլա, իսկ եթէ մտնչ զուակ՝ Իլիաս»։ «Երկուքն ալ զօրաւոր սուրբեր են», կ'ըսէր յաճախ մտովի և երբեմն ալ իր մտերիմներուն, զրապիներուն։ Ուխտը կատարելու ժամը հասած էր։

Երեխան տողջ էր, զիրուկ, ծնած պահուն կը կըսէր հինգ քիւռ, ինչ որ զօրաւորացուցած էր ծննդաբերութիւնը, բայց Աստուած օգնած ևւ մէկ ձայնով ազատած էր թէ՛ նորածինը ևւ թէ՛ մայրը։

Ալքալոյսի եկողները զարմանքով կը գիտէին խոշորակազմ երեխան ևւ կը բացազանչէին.

—Սմալլա՛, սմալլա՛, Աստուած չար ուղբերէ պահէ... կարծես՝ վից ամուռ է... ևւ Սամիրա, կապոյտ ուլունգ մը կախէ Իլիասի կուրծքին։



Իլիասին տնումը եղաւ արագ, Հազի երեք ամուռ, մէկ տարեկան երեխալի տեւք ունէր։ Նայուածքին ուղղութիւնը ճշգրիտ, ձայներու նկատմամբ զգալուն։ Ինչ որ մտեցնէին թերանը, կը կլլէր արագ ու զիրութեամբ։ Ձէր զոհանար մայրական կաթով ևւ երեխաներու յատուկ սննդանիւթով։ Նոյնիսկ կընար մարսել մեծերու ճաշեր, եթէ պատատիկ մը դէէին բերանը։ Հազի քալելու սկսած, կը խառնչուէր տան սուտրկաները։ Հետաքրքիր էր շրջապատի իրերուն ևւ բնութեան նկատմամբ։ Կը սիրէր շունը, կատուն, տան բակի հաւնոցին մէջ կողտացող հաւերը։ Անվախ կը բուէր զանոնք։ Անասունները կը համակերպէին իրենց մանուկ բարեկամին պատճառած շարժումներին։

Երբ մանկապարտէզ երթալու տարիքը բոլորեց, զայն տարին ու յանձնեցին զիւրի միակ զպրոցին մարկիսպարտէզը, ուր թէև որոշ ընդունակութիւն ի չալտ չբերաւ Ծնողքը նմաղընցին, թէ որքա՛ն մեծնալ, ալըքան կը զարգանայ մտալին ու տրամաբանական կարողու-

թիւնը։ Սակայն երբ նախակրթարանի դասարանը անցաւ, զօրաւորութիւն մեծացաւ կարգալու ևւ կարողացածը միտքը պահելու։ Սամիրա զիմեց անձնական ուսուցչուհիի մը օգնութեան, որ տան մէջ մասնաւոր զատեր տալով թերեւս կարենար տղուն ւուզողը բանալու։ Այս աշխատանքը թեթեւ բարեխաւուս բերաւ Իլիաս կրնար հաշուել միւնչի լիւտուն, նաեւ կարգալ կարն նախադասութիւններ ու զրել միավանկ ու երկվանկ բառեր։

Փողոցը զպրոցէն աւելի հրապուրել կը թուէր փոքրիկ Իլիասին։ Անգաղար խաղալ կ'ուզէր, զօրաւորութիւն տալով ուսուցչուհիին։ Երբ թուարանական խնդիրներ լուծելու ժամանակը եկաւ, Իլիաս խիստ սրբողեցաւ, ուսերը թօթանց ևւ բարբրանայն յայտնեց, թէ ինք չէր ուզէր զպրոց երթալ։ Հայրն ու մայրը կը խրատէին, զրոմական խոստումներ կը կատարէին, անգաղար կը լիշեցնէին տղեկին, թէ զպրոց չզացող երեխան ապագային բեռնակիր կը դառնալ, թէ՛ ...

Իլիաս չէր լսեր ծնողքին յորդորները, ու ալ ուսուցիչներուն խրատները։ Կը մերժէր զառ սորվել։ Առաւօտները տունէն դուրս կ'ելլէր, փոխանակ զպրոց երթալու՝ կ'երթար զիւրի շուկան, կը զեզերէր մալմաններուն, նպարտաւաճառներու խանութներուն ևւ փուռերուն առջև, կը շաղակրատէր անցնողներուն ևւ յաճախորդներուն հետ ևւ կէսօրին կը վերադառնար տուն։ Օր մը, մալմանառ Ծալիլը առաջարկեց Իլիասին աշկերտ դառնալ, իր գով աշխատել։ Իլիասի հաճելի թուեցաւ առաջարկը, բայց միտին հոտը անախորժ էր. կը փախաքեր փոսպան դառնալ. թարմ հացին բոլը կ'արրեցնէր զինք...

Փուռը յանկեալ յատկանիշ ունէր Իլիասի համար։ Մալմանառին խանութն ալ հետաքրքրական էր ևւ ետուզեռով յորդուն, բայց երեկոյան կամ կէսօրին եթէ տուն երթար՝ վրան-պրոխը միտ պիտի հոտէր ու պիտի մասնորէր։ Սակայն փուռին մէջ եփուած հացը հաճելի համով ու բոլորով պիտի յագեցնէր իր... ստոմաղը։



Թարմ հացը անպակաս կ'ըլլար Ի-  
լիասի ձեռքէն: Ետտակերութիւնը իբր  
ձուլութիւնն էր: Ստամբուլը փքուած,  
մարմինը ճարպոտած՝ ան կը նմանէր  
փոքրիկ հակայի մը, որ շրջապատի  
մարդոց ուշադրութիւնը իր վրայ կը  
հրաւիրէր:

Իլիաս փոսպակին պաշտօնական  
աշխարհն էր արդէն: Մայրը տեղեկացած  
էր իրողութեան, թէ իր զաւակը զինք  
խորած էր, փոխանակ դպրոց երթալու՝  
փողոցները թափառած ու հիմա փոս-  
պան զարձած էր: Սամիրա ցաւով իմա-  
ցաւ եղբորս շարժումը: Հայրն ալ յուսախաբ  
եղաւ: Որքան յոյսեր դրած էին Իլիասի  
վրայ, իրենց մէկ հատիկ զակին, որ  
փոխանակ ուսումնասէր երիտասարդ մը  
զտունալու, պատանի տարիքէն կ'իջներ  
շուկայ, փուռը նախընտրելով իբրեւ  
ասպարէզ եւ ապագային ապահովու-  
թիւն:

Իլիաս սիրուած զործաւոր էր. վար-  
պետ թէ չաճախորդ կը սիրէին զինք.  
Քանի որ հանդակատարութեամբ եւ նը-  
ւերումով կը ծառայէր բուրձին: Այն-  
քան համակրելի զարձաւ, որ փազաբ-  
ընծայով կը խօսէին իրեն հետ: Այս  
արամազրութեան առաջին արտայայ-  
տութիւնը եղաւ Իլիաս անուան կրճա-  
տումը՝ հրկու ձեւով. ոմանց համար էլի  
էր ան, իսկ ուրիշներ սկսան լըլլող կո-  
չել, իրբեւ փազաբուշ արտայայտու-  
թիւն: Գիններու եւ երիտասարդութեան  
հանդէպ առանձին յարգանք կը ցուցա-  
բերէր, կը յարգէր նաեւ ծերունիները,  
որոնց կ'օգնէր, եթէ անոնք շուկայէն  
ծանր պաշտուակ մը կամ ալ ապրանք  
շալկած գժուարութեամբ քաշէին: Կը  
փութար անոնց օգնելու սիրայօժար: Է-  
լի-Լըլլող միշտ ժպտուն կը պատասխա-  
ներ անոնց շնորհակալութեան ու կ'ը-  
սէր.

—Ուսլառն, պասլիթա... (ոչինչ):

Փուռին մէջ հաց եփելու աւքնթեր,  
էլի կը կատարէր նաեւ սեւ աշխատանք.  
աշխարհ ծանր պարկերը կը շալկէր ու կը  
տանէր խմոր շագնու սեննակը: Երբեմն  
քանոնատար կառքերով ալիւր կը բերէին,  
վառելանիւթ՝ ասկաններով, զանոնք կը  
շալկէր ու կը տեղադրէր փուռին զա-

նական մասերուն մէջ: Չարքաշ եւ ու-  
ժիզ պատանին օրն ի րուն կ'աշխատէր  
հասուն տարիքի մարդու մը պէս:



Տարի մը հազիւ անցած էր էլիին  
փուռի բանուոր ըլլալէն, դուռ-դրացի,  
ծանօթ-բարեկամ էլին կը նկատէին ա-  
պագայ խոստացող երիտասարդ եւ, ին-  
չու չէ, նաեւ ապագայ մտուսին իրենց  
աղջիկներուն: Հետեւաբար, յարգանքը  
կրկնապատկուեցաւ էլիին հանդէպ եւ  
անոր ժողովրդականութիւնը անհցաւ:

Սամիրա դժգոհ էր զակին ընթաց-  
քէն, բայց երբ ամէն շաբաթավերջի ա-  
նոր ափին մէջ դրամ տեսներ, կը մոռ-  
նար դպրոցի ու կրթութեան բացակա-  
յութիւնը եւ էլիին հետ կը սկսէր դրամ  
շահելու յաւիտէլ կերպեր որոնել:

էլի 16 տարեկան եղած էր, բայց  
25 տարեկան երիտասարդի մը կազմը  
ունէր: Կանխահաս աճում մը, որ զար-  
մանք կը պատճառէր բուրձին:

Տարեդարձին օրը ընկերներուն հետ  
խնճոյք սարքեցին իրենց տան մէջ:  
Մայրը համադամներ եւ քաղցրեղէններ  
պատրաստեց, բացաւ ճոխ սեղան: Նոյ-  
նիսկ բերաւ ողկից ըմպելի: Էլի խմելու  
եւ պինդուալու իրաւունք այլեւս ունէր:  
Այդ պիշիւր մայրը իրեն նուիրեց ար-  
ճանակ մը, զոր դրու մէջը: Էլի ինք-  
զինք աւելի քան զորաւոր զգաց, զանիմ  
մը, թաղին հերոսը: Իր թիկնիզ ու  
բարձրահասակ մարմնին վայելից ա-  
տըրճանակը: Ձեռքը ինքնաբերաբար  
կ'իջար մէջքին, շոյելու համար ուժ  
ներշնչող գործիքը:

Ամէն անգամ, որ թաղին մէջ կուի  
ու պինդալ բախում ստեղծուէր, երիտա-  
սարդներ կը դիմէին էլիի օգնութեան,  
որ ձեռքը մէջքին հազիւ երեւցած՝ կըռ-  
ւոյ կողմերը կը շոյանային: Այս հե-  
ղինակութիւնը քաշալիքից էլիին զոյգ  
ատրճանակներով երեւնալու հանրու-  
թեան մէջ, իւրաքանչիւր կողմն աւար-  
ճանակ մը ամրացուցած...

Այ ո՛վ կրնայ դիմադրել այս քա-  
ջին, ինքնաբոյս հերոսին:

★  
★★

էլին փնտռուած մարդն էր թաղին: Քանի մը տարի անցուց փութին ու փողոցին մէջեւ: Երբեմն հրաւերներ կը ստանար ընտանիքներէ, ու սիրով կ'ընդունաւ: Երեկոնները կը վերածուէին խնոյթի, որ վերջ կը գտնէր զինարարութեամբ: Նման հանդիպումներէն մէկուն հանդիպեցաւ սիրուն Փանկթին, որ շուտով սիրահարեցաւ զնրան: Ըստ իր աստիճանի մը, իր փոխադարձ: Ըստ իր աստիճանի (էլիին մայրը) նախ զարմանքով ընկալեց զանորդը, սիրահարութեան լուրը, բայց հետզհետէ ընտելացաւ անակնկալին, եւ նոյնիսկ սրբախոսեց, թէ՛ զոնք սոցուն ստեղծող փողոցէն կը քաշուին ու ան կը գառնալ ընտանիքին հանդէպ զուրգութեամբ տառապանքով զուակ մը:

★  
★★

Այդ օրերուն, Լիբանան բռնկած էր «բաղադրացիական» կողմէն պատերազմի մը մէջ, որուն ազդեցութիւնը հետեւանքները ոչ ոք կրցած էր գուշակել: «Չէնք բռնկու» եւ հայրենիքի կոչին ընդառնած չեց նաեւ էլի: Ան երբ ներկայացաւ իր նախասիրած «կողմի» զինուորական գրասենեակը, պատասխանատուն հաշիւ տեսած անոր մուտքը, լարզանքով ոտքի ելաւ ու խնայեց անկէ նստիլ սեղանին մօտիկ զրուսած աթոռին: Ըստ կալի երեւոյթով, սեւ ծորուքով պատկանի թեկնածու մըն էր էլի, որ շատ հետաքրքրեց զինուորական պատասխանատուն:

—Մինչեւ հիմա ո՞ր էիր աղա...  
քեզի պէս քաջի մը պէտք ունիք...  
Յետոյ կանչեց ստորադաս աստիճանաւոր մը, անոր պատուիրեց հարկ եղած զինուորական տարազն ու զէնքերը տալ, եւ զինք նշանակել շրջանի զինքներուն ընդհանուր վարիչը: Ապա էլիին գառնալով հարցուց անունը.  
—Անունս Իլիաս է, ընկերներս զիս կը կոչեն էլի, ոմանք ալ՝ Լըլըս, զիս նկատելով թաղին նախկին մանուկը:

—Ի՞նչ մանուկ, ի՞նչ երեխայ, զուն փնտռուած տիպարն էս. աշուհեանքով պէտք է կոչեն էլի Տիլ... Դուն աւելի զօրաւոր ես ու նոյնքան հոծկու, որքան փիղ մը, որ պարծանքն էր առաջին զարհրուս ազգամահատներուն: Դուն մեզ չաղթութեան առաջնորդը հերոսը պէտք է ըլլաս: Ուրեմն՝ լսեցի՞ր, տղա՛ս, աշտորուքն սկսեալ կը կոչուիս էլի Տիլ...

★  
★★

—Այլա մասք, սրէզ էլի...  
Ինքնաշարժներու պոչերը կ'երկարէին խնոզուած անցքերուն վրայ, հոն կը լսուէին բարձրաձայն խնոզանքներ.  
—Տախիլեք, ես էլի Տիլ, լսալըս... (խնոզներ, էլի Տիլ, ազատէ մեզ):

—Տես՞ր այդ հոկայ երիտասարդը, մեր թաղէն է՝ ըսաւ ինքնաշարժը վարող երիտասարդ մը, մատնացոյց բնուով էլի, որ հեղինակաւոր կանչած էր զինեալ պահակներու կողքին:

—Սամբային տղա՛ն, — գռչեց երիտասարդին կողմէն փակած կին մը, ծանօթ ըլլալով իր զինքի բնակիչներուն, ուր կ'ապրէր ինքն ալ:

Ապա ինքնաշարժին պատահանէն զուրս նայող եւ զինեալներուն հարցաքննութեանց հետեւող կինը աւելցուց.

—Մայրը լաւ կը ճանչնամ, տարիներով տատապեցաւ զուակ մը ունենալու համար... մէկ հատ ծնաւ, բայց չուտ տեսակէն: Չար լեզուներ կ'ըսեն, թէ բուն հայրը զինքն է...

Այս մանրամասն բացատրութիւնները կը տրուէին խնոզուած անցքին վրայ, ուր ինքնաշարժներու պոչերը երկարած կ'ըլլային շորո շարք, եւ իւրաքանչիւր ինքնաշարժի վարիչն ու ճամբորդները մանրակրկիտ հարցաքննութեան ենթարկուելէ ետք միայն ճամբան շարունակելու արտօնութիւն կը ստանային: Իսկ եթէ մէկը անունը տար էլի Տիլին, ան ժպտով ու ձեռքի շարժումով նշան մը կ'ընէր, զինք ճանչցող

չարժաւարը հրաւիրելով ճամբան շարունակելու:

—Մա՛րիապա, էլի Ֆիլի... Տախիլե՛Ք, էլի Ֆիլի... Խա՛լըսնա, էլի Ֆիլի...

Էլիին եւր կը շոյուէր, կը փքուէր սիրամարզի մը նման, անոր աւքերուն մէջ ուրախութեան ճառագայթներ շողացնելով: Նման պարզապէս ձեռքերը կը գնէր երկու կողերուն, ու հոն բան մը շոշափելով իր հեղինակութիւնը առաւել եւս կը հաստատէր: Կը փափաքէր, որ բոլոր ինքնաշարժներուն անցորդները ճանչնային զինք, ու կարծես կը հաւատար, թէ անոնց բոլորը, այո՛, կը ճանչնային զինք...

★  
★ ★

Լիրանանեան պատերազմին ստեղծած ընկերային-դասակարգային վերիփայտումներուն զխաւոր երեսոյթը զենքի ուժի տիրանալ էր ու այդ ուժով մարզիկը սարսափեցնել: Նման տիպարներ նույնիսկ կրնային կողոպտել վաճառատուն մը, հարուստներու ճոխ շարժարանքով քնակարանները, կը սեփականացնէին ինքնաշարժներ եւ կամ կը գրաւէին մարդոց քնակարանները, եթէ քանի մը օրուան արձակուրդի պատճառով անեցիկները զիւր կամ ծովափ գացած ըլլային: Անիշխանութիւնը օրուան հրամայականն էր: Էլի Ֆիլի այս դասակարգին զեկամար զեմքերէն դարձած էր ու՛ հարստացած...

★  
★ ★

Արդէն շորս տարի անցած էր Էլիին սուկիսո ըլլալու օրէն: Ան գրեթէ զիւր չէր գացած. ուսումական զբաղումները կաշկանդած էին անոր առօրեան, նույնիսկ մոռցնել տալով իր սիրուհին: Անցարգեններու եւ բազմաթիւ ուսմանդրօքերու պատասխանատուն էր: Պէտք է հակէր անոնց վրայ: Նուազապոյն սխալ մը, կամ փոքր թուլութիւն, կրնար մեծ վնասներու գուռ բանալ: Էլի Ֆիլի իր

անուան շորջ հիւսուած տասնպէսական ցովասանքները կ'արդարացնէր ամբողջովին:

★  
★ ★

Պատերազմը, զինավարժական գործողութիւնները չէին խնայած նաեւ Էլիին: Որքան ալ տոկոսն էր անոր ֆիզիքական զօրութիւնը, այսուհանդերձ, կապարին ճամբան ազատ ու արձակ ըլլալով, եկած ու գտած էր նաեւ իր մարմինը: Կոյր կապարներ, հրթիռի այրող կտորներ միտնեցան իր սրունքին ու քաղցկին մէջ, պատճառ դառնալով վիրաբուժական գործողութեանց:

Մոռոզը զուկին վիրաւորուելուն մասին լսած էր անոր ապաքինումէն ետք միայն: Մայրը շտապած էր ուխտի երթալ Մար Թաքլայի մատուռը: Սաննիկի փէշին հանգչած այդ զիւղին մէջ, Մար Թաքլան զիւղին ամենէն սքորաւոր սրբաձայրը կը նկատուէր: Մար Իլիան ալ ուխտակատար սուրբ մըն էր: Ըն Էլի իր ամուսնեան շրջանին քաղցած խնդրանքներ ներկայացուցած էր Մար Թաքլային, Մար Իլիային, անոր անուան նուիրած էր Իլիասը, ներկայէ Էլի Ֆիլի: Սամիրա սուրբին խոստացած էր ուխտի գալ օր մը իր ապագայ զուկին հետ, եթէ այդ զուակը շնորհէր իրեն: Էլին հասակ առած էր, քայց ուխտը չէր յարգուած:

Օր մը, Էլիին հասակով մոմով ու ծաղիկներով պիտի այցելէր Մար Իլիասին: Մաղիկներ պիտի տանէր նաեւ սրբուհի Թաքլային: Ուխտերուն կատարման զլխաւոր արգիլքը եղած էր ինքը՝ Էլին, որ քացարձակապէս մերժած էր իր հասակին երկայնքով մոմը բռնել ու ծաղիկներով զրկած՝ իրենց սուկէն երկար ճամբայ կտրելով քալել զեպի ուխտաձայր, որ զիւղէն դուրս ժայռի մը կողին փակած էր: Սամիրա չէր կրցած համոզել պատանի Էլիին: Իսկ ետքը... Օ՛, այդ ետքը: Պատերազմ էր, փոթորիկ: Ռմբակոծուած էին լիւռ ու ձոր: Բայց երբ համեմատական հանդարտութիւն տիրած էր, Էլին «կորսուած» էր:

«Վ կը տեսնէր անոր երեսը... Ռազմական գործողութիւններով կլանուած երիտասարդը մտայած էր սուն ու ծնոք, ծննդավայր եւ գիւղ:

Երբ յաճախակի դարձան Էլիին վերադարձիլը, փորձանքները, մայրը զնայ քաղաք, անձամբ տեսնելու գտաւ՝ եւ չորդորելու գայն, որպէսզի զիւղ երթալով ուխտը կատարէր:

—Տգա՛ս, — ըստ ըմ էլի իր գաւկին, — եթէ ուխտը չկատարես՝ սուրբը պիտի գայրանայ ու օր մըն ալ պիտի սպաննէ քեզ: Ձե՛ս անդրադարձար, այս քանի՛ անգամ եկաւ, որ ստոյգ մահէ կը փրկուիս: Տակաւին մեր մոմերը չենք վառած Մար Իլիասին ու Մար Թաքալին: Մաղիկներ պէտք է տանինք անոնց, եւ այդ առիթով աղուոր Բէյն մը պէտք է ընենք զիւղին մէջ: Ամբողջ գիւղացիները քեզի կը սպասեն: Ելի Ֆիլը մեր պատիւն ու պարծանքն է՝ կ'ըսեն, իսկ դուն կը մերժես, կ'արհամարհես բոլորին բազմանքը...

Էլի պատասխանեց ձորը թախանձանքին, փակկացած սրտով.

—Ես ըմմի, կ'ուզեմ գալ, բայց մէկ վայրկեան ժամանակ չունիմ...: Ձե՛ս տեսներ ամէն ճարդ ինձէ կոխիսալ է... եթէ ես այս աննակէն դուրս ելլեմ, ամէն ինչ սակնուզբայ կ'ըլլայ...: Օր մը կ'երթանք, երբ պատերազմը վերջ գըտնէ՝ կ'երթանք... սուրբերը քեզ մը եւս թող համբերեն...

Մինչ այդ տասնեակ մը քարիւղոցներ, շկալա մաւաթ, էլիլ Ֆիլը ըսողներ ընդմիջեցին մայր ու գաւկին զրոյցը. անոնցմէ իւրաքանչիւրը խնդիր մը ունէր ներկայացնելու, կը զիմէին Էլիին միջնորդութեան, բարեխօսութեան: Մէկուն գտաւ կը սխալմամբ բանասերկուած էր: Երկրորդի մը սուռը կողպտուած՝ Էլի Ֆիլին կը խնդրէին գտնել գողերը: Ուրիշի մը գտաւ կը վիրաւորուած ըլլալով կը պաղատէին Էլի Ֆիլին, որ հիւանդանոց մը կարգադրէ:

Էլի ձորը դառնալով կ'ըսէր.

—Կը տեսնե՛ս, ես ըմմի, այքոյ առջեւն է... եթէ ժամ մը, օր մը քացակայիմ իմ կեղրունէս, գիւրջն՝ ուզակի սպէս կը պատահի:

Մայրը պնդեց իր առաջարկին վրայ: Պաղատեցաւ, լացաւ, համբուրեց Էլին, եւ ի վերջոյ խոստում առաւ անկէ, որ յառաջիկայ կիրակի, Մար Իլիասի տունին գիւղ պիտի գար՝ տարիներով նշնուած ուխտը կատարելու:



Երազուած կիրակին հասաւ: Էլի Ֆիլը գիւղ մտաւ խուճք մը թիկնապահներով չորդոց զինուորական ճիւղով: Թիկնապահները զինուած էին մինչեւ ակունքերը: Մանուկներ, մշակներ, գեղջկուհիներ արդէն բռնած էին ուխտավայրի ճամբան: Գիւղը ոտքի էր ամբողջ շինականներով: Կին ու աղջիկ զարգարուած վառ գոյներով հազուատներով, զարդեղէններով, ծաղկազարդ մոմերով, կ'երթային մեծ սուրբին խնդրանքներ ներկայացնելու, ուխտապահ ըլլալու:

Հսկայ երիտասարդ մը դուրս նետուեցաւ ճիւղէն, ուսին Բաշիմբոն մը: Երիտասարդը սիրունադէմ էր, կլորիկ, մաստ ու մազոտ թուշերով, սեւ պիսիքով, ստոյգ ու կայտաւ: Բոլորին նայածքները կեղրոնացան այս նոր դէմքին վրայ: Սամիրայի եւ Ժեմիլի տան առջեւ բազմութիւնը հետզհետէ խանուեցաւ: Ապշանքով կը գիւտէին զիննալ երիտասարդները ու, մա՛նաւանդ՝ Էլին, որ միւսներէն կը գատորչուէր իր հասակով ու հսկայի կազմով: Վաւառ-լաւառ ճշացող կիներ բուռ-բուռ շաքար ու բրինձ թափեցին Էլիի գլխուն, մինչ Սամիրա անոր ձեռքին տուաւ մօտ երկու մեթրնոց մոմ մը, ծաղիկներով եւ ծապակներով զարդարուած: Սամիրայի բարեկամ ու գրացի կիներ զիրար մշտելով զոզունի կ'ըսէին.

—Տեսէ՛ք, տեսէք, ճե՛շդ Սեսիներն կը նմանի Էլին...

Գէպի ուխտավայր երթը եղաւ թմբկահարութեամբ ու գեղջկական երգերով: Իսկական ցնծութիւն էր: Երբ Մար Իլիասի մատրան առջեւ հասան, Սամիրա ծնրադրեց, Էլի մոմը դրաւ խորանին, հետեւեցաւ ձորը օրինակին,

խաչակիցներ, կարճ ալօթք մը մրմնջելէ ետք ուրի կանկնկայու, նայեցաւ շուրջը: Անձանօթներ չէին, բայց զէմփերը փոխուած. անոնց մէջ ճանչցաւ քանի մը հարազատներ ու ազգականներ, որոնց մէջ հովիտ Սեպիւնը, որ տակաւին չէր կորսնցուցած իր կայտառ տեսքը: Մտնեալով էլիին, գրկախառնելուցան, մինչ էլի կը կրկնէր.

— Այլէ՛մ, ամ՛ժօ Սեպի՛մ, ԸՉՔԵՐՈՒ Այլէ՛ր (բարո՛՛՛՛՛, ամ՛ժօ Սեպի՛ն, կարօտցանք քօզի):

Երկու հսկաներ կ'ողջագորտէին, աչնքա՛ն նձան էին իրարու՝ իրենց մարմնական ու զիմազծային յատկանիշներով: Սեպի՛նի մազերը գեռ սեւ էին, պիտիերն ալ: Կարծես Շուրի երկու կաթիլներ ըլլային: Նմանութիւնը ա՛յնքան յատակ էր, որ ծանօթներ ափ ի բերան չձնջացին իրարու.

— Տեսէք, տեսէք, կարծես հայր ու զաւակ ըլլային, կարծես երկու եղբայր ըլլային, որքա՛ն կը նմանին իրարու...

Ոձանք իրենց մտքէն անցած կասկածը կը բացալայտէին, մա՛նաւանդ կիներ, անհամբերութեամբ սկանչէ ափանջ կը լսցնէին մեծ ճշմարտութիւնը.

— Գրա՛՛՛՛ք, կ'ըսեն թէ էլին Սեպի՛նէն է, մեր զիւղի հովիւն, կարծես իր հարազատ զաւակ ըլլայ...

Ուխտը կատարուելէ, եկեղեցական արարողութիւններէ ետք, Սամիրա իր տունը կէտորուան ճաշի հրախրեց ազգականներն ու բարեկամները: Ժաշկերոյժը վերածուեցաւ խնձոցի: Օղին հոսեցաւ առատ: Երբ զուտները սարքան, ներկաները բարձարաւան աչքի լոյստուրին Սամիրային եւ Ժեմիլին, ինչպէս նաեւ՝... Սեպի՛ն: Այս վերջնոյն ուղղուած յանդուգն մաղթանքները պազ զգայնութիւն մը առաջացուցին Ժեմիլի ներաշխարհին մէջ: Մա՛նաւանդ՝ երբ

մրգաստաններու շրտուքը կատարող մշակ Նեմիլի բարձրաձայն տեսէր, ես ապու Բիխառ ըսաւ՝ իր գաւաթը շեկացնելով Սեպի՛նի գաւաթին: Հովիւր ալլալիցաւ, շտապունեցաւ եւ օղին գաւաթը պարպեց մէկ ումպով:

Երջապատը պտոյտ կու գար Ապու Բիխառի աչքերուն շուրջ: Ինքզինք շտապուտ զգաց: Պահ մը եւս մնաց խորատուրուած, առանց խմելու եւ ուտելու, ապա, առանց ուշադրութիւն հրախրելու իր վրայ, իշաւ ներքնայարկի միջին մասունքը եւ երեսն ի վար պառկեցաւ խտտերու գէզին վրայ: Մայրամուտին, երբ հրախրեալները հրածոջ առին, Ժեմիլ կը տառապէր սաստիկ զլխացաւէ: Անհանգստութիւնը հետզհետէ սաստկացաւ: Կուրծքին ներքեւ բան մը կ'աչրէր, ու կը քրտնէր... Արդէն տունը պարպուած էր: Ան զտուարութեամբ բարձրացաւ իր սենեակը, նետուեցաւ մահի՛նի վրայ: Երբ կիներ իրեն մօտեցաւ, ան արդէն գունատած էր:

— Ի՛նչ ունիտ, ես Ժեմիլ, ըսաւ ըմբիխաւ ամուսնոյն, անոր զուգը շոյելով:

Ժեմիլ ընայեցաւ կնոջ երեսին: Անոր շոյանքը կարծես փուշի խայթոց ըլլար: Ժեմիլ կը տղար սրտի ցաւէն... Զանի մը սուր խիթ, քանի մը տառապակոծ ասիտ, ու զիւղացին տապալեցաւ յատակին...

Ու զիջերին գոյժը տարածուեցաւ զիւղին մէջ: «Ապու Բիխառը մեռեր է սրտի կաթուածէ», կ'ըսէին անոնք իրարու ու կ'ուղղուէին մեռելատուն:

Սամիրա կ'ողբար մեծ կորուստը, սուգին ու հեծկտանքին ընդմէջէն լսելի զարձակելով ճակատագրական արտասանքը.

— Ձաւակը գտանք, բայց ամուսինը կորսնցուցինք...

## Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

## ...Մ Ա Ն Ի Շ Ա Կ Ա Յ Ի Ն

Մենք պիտի չուզեմք հանդիպիլ կրկին,  
 Որպէսզի երբեք չիմանան մարդիկ  
 Գաղտնիքը այն մանիշակին,  
 Որուն թերթերը,  
 Գիշեր մը ողջոյն,  
 Մենք տեղագին փետտեցինք...

Յետոյ,  
 Երկուքով,  
 Հաւասար չափով,  
 Բաժնեցինք թերթերն  
 Այն եւզ ծաղիկին,  
 Որուն ձեարդներն,  
 Բարակ ու ոսիւն,  
 Արբշիտ հեշտանքով  
 Ու երազանքով,  
 Մարդկային մարմնիւ բոյրը ծծեցին...

Մանիշակին թերթերն կապոյտ,  
 Սփիւռքացած,  
 Մեր յոյզերուն հետ  
 Ու ձեռքերուն մէջ,  
 Քաղցրացան այնպէ՛ս տարերայնօրէն,  
 Որ նուազումս՝ մ'արձանային,  
 Մերժեցին ապրիլ՝  
 Իբրեւ ծաղիկ մանիշակային...

## Ե Ր Բ Դ Ո Ւ Ն Կ Ո Ւ Գ Ա Ս

Երբ դուն կու գաս,  
 Տամուկ գիշերիս մեծութեանը մէջ  
 Յնձաղիկներ կ'ուրուագծուին...

Երազներս կը հագնին մարմին,  
 Ու տեղանքներս, - ոգեղէն տեսիլք, -  
 Թախսիծս կ'օրրեն քաղցր մրմունջով...

Դռ'ն,  
 ճամբաներէն արիւմիս,  
 Կը կառուցես անէացման գմբէքներ.  
 Ու հոգիները մեր սիրավառ,  
 Կը ծորեն բոցեր կապոյտ,  
 Խորանիւ մէջ Գաղտնիքիմ...

Եթե՛ր առ եթե՛ր,  
 Կը պատարագեմք հեքիասքն ամուրջիմ,  
 Ու շրթները մեր,  
 Համբոյքներ օրհներգելէն,  
 Կ'երգեն ծնունդը Լոյսիմ...

## Ն Ա Կ Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հակասութիւններ,  
 Բեւեռներ անհաշտ,  
 Զիս եմ արարեր...

Զամոնք Բակեցի,  
 Տարանջատեցի,  
 Արեւիմ տուի...

Մարմինս բեկբեկ  
 Թիարամ տարի...

ԶԳՈՅՈՒԹԵՆԷՍ՝

Արեւը երկմեց  
 Բիւր-բիւր երանգներ  
 Ու երկիր դրկեց...

ԳՈՅ Եմ,  
 ԿԱՄ՝  
 Ուրիշ «ես»երու շրջածիրիմ մէջ՝  
 Արեւը իմ մէջ...

ՍԵՂԱ Դ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Գ. ԱՐԷՆԵԱՆ

Ա Ն Ն Ա    Հ Ա Ր Ս Ը

ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Հաննոն նստած էր Հոմո-Դամասկոս մարտզին կից: Կը զիտէր անցնող ու  
գարձոց կարուանները: Ձիւնուորակն՝ գրեթէ բոլորն ալ:

Նոյնիսկ քաղաքային կարուանները կը կրէին զինուորականներու յատուկ  
մթերք կամ անձնուորութիւններ: Կային ձիեր, շորիներ եւ նոյնիսկ էշեր: Ոմանք  
կ'երթային զէպի հիւսիս, ուրիշներ՝ զէպի հարաւ: Ոմանք պարապ, ուրիշներ՝ լծ-  
ցուն: Հաննոն քան չէր հասկնար: Ինչու՞ լիցուն կարուանները մէկ կամ միւս ուղ-  
ղութեամբ կ'երթային: Ո՞վ կ'երթար, ո՞վ կու գար: Բնաւ ալ հասկնալի չէր իրեն  
համար: Աս ի՞նչ պետութիւն է. պետական ի՞նչ գործ է, կը մտածէր: Ո՞ւր եկողը  
չայտնի է, ո՞ւր մեկնողը: Միակ քանը, որ կրնար զանազանել կռուի գաշտ գացողը-  
գարձոցէն՝ տրամադրութիւնն էր: Կռուի գացող զինուորները ընդհանրապէս տիրուր,  
չատ տիրուր էին, մինչ գարձոցները համեմատաբար աւելի բարձր տրամադրութիւն  
ունէին:

Հաննոն կ'ափսոսար սա երիտասարդներուն, որոնք տուն-տեղ ձգած՝ կ'երթային  
այլեւրու պատերազմի ճակատներուն վրայ: Ասոնք հայր կամ մայր չունի՞ն, կը  
մտածէր ան: Ինչու՞ սա զայլով իշխանութիւնները հազար-հազարներով երիտասարդ-  
ներ կը նետէին մահուան գրիչը:

Բնականաբար ինք կը մտածէր իր զակիին՝ Տիրանին մասին: Ուսեալ տղայ էր  
Տիրան: Ինք որքան զոհողութիւններ յանձն առած էր իր զակիին սւաման սիրոյն:  
Իր բերքերուն մեծ մասը յատկացուցած էր այդ նպատակին: Դափնիի ձէթ, անուշ  
ձէթ, չոր թուզ, ծխախոտ, շամիլ ծախած էր ասոր-անոր, առանց սուղ-աժանիին  
նայելու եւ իր ուսումնասեւել զուակը հասցուցած՝ Պէլլութ, Քիւլխու: Ինչ որ Ռէն-  
գրիւանէն քանձած էր իրրեւ մետաքսի փոխարժէք, զրկած էր Տիրանին: Իր շորն-  
պանութեան վատակիւն մեծ մասը եւս զրկած էր զակիին:

Տղան յաջողութեամբ աւարտած էր իր ուսումը, քայքայ ահաւասիկ ոչ իսկ կրցած  
էր տիրանալ իր վկայականին: Պետութեան ծօնն էր վկայականը. մինչեւ որ զին-  
ուորական ծառայութիւնը չամբողջացներ, չէր կրնար վկայականը ձեռք բերիլ: Ուս-  
ղազութեան օրերուն ի՞նչ չաւ էր ամէն քան: Հաննոն ինքզինք կը տեսնէր: Նոյնիսկ  
ինքզինք կը չափէր շուրջ ըսող աղային հետ: Դիւրին քան չէր օժանձան քա-  
նակին մէջ սպայ գաւակ ունենալը:

Հիմա, սակայն, երբ պատերազմ էր եւ ճակատներէն գարձոց կարուաններէն ու-  
մանք դիակներով բնուցուած էին, Հաննոն կը սարսափէր: Եթէ իր սպայ գաւակն ալ  
օր մը կաւթի մը վրայ բնուցուած ըլլար եւ նետուէր անանուն փոսի մը մէջ: Դուն  
ազատէ, Տէ՛ր, ի՞մ տղաս, բոլորին զուակներուն հետ, Դուն ազատէ սա կրակէն...

Դեռ ուրիշ հոգ մըն ալ ունէր Հաննոն: Ամէն անգամ, որ կը զիտէր անլիզու  
կենդանիները, յատկապէս ձիերու եւ շորիներու կարուանները, չէր կրնար չափսո-  
սալ անոնց եւ անոնց տէրերուն: Ինք իր մօրթին վրայ զգացած էր շորիի բռնազը-



բառումին ապշուր: Ի՞նչ կ'ընէին ասոնց սէրերը. իրենք՝ անասունները մեզք չէի՞ն: Սա ինչ անպարտ ման է եզեր պատերազմը...

Ամէն անգամ, որ Հաննոն ճամբուն եզրին նստէր եւ դիտէր անցնող ու դարձող կարաւանները, նոյն տխուր մտածումներուն մէջ կ'իջնար: Ժամերով կը նստէր ու կը դիտէր: Միշտ ալ քանդուած արածաշրտթեամբ կը դառնար շուրճը:

Այդ օր, մինչ նստած էր ճամբեզրին ու ինկած իր սպիտակ անասուններուն մէջ, հնուէն նշմարեց բարձրահասակ մարդ մը, մութաչկանի մեծկակ տուրակ մը ուսին: Տոպրակը լեցուն էր. գոյնը շատ ալ յայտնի չէր. անպայման որ մարդը նոյն տուրակին մէջ լեցուցած էր քաղցրն ու թխուն, հեղուկն ու հասառառունը: Այդքան ալ անտուր բան չէր այդ: Մութաչկանները շատ էին, իսկ նոյն տուրակին մէջ ուսին ու ձաւարով փխուր, թանապուրն ու լամիւր խառնելը միակ էլքն էր: Անտուրը սա բարձրահասակ մութաչկանն էր, մէկ ձեռքով թաշկիտակ մը բռնած էր քիթին, թոքերը պաշտպանելու համար ճամբէն բարձրացող փողին: Այդ ձեւը, այդ Բէլլը ծանօթ էր իրեն: Երեսը ըլլալ սակայն: Աշխարհի վրայ անկարելի բան չկար: Ամէն բան կ'ըլլար:

— Աս Միսաք աղա, դո՛ւն ես...

Մութաչկանը կանգ առաւ պահ մը: Անշո՛ւշա որ նայինքն Միսաք աղան էր: Սա եւս անակնկալի մատուցեցաւ: Գիծացինք ուրիշ մէկը չէր, հիթ ոչ իրենց համագիւղացի Հաննոն: Ուրիշ ո՛ր պատահականութիւնը գէժ դիմաց կը հանէր դիտողները:

— Տո, Հաննո, ի՞նչ գործ ունիս հոս:

— Միսաք աղա, սա ի՞նչ երեւոյթ է: Սա տուրակը ի՞նչ է ուսիդ վրայ: Ա՛յս օրին պիտի հասնէինք, աղաս:

— Հասած ենք, Հաննո եղբայր, հասած ենք: Ի՞նչ ընենք, աս ստամոքս բաժն ալ իր պահանջը ունի, ո՛չ ազայութիւն կը ճանչնայ, ոչ ալ թագաւորութիւն: Ի՞նչ ընենք, պիտի ապրինք:

— Թո՛ղ Աստուած Բէօքէն չորցնէ մեզ հոս հասցնողը. է՛հ, Միսաք աղա, ո՛ր է տակդ խաղացող ձին, ազայութեան ֆէւը, լուրայէ շալտարը, պաստուրը, գաւերիպար թեսպակը...

— Փացին, Հաննո եղբայր, ցացին... Թո՛ղ Աստուած մեզ այս վիճակին հասցնողին պատիժը տայ: Ահա, ազայութենէս սա մնացած է միայն, մետաքոն թաշկիտակաւ: Աստուած մեծ է, աս ալ կ'անցնի:

— Ամէ՛ն... Հիմա ո՛ր կ'իջնաս այսպէս, Միսաք աղա:

— Ես ալ չեմ դիտեր. կ'իջնամ: Ժամբան չեմ դիտեր, թէ ո՛ր պիտի հասցնէ զիս:

— Պատիւ ըրէ, մեզի եկուր: Մեր ստունը երթանք, ու է արդէն, Միսաք աղա, քալէ, քալէ...

Միսաք աղան կարծես այդպիսի տաք հրաւերի մը կը սպասէր. օրը կ'իբրիկնանար. օթեւան մը անհրաժեշտ էր:

Միտին, մերթ խօսակցելով, քայց աւելի շատ՝ լռելով, ցացին ստունը, Հաննոյին տուն-քարայրը: Հաննոն ուրախ էր, որ հարապատ մը, համագիւղացի մը գտած էր, ան ալ այդպէս գասակարգէն. քի՛չ պատիւ էր սա:

— Օսաննա՛, Օսաննա՛, — ձայնեց գուրսէն, — Ե՛լ, նայէ՛ թէ ո՛ր կ'եկած է:

— Ի՞նչ պիտի գայ, Հաննո, ի՞նչ ունիս այսօր. ա՛խ, քո խելքդ, էրիկ մարդու խելքին ի՞նչ ըսեմ, — ձայն տուաւ Օսան ներսէն:

— Ե՛լ, դուն մէլ մը դո՛ւրս ել, շատ պիտի ուրախանաս:

Օսան, ցոխաւելը ձեռքը, գուրս էլաւ: Եփեց աչքերը. չէր հաւատարար աչքերուն: Կարելի՞ բան էր սա:

Միսաք աղան, պինձ-մօրուքով, անխնամ հազուտ-կապուտով, եւ մութաչկանութեան տուրակին ալ ուսէն վար առած, ձեռքին մէջ վեր-վար կ'ընէր:

—Հա՛յ Միսաք աղա, վա՛յ, ա՛յս օրին պիտի հասնենք:  
 Կնաշական ամէն անօթխածութիւն ու պատշաճութիւն մէկդի զնելո՞՞ Օսան  
 փաթթուեցաւ Միսաք աղայի պարանոցին ու լացաւ, և լացա՛ւ... Հարապատ մը  
 զտած էր, որ թէնի գասակարգով իրենցմէ շա՛տ բարեւր էր, բայց ո՞վ գասակարգ կը  
 փնտռէր հիմա...

Մինչ այդ, Աննա հարսը, Գարունը և տղեկներն ալ դուրս եկած էին: Բոլորն  
 ալ ուրախ էին, որ հարապատ մը զտած էին:

—Մաշալլա՛ն, մաշալլա՛ն, որքա՛ն մեծցեր են տղեկները. տե՛ս, սա մեծը մօրը  
 քաշած է, իսկ փոքրը ճիշդ ու ճիշդ Քերոքն է: Աշխա՛րհ, աշխա՛րհ...

Միսաք ինք ևս ուրախ էր, շա՛տ ուրախ: Նսնի յուզուած էր:

—Ի՛նչ սուքի վրայ կեցեր էք, ներս մտէք, պատիւ ըրէք մեզի, Միսաք աղա:  
 Օսանն էր:

Դեռ նոր աւուած քարայր-տունէն ներս մտցուցին Միսաք աղան ու բազմեցու-  
 ցին բազմոցի մը վրայ: Միւսները ևս նստեցան:

—Առ, Աննա հարս,— կէս հրամայական շեշտով մը ըսաւ Միսաք աղան,— առ  
 սա տոպրակը, նայէ, եթէ մէջէն բան մը կրնաս գտնել: Ետտ անօթի եմ:

—Այս օրերուս ո՞վ անօթի չէ, Միսաք աղա, բոլորս ալ անօթի ենք: Այս քանի  
 օր է շննուխները կը դառնան ու կը դառնան, զրեթէ միշտ ալ պարսպ տուն կու  
 գան: Տեղացիներն ալ անօթի են. թող Աստուած սա պատերազմը իմաստ ընողին  
 արմատնե՛րը լորցնէ:

—Ամէ՛ն...: Հաննօ եղբայր, ևս ալ երկու օր է կը հաւաքեմ. չեմ գիտեր, թէ ինչ  
 լեցուած է մէջը: Երկու օր է կը քալեմ. գէշ-աղէկ բաներ մը կան տոպրակին մէջ:

—Աստուած ազատէ մեզ այս շար ժամէն: Մեր ծառերուն, արտերուն, պարտեղ-  
 ներուն բարիքները ո՞վ գիտէ, թէ ո՞վ զնո՞ւ կ'ընէ հիմա, իսկ մենք ասոր-անոր  
 ձեռք կը բանանք: Այդքան խաղող, այդքան թուզ, ընկոյզ, երթապտուղ ու քանկ  
 ծառերէն կը թափէին, քաղող իսկ չկար, իսկ հիմա...

Օսան չէր կրնար իր զայրոյթը պարտկել: Իր թոռները ստիպուած էին մուրա-  
 շուս շինել, ի յուր Միսաք աղայի մուրացկանութեան, աւելի կը զայրանար: Ի՛նչ  
 կրնար ընել ինք, կամ ինչ կրնար ընել Միսաք աղան: Պիտի մուրախին, մինչ իրենց  
 ծառերուն բարիքները գետին կը թափէին հիմա ու կը փտէին, կամ թուրքեր կ'ու-  
 տէին գանձեր:

Աննա հարսն ու Գարունը պարպած էին աղա-մուրացկանին տոպրակը: Ինչե՛ր  
 չէին ելլեր մէջէն, ալիւր, սուս, մածուն, փիլա, խաշած լուրիա, երթապտուղի հա-  
 տիկներ, ընկոյզ, չոր թուզ և ուրիշ ինչե՛ր: Անհաշտ ուտելիքներ մէկտեղուած էին  
 և արգէն իսկ խմորելու, քացիելու սկսած: Որքան կըցան՝ զատեցին: Բաւական  
 բարեք էր սա: Է՛հ, նոյնիսկ մուրացկանութեան մէջ գատուութիւն կար ի վերուստ:  
 Իրենք մէկ ամսուան մէջ այդքան բան չէին կրնար մուրալ:

Այդ երկուստ ամսուաները զրեթէ չի ու չի լեցուցանու մը սա երջանկութեան  
 պէս բան մըն էր: Մա՛նաւանդ ուրախ էին Փէրօզն ու Ճիմիս: Իրենց ստամոքսները  
 լեցուն զրեթէ քնաւ չէին չիւնր: Կանուխէն քունի անցան երկու մանուկները:

★  
 ★★

Մեծերը շատ ուրախ էին իրենց համադիւզացիով: Մա՛նաւանդ՝ որ գիւղին ա-  
 զան էր սա: Աննա չէր մտցած, որ այս մարդը զրկուած էր իր ծնողքին մօտ, իր-  
 րեւ միջնորդ, իր փախչելէն ետք: Ճերմակ երեսն վրայ ի՛նչ աղամարդ էր, իսկ հի-  
 մա ցնցոտիներու մէջ փաթթուած, որքա՛ն փոխուած էր, որքա՛ն համեստացած: Իր

աղաչութիւնն մնացած էր միայն մետաքսէ թաշկինակը, զոր յաճախ փրփին կը տանէր:

—Պատմէ նայինք, Միսաք աղա, պատմէ. յատնի է, որ շատ սոյո տեսած ես, շատ մարդոց հանդիպած: Ինչպէ՞ս են ձերինները:

—Ա, մոռցանք,— մէջ մանկով Օսան ընդմիջեց ամուսինը,— մայրդ, կինդ ինչպէ՞ս են, ո՞րք են:

—Հայրս, կեանքը ձեզի, մահացաւ. մայրս ալ մահացաւ: Եղբայրս ալ...

—Ի՞նչ կ'ըսես, Միսաք աղա,— խորապէս ցուեցաւ Օսան:

—Այդ է եղիւթիւնը, Օսան հարս. ի՞նչ ընենք:

—Լաւ, դուն ի՞նչ ըրիր մինչև հիմա:

—Ի՞նչ պիտի ընէի. աղաչութիւնը միշտ ալ յալ բան չէ, Հաննո կըրայր: Եթէ ռէճեպէր ըլլայի, ձեռքէս ամէն տեսակ գործ կու գար: Եսա հարստութիւն ունէիք, բայց զրոյս զրոյս չկար: Կալուածները մացին: Ահազին զանկէքներ ունէիք, բայց ո՞րք են ձեր պարտականները: Ունեցածներս ալ շուտով վերջացաւ. համրուած ընկոյզը շուտով կը վերջանայ: Օր մը փորձեցի հեծուորութիւն ընել...

—Դ՞՞ն, հեծուորութիւն... մեզայ՝ Տէր,— իրարու ձայնակցեցան Օսանն ու Աննան:

—Իրաւունք ունիք: Երկու-երեք հոգի էինք: Հողատիրոջ զացինք եւ ստաշարկեցինք աշխատիլ: Մարդը ուրախացաւ. արդէն աշխատող ձեռք չէր մնացած իրենց գիւղը: Աղուոր ընթրիք մը տուաւ մեզի: Գիշերը քնացանք: Առաւօտուն իջանք արտ: Ո՛չ մանկազ րոնած էի մինչև այդ օրը, ոչ ալ ման: Այլ զարկի, ձախ զարկի, թէ՛ ես յոգնեցայ եւ թէ վերակացուին հոգին կուս: Կէտք չեղած՝ արդէն իսկ ձգած-հեռացած էինք: Աղուոր ընթրիք մը եւ նախաճաշ մը մնաց մեզի: Ատկէ ետք աշխատեցու մասին շատ ալ չմտածեցի: Մտիպուած առի այդ տուարակը: Ի՞նչ ընեմ. տան մէջ երեխաներ կան:

—Աստուած պահէ, Աստուած օգնէ: Պատուելիենց աղջիկը ինչպէ՞ս է:

—Լաւ է, ինչպէ՞ս կ'ուզես որ ըլլայ. ան ալ խոտ քաղել փորձեց, լեղաս: Օրն ի բուն կ'աղօթէ:

—Կ'անցնի, Միսաք աղա, այս ալ կ'անցնի:

—Անցնիլը կ'անցնի, Հաննո կըրայր, բայց մենք ալ հետը կ'անցնինք: Մեր հրիտաւարութեան մուխը մարեցին այս անաստուածները:

—Ուրիշ ի՞նչ նորութիւն ունիս, Միսաք աղա,— նիւթը փոխել ուզեց Հաննոն:

—Ինչ գիտնամ. ականջիս բաներ մը դպան, բայց չեմ գիտեր որքանով ճիշդ է:

—Ի՞նչ բաներ,— շտկուեցաւ եւ ականջները սրեց Հաննոն:

—Կ'ըսեն, որ ինչիկոյն ու ֆրանսըզը հայկական բանակ մը կազմած են. իբր թէ շատ մը երիտասարդներ Ամերիկաներէն եկած եւ միացած են այդ բանակին: Իբր թէ պատերազմը երբ վերջանայ եւ օսմանցին պարտուի, ինչիկոյն ու ֆրանսըզը հայկական տէօվլար պիտի շինեն Կիլիկիոյ մէջ:

—Ի՞նչ կ'ըսես, Միսաք աղա. օսմանցին կանակը գետին կը դպնա՞յ. ըլլալի՞ք բան է սա:

—Ինչու՞ ըլլայ, Հաննո կըրայր...

—Ի՞մ կարճ խնդրովս, օսմանցին օսմանցի է, չի պարտուիր. այսպէս եկած է աշխարհը, այսպէս ալ պիտի երթայ: Ընեցա՞ չի կտրեր:

—Արդեօք մեր Քերտըն ու Սերս'ըն ալ եկած են,— տարակուսանքով հարց տըլու Օսան: Աստուած ի՞մ, արդեօք Ոստիլ պիտի ըլլա՞յ տղաքս տեսնելու:

—Ձեմ կարծիք, որ գան... մա՛նաւանդ Ֆերրըր...

—Ինչու՞, հարսնա,— յանգիմանեց Օսան:

—Նո՛ւրը, երեք անգամ նստ նետեցի իրեն, չկրցաւ բռնել, զէնք ինչպէ՞ս պիտի բռնէ, մայրիկ,— ինքզինք արգարացուց Աննան:

—Մի վրձիր մայրիկին հետ,— ցած ձայնով միջամտեց Փարուս,— մե՛զ է:

— Ինձի մեղք չէ՞, — ընդդիմացաւ Աննան: — Երեք անգամ չկրցաւ նուազ բռնել եղբայրդ, Գարուն քոյրիկ, մի նեղուիր: Իսկ Սերաք կըրայրդ ալ այնքան անձնատէր է, որ գժուար թէ զէնք շալկէ ազդին համար:

— Դուն մայրիկը մի նեղացնէր, Աննա հարս. գիտեմ, որ իրաւունք ունիս:

— Լաւ է, որ Քնիւրն ու Սերաքը չգան, կնիկ. եթէ գան՝ Թերեւս Տիրանին զէմ զէնք վերցնելու ստիպուին:

— Դուն Տիրանին վրայ մի վախնար, — զիտել տուաւ Միսաք աղա, — ան տաճիկ բանակի ուղայ է, բայց իր ընկիւթը կ'ընէ: Տիրանը լոխի-մնջիկ աղայ է, բայց սիրտ ունի, սիրտ. կրա՛կ է անոր սիրտը:

— Դուն լեզուիդ տակ շատ բաներ ունիս, Միսաք աղա, — մէջ մտաւ Օսան, — շատ բան լսած ես:

— Ես շատ բան լսած չեմ, բայց գիտեմ, որ հայկական բանակ մը կազմած են. շատ չանցած՝ այստեղէն ալ կ'անցնին Աստուծով:

— Աստուած լսէ բերնէդ, Աստուած լսէ, — ձեռքերը տարածեց Օսան: — Բաւ է որքան տաճիկական բանակներ տեսնուք, թող մէկ անգամ ալ հայկական բանակ տեսնենք: Ախ, Աստուած, եթէ քնասպի մի աղաքը զէնք շալկած են տաճիկին զէմ, Դուն զօրացուր անսեց բազուկները. թող մէկ հատ իսկ տաճիկ չձգեն սուքի վրայ: Մեր ճակատն ծուրը պէտք է սրբի. միայն տաճիկի արիւնով կը սրբուի այդ ծուրը, անէ՞ծքը:

Ընդհանրապէս հաւասարակշռուած ու զուսպ Օսան՝ պոռթկացած էր: Տարիններ է ի վեր հայ կնոջ ու հայուն վիճակուած վիրաւորանքն ու տառապանքը լէին կըրցած պոռթկացնել գիւնք, հայուն զէնք շալկելու լուրը սակայն զէնք այնքան խանձափառած էր, որ տարիներու գալույթը զուրու կը թափէր:

Աննան, որքան ալ թիրահաւատ իր ամուսնոյն ռազմական կարողութեանց վրայ, տարտած յոյս մը ունէր, որ ան կրնար գալ. ո՛վ գիտէ, աշխարհ էր սա: Եթէ հայկական բանակը քալէր միւնչա կիլիկիա, իր հրազն ալ կրնար իրականանալ: Աստուած, զոնէ մէկ անգամ պէտք կ'ազ անուականութիւնը շնորհէիր Քնիւրիս, կը կրկնէր մտքին մէջ կնանքէն խարուած Աննա... Եթէ կըրայրը աչքերը կորսնցուցած չըլլար, ան եւս զէնք կը շալկէր ու կը փութար ազատելու իր քոյրը...

Այդ զիշեր ո՛չ Աննան, ոչ ալ Օսանը կրցան քնանալ...: Երկուքն ալ փոթորկած էին: Նոյն նիւթին շուրջ կը դառնար երկուքին ալ մտածումը, բայց տարբեր կըրապացութեանց կը հասնէին...

Միսաք աղան մէկ-երկու օր մնաց հոն: Փառք Աստուծոյ, զէշ-աղէկ ուտելիք կար, կարելի էր ազան հիւրասիրել եթէ ոչ ազայական պատիւներով եւ սեղանով, կարելի էր զոնէ երգիկ մը շնորհել իրեն:

Ազան, մուրացկանի տոպրակը ուսին՝ Տէյր Աթիլի մէջ քանի մը անգամ դարձաւ: Տոպրակը ոչ մէկ անգամ լիցուցաւ, բայց ասանց յուսահատելու այցելեց մէկ մի տուն եւ մէկ մի փողոց:

Աննայի, Օսանի, Գարունի եւ Հաննուլի արամադրութեանց մէջ փոխուած բան մը կար հիմա: Քնասպ վերապանաւու յոյսը կար, երազը կար. եւ ան ալ հարապատներու զէնքերուն հսկանիւն տակ...: Պէտք էր քիչ մը եւս ակունները սեղմել ու համբերել:

Միսաք աղան, երբորդ թէ չորրորդ օրուան աւարտին, յայտնեց, որ պիտի մեկնէր: Տնեցիք չկրցան հասկնալ կամ ըմբռնել, թէ ո՛ւր պիտի մեկնէր: Բնական էր, որ պիտի երթար իր տուն ու տեղը, բայց տարօրինակ էր սա մարդուն շարժումները, նիստուկացը: Կարծէք թէ տոպրակը մուրալու համար չէր միայն: Խորհրդաւոր բան մը կար անոր նիստուկացին մէջ: Թերեւս բան մըն ալ չկար, բայց իրենք կ'ուզէին այդպէս տեսնել: Թերեւս ան ալ կապ մը ունէր հայկական բանակին հետ...: Պէտք էր լսել: Եւ լսեցին:

Հիմա, գաղթափախը, բոլորին համար, աւելի կը ծանրանար իր բոլոր անպատեհութիւններովն ու տառապանքներովը: Մտաւորաւ վերագարձին յոյսը, երազը անհանգիստ կ'ընէր բոլորը: Բայց որքա՞ն պիտի սպասէին...

—Աստուած, զուն մի ուշացնէր վերագարձի մեր օրը,— ձեռքերը յաճախ երկինքը տարածելով կը ձայլէր ու կ'աղօթէր Օսան,— եթէ քիչ մը զուժ ունիս ինծի հանդէպ, արժանի ըրէ՛ գիտ Տիրանս, Քերորս ու Սերորս միտսին տեսնելու մեր տան սեմին...

Աստուած չսեց սակայն Օսանը:

Ջկրցաւ համբերել:

Տննդ մը եկաւ ու տարաւ զինք:

Ան՝ որ այնքան տոկոսն ու շարքաչ էր, չկրցաւ դիմանալ:

Եւ զնայ խառնուելու Տէլք Աթիէի հողին, անյայտ սեղ մը:

### ՀԱՐՍԱՆԻՔ

Հաննոն կը կարծէր, որ իրենց մահ չի պատահիր. ուրիշներ կրնային մեռնիլ, բայց իրենք ինչո՞ւ մեռնէին:

Ոմանք մեռած էին գաղթի ճամբուն վրայ: Ուրիշներ՝ քաղաքներուն եւ գիւղերուն մէջ ջրուիչէն ետք: Եպրուսէն, Եէմսիսէն, Գարալէն, Հոմսէն, Նէպքէն ծանօթներու մահուան շուրջ յաճախ կը հասնէր Տէլք Աթիէ: Մահը քնական բան մըն էր արդէն: Մարդիկ հաշտուած էին այդ անխուսափելի հրեշիին հետ: Կամ այդպէս կը կարծէր Հաննոն. այդպէս կը կարծէին Հաննոյի հարազատները: Ամէն անգամ, որ մահուան մը գոյժը տեսնէին, «ի՛նչ ընենք, ստոր ալ՝ նասիպը այդ է եղեր» կ'ըսէին ու կը մոռնային:

Սակայն Օսանին մահը, որ այնքան անսպասելի կիրպով պատահեցաւ, ցնցեց Հաննոյի տունն ու տեղը: Առանց կնշը ան այնքան անօգնական կը զգար ինքզինքը, որ կարծէր, թէ իր ալ մահը անմիջական պիտի ըլլար: Գարունին եւ Աննային շեշտուած դուրսգորակըքը թէն քիչ մը կը մեղմէր կայութիւնը, բայց Հաննոն անմիջիկօք կը մնար. չէր կրնար հաշտուիլ այդ մեծ կորուստին հետ: Ի՞նչ ըսել էր ասանց Օսանի ապրիլ... Գարունն ու Աննան նոյնքան չիփթած էին եւ կորուսածի վիճակ ունէին: Օսան, իր ձեռներկցութեամբ եւ քացառիկ անհատականութեամբ՝ տան սրնն էր: Ամէնուն կը հասնէր, բոլորը կը հասկնար: Յոգնիլ չէր զրտեր. օրն ի բուն կ'աշխատէր: Քանի՛-քանի՛՝ կեանքեր լոյս աշխարհ եկած էին իր ձեռքերուն վրայ: Իբրեւ զիզի գայեակ, լսած էր շատ մը ծանուկներու առաջին ճիշդ. այսօր այդ ծանուկները քարձած էին երիտասարդներ, նոյնիսկ կին ու ամուսիններ: Հիմա ատենցմէ սմանք մեռած էին, ուրիշներ գաղթի եւ պանդխտութեան մէջ կը հալէին: Կային, որ զէնք շալկած էին օսմաննան բանակի մէջ, ուրիշներ՝ հալկական բանակին...

Իր հարազատները հայեական այդ բանակին մէջ տեսնելու Օսանին երազը հետը ցնցած էր:

Մահուան անկողինն մէջ, Օսան ամէնէն աւելի իր մօտ ուզած էր տեսնել Աննա հարսն ու անոր անկրակիկը՝ Եարճիկը: Տղիկը արդէն իսկ արթունքի հասած էր. քիթին տակը սեւնալ սխամ էր: Օսան մինչև վերջ այս երկուքին ընկերակցութիւնը կը փնտռէր: Զարմանալի երեւոյթ մըն էր հարսն ու կնուրի այս սերտ յարաբերութիւնը: Օսան գաւաիկ մը աւելի կը սիրէր իր հարսը, իսկ Աննան այդ կնոջ մէջ գտած էր մայր մը:

Գարունն ալ, ծօրը մահէն ետք, ինքզինք անտէր պղպասած էր: Իր մայրը ամէն րոն էր իրեն համար: Հայրը, պարզամիտ մարդ, չէր կրցած աղջկանն ու միւս գաւազններուն ինչպէս պարտադրել պէտք եղածին չափ: Գարուն, իրքեւ քիչ թէ շատ ուսնայ աղջկի, կը շարժէր, կը սիրէր հայրը, բայց մայրը ուրիշ էր: Եւ հիմա, անոր բացակայութեան, գաղթի տառապանքը աւելի կը ծանրանար իր սրտին վրայ: Առանց ապաւելի մնացած էր: Ասոր համար կը ծնար աւելի մտերմանալ Աննային, աւելի ձօնանալ անոր: Եւ երկու հասակակիցները երկու քույրերէ աւելի հարազատ դարձան իրարու...:

Ճիմինն եւս պղպասած էր մեծ ծօր մահուան ձգած բացը, բայց աւելի պաղաւթանալով կը տանէր աչք մէկը: Կամ այդպէս կը թուէր ըլլալ: Աս իր մուրացկանութեանը ետեւէն էր: Կը մուրար եւ կ'ուտէր. փորը լիցնելէն ետք, ուրիշներու ալ բաժին կը հանէր:

Գարուն հիմնական դժուարութիւն մը ունէր: Իրքեւ մանկամարդ աղջիկ չէր կրնար մուրայու ելլի: Գիւղին մէջ երիտասարդներ ձեռք կ'առնէին ամէն աղջիկ: Նոյնիակ գաղթականութեան, թէկուզ եւ մուրացկանութեան ցնցոտիներու տակ, հասարակ աղջիկը ուրիշ էր, տարբեր հմայք ունէր:

Գարունին համար, սահագի երիտասարդներու անկուշտ աչքերուն տակ մէջտեղ ելլելը մոտենալու չափ զժուար բան էր: Նոյնն էր նաեւ Աննային համար, թէեւ ասոր ամուսնացած ըլլալը որոշ ապահովութիւն մըն էր իրեն: Երբ աղջիկներուն հետ մուրայու ելլէր, տղամարդիկ յաճախ զինք շահանելու կը պարնէին: Որքան ալ կրնար, սեւ կին գրասիւղ ըլլար, արար տղամարդը կը շարժէր գոյն...:

— Աննա քույրիկ, ի՞նչ ընեն, ինչպէ՞ս շարժիմ: Փողոց չեմ կրնար ելլի: Նոյնիակ երբ հետք ըլլան ճորճիկն ու ճիմին, զեռ լակոտներ կը սուչեն ետեւէս, իրենց ալքերովը կը հալածեն զիս...:

— Պէտք է ամուսնանալ, Գարուն, պէտք է ամուսնանալ, — նետոց Աննան, առանց իսկ երկմանիւ...:

— Ամուսնանալ...: Աս ի՞նչ բան է, Աննա քույրիկ: Այս կացութեան մէջ ամուսնանալը ո՞րն է:

— Ամէն կին գլխուն վրայ էրիկ մարդու հոգանի մը ունենալու է: Մի նայիլ ինձի. հոգանիս հետու, շատ հետունիքը գացած է: Եթէ կրնաս գտնել էրիկ մարդու հոգանի մը, ոչ մէկ լակոտ ետեւէդ կը սուչ, Գարուն...:

Աս համատարած գաղթին ու սովին մէջ որքա՞ն հեղնական բան էր ամուսնութեան մասին մտածելը: Մա՛նաւանդ Օսան մայրիկին մահէն ետք, ի՞նչ սրտով ամուսնանար Գարուն: Երիշ էր, որ ամէն կողմէ մեծ թէ փոքր կեանքերու մահուանց գոյժը կը հասնէր, բայց կեանքը ունէր իր պահանջները: Ոմանք կը մեռնէին, իսկ ուրիշներ ծնունդ կու տային նոր կեանքերու, հոգ չէ թէ ճշմարիտ ու անստաղծութեան տառապող կեանքերու: Մարդիկ պիտի ապրէին: Կեանք էր սա...:

Գարուն քնու մտածած լուներ ամուսնութեան մասին: Իր կացութեան մէջ, ո՞վ կրնար ամուսնութեան մասին մտածիլ: Մա՛նաւանդ հիմա, ծօրը մահէն ետք, երբ ինքզինք յաւիտեալ պարտաւտութեանց տակ կը զգար: Պէտք էր մուրայ. լանճերուն մուրացկանութիւնը որո՞նք պիտի բաւէր: Դեռ կար ծօրը պարագան: Պէտք էր հասնիլ անոր, որպէսզի քիչ մը մխիթարուէր: ան, որ թուղթէ պարագայ տապալակի մը պէս փուլ եկած էր ինք իր վրայ: Նոյնիակ հիմա Դամասկոս-Հոմա մայրուղիին չէր ձօնանար: Կծկուած-մնացած էր իր քարայր-տան մէջ, կաշիպատ Ս.Գիրքը ձօնար, թէեւ կարգալ չէր գլխոր: Գարունն էր, որ կը կարգար իրեն համար: Ան կը սիրէր լսել մա՛նաւանդ սպիտակները: Սպիտակներուն մէջ իր նախախրածը ա՛յն էր, որ սաղմոսներուն կը գտնար զէպի Երուսաղէմ ու կը կրկնէր. — Երուսաղէմ, Երուսաղէմ, թող լեզուս քիմքիս փակի, եթէ մտնամ քեզ...:

Հաննան Երուսաղէմը կը փոխարինէր Քեսապով, եւ գլուխը կ'օրորէր.

—Անգամ մըն ալ կարգա՛ այդ մասը, Գարուն, աղջիկն, անգամ մըն ալ կար-  
գա՛...—

Ուրիշ սաղմոս մըն ալ կը սիրէր ան, այդ սաղմոսին մէջ առաքինի կիներ նման-  
ցըած էր պողպարե՛ր որթատունկի մը, պողպարե՛ր ծառ մը եւ որուն բացակայութիւ-  
նը այնքան կը խոցէր զինք:

Գարուն առաջին անգամ ըլլալով նեղուեցաւ իրենց Աննա հարսէն: Ո՛վ ծածա-  
նակ ունէր ամուսնութեան մասին մտածելու...: Փորձեց իր բարկութիւնը ծածկել  
Աննայէն, բայց բանիմաց Աննան հասկցաւ տալո՞ջ ապրած տագնապը, ձեռքը դրաւ,  
մօր մը պէս, Գարունի ուսին, շոյեց անոր երկար մազերը:

—Մի նեղուիր, Գարուն քոյրիկ. թերեւս վշտացուցի քեզ. կեանքը ունի իր պա-  
հանջները: Ժամանակը ամէն բան կը լուծէ:

Հիմա Աննա Օսան կը բուրբէր. անոր տեղը զրաւած էր կարծէր: Օսանին մահը  
իմաստութեամբ ու հասունութեամբ լիցուցած էր Աննան:

Եւ ծածանակը պիտի լուծէր նաեւ Գարունին տագնապը:



Օր մըն ալ Տէյր Աթիէ յայտնուեցաւ Հարէլը: Իրեն հետն էր հաւկարկատ եւ  
կօշկակար Սալուն, որ գեռ նոր փեռաց կը հաշուէր, երբ զազմի ճամբան բռնած  
էր կնո՞ջը հետ: Հարսը չէր կրցած տանիլ գազմին ծանրութիւնը եւ մնաւ ու թաղ-  
ած էր Հոմարի եւ Համայի միջեւ տեղ մը: Անկէ ետք Սալուն քանի մը զիւզ փոխած  
էր: Վերջին շրջանին հաստատուած էր Եպրուտ: Հոն վար առած էր իր սղոմազը-  
լուրը, կօշկակարի սալ մը, մէկ-երկու քանակ եւ մտրճը: Գեշ-տղէկ ապրուստ մը  
կը հանէր: Բնաւ մտրացած չէր:

Հարէլն ու Սալուն նստեցան Հաննոյին տուն-քարայրին մէջ: Հարէլ, որ ծանօթ  
էր իր բացառիկ զանդազկոտութեամբ եւ ծայր աստիճան զանդազ խօսակցութեամբ,  
ինք ստանձնած էր խօսակցութեան զիկը: Սալուն մերթ կը կարմրէր, մերթ կը  
կարկամէր. գրեթէ բաժին չէր վերցնէր խօսակցութեան մէջ: Ե՛րբ ու ճիշդ փեսա-  
ցու:

Հարէլ խօսեցաւ Եպրուտի մասին, հոն հաստատուած քեսայցիներուն մասին,  
իրենց ճաշակած դժուարութեանց մասին: Ինք հա առած էր հաշկական բաժակին  
լուրը: Իր խելքին շատ ալ չէր պտակեր այդ մէկը: Օսմանցին օսմանցի էր. պատ-  
մութիւնը այդպէս եկած, այդպէս ալ պիտի երթար: Անէն բանակ դժուարութիւն  
կ'ունենար, բայց օսմանցիք վերջ ի վերջոյ պիտի յաղթէին: Քեսապ վերադառնա-  
լուն մասին խօսեցաւ. ինչպիսի շուտ կը վերջանար սա պատերազմը, եւ ամէն  
մարդ իր բոյնը կը դառնար:

Հաննոն, որ այս հին հարազատներուն յայտնութեամբ բաւական ուրախացած  
էր, շատ չէր խօսեր: Հարէլին ձգուած էր հանդիպման զիկը. եւ ատոր համար ալ  
շատ զանդազ կ'ընթանար պահը:

Գարուն եւ Աննա կը ջանային սեղան շտկել: Ինչ որ տեսցած էր երկու լաճե-  
րէն, իրենց հաւաքածէն: Լաւ-պէշ, քանի մը զրուեցան սեղանին վրայ: Հարէլ զօ-  
տիէն հանեց փոքրիկ տուրակ մը. ինչ որ դրուած էր առջևը, տուրակին կարմիր  
փոշիովը լաւ մը օձեց: Կծու պզպիկ էր:

—Եթէ այս մէկը չ'ըլլայ, ես անօթի կը ստակիմ:

Ախորժակով կերաւ իր բաժինը: Հաննոն, որ Հարէլի պնդումին վրայ քիչ մը  
բան կրած էր այդ փոշիէն իր ուտելիքին վրայ, հազալէն եւ պզպիկին ստատիկ  
կծութենէն պիտի խեղդուէր:

—Հաննօ ապա, ես ալ քեզ մարդ կը կարծէի, պէ՛ ինչպէ՛ս մարդն ես եղեր. Իս-  
կենտէրուններ եւ Անտիօններ շափած մարդ ըսածդ, կծու պէտք է ուտէ:

Խաչոն չէր ուտեր պիտի: Եստ գանգաղ կը շարժէր. կը դիտէր շորս գին. վա՛ւ որ նկատէր իր վրայ կեղտնայած նայուածք ճը, ճակնգեղի պէս կը կարծրէր: Հաննան միշտ կը թնկազեր իրեն, որ ուտէր եւ շատ նազ չընէր: Հարէլ, որ իր բոլոր շարժումներուն մէջ, քելթին մէջ գանգաղ էր, բուսական աշխուժութեամբ կերաս: Գարուն եւ Աննա գրեթէ րան չկերան. սա թէ՛ ամօթխածութեան նշան էր, թէ՛ չէին ուզեր հրեանք անօթի ձգել. իրենց պատասաները կրնային քիչ ճը աւելիով կշտացնել հրեանք:

—Փա՛ռք քեզ, Տէր, հազա՛ր փառք, որ այսօր ալ ստամոքսներս պարտալ չմնաց, — մենտրոսեց Հաննոն: Հարէլն ու Խաչոն ալ, հազար շնորհակալութիւն լայտնելով, քաշուեցան սեղանէն: Գէթ կարելի եղած էր խարել ստամոքսները: Երկար ատեն Հարէլ թաթովը շոյեց բերանն ու երկար պնդեց: Եւ վերջ ի վերջոյ խօսեցաւ.

—Հաննո աղա, չես հարցնիր, թէ ինչո՞ւ եկած եմք ձեզի հետուներէն...  
—Հազար բարի էք եկիր, Հարէլ եղբայր, հազար բարի. ասանկ նեղ օրերուն, հարազատներ, համապիւլպացիներ տեսնելը մեծ ուրախութիւն է: Հազար բարի, մեր աչքերուն վրայ, մեր զլխուն վրայ. հազար բարի: Ինչալլա՞հ օր առաջ կ'երթանք մեր սուն ու տեղը...

—Ինչալլա՞հ, ինչալլա՞հ,— միաբերան կրկնեցին Խաչոն ու Հարէլը, ձեռքերնին երկիւր տարածելով:

—Չե՛մ, Հաննո աղա...  
Հաննային համար ազա չորջորջուիլը, մա՛նաւանդ գաղթի ալը գառնութեան մէջ, արտօրինակ բան էր:

—Օրէկեքով ըսելիքս պէտք է ըտէ կրկնելու բացակայութեան, բայց ինչ կրնանք ընել, ո՞ր ելլեն խնդրելը հիմա...

—Ինքն ըլլալ, Հարէլ եղբայր. ինչո՞ւ կրկնելը դուրս ելլեն...  
—Հին սովորութիւն է, Հաննո աղա, հին սովորութիւն է:  
Հաննոն հասկցաւ, որ ձեռք խնդրելու բան ճը կար հարցին մէջ, բայց չկրցաւ բան ճը պատկերացնել:

—Հաննո աղա,— խօսեցաւ Հարէլ, կոկորդը երեւակայական բանէ ճը մաքրելով, — եկած եմք, Աստուծոյ հրամանով, մեր օրիորդին, Գարունին, ձեռքը խնդրելու:  
—Գարունի՞ն...

Պահ ճը չկրցաւ խօսիլ, նոյնիսկ մասնի Հաննոն: Դեռ թարմ էր կնոջ սուզը: Սա ի՞նչ անպատշաճ բան էր, որ կ'ընէր Հարէլ:

—Հարէլ եղբայր, Աստուծոյ հրամանը զլխուս վրայ, բայց ի՞նչ գիտնամ. կինս, Աստուած հոգին յուսուարե, գեռ նոր մեռաւ:

—Թո՛ղ Աստուած լոյսերուն մէջ քնակեցնէ մեր բոլորին սիրելի Օսան քույրը. մեռնելիք կին չէր, ասանկ արժէքաւոր կնոջ մահը խնայել'ս որ ծանր է. բոլորս ալ կը սգանք իր կորուստը, բայց ի՞նչ կրնանք ընել: Թո՛ղ Աստուած մխիթարէ ձեզ: Բայց կհանքը իր ճամբով, մահը՝ իր: Գարունը զարգացած աղջիկ է, կը հասկնայ:

—Ի՞նչ գիտնամ, Հարէլ, կանուխ է գեռ, կանուխ:  
—Թերեւս, բայց գաղթի այս օրերուն, Աստուած պէլլան տայ մեզ այս օրուան հասցնողին, յա՛ւ է, որ երեսասարգ աղջիկ ճը իր զլխուն վրայ շուք ճը ունենայ: Այր մարդուն շուք արիւ է...

Գարուն չիթթած էր: Երաւունք ունէր հայրը. մօրը սուզը թարմ էր գեռ: Միւս կողմէ՛ կը միշտ Աննայի թնկազութիւնը: Այր մարդու ճը հոգանիին տակ մտնել. նաեւ կը զարմանար Հարէլին պնդածութեանը վրայ: Եստ, շա՛տ պերճախօս էր զարեւած այլ երեկոյ:

—Որո՞ն համար է Աստուծոյ հրամանը, Հարէլ եղբայր  
—Ահաւասի՛կ, մեր Խաչոյին: Աստուած գի՛նք հարուածեց, գաղթի ճամբուն վրայ կրնը մահացնելով: Չիմա, եթէ զուք լարմար կը գանէք, թո՛ղ Աստուծոյ կամքը ըլլալ:



— Խաչը՞ն, Խաչը՞ն...  
 Գարուն կարկանդակ  
 Ինք ո՞ւր, Խաչուն ո՞ւր:  
 Թէն շատ համես էր ինք, բայց բնու չէր երեակայիք հնակարկառ Խաչոյին  
 կինը ըլլալ: Ձէ, իր սրտովը չէր:  
 Հաննոն ալ շփոթած էր: Ինք Խաչոյին աջիկ սուտղը չէր: Ի՞նչ ըսէր, ի՞նչ  
 ընէր:

Իսկ Խաչուն, որուն ականջները ծանր էին, շատ լստակ կերպով չէր կրցած հե-  
 տելի խօսակցութեան, բայց գիտէր, որ իր շուրջը կը գառնար այդ բոլորը: Ճա-  
 կընքնի պէս կարծրած էր, ականջէ ականջ: Դժուար կը շնչէր. չէր կրնար գրտիք  
 վեր առնել ու շուրջը գիտել: Հակառակ պայման, քրտիկը որդա՞ծ էր գիկը: Տնեցիք  
 նոր միայն հասկցան Խաչոյին լուսեման իմաստը...

Ի՞նչ պատասխան տալ, ինչպէ՞ս դուրս գալ այս կացութենէն: Գարուն բռնած  
 էր Աննային ձեռքը: Մօրը մահէն առջին, միշտ կը գիմէր Աննայի խրատներուն:  
 Աննա, սակայն, չէր գիտեր ի՞նչ ըսել: Ճիշդ է, որ նախապէս խրատած էր Գարու-  
 նը, որ ամուսնանար, բայց հիմա, երբ ամուսնութեան աստղարկ եղած էր, ինք ես  
 շփոթի մատնուած էր:

Փոքրիկը միայն անտեղիակ էին անցուղարկին: Այդ օր շատ թափուած էին:  
 Պագին դէմ, կիսամերկ վիճակի մէջ, որքան դժուար բան էր մուրալը: Արդէն իսկ  
 հարուստը եղած էին: Եւ հիմա խոր քունի անցած էին: Արդէն իսկ Հարէլ պատած  
 էր սղեկներու քանաչափը...

Հաննոյին քարայր-տան մէջ անհաճոյ լուսթիւնը կ'երկարէր ու կ'երկարէր...  
 Վերջ ի վերջու շարէն էր, որ իրենց լուսթիւնը.

— Անշո՛ւշտ որ մտածել պէտք է. մենք հիմա պատասխան չենք ուզեր. ցոք լա-  
 փեցէք, ձեռեցէք. ինչպէս որ ձեռք՝ այնպէս կը հազիկնք մենք: Գովի ըլլալու, Խա-  
 չուն իր հացը վասակոյ մարդ է, մինչեւ օրս բնա չէ մուրացած, փա՛ռք Աստուծոյ,  
 իր մորճին ուժ առնով, գէշ-աղէկ հաց մը կը հանէ: Անցեալ օր սեսալ մեր Միտք  
 ազան. ո՞վ կրնար ըսել, որ այդ աղա մարդը մուրացիկի սողալակ կրնար շարկի:  
 Միայն իր մտաբան թաշկիմակը մտացած է իր աղայութենէն: Մեր Խաչուն, ահա-  
 լասիկ, հաց մը կը հանէ: Այսօր հաց հանողը հերոս է, հերո՛ս...: Ի՞նչ որ է, մենք  
 երթանք, վաղը չէ, միւս օր, հոգ չէ, կու գանք պատասխանի...

Մեր պիտի երթային այդ պաղ գիշերով: Եպրուս երթալը գիւրբին բան չէր: Ա-  
 նապատային այդ շրջաններուն մէջ բորենիները տիրութիւն կ'ընէին գիշերով:

— Մ'չ, կարելի բան չէ. գիշերը հաս կ'անցընէք. վաղը չէ միւս օր Աստուած ս-  
 զորմած է:

Աննան էր:  
 Որքա՞ն կը չիշեցներ Օսանի կարծ ու կարուկ տնօրինումները...: Հարէլին  
 ստեղծած փոթորիկը ալեկո՞ծած էր Հաննոն եւ, մա՛նաւանգ՝ Գարունը: Խօսք չէին  
 գտնել խօսելու:

— Այս գիշեր հոս կը մնաք. հիմա դուրսը թէ՛ շատ պաղ է եւ թէ՛ վտանգաւոր:  
 Բորենիները այնքան շատցած են. ամէն օր նոր պատմութիւններ կը պատմուին:  
 Դեռ անցեալ շաբաթ հովի մը պատուեր են անօրէնները: Նեղ կ'ընենք, տեղ կ'ը-  
 նենք:

Աննային կարգապարտութեան դէմ մարդ չառարկեց. կարելի չէր առարկիլ:

Մինչեւ առաւօտ նստած մնացին. ո՞ւր փոխին անկողինը. եւ յետոյ՝ փոռիկը  
 անկողին կա՞ր որ...: Ամէն մարդ նստած տեղը մրափեց:

Գարուն, որ կծկուած էր Աննայի կողքին, մինչեւ առաւօտ չկրցաւ թարթիլ  
 թարթիչի կպցնել: Այնպիսով էր հոգին: Մօրը սուղը կը խեղդէր վեր. միւս կողմէ՛  
 չէր կրնար Խաչոյին հետ կարգուելու զազափարին հետ հաշտուիլ: Աննան ալ չէր

կրնար քնանայ: Երկու մտորիմները, մթութեան մէջ, անյստի Լայնով կը փոփո-  
ւին: Մինչև առաւօտ այդպէս մնացին:

Աննան չէր կրնար յստակ բան մը թնայողի Գարունին: Ինք իր ձեռքով ընա-  
րութիւն կատարած էր եւ՝ ինկած: Անտեսած էր նշանած, հայր ու մայր եւ փա-  
խած-զացած էր գիշերով, հսկում գիշերով եւ պարծած էր Քերտրին կին: Իսկ Քերտր,  
հիմա հագարաւոր մղոն հետու, այսպէս մինակ ձգած էր գիշեր: Իր ընտրութիւնը  
կցած էր սխալ: Հիմա ի՞նչ թնայողի Գարունին: Ձէր կրցած այս կամ ոչ թնայողի  
անոր:

Հանձնե ալ չէր կրցած քնանայ: Յանախ կը տնջար: Քանի մի անգամ «Օսան-  
նա՛, Օսաննա՛» գոչած էր: Է՛հ, տարբեր կ'ըլլար, եթէ երբեք Օսանը ողջ կցած  
ըլլար: Անիկա գիտէր կարծի կապել ամէն բան: Ամէն հանգոյց քակել գիտէր: Խա-  
չոն ալ չէր կրնար քնանայ: Ինք, հակառակ ականջներուն ծանրութեանը, մերթ ընդ  
մերթ կը լսէր իր սրտին զարկերը: Միայն Հարէյն էր, որ կը քնանար: Ան պարզա-  
պէս միջնորդ մըն էր: Իր ըսելիքը ըսած էր: Թեթեւացած էր: Եթէ ըլլար՝ շատ լաւ,  
եթէ ըլլար՝ ի՞նչ կրնար ընել...: Այդ որ փորձ ալ բաւական լեցուն էր, փա՛ռք  
Աստուծոյ, մինչև առաւ օրով փայտացած էր:

Աստուծուն Աննա եւ Գարուն զօրս էին կլած: Չուր կրած էին հեռաւոր շրջո-  
րէն, հոն ալ լուսացուած էին: Կրակ պատրաստած էին: Քիչ մը աչիւրդ, որ մնացած  
էր, կրցած էին ձեռք բերել եւ մալէղ պատրաստել: Անպատասխան պաշին մէջ տա-  
քով մալէղը բարերար ազդեցութիւն կը գործէր:

Չուրի ճամբուն վրայ, երկար լուսմանէ կտք, Աննան բացած էր խօսքը.

-Ի՞նչ պիտի ընես, Գարուն քոյրիկ:

-Դուն ի՞նչ կ'ըսես, Աննա հարս:

-Ի՞նչ ըսեմ, Գարուն քոյրիկ. ի՞նչ ըսեմ: Անցեալները քեզ կը խրատէր, որ այլ  
մարդու մը հոգանին գտնես: Հիմա ես ալ չեմ գիտեր, թէ ի՞նչ ընելու է: Ահապէս  
Թալան. այլ մարդ մըն է, բայց կը վարանիմ այս կամ ոչ ըսել:

Գարուն ալ տիրած էր լուսմանը: Մինչև «տուն» լուս մնացած էին, բայց եր-  
կուքին մէջ ես փոթորիկը սաստիկ էր կցած: Աննա բռնած էր Գարունի ձեռքէն եւ  
ըսաւ.

-Քոյրիկ, առանց քեզի չեմ ուզեր մնալ. չեմ կրնար մնալ: Բայց զուն քու սըր-  
տիդ ճամբովը քայլէ...

Մալէղը ուտելէ կտք, Հարէյ զեռ պիտիքը լրիւ չորրոցացած, հասկցուց, որ եր-  
թալու ժամն է: Իսկ Թալան արդէն իսկ չէր կրցած բան ուտել զրեթէ: Ամօնալէն  
կաս-կարմիր կը կտրէր յանախ, չէր իսկ համարակիր բերանը բանալ:

-Հարէյ Էմմի, թող Աստուծոյ կամքը օրհնեալ ըլլայ:

Գարունն էր: Վճռած էր ընելիքը: Գիշերուան երկարատեւ արթնութեանը մէջ  
շատ մտածած էր, շատ արօթած էր, վերջապէս կրցած էր վճռել: Աննա ինք վճռած  
էր իր ճակատագիրը: Ինք եւս հիմա կը տնօրինէր իր ապագան:

Բոլորն ալ անակնկալի եկան: Աննան, Հարէյը, Թալան, բայց մասնաւոր Հան-  
նոն: Գարուն ուսեալ աղէկ էր. բաւական համարեակ էր նստել, բայց այդքան վրճ-  
ուակամութիւն ոչ ոք կ'ակնկալէր իրմէ:

-Պայման ունիմ սակայն:

-Քու պայմաններդ մեր գլխուն վրայ, աղջիկս: Միայն թէ ծանր պայմաններ  
մի գնիր, գաղթի օրեր են, կրք Քեսապ գտնանք, ամէն բան քու ուզածին պէս  
կ'ըլլայ:

-Ո՛ր, ո՛ր, ես այնքան սնափառ չեմ. ուզածներս պարզ բաներ են: Ձեմ ուզեր  
ընտանեօրէն անդամներէն զատուիլ. սա առաջին պայման. երկրորդ՝ առանց պատի  
չեմ կենակցիլք այլ մարդու հետ:

Առաջին պայմանը խախտելիս ալ սրտովն էր. ի՞նչ էր որ. կօշկակարի սալ մը, երկու մուրճ, երկու գանակ եւ կապոց մըն ալ կաշի. կ'ստանէր ու կու գար եւ կ'ըլլար տուն-փեռայ:

Միւս պայմանը ծանր էր. ուրկէ՞ գտնել քահանայ: Եթէ Հոռն երթալին, հոն թերեւ գտնուէր քահանայ մը. այդ ալ դիրքին բան չէր:

—Կ'ըլլայ, կ'ըլլայ.— մէջ մտաւ Հարէլ: Առիթ չտուա խախտել:

Ինք հոս կու գայ. ինչալլա՞հ լաւ ալ գործ կ'ունենայ: Պտակն ալ կը կարգուղ-րենք:

Հարէլն ու խաչոն խոստացան շուտով գալ եւ հարսանիքը ընել: Խաչոն պիտի բերէր, իր գործիքներուն հետ, նաեւ անկողին մը: Տուն-քարայրը երկուքի պիտի բաժնուէր փայտէ՛ վարպետով: Գարուն ուրիշ պայման մըն ալ ուներ. ամէն բան պիտի անցնէր ատանց քէֆի:

—Քէ՛ֆ. առանց ստոր գծուար է, այլիկս, բայց նայի՛ք, բան մը կ'ընենք:



Քանի մը օր ետք, վերագործան Հարէլն ու խաչոն: Վար առին անկողինը, խաչոնի կօշկակարութեան քանի մը գործիքները: Տուն-քարայրը վերածուեցաւ երկու սենեակնոց բառնոթի. հարսանեկա՛ն տունի:

Երկին եւ Ճորճիկը չաւելեալ ետանդով մտրացած էին այդ քանի մը օրերուն: Է՛հ, հարսանիք կար, հարսանիք. տան մէջ փեռայ պիտի ունենային: Քեսապցիներուն համար փեսան աշխատցնելը, թէկուզ եւ գրաստի լափ, ամօթ չէր: Վստահաբար իրենց համար կարմիր կօշիկ պիտի կարէր փեսայ խաչոն: Պէտք է ըսել, որ աղաքը մեծ ուժ տուած էին իրենց լեզուներուն եւ ձեռք բերած էին ոչ արհա-մարհելի արդիւնք:

Հարէլն ու խաչոն իրենց հետ բերած էին նաեւ Նանար Ստեփանը: Սա, գիւղին մէջ, իբրեւ աստղազոր, միւս աստղազորներէն կը զանազանուէր ան՝՛, որ սովորական գործիքներուն հետ ուներ նաեւ մեքենայ մը, պտուտակաւոր մեծ գոր-ծիք մը, որ մաղկերու, կուլաներու եւ թմբուկներու առխտակէ շրջանակ կը շինէր: Բարակ առխտակը մէկ ծայրէն կ'անցընէր մեքենային մէջ, միւս կողմէն շուրս կու գար շրջանակը: Նաեւ լաւ գրեկ-կարգալ գիտցող մարդ էր: Ամէն կերակրի, ամառ թէ ձմեռ, լիւնային նեղ կամանէն կը քարէրանար, լուսաւորականներուն եկեղեցին երթալու համար: Կը հազներ շապիկ եւ գպրութիւն կ'ընէր: Այնքան հմուտ էր գըպ-րութեան մէջ, որ գիւղացիները զինք «երէց» կը կոչէին:

—Աս ալ վանքի շորպալ խմած է, սասնիկ նեղ օրերուն կընայ պտակ ալ ընել.— տնօրինեց Հարէլ:

Ո՞վ ինչ կրնար ընել: Այդ նեղ կացութեան մէջ հարկը կը լուծէր ամէն բան: Հարսանիքին օրը, Տէլը Աթիկ գտնուող բոլոր քեսապցիք մէկտեղուեցան: Գա-րուն պայման դրած էր օդի շինել: Ընդհանուր առմամբ իր փափաքը չարգուեցաւ: Թեոյ՝ հարսանիք մը անցընելու լափ օդի ուրկէ՛ գտնել: Հակասակ իր կապած պայմանին, Հարէլ չէր մը օդի խոթած էր ծոցը: Թաքուն-թաքուն կը խմէր ուժայիկ մը. նաեւ բաժին կը հանէր ալլոց, պայմանաւ, որ զազանի մնար...: Օդին հոտը եթէ չըլլար, զազանի կը մնար: Բայց Գարուն ձայն չհանց, այնքան ստան, որ օդին հրապարակ չէր խշներ:

Հաներուն մուրաչածովը, նաեւ գիւղացիներուն բերածովը, բոլորն ալ կերան ու կ'ըտացան: Վերջ ի վերջոյ հարսանիք էր, թէկուզ եւ գաղթի ու թշուառութեան մէջ: Նոյնիսկ սրնգահար Սալի Սոլոմոնը բաներ մը նուագեց. շարժար մըն ալ գար-ձան: Է՛հ, առանց շարժարի հարսանիք կ'ըլլա՞ր!

Կէտորէ ետք, Նանար Ստեփանը՝ երէցը, ծոցէն հանեց խաւ մը եւ Ս.Գիրք մը եւ քահանայի մը հմտութեամբ կատարեց պահապարութիւնը: Կը պահուէր միւստնը: Բողոքական հարսնացուն պէտք էր վարձենի մայր կնիզացիին...

—Այդ ալ երբ Քեսապ երթանք, հոն թող ընէ քահանան,— տնօրինեց Հարէլ:

Տուեալ կայութեան մէջ, ստիկ աւելի լաւ կարգադրութիւն անկարելի էր ընել: Կատարուեցաւ պատկը, Նանար «երէց»ի ձեռամբ: Հաննոյին կաշիպատ Ս.Գիրքը համբարել տաւ փետին, հարսին, Հարէլին, որ ստանձնած էր կնքահայրութիւնը եւ Աննային, որ կնքամայրն էր: Փեսան եւ հարսը նայնիսկ համբարեցին «երէց»ին աջը...

Ամէն մարդ զնաց իր տունը: Կնքահայր Հարէլն ալ մեկնեցաւ Եպրատ:

Յաջորդ առաւօտ, հազիւ արեւը ծագած, Պաշտն վերցուց սուլը, գօտիին մէջ խրեց մուրճերը եւ իջաւ Տէյր Աթիէ: Հոն, նեղիկ ճամբաներուն մէջ պիտի փարձէր հաց ճարել...

(Շար. 11)

ԳԷՈՐԳ ԱԲԷԼԵԱՆ

Գ. ԳՈՅՈՒՆԵԱՆ

**pneuma**

ընդդիմակաջ կողմից մատնեմու կախ բեմն կղզիներու  
ըրայիմ կողմը.  
յամբ, ծամբ պտուսոբոյ մթապար, մեռելութեամ ամտրամադրելի միջոց  
կարծես  
ու ամսադարթարեր, ջնջուած.

դժուար կեցութիւմ .....  
.....  
.....

Բիմբս լեզուիս որբամ ծոյլ կը փակի,  
ցայգայիմ միսը եւ  
մարմինը կէտորուայ արիսն զարծա ա՛ կը Բայեմ ամ առածգական արիսն,  
պանունելով դէմբ մը [սոնա, պստիկ պաստուհամի չափ ու վրայ.  
(յաջորդական լուրներ կաթ կը ծծեն).  
խաչակմբումիմ տակը ինչտակիլ կը պատկիմ, վի. ծակամուտ մը եւ  
մարգըխամեր կարիւնիմ շխասած.  
վերելակը՝  
    սեմեակը,  
        շէմբը,  
            թաղը,  
                Բաղաբն ու երկիրը աշխարհիմ ետ տուա,  
միջատները Ոարիմջէմ վեր, աւելի վե՛ր դիցագում ծորակը փրթաւ  
պտղակորոյս երկիր  
պտղակորոյս Բաղաբ  
պտղակորոյս թաղ  
պտղակորոյս շէմբ  
պտղակորոյս կայամ.

(օ դիպուած ամմահութիւմ ալ իմչպէ՛ս Արարատիմ պէս գոնէ մնա).

Փետրուար 02

## Ի ն ե կ ա տ է

«...առաջ պատեալ զինն...»

1-2-3-4.ա.

Բաղցեալ ու ծարափ  
Բակուեցաւ, սփռուեցաւ

ցամկը  
Խօսարամիս. թափառական  
շուներու,  
մարախներու  
ուրած աջ եւ ահեակ խոտորում.  
տարագրուած

այլ կ'ըլլամ

կերպ մը կու գայ  
(արդէ՞ն երեսակայութեամբ) կ'ըլլամ  
անհատարիմ

եղող մը,  
հերձուածող մը.  
լեզու, աչքերէս ականջներս  
փրցուցին, համեցին ու դրին ժամգոտած կաթսային  
մէջ, դեռ

կը խաշուիմ, դեռ  
չեղայ ընկիւմին (բարոյ, սովորական Յերկայութիւն).  
կամ

մորեմի կ'այրիմ  
առայում եւ

միանձնական կը փապաղիմ օղը  
բռնաբարեղով.

աբասիան ինչու՞ հակառակ կը ծաղկի, ուղղահայեաց  
ի՞նչ գործ ունի (իսկապէս որ անտամեփի հոտով է՞, Ի՛նչ.Ֆ.Ֆ.).  
կարմիր ու դեղին ձիերը Բիչ առաջ հոսկէ անցամ,  
աւերակներու տասնընիմզ երկվայրկեանին մէջ վիժեք եմ.  
— ո՞վ բերիչ դիպումիմ...

մատչելով(՞),

ուրամաղով(՞)

փշրամբներու յանդիման կը կենամ  
տանջամբով ու անձկութեամբ

յոք ոսկորներ տեսաւ  
միմչէր բանը իրեմ հասնի ու  
ըսէ.

մարդուն պէս, որ

1-2-3-4.բ.

հեռացող աղէտների մօտս, գիս կ'առնեն, կը գերեն,  
փշաթելեր

ձեռնարձակ  
բերնէս երեսիս առջեւ եւ շուրջամակի

կարծես  
առկայս կը գալարուիմ, գսպամակածեւ կը գալարուիմ.

որովայնը  
վաղեմի կարծր ամացումով երկարեր է,  
գարշահոտութիւնը Բիթս բթամատին եւ ցուցամատին միջեւ առած  
կ'ոլորէ-կը սխմէ,  
կ'ոլորէ-կը սխմէ.

Ողկակի ածու մը կը վայտուիս ու չես մարսեր.  
փոխնորդ բամ մը.

փոխնորդ բամ մը.  
ձակերէդ ողեղդ դուրս կը խուսավի.

զառին ստամոքսը ոտքերուն հաւասար ազարակի յատակին դպաւ,  
կոպերովդ պատրաստուած տոպրակին  
Ցտտեր պատմութիւնն ամզամ չի յիշեր.

Ի՞նչ ըրիմք միմչեւ այս ուշ ժամը...

մահը համրատուն կ'երթար ու գոլխէն թափուող կենսասերմով կը լուացուէր,  
ես կու գար ինքզինքնիմ.

կրակը ինքնաշարժը եւ մեզ կը լափէ.  
ամեղջիւր արեւ մը գծեց սեփսեւ ու ամտաբեր գրատախտակին վրայ.  
արբիչ մը մատմերուն սուներ են, կը բերեն,  
ամձայն, անգոյն սեմեակ

չիմքըչիմքըչիմքը...

Ոնտը միշտ հեզմերով  
իրեն կը դառնայ,  
մեր կամուրջն է,  
կոյր, կոնծած ամ ու՛ր պիտի կեմայ որ ուրիշը շարունակէ...

1-2-3-4.գ.

բնութիւն մը աչ ոտքիս ետեւը, միւսին կապուած,  
կապուած միւսին,  
միւսին կապուած

ձայնը կը տեսնէ  
տեսնելը նայէն, որ կը տեսնուի իրբեւ տեսնելը նորէն  
ամձարգել չկայ  
կրմաս պատկերացնել ներստեղծում թափանցիկ որմերու ու

մտքի պտղներս,  
խամանակի գույք խշխամ,

կերակուր,

տկրոր կը սպասարկուիս.  
բառ եւ բիծ միասին պլտի Յարակեն յարդն ու ցորենը եւ  
ակնոցներ հաս,

հող,

հոն,

մէջտեղը-

Երագ. կարմրաթուշ ու ակամուած սըր-  
բամի մմամ կամ պատուի անատամ  
միմարէ ամմամ զգալարամներուս  
ու սերմիս կահոյրը խմէ՝ -

մէջտեղը

աւագ  
կենդանի  
հնայագութիւն  
աւագով  
աւագ

կաղկընծի որդեր մանր-մունր ամձուկ հասակ մը փայտ.  
Ոստրացոյ օգոն,  
մարմնիս Քաղցկեղի վէրքեր կը դրկես.

հիմա,

չգննուած երկկամունքներ մարբէյ,

Որակարան Քաշեյ,

ամէն.

Յունուար 82

ԳԷՈՐԳ ԳՈՅՈՒՆԵԱՆ





# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐՎՈՒՆՎ

— ՓՐՈՖԵՍՆՆՈՐ

— ՅՈՎՀԱՆՆԵՍ

— ԶԷՔԻՃԵԱՆԻ

— ՀԵՏ



Հայրենիք-Սփիւո՛ւ մշակութային կապերը անլի ամուր հիմնուր վրայ խարսխելու, լիբանանահայ մշակութային կեանքի վերականգնումի ճիգերուն մերում մասնակցութիւն բերելու եւ իրան հայ արուեստը մեր լայն հասարակութեան ծանօթացնելու նախանձախնայութեամբ՝ «Համազգային»-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, վերջին երկու տարիներուն, յաջորդաբար Լիբանան հրատիրեց հայ երաժշտութեան հարազատ պետականները՝ «Մարտրոն» երգ ու պարի համոյքը, «Կոմիտաս»-ի անուան Բառեսակը, Գուսանական եւ ժողովրդական երգ ու պարի պետական համոյքը եւ Հայաստանի ակադեմիական պետական երգչախումբը, պեկավարութեամբ՝ անուանի խմբավար փրոֆեսէոր Յովհաննէս Զէքիճեանի:

ՇՈՒՐԻԻ՛ «Համազգային»-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան այս յանդուգն որոշումին, 18 տարիներու պարտադիր քաջակայութեանէն ետք, երկրորդ անգամ ըլլալով միջազգային վարկ ու համբաւ վայելող Հայաստանի ակադեմիական պետա-

կան երգչախումբը ո՛չ միայն գեղարուեստական վայելքի պահեր ստեղծեց 16ամեայ պատերազմն վերականգնած լիբանանահայա- բնան և Լիբանանի երաժշտական շրջանակներում համար, այլև մեր ժողովուրդի գոյգ թեւերում միջուկ վերջին տարիներում զարգացած գործակցութեան և իրերօգնութեան ճիգերը վերածեց կենդանի կասյի:

Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբի Լիբանան ալյցելութիւնը իրաւամբ եղաւ մշակութային յայրասմակ մը: Բազմամղում մե՛նա երգչախումբ մը Պէյրութ հրախիթելով՝ «Համազգային» Լիբանանի Շրջանային Վարչութիւնը եկաւ անգամ մը եւս փաստելու, թէ անխախտ է լիբանանահայութեան վերականգնումի կամքը եւ աներեք հիմներու վրայ հաստատուած՝ Հայաստանը Սփիւսի՛ն կասյոյ մշակութային կամուրջը:

Ամուսնի խմբավայր եւ մեծ արուեստագէտ փրոֆ. Յովհաննէս Զէրինեանի Պէյրութ ալյցելութե՛նն օգտուելով, «Բազմա» խմբագրութեան անունով Սարգիս Կիրակոսեան ընդարձակ զըրոյց մը ունեցաւ բազմավաստակ երաժիշտի՛ն հետ: Ստորեւ մեր ըմբերցողներուն կը ներկայացնենք Երկու համագրուանով կատարուած վերոյիշեալ գրոյցը:

● Սիրելի Մանսրո, Եկէ՛ք մեր գրոյցը սկսիմք մանկութենէն, ջանաւով գոյն ու դիմագիծ տալ ձեր մանկութեան այն Քաղցր յուշերուն ու տպաւորութիւններուն, որոնք կենսական ճշմանկութիւն ունեցան ձեր երաժշտական կազմաւորման ու արուեստագէտի կեանքին մէջ: Ծանօթ եւ բազմիցս փաստուած իրողութիւն է, որ մանկութիւնը անսպառ զանձարան է իրաւանջիւր Ոչմարիտ արուեստագէտի համար, բանաստեղծ ըլլայ ան, գեղանկարիչ, դերասան-քեմադրիչ, երաժիշտ կամ որեւէ արուեստի ծառայող: Զեր մանկութիւնը նոյնպէս հարուստ պէտք է եղած ըլլայ այս առումով, որովհետեւ դուք ծնած ու մեծցած է՛ք երաժշտական մթնոլորտով յատկանշուող ընտանիքի մը յարկին ներքեւ, ուր իշխող եւ ռզնշնող մթնոլորտ իբրեւ տիրապետած է Կոմիտասի հոգեզմայլ երաժշտութիւնը:

Վերջերս լոյս տեսած իարցազըրոյցի մը մէջ, դուք ամբողջական խանդավառութեամբ կը խօսիք ձեր մանկութեան, Քայց ի մասնաւորի ձեր հօր մասին, երբ տառաջիօրէն

կ'ըսէք. «Հայրս բաւական յաճող ջութակահար էր, իսկ մայրս դաշնակ կը նուագէր: Հայրս եղած է Կոմիտասի տունէն կրտսեր անեղնէն մէկը: Երբ հօրս ընկերները կը հաւաքուէին մեր ընտանեկան յարկին մէջ, մեծ մասամբ Կոմիտասի յօրինած երգերը կ'երգէին, իսկ անոնց խօսակցութեան ՅՕ առ հարիւր տոկոսը Կոմիտասի շօրջ կը դառնար: Եստ փոքր տարիքէս, երբ ճաշանդանին տակ նստած՝ կ'աւուսնանայիք ձեր հօրս ընկերներուն կօշիկները, պահնչս սրած կ'ըլլայի Կոմիտասի երգերուն: Ենթրէիս ծնողներու բարեկամներուն՝ ես բախաւք ունեցայ խմբերգային երաժշտութիւնը լսելու ճիշդ աջնպէս՝ ինչպէս Կոմիտաս վարդապետը սորվեցուցած էր իրենց»:

Այսինքն՝ ձեր ծնողքն ու իրենց բարեկամները մանուկ Յովհաննէս Զէրինեանին կը ներկայացնէին այնպիսի՝ բացառիկ նուէր մը, որ իբրեւ կենարար մագնիս՝ իր Քաշողակամութեան տակ պիտի պահէր ձեր հետագայ տարիները: Կը հաճէի՞ք անելի մանրամասնօրէն խօսիլ Պոլսոյ միւս հայ ընտանիքներու մէջ տիրող մթնոլորտէն Հասկա սարրեր եւ ձեր

ծնողական յարկը բնորոշող կուրի-տասեան մթնոլորտին եւ ամօր անկ-րադարձներում մասին:

—Վաղ իշխատակներ կ'արժնեն հիմա հոգիիս մէջ: Դուք չէք կրնար պատկերացնել, որ ինչպիսի՜ նմու-թեամբ չուզեցիք հոգիիս լարերը, երբ իշխատակեցիք Մեծն Կոմիտասի աշա-կերտած ըլլալու պատիւը զբօշի մը պէս բարձր պահած հալըս եւ իր ընկերները: Այո՛, հօրս ընկերները յաճախակի կը հանդիպէին մեր տունը եւ խօսակցու-թեանց նիւթը մեծ ծասամբ Կոմիտասը կ'ըլլար: Ես շատ փոքր էի, քայքայ տա-կաւին մինչեւ այսօր շտապօրէն կը չի-չեմ, թէ հալըս ինչպիսի խանդավառու-թեամբ կը խօսէր Կոմիտաս վարդապե-տի մասին, թէ՛ ժամանակին, տասնը-հինգ օրով, ան ինչպէս մեր տան հիւրն էր, ինչպէս կը վարուէր մարդոց հետ, ինչպէս էր իր առօրեան, ինչպէս էր իր ձայնը, ինչպէս էր իր բնաւորութիւնը, հասկն: Այս ամէնը փոքր հասակիս ա-կանջ-ականջ լսած եմ, եւ մա'նուանդ՝ այն քաղմածայն երաժշտութիւնը, որ մեծանուն վարդապետը մշակած ու սոր-վեցուցած էր իր աշակերտներուն՝ իր նրբբունդակն յատկանիշներով եւ հա-մապատասխան խորաթմափանց վերլու-ծումներով: Հետեւաբար, ես բախտա-ւորներէն մէկն էի հրեւի, որ առանց Կոմիտաս վարդապետը տեսած ըլլալու՝ հեռուէն հեռու զգացած էի իր մտա-ծումներն ու ապրումները եւ մանուկի անմեղ բնագորով ըմբռնեամ Կոմիտասի հրաշալի յօրինումները:

Բայց իմ պարագայիս, յատկանշա-կանը սքիչ է: Այդ օրերուն, ծնողներս մեծապէս մտահոգուած են ինձմով, ո-րովհետեւ ես մինչեւ հինգ տարեկանս չեմ խօսած, խօսելու գոտարութիւն ու-նեցած եմ եւ մինչեւ այսօր ալ ունիմ: Բայց տարօրինակ ձեւով կ'երգէի իմ լսած երգերս եւ երգելու աստի խօսքերը կու գային, յետոյ է որ լիպուս բոցուե-ցաւ եւ ես սկսայ կամոց-կամոց խօսիլ: Կնակքիս մէջ ես ընկճանրապէս զգացա-կան մարդ եմ, սակայն միշտ ալ զգա-ցումներս խօսքի վերածելու գոտարու-թիւն ունեցած եմ: Ատոր զմայ՝ հրեւի

Աստուած իմ մէջ զարգացուցած է ե-րաժշտական արտայայտման ուժը եւ այնպէս անօրինակ, որ մանուկ հասա-կէս կայուն երաժշտութեան եւ երա-ժիշտ գառնամ:

•Մեծ Եղեռնէն առաջ, Պոլիսը եղած է մեր մշակոյթի մայրաբա-ղաբներէն մէկը եւ պոլսահայութեան ընծայած գրական, երաժշտական, թատերական, պարզ խօսքով՝ մշա-կութային եռուն ու հարուստ կեանք մը ապրելու բախտը: Նոյնիսկ Մեծ Եղեռնէն ետք, հազիւ Առաջին աշ-խարհամարտի անարտը յայտա-բարտած՝ Եղեռնէն ետոպարած գրա-գէտներն ու մշակոյթի գործիչները վերադարձան Պոլիս եւ լծուեցան պոլսահայութեան ընդհատուած մշա-կութային կեանքը վերաշխուժացնելու գործին, կազմակերպելով գրական-մշակութային դասախօսութիւններ, լսարաններ ու զանազան բնոյթի ձեռնարկներ: Մինչեւ այսօր, երբ կը կարգանք մեր ձեռքը պատահաբար հասնող «Մարմարա»-յի թիւերը, ամր էջերուն կը կամոյթիմք երիտասարդ դաշնակահար-դաշնակահարանիմե-րու, գեղանկարիչներու, ջութակա-հարմերու, երգչախումբերու, թատե-րախումբերու եւ այլ խումբերու ձեռ-նարկներուն ու յաջողութեանց անդ-րադարձող գրութիւններու: Նոյնիսկ շնորհալի մանուկ արուեստագէտները կ'արժանանան յատուկ հոգածութեան ու բաշխումներին:

Այս բոլոր տուեալները կու գան ընդգծելու, որ մշակութային-գեղար-ւեստական յատուկ արանդներով զարգացող պոլսահայ կեանքին հիմ-նական յատկանիշներէն մէկը բազ-մատասնեակ տարիներու փորձառու-թեանց վայր հիմնուած իր գեղար-ւեստական դիմագիծն է: Անշուշտ, ձեր մանկութեան տարիներու Պոլիսը 1910ական թուականներու քաղաքի-ւնիք Պոլիսը չէր, իսկ մեր օրերու Պո-լիսը շատ կը տարբերի ձեր մանկու-թեան տարիներու քաղաքէն: Քաղա-

Բակամ, ամուսնական, կրթական, ընկերային եւ զանազան այլ պարտադրամքներ ու կացութիւններ, այս կամ այն տարողութեամբ, իրենց ժխտական կամ դրական անդրադարձը ունեցած են մասն պայտահայութեան կեանքին վրայ: Մեր մպատակը այդ համգրուամներում, պարտադրութեանց եւ անոնց ուղղակի ու անուղղակի արդիւնքներում կամ հետեւեալներում Բնմարկումը կատարելու աշխատանքը չէ: Ասիկա խոր եւ համապարփակ ուսումնասիրութեամբ միայն սպառող առամտին միւս է: Մենք պարզապէս կ'ուզէինք իմանալ, որ մշակութային-վերալուստական իր հանգչած աւանդները թիւրեպացուցած Պոլիսը, ըսել կ'ուզենք՝ դըպրոցը, մեր մշակութային միտքիւնները, երաժշտական ձեռնարկները ի՞նչ աւելցուցան կոմիտասեան երաժշտութեամբ համեմատած ձեր ընտանեկան դաստիարակութեան վրայ:

— *Բուրբ տեսակի պատկերացումներն աւելի տարրեր է պոստակայ զարթոթի աչք օրերու մշակութային կենտոնակ կենտրոն, իրեն հայկական մշակութի օրրան: Ես չէի կրնար անմասն մնալ այդ աշխոյժ կենտրոն եւ բնական է, որ երաժշտական-երգչախմբային ձեռնարկները մեծապէս անդրադառնային իմ վրաս: Պատանի հասակէս ես կշտուեցայ երգչախմբային-երաժշտական կենտրոն եւ 18 տարեկանէս, այսինքն՝ 1844էն մինչեւ 1861 ես ունեցայ խրճարավարական հարուստ գործունէութիւն, վարելով կրօնական թէ աշխարհիկ բազմաթիւ երգահանդէսներ: 1847ին, առաջին անգամ ըլլալով, ինծի վիճակեցաւ Պոլսոյ սեմֆոնիք նուագախումբին հետ բնծ բարձրանալու բախտը: Այնուհետեւ, ես բնորոշ գործունէութիւն ունեցայ ե՛ւ իմ երգչախումբին, ե՛ւ Պոլսոյ սեմֆոնիք երգչախումբին եւ արհեստավարժ երգիչներէ կազմուած այլ երգչախումբի մը հետ, որուն թուրք խմբավարը երբ լրաց երգչախումբը, անոր խմբավարութիւնը ինծի վստահեցաւ, հակառակ անոր, որ ես հայ մըն էի եւ ասիկա պարփկ արգելք մը չէր:*

● **Փորձեմք** աւելի զարգացնել հարցումը: Պոլսոյ երաժշտանոցը ւարտելէ ետք, մեկնեցաք Փարիզ՝ կատարելագործելու համար ձեր մասնագիտական ուսումը: Հոն յաճախեցիք փրոֆ. Ժամ Ֆուռնէի զըլխատրութեամբ գործող Էֆոյ Նորմալ տը Միզիք երաժշտական դպրոցը, որ անկասկած բարեբար դեր ունեցաւ Յովհաննէս Ալէքիճեան անուն խմբավարի դիմագիծի բիրեղացման աշխատանքին մէջ: Բայց կը կարծեմք, փրոֆ. Ժամ Ֆուռնէի օգտակար ազդեցութեամբ, անոր երաժշտական աշխարհահայեացքին, ցուցմանքներում եւ ուսուցողական ճիշտ անդրադառնալէ առաջ, կարելի է աւելի ես կանգ առնել ձեր միւնչ այդ ունեցած երաժշտական փորձառութեան եւ գասատումներում թողած գրոշմին վրայ: Օրինակ, հարցազըրոյցի մը մէջ կ'ըսէք եւ Բիչ առաջ ալ յիշատակեցիք, որ 18 տարեկանին ունեցաք պոլսահայ 18 խումբերու մաս կազմող երգիչներէ կազմուած ձեր երգչախումբը: Ասիկա պըզտիկ քախտ մը չէ: Հիմա, երկար տարիներու հետադարձութենէ, դուք ինչպէ՞ս կը դիտէք այդ օրերը եւ Փարիզէն շքեամաւարտ ըլլալէ ետք միւնչեւ 1861 ունեցած ձեր գործունէութիւնը:

— *Տեսէ՛ք, Փարիզէն շրջանաւարտ ըլլալէ առաջ եւ ետք, ես իմ գործունէ մասնակցութիւնս բերի Պոլսոյ պետական օֆիսայի խումբին հետ եւ եղաք անոր խմբավարը: Պէտք է ըսել, որ մինչեւ 1858, Պոլսոյ մէջ տակաւին օֆիսայ գոյութիւն չունէր եւ անոր հիմնադրուները հայերս հղանք: Ես շուրջ չորս տարի վարելի անոր երաժշտական զեկավարի պաշտօնը, մինչեւ որ իմ մէջս արմատացաւ ա՛յն համոզումը, որ ես պէտք է մեկնիմ Հայաստան եւ հո՛ն զարգացնեմ իմ երաժշտական գործունէութիւնս:*

Հայաստան հաստատուելու տարիներու երազիս, ինծի ընծայուած առիթին եւ անոր յաշորգած տարիներուն մասին խօսելէ առաջ, ես պիտի ուզէի

յատուկ կարծուրութեամբ ընդգծել այն բացառիկ փորձառութիւնը, զոր 1851ին ապրիլաց Գոլտոյ մէջ՝ Ուրեմու, այդ օրերուն, Գոլտոյ մէջ գտութիւն ունէին հայկական 18 հրապարակներ, եւ երբ Գատրիարքի վարձանումին առիթով միացան եւ մարմին ստացաւ 455 այր հրդիւններէ կազմուած հսկայ հրդախումբ մը, զայն ղեկավարելու քախտը ինծի վիճակուեցաւ։ Ես այսօրուան պէս կը յիշեմ աննայնընթաց ու փառաւոր կոմիտասեան այն պատարազը, որուն առևտկան զորութեամբ, ձայնըուն ճառութեամբ ո՛չ մէկ պատարազ լսած եմ կհանքիս մէջ։ Իսկ այն հրդախումբը, որ կը կոչուէր Ձէֆիմեան հրդախումբ, ան քալորովին տարբեր եւ երկստո հրդախումբ էր, որ էլով կ'ունենար գասական եւ հայկական կտորներէ բաղկացած հրդացանկով։

● Վերադառնամք Փարիզ։ Փըրոֆ. Ժամ Ծուռնէն ի՞նչ տուաւ իր երիտասարդ եւ շնորհալի աշակերտին։

— Դէտք է խոստովանիմ, որ էջոյ Նորմալ տը Միւլիք մուտքս այդքան ուղիւրին չեղաւ։ Փաստօրէն, 300 թիկնածուներ կային, որոնցմէ պիտի ընտրուէին միայն հինգ աշակերտներ։ Եւ բարեբախտաբար, պատահեցաւ անըսպասելին եւ ես յաջողեցայ ըլլալ այդ հինգ բախտաւորներէն մէկը։ Անկեզծ ըսած՝ ես Ժան Ծուռնէն շատ օգտուած եմ, որովհետեւ ան եղաւ սեմֆոնիք նըւազարտմարի գաղտնիքներն ու խորհուրդները ինծի ծանօթացնող մեծ ուսուցիչը։ Էջոյ Նորմալ տը Միւլիքի մէջ մենք ունէինք արհեստավար սեմֆոնիք նուազարտմար եւ ես մեծ փորձառութիւն ու հմտութիւն ձեռք ձգեցի այդ նուազարտմարին հետ։ Փրոֆ. Ժան Ծուռնէն քաջ առ քաջ հետեւեցաւ ինծի, ուսուցանեց սեմֆոնիք նուազարտմարին հետ կապ ունեցող ամէն մէկ մանրամասնութիւն եւ ես մինչեւ այսօր այդ գպրոցն է, որ կը շարունակեմ։ Սեմֆոնիք նուազարտմարի ղեկավարման մէջ մասնակցութեամբ ես, կեանքիս ընթացքին ես

գործ ունեցայ զանազան սեմֆոնիք նըւազարտմարի հետ։ Գոլտոյ պիտական սեմֆոնիք նուազարտմարէն ետք, Հայաստանի պետական ակադեմիական հրդախումբին հետ ես նաեւ ղեկավարած եմ 53 սեմֆոնիք նուազարտմարի։ Օրինակի համար, Լենինկրատի նշանաւոր, հրաշալի սեմֆոնիք նուազարտմարին հետ ես առիթը ունեցած եմ 18 անգամ բեմ բարձրանալու։

● Արուեստի զանազան բնագաւառներէ մերս, սիրող արուեստագէտները երբեմն անելի փայլուն արդիւմներ կու տան, բայց արհեստավարմները։ Կատարողական արուեստներու մէջ, մեզի երբեմն կը համոզուինք սիրող արուեստագէտներէ, չըսելու համար՝ արուեստասէրներէ բաղկացած այնպիսի խումբերու, որոնք իրենց փորձառու եւ մասնագէտ ղեկավարին ցուցմունքով հրաշքներ կը գործեն։ Այս վայրկեանիս մեր միտքը կու գամ մասնով երգիչներէ կազմուած մէկէ անելի հրաշալի հրդախումբերու արձանագրած մուսնումները եւ անուամի կարգ մը բեմադրիչներու ցուցմունքով արհեստավար ղեկավարման անելի հասուն խաղարկութիւն ունեցած երիտասարդ թէ մասնով անձամօր անուններու անհաստալի յաջողութիւնները, որոնք կու գամ ապացուցելու, թէ անոնք անելի ճկուն, անելի հաղորդական եւ շապտած կարելիութիւններ կը թերկայացնեն խմբավարին կամ բեմադրիչին, որ զանոնք կը շարժեն ճիշդ իր ուզած ձեւով։ Մինչդեռ, արհեստավար արուեստագէտը, հակառակ իր մեկնաբանական հետաքրքրանքի հարուստ փորձառութեան, գիտելիքներու եւ ցուցմունքներու կողմէ գրաւուած իր յիշողութեամբ եւ սովորաւորութեան վերածուած մասնակցութեամբ, երբեմն մուղ գգացական աւ հաղորդական կ'ըլլայ՝ եթէ զայն բաղդատեմք իր կարելիութեանց բոլոր ակերը պայթեցնելու հաւատով ու մտիրումով իմ գրեմք խմբավարին կամ բեմադրիչին տրամադրութեամբ

տակ դրած սիրող կատարողիմ հետ: Գու՛ր գործ ունի՛ր երաժշտական մասնագիտական կրթութիւմ ստացած արևեստավարժ երգիչ-երգչուհիներու հետ, որոնք ամբողջական կերպով կը գործադրեն ձեր ցուցմանը: Ոնց որ: Կը կարծեմք, Լեւոնաբերական պիտի ըլլայ իմանալ, որ դու՛ր ինչպէ՛ս կը լուծէ՛ր բաւական բարդ այս խնդիրը:

— Գիտե՛ք, որ կ'անգրադառնաք արուեստի մէջ էական նշանակութիւն ունեցող հարցերէն մէկուն: Մասնագիտական կրթութիւն ստացած բազմաթիւ արուեստագէտներ եւ արուեստաբաններ փորձած են հասնել այս հարցին վերջնական պատասխանին, սակայն, հակառակ հարուստ կենսափորձի եւ արամբանութեան ենթահողին վրայ խարսխուած իրենց եզրակացութիւններուն՝ բոլոր արուեստիւթիւններն ու իմացական-գեղարհական ճիշդը չեն յաջողած բերել վերջնական եւ անքննարկելի պատասխանը, պարզ այն պատճառով որ արուեստի մէջ վերջնական եւ անվիճելի պատասխան չկայ:

Այո՛, պատմութիւնը արևանագրած է ձեր նշած իրողութիւնը, որուն համաձայն՝ արհեստավարժ երգիչները աւելի գիտութեամբ կ'երգեն, քան ամբողջական վերացումով իր սրինգին հետ նոյնացած հովիւր: Բայց ընդունելով հանդերձ ձեր ըսածը, որ սիրող արուեստագէտները աւելի կամաւոր, աւելի զգացական կ'ըլլան, կ'ուզեն աւելցնել, որ անոնց կարողութիւնները (անիկա ըլլայ երգչախումբ, թատերախումբ կամ պարախումբ) շատ աւելի սահմանափակ կ'ըլլան եւ շուտով կը սպասին: Պէտք է մտնել, որ քնածին տաղանդներն անգամ շուտով կը խամբին, եթէ համապատասխան մշակումի եւ յղումի չեն թարգման: Վերջ ի վերջոյ, բազմաթիւ արուեստագէտներու կողմէ ըսուած եւ բազմիցս փաստուած ճշմարտութիւն է, որ արուեստագէտը մեծաւ ծառայելով, որ աշխատանք, հմտութիւն եւ նուիրում է, իսկ փոքր տակաւով՝ բնատուր շնորհք: Հետեւաբար, արհեստավարժ, բայց նուիրեալ արուեստագէտներու հետ նոր

հորիզոններ նուաճելու եւ շարունակ ինքզինք գիրազանցելու աւելի լայն կարելիութիւններ կը ներկայանան մեզի, քան սիրողներու հետ: Բայց արհեստավարժներուն թերութիւնը ինչ է. անոնք երբեմն արուեստը արհեստի կը վերածեն, այսինքն՝ կը դառնան նուիրումէ զուրկ սուկական պաշտօնեաներ, արուեստի բանուորներ եւ իրենց պարտագիր ծառայութիւնը կամ պարտականութիւնը կը կատարեն: Սակայն աւելի երբեք չի նշանակեր, որ արհեստավարժ արուեստագէտը երբ քեմ բարձրացաւ, իր կարելին ի գործ պիտի չդնէ: Եւ հոս կը կայանայ խմբավարին կամ քեմադրիչին սգեշնչող զերակատարութեան նշանակութիւնը, իր գոյութեան եւ կոչումին իսկ իմաստը, որովհետեւ ան պարտաւոր է իր խումբին անպանդուր հեռացնել աւտօբայի եւ սովորաժողութեան սլորտներէն, անոնց հոգիներուն մէջ ներարկել նոր լայնմասկ մը արևանագրելու վճարակնութիւնն ու խանդավառութիւնը, փոխադրել ի՛ր աշխարհը եւ զանոնք վերածել այդ աշխարհին զգացական ու հոգեկան թերթիւները արտայայտող հարազատ ու վերացած հոգիներու, ձայններու:

● Այսինքն՝ Ոսիս իրականացնել ամբողջական հոգեփոխութիւն մը եւ սպա՛ծ ձեր կախարդական ճիպտիմ եւ աշխարհում լեզուով լծուիլ երգչախումբի ամղամներում ապրումներն ու զգացումները պայթեցնելու մտգական աշխատանքիմ:

— Գիտե՛ք ինչ: Արուեստի մէջ բաներ կան, զորս կարելի չէ բառերով քացարկել: Երաժիշտ ըլլալէ առաջ՝ խումբավարը նախ պէտք է հոգեբան ըլլայ: մէկ առ մէկ ապրի իր խումբի իւրաքանչիւր անդամին տաղանդներն ու հարցերը եւ, նախքան քեմ բարձրանալը՝ պէտք է յաջողի գիրեք ազատագրել իրենց վրայ ճնշող աւտօբայի հոգիներն, բնականական հարցերէն եւ զանազան թնդթի ինչիքներէն, որպէսզի ուժերու եւ արամագրութեանց ամբողջական լարումով իրենց առաւելագոյնը տան: Այս իսկ պատճառով, ես յաճախ բարի նա-

խանակով կը նույնիմ նկարչին, քանկա-  
կագործին կամ բանաստեղծին, որովհե-  
տե անոնք կ'ընտրեն իրենց տրամադ-  
րութեանց յարմար եղող ժամանակը եւ  
հարաւորութիւնը ունին ըսելու՝ ա՛յս է  
իմ արուեստս: Մինչդեռ, կատարողական  
արուեստին, ա՛յս պարագային՝ երգ-  
չախմբային արուեստին վայրն ու ժա-  
մանակը նախապէս ճշտուած են եւ երբ  
հնչէ ժամը, քուրք ուժեղ ի մի խմբելով  
եւ ամէն տեսակի հարցերէ ձերբազա-  
ւելով՝ ստիպուած ես ըսել՝ ընդհա՛յն:  
Որովհետեւ ունկնդիրը, որ ստոսակ ա-  
ռած եւ նստած է, գինք ո՛չ մէկ բան չի  
հետաքրքրւի, քանի որ արամադրու-  
թիւնը, ո՛չ քու հարցերդ եւ ոչ ալ ամ-  
բողջական կեդրոնացումը խանկարող  
այլ իրազեմութիւններ:

● Բայց վայրը, պահն ու ժամը,  
վերջ ի վերջոյ, այս կամ այն ձեւով  
կ'անդրադառնան արուեստագէտին եւ  
իւր կատարողական մակարդակին  
վրայ: Օրինակ, կիսով լեցուն սրահ  
վը եւ ծայրէ ծայր երաժշտաւէրնե-  
րով յորդող սրահ մը նոյն տպաւո-  
րութիւնը չեն թողոր երգչախումբի  
կամ թատերախումբի անդամներուն  
վրայ եւ, առաջին իսկ վայրկեանէն,  
այս կամ այն ձեւով կը տրամադրու-  
ին եւ, քայտաւոր պարագային՝ ի-  
րենք զիրենք կը կրկնեն: Այս մասին  
ի՛նչ ունիք ըսելիք:

— Անչո՛ւշա որ կ'անդրադառնան:  
Յետոյ, ո՛վ ըսաւ, որ հարիւրաւոր ան-  
գամ եւ տարբեր պահներու մէջ նոյն  
երգը երգելով՝ մեկը զայն կը կրկնենք:  
Ո՛չ. սխալ եզրակացութիւններու լայն-  
գիծք: Փաստօրէն, նոյն երգին մեր հա-  
րիւրաւոր կատարումները իրարու կը  
նմանին, բայց երբեք նոյն չեն ըլլար:  
Որովհետեւ եթէ նոյնը ըլլային՝ ար-  
ւեստը կը դադրէր գոյութիւն ունենալէ:  
Եւ արդէն հո՛ս պէտք է փնտսել ար-  
ւեստին մեծութիւնը, ստեղծագործական  
հրաշքը, որ պահէն ու ժամէն ազդուելով  
հանդերձ՝ կը յաջողի վեր բարձրանալ  
այդ բոլորէն եւ ստեղծել իր անկրկնելի  
պահն ու ժամը:

Ես բազմիցս օգտագործած եմ օրի-  
նակ մը եւ թոյլ տուէք, որ այս անգամ  
ալ կրկնեմ: Եկէք եւ գեղանկարիչ մը  
ինչպէս, որ ամենայն ճշգրտութեամբ  
պատրաստէ իր աւարտած մէկ պատա-  
սին կրկնօրինակը, ի գործ գնելով իր  
բոլոր հմտութիւնն ու վարպետութիւնը:  
Եւ աւարտելէ ետք, եթէ զանոնք միջ-  
մեթր առ միջմեթր իրարու հետ քաղ-  
դասենք՝ պիտի նկատենք, որ առաջին  
ակնարկով նոյնը կարծուած բնօրինակն  
ու կրկնութիւնը իրերանման ըլլալով  
հանդերձ՝ տարբեր բաներ են: Գունա-  
լին նրբերանգները, լուսի եւ ստուերի  
երկխօսութիւնները, վրէկիւն հպում-  
ները տարբեր հոգեվիճակներու մասին  
կը վկայեն եւ մեր զգայարաններուն  
հետ կը հազորակցին տարբեր ձայ-  
նանշերով: Նոյնն է պարագան բալետ  
արուեստագէտներուն: Օրինակ, դուք  
կրնա՞ք որոշ ժամանակ մը առաջ գրած  
մեր մէկ բանաստեղծութիւնը նոյնու-  
թեամբ եւ վերատին գրել: Անչո՛ւշա որ  
ոչ, որովհետեւ այդ պահը, զոր ապրած  
էիք եւ ստեղծագործած անոր անմիջա-  
կան տպաւորութեան տակ, չի կրնար  
կրկնուիլ եւ կրկնորոգ գրել միայն երկ-  
րորդ պահուն հարազատ թարգմանը կը  
հանդիսանայ: Կրնայ ըլլալ առաջինէն  
աւելի կամ նուազ յաջող ստեղծագոր-  
ծութիւն մը, այս չէ հարցը, բայց բոլոր  
պարագաներուն՝ ի՞ր պայմաններուն եւ  
ժամանակին էութենէն ծնած ստեղծա-  
գործութիւն մը:

Օրինակ, երէկ գիշեր, Լիբանանի  
մէջ մեր ամէնէն յաջող ելույթը ունե-  
ցանք, հակառակ անոր, որ հայրենիք  
վերադառնալու առնչութեամբ բարձ-  
րացած դժուարութիւնները մեծապէս  
անգրագարծած էին խուճերի իւրաքան-  
չիւր անդամին վրայ: Վարագոյլը բա-  
ցուելէ առաջ, երբ ես ակնարկ մը նե-  
տեցի ծայրէ ծայր գրաւուած սրահին  
մասին, երբ ակնարկով մը կշռեցի նոյ-  
նիսկ աստիճաններուն վրայ նստած  
ունկնդիրներու գէմքի գիծերն ու սպա-  
սումը, ներքին ձայն մը ըսաւ ինձի, որ  
այսօր մեկը մեր ամէնէն յաջող ելույթը  
պիտի ունենանք: Եւ իսկապէս, այդպէս  
ալ եղաւ, եւ դահլիճը, իր անընդհատ

ծափահարութիւններով ու «կ'ուզեմք»ներով ամբողջականօրէն հազարփակցեցաւ մեզի հետ, շնչելով մեզ թրարմէ բաժնող բեմ-արտհասարածութիւնը:

Ըսել կ'ուզեմ, որ ունկնդիր հասարակութիւնը, սրահին աթոռներուն գոյնը, բեմին վրայ զետեղուած լուսերը, ունկնդիրներուն երաժշտական ճաշակին մասին կազմուած մտաւոր պատկերացումը, նոյնիսկ այդ օրուան անհրեւոյ կամ արեւու ըլլալը անբացատրելի ամբողջութիւն մը կը կազմեն եւ այս բոլոր աւելանքներուն ուզողներ եւ անուզողներ ազգեցութեանց տակ է, որ ես կը զեկազարեմ խումբը:

●5 Սեպտեմբեր 1961 թուականը անկիւնագարձային Պշտակութիւն ունի ձեր երաժշտական եւ ամձնական կեանքին մէջ: Դուք այդ օրոտ դրիք հայրենի հողին վրայ եւ հակառակ զամազամ տեսակի ղղձաբորութիւններու՝ յաբողբեցաք ստանձնել Հայաստանի պետական երգչախումբը եւ դարձաք անոր խմբավարը:

Այդ տարի, Պոլսոյ մէջ ունեցած ձեր յաբողբութիւններում պատմաւոր, դուք կրցած էիք գրաւել Պոլսոյ մայիսին նորերդային Միութեամ դեսպանատան բարձրաստիճան պաշտօնէաններում, թայց յատկապէս մշակութային կցորդին ուղարկութիւնը եւ շատ չամցած ստացաք Մոսկուա մեկնելու եւ շրջան մը համ աշխատելու իրաւեր մը: Ելքը հրաւերը Օերկայացուցիւն ձեզի, ի՞նչ եղաւ ձեր առաջին անդրադարձը...

—Նախ յայտնեմ, որ զեսպանատան բարձրաստիճան պաշտօնէաններուն մէջ ես ո՛չ ոք կը ճանչնայի եւ նոյնիսկ պահ մը զարմացայ, որ ի՛նչ հետաքրքրութեան մղուած անոնք ներկայ կ'զած են համերգներու: Անոնց հետ նոյնիսկ մտերմիկ խօսակցութիւն մշակելու տրամադրութիւն եւ համարձակութիւն չունէի, որ ինձի ներկայացնէին նման աներկաւայելի առաջարկ մը:

Անկեղծօրէն ըսած՝ երկար-բարակ շտապանցի, որովհետեւ արհեստավարժ երաժիշտ զարեւած առաջին իսկ օրէն ես սկսած էի մտածել, որ իմ ճիշդ տեղը Հայաստանն է եւ ես պարտաւոր եմ ծառայել հայրենիքիս եւ օգտակար ըլլալ իմ հայրենի ժողովուրդիս: Տարիներու փորձառութեանն զուգահեռ՝ այս մտածումը խորապէս զարգացած էր իմ մէջն եւ, այդ իսկ պատճառով, դրական պատասխան տուի:

Երբ Մոսկուա հասայ, չուզեցի հոն երկար մնալ, որովհետեւ, ինչպէս ըսի, իմ հրապոստիչ էր: Փորձեցի զերկնք համոզել, որ ես հա՛յ երաժիշտ եմ, կ'ուզեմ ծառայել ի՛մ հայրենիքիս եւ նուիրուել անոր երաժշտական վերելքին, թայց մարդիկը չըմբռնեցին զիս: Մակայն ես տեղի չտուի, յամաօրէն պնդեցի եւ վերջ ի վերջոյ տեղի տուի:

5 Սեպտեմբեր 1961ին, ինչպէս լիւրջեցիք, առաջին անգամ ըլլալով ես ոտք դրի հայրենի հողին վրայ եւ կարճ ժամանակ մը չանցած՝ գաւտական մեծ կազմի մը առջեւ քննութիւն տալէ ետք, նշանակուեցայ Հայաստանի պետական երգչախումբի զեղարուեստական ղեկավար եւ ղլխաւոր խմբավար, պաշտօն մը, զոր կը վարեմ 31 տարիէ ի վեր:

●Անկասկած, որոշ դժուարութիւններու համոզիպեցաք: Յետոյ, ձեզմէ առաջ 11 իրերայաբորտ խմբավարներ ունեցած Հայաստանի պետական երգչախումբը երբ ըստանձնեցիք, ի՞նչ կ'ացուրիք կը պարզէր եւ ի՞նչ փոփոխութիւններ մտցուցիք, բնականաբար առաջնորդուելով ձեր արեւմտեան, աւելի ճիշդ՝ ֆրանսական դարբնի եամոգմունքներէն, եթէ կարելի է այդպէս կոչել:

—Մէկ խօսքով ըսեմ, որ բաւական դժուարին քննութիւններ անցընելէ ետք, մարդիկ ինձի չըսին. «Ահա այս եղբի՛ր»: Այնտեղ ես հանդիպեցայ բաւական մեծ դժուարութիւններու, ինչպէ՞ս ըսեմ՝ ծալքէ ծալք երգչախումբը կազմեցի, բաւական մեծ դժուարութիւններով, որովհետեւ յոգեած ու սպառած ա-



մէն մէկ անգամը հրդախումբէն, այսինքն՝ ցորձէ հանելը լուրջ խնդիրներ, միջամտութիւններ, վերին թելադրանքներ կ'ենթադրէին: Բայց հս տեղի չտրւի, և որոշ ժամանակ մը ետք յաջողեցայ ստեղծել իմ ձեռագիրտու, աւելի ճիշդ՝ իմ հրաժարական ձեռագիրտու հանդիսացող հրդախումբը, որ իմ ճիշդութեան շնորհիւ 1970ին արժանացաւ ակադեմիական կոչումին:

● Խօսեցա՞ք երաժշտական ամձնական ձեռագիրտու մասին: Արուեստի մէջ, երբ այս բանաստեղծիմ, այն գեղանկարչիմ Պամ ալսիմը երաժշտականիմ ձեռագիրտու ըսեմք, կը հասկնամք իր ոճը, միւսը մշակելու իրեն յատուկ եղանակը եւ գեղարուեստական այն յատկանիշները, որոնք իր բանաստեղծութիւնը, պատարը կամ ռեքլիմը կը զատորոշեն այն արուեստագէտներու յօրինումներն: Կատարողական արուեստներու պարագամ հիմնովիմ տարբեր է: Արդեօք մեկնաբանական իմքնատպոթիմ ըսել կ'ուզէք:

— Այո՛, բնական է, որ քառորդ վայրկեան լսեմ եւ անմիջապէս կրնամ ճշդել, օրինակի համար, թէ այս «Բամը որոտումը կամ «Գութանի երգը» ի՞նչ է, թէ ուրիշներ: Կեանքիս մէջ տարօրինակ բաներ շատ պատահած են, նոյնիսկ՝ շահագործումներ: Եթէ կ'ուզէք՝ նման դէպք մը կրնամ պատմել:

● շեռարբրական է...

— Անպամ մը Գանատա զայցած էինք: Աթէհանները կան... շաշանի սեծիսոր Աթէհանի հղբօրը տունը ճաշի հրախումբ էինք: Նախքան ճաշելը հրք բաժակ մը խմիչք կ'աննէինք, սկաւտակ մը կրաւ: Է՛հ, սովորական սկաւտակ մը, որ հազիւ ականջի պշոյով կըրնաս մտիկ ընել: Մարզը նկատեց, որ հս ուշադրութիւն զարձայցած չունիմ և ըստաւ... «Ձե՛րն է, ձեր հրդախումբն է...»: Երբ պատասխանեցի՝ «նման բան չի կրնայ ըլլալ, որովհետեւ մենք այլախիտի հրգեր ընդհանրապէս չենք հրգեր, մենք մեր հրգերը ունինք և մեր ձեռով կ'եր»

զենք... (զիտէք, հրգի-պարի անսամպլային հրգեր՝ «Նովիլը սարու տըխրեց», «Նէլ ջամ, դարամա», հայն... ) հլա տեղէն, կեցուց, բերաւ տիւսը և ինծի երկարեց: Նայեցայ, վրան «Ձէքիճեան» գրած են: Աչքերս թռան ճակատս և տրամադրութիւնս թունաորուցաւ: Մրպէսզի ծախտի տիւսը՝ «Ձէքիճեան» գրած են, հակառակ անոր, որ միջազգային օրէնք կայ, իրատուք կայ, բայց դուն ա՛ր կը գիտաս: Եւ նոյնիսկ պատահած է, որ տունակատարութիւններու առիթով, բացօթեայ հրապարակի մը վրայ, մէկը շափ տուած է հրդախումբի մը, իսկ պատասխան վրայ հրգողը իմ հրդախումբս եղած է: Ինչ որ է, այս մանրութեքը ոչինչ կը գիտեն իմ գործունէութիւնէս, որովհետեւ իմ հրգեցողութիւնս իմ սքիս է, իմ ոճս, և հս կը մեկնարանեմ այն հրգերը, զորս իմ կրթութիւնս, իմ էութիւնս և զգացումներս կը թելադրեն ինծի:

● շայատամ սպրելու ձեր որոշումը յատուկ ձշմակութիւն ունի այն առումով ման, որ 1961էն ետք, կենդանի եւ ամէնօրեայ յարաբերութիւն մշակելով հայրենի մեր ժողովորդիմ հետ, առիթը ունեցա՞ք անի մօտէն ճանչնալու մեր ժողովորդը, պարզ ժողովորդը՝ գիղացիմ, հայ մամիկներն ու ծերունիները, մանուկներն ու երիտասարդ մայրերը, բայց ման: շայատամ աշխարհը՝ իբրեւ շօշափելի եւ տեսանելի իրականութիւն, բնութիւն ու մկարագիր, մէկ յօստրով՝ իբրեւ ռգեշմտող եւ վեհացմող էութիւն, ոզի՛: Անկասկած, այս մանրամասնութիւնները զգացական մեր շեշտադրումներով հարտացուցիմ ձեր հոգեկամ ալյոտումները եւ բնականաբար, իրենց բարեբար ագրմականաբար, իրենց բարեբար ագրմականութիւնը զործեցիմ ման ձեր երաժշտական յեզուիմ վրայ:

Ասկէկա ամվիճելի ճշմարտութիւն է, սրովհետեւ երբ ձեւէ հայ կարն է, ժամանակամիբոցով հայրենի կ'այժամանակամիբոցով հայրենի անբացելէ, իր հոգիմ կ'ակնկոծի անբացարելի յուզումներով եւ ալյոտումներով, որ մնաց՝ արուեստագէտիմ

այցելութիւնը եւ, մա՛նաւանջ՝ հայաստանցիներում բաւական մշտական կենցաղեան» պարագային: Դուք օր առ օր սկսաք անելի եւ անելի ապրիլ Հայաստանն ու հայրերիմը, բաժնել մեր հայրենի ժողովուրդիմ սագնապները, տառապիլ իրենց հետ, ապրիլ Ույն երգները եւ ձեռով մը այս բոլորը փոխալրել երաժշտութեան աշխարհը: Եւ հայրենի կարգ մը երաժշտագէտներն ու արուեստի բնօճողատները շատ եիշդ բնորոշում մը կը կատարեն, երբ կ'ընդգծեն, որ Զէհնեանի Հայաստան հաստատփիլը հարստացուց եւ բիրնդացուց ո'չ միայն իր եղգիմ ու էութիւնը, այլեւ՝ իր երաժշտութիւնը: Համաձա՛յն էք այս բնութագրումիմ:

— Այո՛, հարիւր առ հարիւրով համաձայն էմ, բայց անմիջապէս ըսեմ, որ ես ապրեցայ նաեւ մեծ յուսախարութիւններ, երբ իմ հրապած Հայաստանիս զիմաց տեսայ բուրսովիմ ուրիշ, ալլաւերած Հայաստան մը: Բայց երբ տեսայ, որ կամաց-կամաց յառաջընթաց մը կ'արձանագրուի, շատ ուրախացայ եւ իմ համեստ մասնակցութիւնս բերի ալլ յառաջընթացին, որովհետեւ հայրենիքի մտէն մէկ քար, մտէն մէկ ծառ, մտէն մէկ տունկ, նոյնիսկ մտէնն աւարժէք կարծուած մասնիկը շատ թանկ է ինձի համար, որովհետեւ անոր մէջ կը խտանայ ծիւղու, ծագկնլու եւ գորանալու յայն ու փաստը: Բայց եւ ապրեցայ ահաւոր յուսախարութիւններ:

• Կեղծիքի, ստախօսութեան, մարդու Ուստացման, հալածամբններու, ահտորներու եւ մաքրագործումներու վրայ հիմնուած համայնավար վարչակարգի գործելակերպի՛ն կ'ակնարկէք:

— Այո՛, ճիշդ ու ճիշդ: Եւ հազար փառք Աստուծոյ, որ պայմաններն ու ժամանակները փոխուեցան ու մարդիկ սկսան ազատ ու հանկիստ շունչ քաշել: Հակառակ տևոր, որ Հայաստանի այժմու կացութիւնը շատ բարդ է եւ երբեք նախանձիք չէ, սակայն ես կը հաւատամ մեր ժողովուրդի վերականգնելու աստղ ընապղին:

• Հայաստանի բաղաբական եւ մշակութային ընդհանուր վիճակի բնագրութիւնը վերջակէտ մը գնել փորձելով՝ եկէք վերագառնամք երաժշտութեան ոլորտները: Ձեր դեկապարած երգչախումբը մինչեւ 1970 կը կոչուէր Հայաստանի պետական երգչախումբ եւ այդ բուսական երգչախումբ տիտղոսիմ: Մեզի եւ հաւանաբար շատերու համար յստակ չէ, թէ «պետական», «ազգային» կամ «ակադեմական-պետական» եւ «ակադեմական-ազգային» երգչախումբերը իրարմէ ի՞նչով կը տարբերին: Ակադեմականը պատուո՞յ տիտղոս մըն է, թէ երաժշտական-երաժշտագիտական վաստակի մը հիմամբ տրուած գերագոյն գնահատական: Յետոյ, մախկիմ Խ.Միութեան մէջ, ի՞նչ հիմամբ եւ որո՞մք իրաւումք ունէիմ այդ տիտղոսը շնորհելու:

— Ակադեմական կոչումը մեծ քըննութիւններ եւ տարիներու վաստակ կը նշանակէ եւ զայն շատ մեծ գծուարութեամբ, հազար մաղէ անցընելէ ետք Ակադեմիան կ'արտէր տալ երաժիշտի մը կամ խումբի մը: Այն ալ ըսեմ, որ Խ.Միութեան մէջ, Հայաստանը կամ միւս հանրապետութիւնները «ակադեմական երգչախումբ» կոչումը տալու իրաւունք չունէին, որովհետեւ որեւէ հաւաքական կոչում տալը Մոսկուայի էրաւունքն էր եւ Մոսկուան այդ տիտղոսը կու տար յատուկ հրամանագրով եւ մեծ շուքով: Ինչ կը վերաբերի տիտղոսին, անիկա պատկն է այն մեծ ճիղին ու վաստակին, որ կը ընտրուէ այդ խումբի ծանրը, ինչպէս կ'ըսեն՝ ընտրութիւն:

• Քիչ առաջ Ազեցիք, որ գործած էք 53 սեմֆոնիք Ուսագախումբերու հետ, որովհետեւ Փարիզի մէջ ձեռք ձգեցիք սեմֆոնիք Ուսագախումբ դեկապարելու մասնագիտութիւնը: Օլիմակ Լեմիկրատի Ոչամաւոր սեմֆոնիքը:

— Քիչ առաջ Ազեցիք, որ գործած էք 53 սեմֆոնիք Ուսագախումբերու հետ, որովհետեւ Փարիզի մէջ ձեռք ձգեցիք սեմֆոնիք Ուսագախումբ դեկապարելու մասնագիտութիւնը: Օլիմակ Լեմիկրատի Ոչամաւոր սեմֆոնիքը:

Ուր Թուրքախոսներին հետ ունեցած է՞ր 74 ելույթ: Զանազան սեմֆոնիք Թուրքախոսները վարելու այս փաստը կը Աշանակէ հարուստ փորձառութիւն մը եւ պատիւ մը: Հետաքրքրական պիտի ըլլար իմանալ, որ այս խումբներում հետ հայկական կտորմէյ ալ մեկնարանա՞ծ էր: Եթէ մեկնարանած է՞ր՝ ի՞նչ էր դա՞ծ է օտար երաժիշտներում եւ երաժշտատի հասարակութեան վրայ կոմիտասի եւ մեր ազգային երաժշտութեան գործած անդրադարձը, այսինքն՝ ձգած սպասարարիմը:

— Եկէ՛ք, Քէլը միւսին հետ չլիտթենք: Կոմիտասը սեմֆոնիք նուագախումբի համար բան մը չէ յօրինած եւ մեր գործակցութիւնը Կոմիտասէն անկախ եղած է: Սակայն առիկա չի նշանակեր, որ Կոմիտասը մեծ, հանճարեղ կոմպոզիտոր մը չէ, կրիկ ալ չէ զրած, բայց շատ մեծ երաժիշտ է: Իսկ երբ կ'ըսեմ, որ զորք ունեցած եմ 53 սեմֆոնիք նուագախումբի հետ, կը նշանակէ, որ մենք կատարած ենք մեծ, համաշխարհային գործեր՝ օրաբոլորաներ, Բանթաթներ, հալլն, հալլն: Բայց երբ Կոմիտասը կը լիշատակէր, հարցը կը փոխուի:

● Սլխալ շիասկցութիմը: Մենք ի մտի ունէիմք սեմֆոնիք Թուրքախոսները շարժախումբի մեր գործակցութիւնները եւ ոչ թէ միայն սեմֆոնիք Թուրքախոսները դեկավարելու գծով մեր ունեցած փորձառութիւնները...

— Երբ հլոյթ կ'ունենանք օտար քաղաքներու մէջ, օտար հասարակութեան համար, մենք իբրեւ յայտարարի գլխուստ կտոր կը մեկնարանենք միշտ զազգային երաժշտութեան մեծ կուտի յօրինումները: Իսկ թէ Կոմիտասը ինչպէ՞ս կը ներդրանակեմ սեմֆոնիք նուագախումբի համարիկին հետ, քաջատրեմ դրուագով մը: Օր մը, կարծեմ 1964 թուականին էր, Լենինկրտտ գաջած էինք խումբով՝ Մոսկովի նուիրուած մէկ փառատօնին մասնակցելու: Կատարեցինք ժողովուրդը մեծ ծափերով դիմաւորեց, հալլն, հալլն: Ծերունի մը

ձօտեցաւ բեմին, վեր հլաւ, ուղղակի ինծի ձօտեցաւ եւ ըստ. «Ես հալ մարդ եմ, կրնա՞ք հայկական բան մը հրամայել: Սեմֆոնիք նուագախումբը կեցուցի եւ երգչախումբին թելադրեցի պատրաստուիլ հայկական պատարագէն հատուած մը երգելու: Եւ չէր կրնար երեւակայել, թէ օտար ունկեղիւրները, որոնց մէջ ծերունիք երեւի միակ հայն էր, ինչպիսի՞ հիացումով եւ երկիւղածութեամբ ընդունեց իբրեւ հայ երգ հրամայուած մեր պատարագը: Եւ այդպէս ալ շարունակեցաւ իմ երաժշտական կեանքս: Այսինքն՝ ամէն անգամ, որ աֆիշը կը հրատարակուէր, բսնէ՞ր՝ Վերսիէն տեմֆոնիք, Պեթրովիչի փոփոքորդ Սեմֆոնիք կամ Քարլ Օրֆի փարմիմա Պուրանան հալլն, յայտարարէն դուրս, իբրեւ պիս եւ կատարած եմ նախապէս ճշուած եւ պատրաստուած հայկական երգ մը: Եւ ասիկա մեր խումբին համար այլեւ աւանդութիւն դարձած է: Վերջապէս, իմ կարծիքով՝ հայ երգը օտարին ծանօթացնելու եւ սիրցնելու ամենաճիշդ ձևը յայտարարէն դուրս հայկական կտոր մը մեկնարանելն է, որովհետեւ եթէ հակառակ ուղղութեամբ փորձենք բեթանալ, այսինքն՝ եթէ իբրեւ աֆիշ հրատարակ ինչեղանք «Կոմիտաս-Եկմայեան» երաժշտութիւն՝ չենք յաջողիր, որովհետեւ նման ծանուցում մը սլինելու կամ առաւելագոյն պարագային՝ շատ քիչ բան կ'ըսէ օտար երաժշտասէր հասարակութեան:

● Ձեր այս մօտեցումը մեզի կը յիշեցնէ Պարոյր Սեւակի «Ձեր նարեկացին, Ենքապիքը մեր» ծանօթ տողը: Մենք միշտ ալ մերը սեպած ենք համաշխարհային մշակոյթի հսկաները եւ Ոսկեդարէն սկսեալ ծայրացած ենք ամէն արժէք, որում մէջ ստեւած ենք մեր մշակայքն ու էութիւնը նախատացնող յատկանիշ մը: Սակայն, ըստ երեւոյթիմ, չենք յաջողած ճշմն մօտեցումն ու գիտակցութիւնը փոխանցել օտար ժողովուրդներու, որոնք մեզ դիտած են եւ կը շարունակեն դիտել իբր փոքր ժո-

ղովորդ մը: Այս իրականութեան պերճախօս փաստերէն մէկը ձեր տղոսն օրինակն է: Ըստ ձեզի, ո՞ր պէտք է փնտնել գաղտնիքը:

— Բաւական բարդ եւ քաղժամեց հարցադրում մըն է ձեր կատարածը: Ես պիտի չխօսիմ օտարեկերու մօտ ձեր գրականութեան եւ ճարտարագիտութեան գործած աշխատանքի մասին, որուն գոթ ծանօթ էք: Փրստիմ, որ այդ հիացումը սպրած եւ սպրոց օտարեկերը իրենց ժողովուրդին լայն զանգուածը չեն կազմեր, սակայն անոր կարելի է հասնիլ միայն հետեւողական աշխատանքով: Բայց շարունակ պիտի կատարեն, որպէսզի հասնին նպատակին: Եւ իմ կհանքիս մէջ, այդ անծանօթ ծերունի պատճառ գարձաւ, որ գասնամ հայ երկրի քարոզչիլը եւ օտարին հրամցենեմ ա՛յն՝ ինչ որ իրենք չուէին:

Երբ քիչ առաջ կ'ըսէի, որ Պեթհոզովէնի մէկ համանուագէն ետք, իրրեւ յայտարարէն գուր կտար՝ եւ կը ներկայացնէմ ձեր պատարագէն հատուած մը կամ գութանի երկ մը եւ անիկա կը փայլի ճանահէր իմաստաւորող թանկարժէք քարի մը պէս, կ'ուզէի ընդգծել Կոմիտասի երաժշտութեան ազգային իւրապատկութիւնն ու արժէքը:

● Ըսել կ'ուզէի, որ Կոմիտասը Պեթհոզովէնի աւելի՞ բարձր երաժիշտ մըն է: ԶԷ՞ք կարծեր, որ մեր հայկական պատկանելիութիւնն ու ազգային ինքնավարութիւնն է, որ մեզ երբեմն էլ անգիտակցաբար կ'առաջնորդէ նման ծայրայեղ կարծիքներու:

— Ոչ, ես երբեք այդ մէկը չուզեցի ըսել: Բայց Կոմիտասն ու Պեթհոզովէնը եթէ փորձենք քաղցասել իրրեւ ազգային երաժշտութիւն՝ Կոմիտասը աւելի մեծ է: Կոմիտասը հարուստ եւ ինքնատիպ այնպիսի՝ աշխարհ մըն է, որուն նմանը պայտուսներն անգամ արամաբանութեան վերածող եւրոպացիները չուէին: Եւ ես չեմ կրնար պատկերացնել Ակադեմիական երգչախումբը՝ սուսնայ Կոմիտասի:

● Կը հասկնամք ձեզ, որ առանց Կոմիտասի կարելի չէ պատկերացնել Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, որովհետեւ Կոմիտասը մեր էութեան ու մկարագրի բոլոր յատկանիշներն ու երանգները խաղերով, աշխիճք՝ երաժշտական ձոյլ նախադասութիւններով վերապրաւորած այն բացառիկ համարմ է, որ հայ ժողովուրդին շրթներէն մեր երգերը քաղեց, զանոնք վերածեց ձոյլ ոսկիի, յաւերժական գոհարներու եւ հաւամաբար այդ իսկ պատճառով իր մշակած ժողովրդային երգերը այսօր իրրեւ դասական ստեղծումներ կը գնահատուին: Գոթ ինչպէ՞ս կը բացատրէի Կոմիտասեան հրաշքը:

— Եստ պարզ եւ հասկնալի ձեռով: Թորինողական արուեստը, ինչպէս գրականութիւնը, գեղանկարչութիւնը կամ քանդակագործութիւնը, ոչ մէկ սահման կը ճանչնայ եւ միշտ կարելի է անիլ լայն ստեղծել: Բայց լծոտանք, որ ամեն ինչ յարաբերական է եւ կարելի չէ միայն ինքն իրմով արժեւորել: Թրինակ, Գարս Մուրզան եւ Եկմաշեանը եթէ ենթադրէի պատրաստած չլլային՝ զըտար թէ Կոմիտաս մը ունենայինը, եթէ Կոմիտասը գերմանական կրթութիւն ստացած չլլար՝ մեր ճանչցած Կոմիտասը չէր ըլլար: Ասոնք եւ այլ տրեւաններ կարելի չէ անշատել Կոմիտասէն, որովհետեւ ան այս բուրբիս գուժարն ու արդիւնքն է:

Կոմիտասը մեր բարդ ու խորախորհորդ հայկական արեան փոթորիկներն ու զգիւնները յայտնագործող եւ երաժշտական ստեղծումներու վերածող ամբողջական արուեստագէտն է, քանի մը դարը անգամ մը միայն ծնող այն բացառիկ ծնունդը, որ ոչ մէկ սահմանափակում կ'ընդունի, հակառակ անոր, որ շեշտուած կերպով հայկական ոճն է, որ կը տիրէ իր երգերուն մէջ: Ըս'ս կը կայանայ Կոմիտասի գոսականութեան գաղտնիքը, որովհետեւ ան այնպիսի՝ հանճարեղ ձեռով օգտագործած է իր եւրոպական կրթութիւնը, այնպիսի՝ հանճարեղ ձեռով ներդաշնակած է հայ գիւ-

զացիին սրաէն թխած հրպն աւ իր հրաժշտական թարձը մշակողը, որ եւրոպական երաժշտական դպրոցներուն վրայ յաւելում մը արձանագրած է եւ գումարած անկրկնելի հարստութիւն մը: Դժբախտաբար, մինչեւ այսօր, մեր երգահանները չկրցան շարունակել անոր հիմնած դպրոցը եւ այս պահուս կը դժուարանամ ըսել, թէ հ"բբ, քանի՞ զար հազ պիտի ունենանք նոր Կոմիտաս մը:

● Սակայն միշտ ալ Ոկատի կ'առնենք օտարը Աեյզրաւոյ ազդակները եւ ըստ այնմ կը ներկայանանք յիրենց: Կարծես հայու երկշտութիւնն է, աւելի նիշդ՝ ունկնդիր չգտնելու վայսն է, որ կը կաշկանդէ մեր Բայերը, երբ օտար հանդիսատեսը Ոկատի ունենալով՝ մեր երգահանը կը պատրաստենք: Բոլորս ալ կը գիտակցենք եւ կը հպարտանանք, որ Կոմիտասը շեղմ ընկունելութեամբ արժանացած է այս կամ այն երկրին մէջ, բայց կը զգուշանանք մշակութային յանդգնութիւն մը գործելէ, որովհետեւ վախը կայծէ՛ք մեր արեան մէջ մտած է, մեր ենթագիտակցութիւնը կը թելադրէ մեզի եւ մենք կ'ուզենք միշտ տրամաբանութեամբ շարժիլ, անտեսելով յանդգնութեան եւ խենթութեան ազդակը, որ արեւստներու մէջ նոյնքան կարեւոր է, որքան տրամաբանութիւնը: Մինչդեռ ֆրանսացին, իտալացին կամ ասլը երբեք այս հաշիւները չ'ընել, «ես այս եմ» կ'ըսէ եւ միջազգային երաժշտութեան չափ տեղ կը յատկացնէ իր ազգային երաժշտութեան, նայնիսկ երբ օտար ունկնդիրին կը ներկայանայ: Զէ՛ք կարծել, որ մեր մասնամշած իրողութիւնը փոքր ազգ ըլլալու իրականութեան հետեւանքն է, որ քայտասական կերպով անդրադարձած է մասն մեր նկարագրին եւ սրամարտութեան վրայ:

— Զակառակ անոր, որ որոշ ճշմարտութիւն մը կայ ձեր խօսքերուն մէջ, բայց ես պիտի չուզէի նման ելրակացութեան մը յանդիլ, որովհետեւ մեր

երգչախումբը տարբեր մասնագութիւններով կը կազմէ իր երգացանկը, միշտ ի մտի ունենալով հանդիսատեսին երաժշտական ճաշակն ու հետաքրքրութիւնները: Ընդհակառակն, երբ ուսս, զերման կամ իտալացի ունկնդիրին մէջ կը ներկայանանք իր երաժշտութեան զլուխ-գործոցներով, ասիկա որոշ յանդգնութիւն մը կը նշանակէ եւ ոչ թէ վախի զգացում մը: Կերջ ի վերջոյ, այդ մարդիկը թագծիցս եւ զանազան երգչախումբերու կողմէ յաւած են այդ զահարները, ամենայն խտտագահանջութեամբ, եւ մենք ամենէն դժուար փնտրութիւնը անցնելու կը պատրաստուինք, երբ մեր երգացանկին վրայ լայն տեղ կը յատկացնենք միջազգային հանրածանօթ յօրինումներու:

● Բայց հարցը այսպէսով լուծուած կարելի չէ նկատել: Ձեր տեսակետն ու մօտեցումը բաժնելով համդերձ՝ մենք կ'ուզէինք պարզապէս ըսել, որ մենք մեր արժէքները տակաւին չենք կրցած իրենց ամբողջութեամբ եւ իսկական կշիռով օտարներուն ներկայացնել: Ահա թէ իմչու ստիպուած կ'ըլլանք հաշիւներ ընելու, Բաջ գիտնալով հանդերձ, որ օտարները մեծ հիացումով կ'ունկնդրեն հայ երգը՝ իրեն նոր, իրենց համար անծանօթ որակ մը:

— Երբէն է, բայց կեանքը մեզի իր պայմանները կը պարտադրէ: Եթէ չարմարինք՝ չենք կրնար յաշիւել: Կարելոյը այն է, թէ այսօր մ'ը ձեռք աւելի նպատակայարմար է հայկական երաժշտութիւնը ծանօթացնելու եւ սիրօքընելու տեսակէտէն, մնացեալը ժամանակի հարց է:

● Կ'ըսենք, թէ հայկական քանաստեղծութիւնը, ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը մեր էութիւնն է, մեր արիւնն է եւ այս իրականութենէն կը բխին մեզ մեզացնող յատկանիշներն ու տարբերութիւնները: Ցակոր Օշական դիպուկ բնութագրումով մը պիտի ըսէր, որ «գրականութիւն մը արեան երկուսթ է, միտք,

խելք, ոն, արուեստ ըլլալէ առաջ: Գրականութիւն մը ժողովուրդ մըն է: Որքան կրկնեմք քիչ է նորէն:

Ձեր մասնագիտութիւնը երաժշտութիւնն է: Դուք ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրած էք թէ՛ երոպական, թէ՛ ռուսական եւ թէ՛ հայկական երաժշտութիւնը: Իբրեւ մասնագէտ երաժիշտ՝ կը հանէի՞՞ք մեզի յստակ հիմնադրամներով ըսել, թէ որո՞՞մք են հայ եւ օտար երաժշտութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները:

—Միտո՞ւմ եմ: Նախ կ'ուզեմ ըսել, որ ձեր հարցումը բազմաճիւղ է, բազմատական լուրջ վերլուծումներ կը նշանակէ եւ նշանակ թանկ մը պատմասիրութիւններով կարելի չէ սպասել: Այս աշխատանքը ակադեմիական հսկայական ճիշդ ու վերլուծում կ'ենթադրէ: Հետեւաբար, շատ սեղմ, բայց խօսուն օրինակով պիտի շահամ մասնանշիչ հսկայական տարբերութիւններն ու նորոգանքները: Մեր երաժշտութեան արժանանքը շատ խորունկ ու հարուստ են եւ այդ իսկ պատճառով անկիւս ա՛յլ միայն նորութիւն մը, այլեւ շարունակութիւն մը կ'ըլլայ նորոգանքներուն համար: Եւրօպական երաժշտութիւնը ընդամէնը երկու լար ունի, երկու կադապար՝ մաժէօր եւ միմէօր, իսկ մեր երաժշտութեան արժանանքը ա՛յնքան խորունկ են, որ օտարները ուղղակի կը շքմին: Ես զխաւսեալներէն ասպացուցած եմ, որ հայ երաժշտութեան մէջ մէկ խաղը երկու անգամ չի կրկնուիր, ինչպէս եւրօպական երաժշտութեան մէջ: Միշտ տարբեր կ'ըլլայ, մէկը միւսէն քիչ մը աւելի ցած կամ բարձր, ճիշդ մեր ճարտարագիտութեան պէս: Իսկ շատ լուրջ ճանշնաք մէկ կողմէ մեր խաչքարներուն անկրկնելի արուեստին ու ասեղնագործութեանն է, միւս կողմէ՝ բանաստեղծութեանն ու երաժշտութեանն միջեւ գոյութիւն ունեցող այն անբախտելի կապերը, որոնցմէ մէկը անկրկնելիութիւնն է: Մեր ճարտարագիտութեան մէջ նաեւ նոյնն է պարագան, առաջին անգամից իրերանմանն ու հաւասար չափի սիւներ կը ստանան, բայց երբ կը

մտանաւ, կը տեսնես, որ այդ սիւները երբեք նոյնը չեն, մէկը միւսէն գեղեցիկ եւ տարբեր գարգաքանդակներ ունի, արտէս ա՛յլ միայն զիրար կ'ամբողջացրնեն, այլեւ համալիրը կը գեղեցիկացնեն: Կարեւորը այդ հարստութիւնը մասնացանկու հմտութիւնն ու շուրջ զգացողութիւնն է, եւ երբ մենք ճիշդ ու խիսկան չափերով կը չափողենք լսելի ու զգալի գարձնել այդ նորոգանքային տարբերութիւնները, այն ասան կը զրահենք նոյնիսկ ամէնէն զժուարահած օտար ունկնդիրին ուշադրութիւնը եւ կ'արձանագրենք մշակութային յաղթանակներ:

● Հաւամբար մասն այն պատճառով, որ մեր երաժշտութեան, մեր ճարտարագիտութեան կամ մեր Բերթողութեան մէջ անլորդ գարդաբաններ չկան, եւրօպական պարզ ոճին փոխարէն՝ կը տիրեն զուսպ զիծերով ու աղամանդի պէս կոտ մախաղասութիւնները, այլ խօսով՝ հայ մարդու հոգին ու էութիւնը քարգմանող խտացեալ պարզութիւնը, ճիշդ պիտի ըլլար ըսել՝ պարզին վստահութիւնը:

—Արժատեն՞ք շատ տարբեր են: Գիտե՞ք, արժատենք այնպիսին են, որ շատ բաներէ կը սնանին՝ ինչպէս, օրինակ, մեր լեզուն: Մեր լեզուն այբբենական եւ լեզուամտածողական այնպիսի՝ առատութիւնն է ճիւղնութիւնն ունի, որ հայ մարդը իր ցանկացած լեզուն աւելի շուտ կ'իրացնէ եւ կ'արտասանէ, քան այլ ժողովուրդի մը զաւակները: Այդ է պատճառը, որ մենք ՉԾ լեզուով երգած ենք եւ արժանացած օտարներու զնահասանքին:

● Հետաքրքրական պիտի ըլլար իմամալ, որ երբ, օրինակ, իտալերէնով կամ գերմաներէնով ելոյ մը պիտի մեկնարարէմք, ի՞նչ պատրաստութիւններ կը տեսնէք:

—Նախ երկարատեղի անդամներուն կը բաժնեն մեր երգելիք կատարելն ուսերն ու հայերէն տողացի թարգմանութիւնը, ապա առ տող եւ նոյն առ նոյն

կը վերլուծենք երկը, կը գնկուցեմ երաժիշտին արուեստին մասին, վեր կ'առնեմ անոր երաժշտութեան պլուսուր երեսներն ու յատկանշիչները, հակառակ անոր, որ երգչախումբին բոլոր անդամներն ալ երաժշտական բարձրագոյն կրթութիւն ստացած եւ երաժշտանոց ատարտած երգիչ-երգչուհիներ են: Անգա կը հրաւիրեմ խնդրոյ առարկայ լեզուին քաջահմուտ մասնագէտ մը, որպէսզի ո՛չ միայն արտասանուելիք առգերուն հնչիւնաբանական նորերանգները ուսուցանէ, այլեւ՝ մեկի ծանօթացնէ այդ լեզուին գաղափարներն ու էութիւնը: Նախապատրաստական այս աշխատանքներէն ետք է միայն, որ մենք կ'անցնինք մեր բուն աշխատանքին՝ երգը մեկնաբանելու մեր փորձերուն:

● Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը մասնակցած է զամբասանական միջազգային մրցանակներու եւ արձանագրած վալյուն առնիւմներ: Օրինակ, ձեր երգչախումբը տիրացած է Ֆրանսական Ակադեմիայի Կրան Փրիմ, որ պատիկ յաղթանակ մը չէ: Որքան ցիտեմք, մրցանակները արտասարակ կ'ունենան պարտադիր կտոր մը, որուն կողմին՝ մասնակցողները մասն կը մեկնաբանեն իրենց մասնըմտրած յօրինումը: Եթէ ձեր մասնակցած մրցանակներուն այս ձեւը որպէսզորած է՝ իրիւս ազատ կտոր ընդհանրապէս ո՛ր երգը կը մեկնաբանէր:

— Տարբեր ոճի եւ տարբեր պատարուութիւններ ունեցող մրցողներ կան: Մրցողներ կան, որ ընհանրապէս խումբին որակը բնորոշելու համար, կ'ունենան Երգչախումբի հոգ մենք շատ դասական գործեր եւ նոյնիսկ մեծ կատար գործեր, մինչեւ սրբախումբի կ'երգենք: Այդ քանակութիւնն է, այդ ճոխութիւնն է, որ մեր խումբը կը բնորոշէ, որովհետեւ շատ քիչ խումբեր այդպէս ճոխութեամբ քննութեան կը ներկայանան: Այդ իսկ պատճառով, մըրցողներուն ժամանակ մենք կ'աշխատինք տարբեր ծալապատկարներ, այսինքն՝ տարբեր ամվիլիոն ունեցող

երգեր ընդգրկել եւ կատարողական ընդհանրութեամբ ձգտել կատարելութեան:

● Ձեր այս խօսքը մեզ կ'առաջնորդէ այն եզրակացութեամբ, որ դուք կը հաւատաք արուեստներու մէջ կատարելալի գոյութեամբ:

— Ո՛չ, կատարելալ բան չկայ այս փոքրիկ երկրագունտին վրայ, մա՛նաւանդ՝ կատարողական արուեստին մէջ: Բայց մենք, այս ճշմարտութեան քաջ ծանօթ ըլլալով հանդիս, միշտ ալ, մեր առաւելագոյն ուժերը ի գործ կը դնենք եւ կը ձգտենք կատարելալին (կ'ուզեմ շեշտել «կը եզրինք» բայը), որ հորիզոնի մը պէս կը փախչի մեզմէ, երբ ամէն անգամ կը կարծենք, որ մենք հասած ենք: Ընդդէմ ու ճիշդ քննել փախուստ տուող հորիզոնին պէս, որ նուաճուելէ ետք, նոր հորիզոն մը կը բանալ այլեւս թուր զիմաց: Այս իսկ պատճառով, եւ շարունակ կը կրկնենք, որ կենսաբան միջոցի վերջին օրը եւ սորվելիք շա՛տ բան ունիմ՝ թէ՛ իբրեւ մարդ, թէ՛ իբրեւ երաժիշտ եւ թէ՛ իբր խմբավար:

● Կատարողական արուեստը այնպիսի արուեստ մըն է, որ սահման չունի: Ձանազան խմբավարներ մոյմ յօրինումը կը մեկնաբանեն տարբեր աշխարհահայեացքով ու զգացողութեամբ, պահելով հանդերձ մոյմ կտորին երաժշտական ճշգրտութիւնը, կշռոյթը եւ խաղերուն ճորտութեամբ: Իճնչպէս բատրոնի մէջ, երգչախումբի պարագային մասնամէկ օր պէտք է սպասել հաճելի անակնկալին, որովհետեւ իր մատուցելիք յօրինումին հետ մոյմացած արուեստագէտը, այս պարագային՝ երգիչ-երգչախումբը զայն կը մեկնաբանէ ճշմարտագային մոր գոյմերով, մոր զգայմութիւններով, մոր տրամադրութեամբ, որով ուղղակի եւ անուղղակի արդիւմքն է վալյուններին, վալյուն եւ իր գիտակից եւ ենթագիտակից աշխարհներէն բխող ամբաստանելի թելադրումներուն: Վերջապատելի թելադրումներուն: Վերջապէս, ամէն օր կենդանի կապ մը գո-

յութիւն ունի արուեստագէտին եւ արուեստաւէր հանդիսատեսին միջեւ եւ այս կապը իր գրական կամ բանաստեղծական անկախարձը կ'ունենայ արուեստագէտին վրայ: Դուք ինչ առաջ օրինակներով անդրադարձաք այս հարցին եւ ընդգծեցիք այն ազդակները, որոնք կ'անդրադառնան ձեր վրայ: Բայց երգչախումբի անդամները թեմին վրայ իրենց տարածալիմն ու կատարողական կարելիութիւնները յայտնագործող ազատ դերասաններ չեն: Թեմադրիչը, այս պարագային՝ խմբավարը, ժողովին մէջ չէ, այլ իրենց գիտացն է եւ ինքն է, որ կը վայել ստեղծագործական արկածախնայողութիւնը՝ իր նկատումն շարժումներով, յիմախաղերով եւ հիացական կամ խիստ հայեացքներով: Անկասկած, դուք եւս նոյն երգը երգելով ու երգելով՝ տարբեր մեկնաբանութիւններ կու տաք եւ ձեր դրոշմը անկողն կը հարստանայ: Սակայն կը բաւէ, որ մէկ հոգի անուշադիր գտնուի եւ ձեր գոյածը կը ձայնակի: Իրաւունք ունիք, երբ կ'ըսէք, թէ՛ «խմբավարութեան մէջ բարձրանալը շատ դժուար է, իսկ անկումը մէկ քայլ է»: Սեփական հարուստ կենսափորձով դուք ապրած եւ բազմիցս հաստատած էք այս բոլորը: Սակայն միշտ ալ անբացատրելի կը մնայ, յանալիս նոյնիսկ արուեստագէտին համար, թէ ինչպէս կը հասնի մինչ այդ իմ շնորհակալութեան գրեթէ անհաստատ օրինակները: Կը բարեհաճե՞ի՞ր մանրամասնել:

— Ինչպէս ըսէք, արուեստը անբացատրելի յայտնագործումն է եւ երբ ձեռք բերուած արդիւնքին զիմաց արուեստագէտն ալ կը սկսի զարմանալ, այդ պարագային կրնանք ըսել, որ ստեղծագործական հրաշքը անկողն ստեղծ է:

Իրաբանելիւր խմբավար նոյն խաղերը կը տեսնէ իր աչքին միջոցով: Ձանսնք կարալը եւ հնչեցնելը տակա-

ւին արուեստը չէ, որովհետեւ խաղերը միջոցներն են, որպէսզի ամէն խմբավար կատարողներուն յատակ դարձնէ, թէ երգահանը ի՞նչ կ'ուզէր ըսել: Ամէն մարդ հասկնալու եւ զգալու իր ձեռք ունի, ամէն երգչախումբ ի՞ր խմբավարին ըմբռնածն ու զգացումներն է, որ կը մատուցէ, զանոնք անցընելէ հոգ իր զգացումներու եւ բանականութեան ցանցերէն: Եւ որովհետեւ զգացումները չեն կրկնուիր, միշտ մէկ միխմեթը չափով կը տարբերին նախորդ օրուան զգացումներէն, ներքինացային կոտորածները նոր հոգեկիճակներ կը ստեղծեն եւ կատարողին, եւ ունկնդիրին համար:

Փաստօրէն, հակառակ խմբավարութեան մէջ որդեգրած իմ զիտական ընկերակցութեան, որոնց համաձայն կը շարժիմ եւ ցուցմունքներ կու տամ, երբեմն ես ինքս ալ կը զարմանան, թէ ի՞նչ ըրի, որ ժողովուրդին պահանջին ընդառաջելով՝ յաշողեցայ կիսահամար մը կրկնել, պահուած խաղ մը անկողն զգալի դարձնել կամ ալ խաղի մը արտադրանքները նուազեցնել: Իսկական զարմանալի բաներ կան, որոնց զիմաց ձեր բոլոր զիտութիւնն ու փորձառութիւնը պատասխան չեն դառնիր: Ես մինչեւ այսօր չեմ կրցած լուծել այն գեղեցիկ առեղծուածը, թէ երգողները ինչպէ՞ս կը հասկնան իմ ներքին ցանկութիւններս, եւ փորձերու ընթացքին իրենց լիատարած մէկ զգացումը կ'արտայայտեն, հետեւելով մատներու շարժումներուն: Իսկ ամէնէն զարմանալին այն է, որ երբ երգ մը կը մեկնաբանենք, իմ ակննջս կը զգայ արահիւ վերջին շարքին վրայ տեղ զբաւած ունկնդիրին ակննջին հետ եւ ես ըստ այնմ կը զեկազարեմ խումբը:

Պատկեր օրինակ մը պիտի տամ: Քանդակագործ Երուանդ Քոչարը զիտէք, իր նշանաւոր, հակադրուածալ «Աստուծոյ Դաւիթը»: Ամբողջութեամբ տեսնելու համար, անուշադի քանակ մեթը հետո պիտի երթաք, որպէսզի ամբողջութեամբ, այդ հրաշալի համադրութիւնը վայելէք: Բայց այդ մարդը իր փոքրիկ գործերով, իր նեղ արուես-



տանային մէջ, շատ մօտէն քանդակած է, եւ ոչ թէ քսան մեթր հեռաւորութիւնէն: Եւ ինչպէ՞ս, մօտէն քանդակելու ատեն ան այս ամբողջութեան համաշափութիւնը տուած է: Ասիկա մեծ խնդիր է, չէ՞: Մօտէն պիտի դիտես, բայց պիտի տեսնես քսանհինգ մեթր հեռաւորութենէն, այսինքն՝ պիտի տեղափոխուի հետո և մօտիկէն քանդակես: Ա՛յս զգացողութիւնն է կարեւորը: Համեմատելով՝ բնի կ'ուզեմ քիչ առաջ արտաշայտած ա՛յն միտքս, որ ես միշտ կը փորձեմ անդամախորհրդ քսաներոյց շարքին նստած մարդուն կողքին եւ անո՛ր ականջով լսեմ իմ խումբիս կատարումը:

●Իսկ երաժշտական Բառամկի՛՛նը...

—Երաժշտութեան մէջ ընդունուած շափանհիշք կան: Տեղագական արուեստին, գեղանկարչութեան մէջ քաղցածութիւն ու քաղցածեւ քառանկիւններ կան: Բայց երաժշտութեան մէջ կայ նաեւ բոլորին կողմէ ընդունուած իտայական քառանկիւնը, այսինքն՝ համաշափութեան քառանկիւնը եւ մենք բեմին վրայ կը ձգտենք այդ քառանկիւնին:

●Կը պատասխի, որ երգահանը երբեմն կ'առնէ ճաշի խմորները և ցայիկը, կ'անցնի երգչախումբին կամ սեմֆօնիք մուտքախումբին դիմաց եւ իմ կը մեկնաբանէ իր ստեղծագործութիւնը, ճիշդ այնպէս՝ իմպլէս երբեմն ակամատես կ'ըլլանք պերասան-բեմադրիչներու, որոնք իրենք կը բեմադրեն իրենց գրած բառերախաղը, ճաշի դառնալով կտորիմ զըլլաւոր դերակատարը: Դուք իմպլէ՛ս կը դիտէք ստեղծագործական եւ կատարողական մէկ անձի արտաբերութիւնը: Դուք իմպլէ՛ս կը դիտէք ստեղծագործական եւ կատարողական մէկ անձի արտաբերութիւնը:

—Որո՞չ կասկածով եւ վախով: Երգահանն ու խմորները տարբեր հոգեբանութեամբ եւ մօտեցումով կը կարգան միեւնոյն յօրինումը եւ, իր աչքերուն պիմաց գունուող խաղիքը կարգա-

լով՝ խմորները երբեմն կը լայտնագործէ այնպիսի՛ թաքուն ապրումներ ու զգացումներ, որոնք կրնան վրկած ըլլալ նոյնիսկ այդ կտորը ստեղծած երգահանին աչքէն: Մեր ենթագիտակիցը երբեմն այնպիսի՛ նրբութիւններով եւ զգացումներով կը հարստացնէ յօրինում մը, որոնց գոյութեան նոյնիսկ յօրինողը կրնայ չանդրադառնալ: Հո՛ս է արուեստին մեծութիւնը, հրաշքը: Այդ իսկ պատճառով, ես կը նախընտրեմ, որ երգահանը չըլլայ խմորագործ ցպիկը իր ձեռքը սանողը: Օրինակ, հանճարեկ Արամ Ռաչատրեանը երբ բեմ կը բարձրացնէր իր յօրինած մէկ գործը, կը նրատացնէր զայն, որովհետեւ կը կարգար ո՛չ թէ խմորագործ անդողով, այլ՝ իր յօրինումին հետ միաձուլուած երգահանին ակնոցով:

Հեռաւորութիւնը՝ գործին եւ զայն մեկնաբանողին միջեւ, շատ կարեւոր է: Եթէ չպահուի այդ հեռաւորութիւնը՝ կը տուժն թէ՛ գործը եւ թէ՛ մեկնաբանը: Տամ այլ օրինակ մը: Սկզբունքով մեզի կը թախ, թէ Պեթհոֆէնը ամէնէն լաւ մեղով մեկնաբանած է իր համանուագները, իրմէ աւելի լաւ լի կրնար գոյութիւն ունենալ: Բայց իրականութիւնը այն է, որ Պեթհոֆէնի համանուագները մեկնաբանողներուն եւ կատարողներուն թիւը ա՛յնքան շատ եղած է, կատարողական արուեստը Պեթհոֆէնէն ի վեր այնպիսի՛ զարգացում մը ապրած է, որ հանճարեկ երգահանը եթէ հրաշքով մը յարութիւն անէր եւ վորէր ինք մեկնաբանել իր յօրինումը՝ այսօրուան ունկնդիրին համար ընդունելի եւ ըմբռնելի պիտի չըլլար, որովհետեւ կհանքին կըրոյթը նոյնը չէ, կհանքը աւելի արագ է հիմա, նախկին տիպապոմն ու այսօրուանը նոյնը չեն, քսաներեսուն տարի առաջ մարդիկ լան աւելի գանգաղ կ'երգէին, եւ եւսլըն, եւսլըն: Ռ'ըր մնաց հարիւր կամ երկու հարիւր տարի առաջ: Ըսել կ'ուզեմ, որպէսզի յաջողե՛ք՝ պէտք է անսանք մեր կեանքի թելադրանքներուն եւ ամէն բան շանանք դիտել ու վերլուծել իբրեւ 1980ական թուականներուն ապրող եւ զգացող մարդ:

● Ուսանող կեանքի պարտադրանքներն ու թելադրանքները կը փորձեն շահագործել, իրենց ծայրայեղ փոփոխութիւնները արդարացնելու համար: Օրինակ, Պեթեովէճի կամ Կոմիտասի յօրինումները կը վերածեն ճազային անճանաչելի կտորներու եւ կը փորձեն հիմնադրել, թէ իրենք գիտակցաբար այս քայլին դիմած են, կեանքի յառաջընթացին հետ քայլ պահելու համար: Համաձայն է՞ր նման ծայրայեղութիւններու:

—Ո՛ր: Ինչպէ՞ս կ'ուզէք, որ համաձայն ըլլամ, երբ կատարուածը պարզապէս սրբապղծութիւն է՝ քափն ամբողջական աստիճով: Կոմիտասի երգերը պէտք է մեկնաբանել ճիշդ այնպէս՝ ինչպէս հանճարեղ երաժիշտը գրած է: Աւելի՛ն. պէտք է մեկնաբանել ճիշդ այնպէս՝ ինչպէս ի՛նք մեկնաբանած է: Ո՛չ որ իրաւունք ունի Կոմիտասը արժեքիկելու, որովհետեւ նման արեւէ փորձ երաժշտական եւ սպայի զատուանով թիւն է:

Կոմիտասը դաշտի ծաղիկներէն հաւաքած է միայն հայկական ծաղիկները եւ կազմած՝ մեր էութիւնն ու ոգին ամենայն ամբողջութեամբ, համալսարանութեամբ ու գրաւորութեամբ ներկայացնող ի՛ր փունջը: Այլասերած մարդիկ միշտ ալ կը փորձեն այդ հրաշալի ծաղկեփունջին կողքին զննել օտար ու խորթ ծաղիկներ, իբր թէ ծաղկեփունջը հարստացնելու, արդիականացնելու համար: Այս մարդոց պէտք է հասկնանք, որ ո՛չ ճապարհն է ոչ ալ ռապիդային տգիտութեամբ Կոմիտասը երկրորդ անգամ նահատակելու իրաւունք ունին: Պէտք է հաշիւ պահանջներ, կարելի եղածին չափ աւելի եւ աւելի ծանօթացնենք իսկական Կոմիտասը, սիրցենք ժողովուրդին, սգեկան ու գեղարուեստական ամէնօրեայ սնունդի վերածննդ, որովհետեւ երբ մեր ժողովուրդը կը սկսի ըմբռնել ու փնտռել հարազատ Կոմիտասը, աւելի՛ հաստատուն կը գտնուայ, աւելի եւ աւելի՛ կը հայտնայ, այլապէս՝ կ'ալլասերի:

● Ազգովին կ'ապրինք ճակատագրական օրեր: Վազգէճ Շուշանեան պիտի ըսէր՝ «օրերը գեղեցիկ չեն»: Քաղաքական, տնտեսական, ընկերային, բարոյական ու մշակութային բազմաթիւ ու բազմաստեակ հարցեր, որոնք փոշի եկած համայնավար վարչակարգին եօթանասուն տարիներու «բարի պտուղներ» են, կը սպառնան մեր հայրենիքին ու ժողովուրդին: Նման դառն ժամանակներ ապրած ժողովուրդները միշտ ալ ապրած են օրում հարցերը, յուր երեւոյթներն ու բարբերը մերկացնալ, առնուազմ ընկերային-քաղաքական շիջ ու ոգի ունեցող արուեստներ՝ բանաստեղծութիւն, թատրոն, երգ, եւայլն: Այնուամենայնիւ մէջ շատ ընդհանրացած սեռ մըն է ասիկա: Այս վայրկեանին մեր միտքը կու գամ Պոպ Տիլլմի, Ժազ Պրեյլի, Քլօտ Լուկասի, Իվ Մոնթանի եւ Շարլ Ազնատրի ասօրեայ կեանքէն ծնած երգերը, որոնք գեղարուեստական մշակումով վեր կ'առնեն իրենց ժամանակն ու վայրը բնորոշող խնդիրները: Վերջին տարիներուն, հակառակ մշակութային ահաւոր մահանջին, Հայաստանի մէջ մաքուր հոգեցիւն նման ծայրեր, օրինակ, Արա Երնջակեանի գրած ու բեմադրած «Հայք»ը, Վահրամ Թաքիկեանի եւ Ռուբէն Հախվերդեանի յօրինած ու կիթառի ընկերակցութեամբ մեկուարման երգերը, եւայլն: Հաւանաբար մեզի անծանօթ այլ անուններն ալ կան: Այդ չէ կարելոյր: Կարելոյր ա՛յն է, որ իբրեւ դասական կրթութիւն ստացած հայ երաժիշտ՝ դուք իմչպէ՛ս կը դիտէք նման փորձերը, որքա՞նով կը գնահատէք...

—Մեր կեանքի չառաջընթացին հետ քայլ պահող ձեր նշած գործերը կարելոյր են, որովհետեւ անոնք իրենց ժամանակի հարցերը կը ներկայացնեն եւ հայ մարդը գիտակցութեան կը հրափրեն: Ի՞նչ համոզումով՝ ասոնք մեր օրերուն աշուղներն են եւ իրենց արժէքը

պէտք է փնտռել այս հանգամանքին մէջ:

Օրինակ, քիչ առաջ Նշիցիք աշխարհահռչակ Ծարլ Ազնաւուրը: Ան ինծի համար իր ժամանակին աշուղն է, այսօրուան Ֆրանսայիին հարցերն ու ազգնապնդը հրաժարութեամբ, բայց հիմնականին մէջ խօսքով արտայայտող աշուղ մը: Առանց թիրազանհասելու Ազնաւուրի ձայնը, բնական ու յօրինողական արժանիքները, սոցաւուրեան երգը նախ խօսք է, բանաստեղծութիւն է, ապա միայն հրաժարութիւն ու ձայն, ինչպէս էր պարագան մեր աշուղներուն: Այս իսկ պատճառով եւ այս սահմաններու մէջ, եւ բարձր կը գնահատեմ Ծարլ Ազնաւուրն ու նման հրաժարութիւն մշակող ու մեկնաբանող մերօրեայ աշուղները:

● Ձեր վերջին հարցազրույցի մէջ կ'ըսէք, որ վերջին 30-35 տարիներու, կոմիտասի անուան պետական երաժշտանոցէն տալիս կան միջին հաշուով 35 խմբավար վկայած է: Եթէ բազմապատկեմք՝ կ'ուզեմք 1050 կամ 1225 խմբավար եկէք լսեմք՝ 1000: Ո՛ր եմ, Ի՞նչ ըրիմ կամ ի՞նչ կ'ընեմ: Զէ՛ր կարծեր, որ համայնավար յիսանկալութիւնը, բանակի եւ կեդիփի վրայ հիմնուած սխալ բաղադրականութիւնը, մարդու մէջ մայրամուտեան ոգի սպաննելով՝ մեր ժողովուրդին «կտակեց» սովորամուտեան, ծուրութեան եւ պատեհապաշտութեան թելալրամբներէ առաջնորդող ազարիւն «արեւտագլխոյն» բանակ մը:

— Ամբողջութեամբ համաձայն եմ ձեր ըսածներուն: Վերջին 70 տարիներուն զործուած մեծագոյն սխալներէն մէկն ալ քանակին տրուած այս կարեւորութիւնն է: Տասնեակ տարիներ շարունակ, մենք այսքան հարիւր բմբակ, այսքան հարիւր խմբավար, այսքան

հարիւր ֆիլիկուս, այսքան հարիւր շեմ գիտեր ինչ արտայայտչինք, ցուց տալու համար աշխարհին, որ տեսէ՞ք, ա՛յսքան բմբակ, ա՛յսքան խմբավար, ա՛յսքան այսինչ ունինք: Բայց կենքը կհաւ փաստելու, որ զործած ենք մեծ սխալ մը, որովհետեւ քանակը ոչինչ կը նշանակէ, եթէ գոյութիւն չունի որակը: Դուք կրնա՞ք պատկերացնել վէպ մը կամ որեւէ գիրք, որ իր էջերուն թիւով կը գնահատուի եւ ըստ այնմ կը վարձատրուի: Ըսէ՞ք ինչպէս, անհամար համանուագներէն ու գիրքերէն ի՞նչ կը մնայ այսօր: Երբ Դիլիշանի մէջ գրողներու եւ հրաժարողներու հանգստեան տուներ լուսնինք, երբ մեր արուեստագէտները կ'ապրէին աւելի համեստ եւ նոյնիսկ խեղճ պայմաններու մէջ, մեր յօրինողներն ու գրողներն աւելի որակով, ստեղծագործական ալրուծով բերեցան շատ աւելի բարձրարժէք գործեր կ'արտադրէին:

Ես շատ լաւ գիտեմ, որ ժամանակներից զժողովուն են, բայց նաեւ կը հաստատեմ ահաւոր պայմաններու մէջ Կոմիտաս ու Վարուժան, Զարինց ու Սեւակ ծնած մեր ժողովուրդի առողջ բնազգին ու կենսայորդ սկուներին, որ չի կրնար լռել: Կը քաւեմ, որ ամէն տեսակի գծաբութիւններ յաղթահարած մեր ժողովուրդը, որուն զարուար ճշգրտութիւնը եղած է ապրիլ ազատ ու անկախ, ամենայն գիտակցութեամբ, նուիրութեամբ, ողջմտութեամբ, հեռատեսութեամբ եւ երկարաշունչ հետեւողակութեամբ ինքզինք նուիրէ իրմէ վեր ու վեհ գաղափարի մը եւ ա՛նպայման հրաշքներ կը գործէ: Եւ այս ճշմարտութեան մէկ խօսուն փաստը 16 տարիներու ահաւոր պատերազմէն յաղթական ու առողջ վեր բարձրացող մեր գաղութնն է:

Հարցազրույց վարից՝  
ՍԱՐԳՒՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## ՄԱՐՈՒՄ

# Անգլիական Արդի Բանաստեղծությունը

Երբ կը գրուի անգլիական արդի բանաստեղծութեան մասին, ընդհանրապէս նկատի կ'առնուի քսաներորդ դարու երկրորդ տասնամեակը, իբրև սկիզբ արդի շարժումին (modernism):

Իսկապէս, հակառակ Համաշխարհային Առաջին պատերազմին ձգած ընկերային և տնտեսական տակնաւթայութիւններուն, քսանական թուականներուն անգլիական գրական հրապարակը ողողուեցաւ այնպիսի՝ գործերով, որոնք գրականութիւնը դրին արդի շարժումին ճամբուն սկիզբը և միեւնոյն գայն, մեծ թափով, դէպի յաշորդ տասնամեակները:

1919ին Ն. Տ. Եիթց կը հրատարակէր *The wild swans at cool* (1916), Տի. Էյլ. Լորընս կը հրատարակէր *Sons and lovers* (1913) և *Women in love* (1921), Վ. Ճոյս կը հրատարակէր *Portrait of the artist as a young horn* (1916) և *Ulysses* (1922), Թի. Էս. Իլիւթ՝ *The waste land* (1922) և Վլորճիկիա Վալֆ՝ *Mrs. Dalloway* (1925): Այդ շրջանին հրատարակուած են նաև նուազ ակնառու գրողներու գործեր, ինչպէս՝ Աստու, Մանսֆիլդ և Հարպի, կամ մինչ այդ արդէն հանրայայտ գրողներու գործեր, ինչպէս՝ Թ. Հարպի, Պ. Եօ կամ Ճ. Մուր: Այս բոլորը քսանական թուականներու անգլիական գրականութեան կու տային այնպիսի՝ հասանալի գիմագիծ, զոր չէր ունեցած Պալլըրի, Եիլլի, Աքսթի և Ճէյն Օսթըրնի օրերէն ի վեր:

Վերոյիշեալ գործերը ամբողջովին տարբեր բնույթի և ոճի գործեր ըլլալով հանգիստ, գիրենք իրարու առընչող ընդհանուր գիծեր ունէին, ինչպէս գրական շնորհիւն հանդէպ մտեցումի նարութիւն և փորձառական կիրարկում՝ չեզոքին հանդէպ:

Մինչև քսանական թուականները, որոշ վիրապահ կեցուածք կար «ան-գրական» և «ան-բանաստեղծելի» նիւթերու հանդէպ, մա'նաւանդ՝ Georgian շարժումի բանաստեղծներուն կողմէ, որոնց զործերը գիւղական տեսարաններու, գիւղի մատուին կամ ծառերուն սակ յիամիջօրէի թէլասկաններու ծիրէն անդին չէին անցներ:

1913ին մինչև 1925 երկարող կարճ շրջանին մէջ լոյս տեսած բոլոր գործերն ալ կ'անտեսէին այդ վիրապահութիւնը և կ'ստեղծուէին գծուած սահմանները, ներկայացնելով ան-գրական կամ ան-բանաստեղծական նիւթեր: Իսկ չեզոք և կենթարկուելի նախապէս չերեւակայուած փորձարկումներու: Այս առընչութեամբ Թի. Էս. Իլիւթը ունի շատ մէջքերուած խօսք մը.

«...Բամաստեղծը պետք է անլի ակՕարկող ըլլայ, անլի անուղղակի, կա-  
րեմայ բոմամայու լեզուիմ եւ մկելու, Եթէ պէտք է՝ տեղահամեպու համար լե-  
զում, իր ուզած իմաստով»:

Գրական նոր եւ ուժեղ շարժումները ընդհանրապէս արդիւնքն են կեանքի հան-  
դէպ եղած գգայնութիւններու եւ գրական աւանդութիւն հանդէպ ցուցաբերուած ըզ-  
գայնութիւններու բախումին:

Այս բախումը ձեւի կամ խորքի, կեանքի կամ միջոցի հարց չէ, որովհետեւ ձեւը  
նո՞յնքան կարեւոր է այն գրողին համար, որ կը փորձէ լեզուն ազատագրել աւան-  
դութիւններէն, որքան այն գրողին, որուն համար լեզուն աշխատանքի եւ մարտահրա-  
ւէրի դաշտ մըն է:

Տարբեր գրողներու, ինչպէս Յիթցի, Լորդնաի կամ Իլիւթի գործերէն դատելով  
յստակ կը դառնայ, որ արդի գրականութիւնը զարուս սքանչելի երևույթներէն մէկն  
է, քսաներորդ դարու վերլուծութիւններուն եւ անոր առթած պրկումներուն յար-  
մարելու ճիւղերէն է: Կանոնք արտայայտելու կարողութեամբ: Հակառակ այս  
դէմքերուն ժմբողջական տարբերութեան, յստակ է հասարակ յայտարարը իրենց  
մօտ՝ ժողովուրդի լրջութիւն, ամբողջական նուիրումով, ներկայի պայմաննե-  
րու մերժում, պրպտում՝ պատմութեան եւ ենթագիտակիցին մէջ: Ասոնք անպայ-  
մա՞ն որ աւանդական յատկութիւններն են գրականութեան, սակայն հեղինակներուն  
ոճը եւ լեզուն արդիական են:

Այս շրջանին լոյս տեսած բանաստեղծութիւնները ընդհանրապէս կը կիրարկեն  
ազատ յանգը կամ սպիտակ բանաստեղծութիւնը: Հագեակին կամ զուգեակին նման  
դասական ձեւերը, երկար ատեն, Georgian շրջանին, ձախող կերպով օգտա-  
գործուել է ետք (ձեւի թուրիտիւն, խորքի ազդեցութիւն, կեանքի բացակայու-  
թիւն), բնական է, որ մէկի պիտի գրուէին, անի սու, երեսնական թուականնե-  
րուն, նոր աւելով կրկին օգտագործուելու համար:

Թէ որքանո՞վ շրջանի մը տողնապններ, մտահոգութիւններն ու զխաւոր հար-  
ցերը ցոյցացած կամ ներկայացուած են այդ շրջանի գրականութեան մէջ, ցոյց կու  
տայ այդ գրականութեան հարազատութիւնն ու անկեղծութիւնը, հետեւաբար՝ յա-  
ջողութիւնը, որովհետեւ ի՞նչ է գրականութիւնը, եթէ ոչ հարազատ վկայութիւնը  
կեանքի կամ այդ կեանքին շերտի մը:

Քսանական թուականներուն, զիխաւոր մտահոգութիւնը քաղաքակրթութեան  
քայքայումն էր եւ, ասոր զուգահե՛ռ՝ մշակութիւնը պահելու անհրաժեշտութիւնը. երկու  
հարցեր ատեն՝ որոնք յստակօրէն ներկայ են այդ շրջանի բանաստեղծութեան՝ Իլիւթի  
The waste land (1922) գործին մէջ: Անշուշտ պէտք չէ նկատի առնել այն տասնեակ  
մը գիրքերը, որոնք լոյս տեսան, քայք միջակութիւններ մնացին: Քաղա-  
քակրթութեան եւ մշակութի հարցը կ'ենթադրէ ա՛յ միայն անգլիական, ալիւ՛-  
նարական մշակութի խոր գիտակցութիւն, գրական, աւանդական եւ կրօնական  
ձեւարդականներու վրայ, որ միեւնոյն ատեն բանաստեղծը կը գնէ բանաստեղծելու եւ  
թելագրելու վտանգաւոր սահմանին եւ կը դարձնէ գիճք, եթէ զոչ 1911-այ, գիտե-  
լիքներով թիմուած մեքենայ մը:

Այս բոլորէն պէտք չէ հեռուցել, որ բարդ ժամանակաշրջան մը, ինչպէս որ էր  
քսաներորդ դարու սկիզբը, անպայմանօրէն կը պահանջէ եռլեզան բարդ  
բանաստեղծութիւն, ինչպէս ըսած է Իլիւթ 1921ին, իր յօդուածներէն մէկուն մէջ.

«...Կը թուի, թէ բամաստեղծներ պէտք է քալող եւ դժուար ըլլան մեր բա-  
ղաբանութեամբ մէջ...: Մեր բաղաբանութիւնը բարդ է եւ խալտարդէտ, եւ  
անոր ազդեցութիւնը մտքը զգացականութեամբ մը վրայ, պէտք է մոյմբամ  
բարդ եւ խալտարդէտ արդիւմբներ ունենայ...»:

Մէթիւ Արնիտոյ (անգլիացի բանաստեղծ-քննադատ, 1822-1888) սակայն կ'ը-  
սէ, թէ «իւր բարդ ժամանակաշրջանը շատ յստակ եւ օրինակելի պարզութիւն  
կը պատահէր բանաստեղծելու»:

Գալիք առանձնակները (ինչպէս որ ընդունուած է բաժնի անվիական արդի բանաստեղծութեան շրջանը) պիտի ապին ակնառու բանաստեղծներ, որոնք երբեմն առաջին և երբեմն ալ երկրորդ կարծիքին հետեւած են՝ իրենց գործին մէջ:

ՈՒՒԼԵԸՄ ԵՒԹՑ

(1865-1939)

Շատ հետաքրքրական էրեւոյթ է, որ 1908 թուականին, երբ ամերիկացի երիտասարդ բանաստեղծ Էլբա Փաուելս Լոնտոն կու գար, Եիթցէն «գրիւ սորվելու», ինչպէս ինք յայտարարած է ստեղծին, իր ժամանումը ճակատագրական կ'ըլլար անվիական արդի բանաստեղծութեան զարգացման հաշուոյն, որովհետեւ թէև Փաուելսը սորվելու կու գար, սակայն իր խիստ արդի մտածողութեամբ և գաղափարներով՝ խոր ազդեցութիւն կը թողար անվիացի երկու մեծ բանաստեղծներու՝ Եիթցի և, անկի ուշ, Թի. Էս. Իլիւթի վրայ:



Կարելի չէ խօսիլ անվիական արդի բանաստեղծութեան մասին և զանց առնել անվիական բանաստեղծութեան «վերջին սոմանթիքը»:

Իրլանտայի Սենտիմուլթ քաղաքը ծնած, իր կեանքին մեծ մասը հոն անցուցած և իր գործին ամբողջութիւնը ալք երկրի հողին, առանդոյթներէն, առասպելներէն և տպանպներէն քաղած այս բանաստեղծը կը համարուի անվիական բանաստեղծութեան ամէնէն զխաւոր և ամենախորունկ բանաստեղծը, որ «կը խստացնէ իր ժամանակը և արտով իսկ կ'արժանանայ բանաստեղծի մը շնորհուած ամենարճար պատուին», ինչպէս գրած է իր մասին Թի. Էս. Իլիւթի:

Եիթցի գրական կեանքը կարելի է դիտել իրրեւ մանրանկարը նոր շրջանի անվիական գրականութեան զարգացումին՝ իր կեանքի գանազան շրջաններով և այդ շրջանները բնորոշող յատկանիշներով:

1908ին զինք կը գտնենք երկիրու ութ հասարակներով հարուստ, քառասուններեք տարեկան և արդէն նշանաւոր՝ իրրեւ բանաստեղծ, թատերագիր, արձակագիր և դասախօս:

Այս շրջանի գործերը իրենց նիւթերը քաղած են իրլանտական առասպելներէն, առանդոյթներէն և սիրոյ աշխարհէն՝ ընդհանրապէս: 1889ին, Լոնտոնի մէջ առ ծանօթացած էր Մոս Կոննի, սիրահարած անոր և իր ամբողջ կեանքի ընթացքին չափողեցաւ և երբբազատի միտածամանակ իր մուսան և մղեաւանջը հանդիսացող այդ սրբին: 1889էն մինչև Մոս Կոննի ամուսնութիւնը և անոր ամուսնալուծումէն մինչև Եիթցի ամուսնութիւնը՝ 1917ին, բանաստեղծին ինքնակենսագրականը կը պարունակէ երկու շոր նախադասութիւն:

«Եիթցի ամուսնութիւն առաջարկեց Մոս Կոննիու:  
«Մերժուեցաւ:

Եիթցի համար գրականութիւնը պէտք է ըլլար համոզումի արտայայտութիւն մը, ազնիւ զգացումներու հանգիստ մը և ոչ թէ աւարտէր ինք իր մէջ, ինչպէս կը գաւառէին Rhymers (յանպարտողներ) ակումբի տղաքը՝ «Արուեստը արուեստին

Համար: Թէն ան կը պատկանէր նոյն ակումբին, սակայն չէր բաժնորջ այդ Համարումը:

1896ին կը հանդիպէ Լէյսի Կրեկորիի (1852-1932. Իրականացի կին Բատերագիր՝ Spreading the news, The rising of the moon. գլխաւոր ուժը Alley Theatre Կաթին): Անոր հետ իր բարեկամութիւնը եղած է խոր և ազդեցիկ: Քույր Փարքի (Լէյսի Կրեկորիի սուսը) մէջ անսեր միասնաբար ծնունդ կու տան իրլանտական ազգային թատրոնի մը գաղափարին, որ 1904ին իրողութիւն կը դառնար՝ իրրեւ Alley Theatre և որուն Համար Եիթց կը գրէր մեծ թիւով չափածոյ թատերադրութիւններ, ինչպէս՝ The Countess Cathleen (1892), Cathlee ni Houlihan (1902), Deidre (1907):

Հորը սկիզբակերպութիւնը խոր ազդեցութիւն ձգած էր իր վրայ, հետագային արգիւք հանդիտանալով իր ամբողջական հաստատելու: Եւ որովհետեւ հաստատը փոխարինող ոչինչ կար, Եիթց կը փորձէ այդ պարապը լիցնել աստղաբաշխութեամբ և սգեհարցութեամբ:

Ուրիշըմ Եիթցի գրական կեանքը կը բաժնուի երեք հանգրուաններու: Ձիւք կը կոչեն «վերջին ասանկիքը», որովհետեւ առաջին շրջանի գործերը խորունկ զգացականութիւն կը ցուցնեն՝ թէ՛ իրրեւ նիւթ և թէ՛ իրր ոճ: Այս շրջանի իր բանաստեղծութիւնը լեցուն է ազատ պատկերներով, իրլանտական զգացարանութեամբ, հարուստ է swinburnian յանգերով, խոսովը վերջարաններով և անբարոն երեւակայութեամբ: Տիրող մթնոլորտը ընդհանրապէս թախծու է և անշարժ: Այս շրջանի բանաստեղծական հաւաքածոնորէն են Crossways (1888) և The Rose (1893), ուր բանաստեղծութիւնները աւելի վիճակի, քան թէ զգացումի արտայայտութիւններ են: Վարդը փոխարեքարք կը ներկայացնէ թէ՛ Իրլանտան և թէ՛ Մոտ Կաներ:

Այսպէս՝ «Կարմիր վարդ, կալալու վարդ, իմ օրերուս սխալ վարդ...»:

1904ին Եիթց կը հրատարակէ In the seven woods, որ կը համարուի իր ամենամախող հաւաքածոն: Բանաստեղծութիւնները կարծէք հանգարտորէն շինուած տողեր ըլլան:

Մինչեւ յաշորդ հաւաքածոնին լոյս ընծայուէր (1910, The green helmet and other plays), Եիթց կ'աշխատի թատերադրութիւններու և արձակի վրայ: Ճիշդ է, որ հասունացումը նկատելի է իր գործերուն մէջ, սակայն բանաստեղծը տակաւին չէր գտած իր աշխատանքային սկզբունքը, թէ՛ «աշխատանքը ո՛րքան ԵՌթագիտակցական ըլլալ, ստեղծագործութիւնը ա՛յնքան ուժեղ կ'ըլլալ»: Բանաստեղծը կը զգար, որ կատարած է մինչ այդ իր նպատակագրած առաջադրանքը և հիմա պէտք է գտնէ իր նոր ուղին՝ գայն գարգացնելու համար:

Այս շրջանի իր գրական անտութիւնը շատ աւելի յառաջապահ դիրք մը կը պարզէ մեզի, քան այդ անտութեան կիրարկումը՝ բանաստեղծութիւնը, ինչպէս կարելի է հետեցնել իր նամակագրութիւնին:

Թերեւս Էլլրա Փաուլսի Լոնտոն այցելութիւնը պէտք է նախախնամական համարել, Եիթցի վրայ անոր ձգած բարեբար ազդեցութեան համար, որ հետագային պիտի վերածուէր խորունկ բարեկամութեան մը (1917ին Փաուլս եղած է Եիթցի պատկի արարողութեան խաչեղալը):

Տքնաշուն աշխատանքով և ինքնագարգացումով՝ Եիթց միշտ աւելիին կը կցուի: Այս գարգացումին իրրեւ արագոյց, յաշորդարք կը հրատարակուին In the seven woods (1903), The green helmet (1910), Responsibilities (1914) և, Ի վերջոյ՝ The wild swans at cool (1919) անուն հատորները:

Այս հատորներուն մէջ բանաստեղծին ձայնը աւելի հաստատ է, քառալին հիւստածքը՝ աւելի կուռ, իսկ ձեւագաղափարները փոխարինուած է կեանքին հան-

զէպ ցուցարհրուած անկեղծութեամբ:

In the seven woods գիրքին մէջ կը գտնենք ածականներով ծանրաբեռնուած երկար նախադասութիւններ, ինչպէս՝

«...այդ սահող, արծաթ մաշիկով, սոճոյն արծաթեայ հայարտ թագուկի-լիւնը երկնմբիւն...»

The wild swans at cool հաւաքածոյին մէջ կը գտնենք պարզ, բայց անմիջական տողեր՝

«...Մերամալխ դեռ շատ առաջ  
Պիտի գրեմ իրեմ համար  
Միակ տաղ մը՝ թերեւս պաղ,  
Բայց կրճոտ՝ ինչպէս մթնշաղ»:

Այս հաւաքածոն կը նկատուի մինչ այդ լոյս տեսած իր գործերուն լաւագոյնը: Այստեղ կը գտնենք խաղաղ, իր շրջապատին աւելի ձու բանաստեղծը, որ լքեր է երևակայութեան եւ ներաշխարհի ոլորտները եւ իջեր հողին:

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներուն, թէեւ իրմէ կը խնդրուի գրել պատերազմի մասին, բայց ինք կը մերժէ.

«Կը կարծեմ, թէ լաւագոյնն է, այսպիսի առիթներով  
Բանաստեղծներում լռել, որովհետեւ, անկեղծօրէն,  
Մեզի տրուած չէ տաղանդը քաղաքագետներ սրբագրելու...»:

Աւելի ուշ, սակայն, երկու դէպքեր խորապէս կը ցնցեն զինք.- 1916ի Ջատկական ապստամբութիւնը (Easter Rising) եւ 1918ի Ջորափար Թոպլըթի Կրիկորիի մահը, որոնց նուիրուած իր երկու բանաստեղծութիւնները կը համարուին իր լաւագոյն գործերէն:

«Իրլանդացի օլաշու մը կը գուշակէ իր մահը» քերթուածին մէջ, կը հանդիպինք «չնպիսի» տողերու, որոնք այդ շրջանին հաւանաբար ցնցած ըլլան ընթերցողը.

«Անոնք՝ որոնց դէմ կը կռուիմ, չեմ ատեր,  
Եւ անոնք՝ զոյս կը պաշտպանեմ, չեմ սիրեր»:

Այս շրջանին է, որ կը տարուի ոգհարցութեամբ, կապեր կը հաստատէ մեռած բանաստեղծներու հետ, փոխանցելու համար անոնց «իմաստութիւնն ու արեւելահայկան լիզողութիւնը»: Այս քուրքը մանրամասնօրէն կը բացատրէ A vision (1925) արձակ գործին մէջ. բարեբախտաբար, այս հատորը եւ անոր էջերուն ներկայացուած տեսութիւնները բնաւ անհրաժեշտ չեն, հասկնալու համար Եիթթի բանաստեղծութիւնը:

Տարիքի յուսալուծման հետ, բանաստեղծը կ'ապրի ծերութեան քաջ առ քաջ մտանցումը եւ այդ տագնապը չի փորձեր թաքցնել իր տողերուն տակ, գրելով երիտասարդի պէս, երիտասարդները յուզող նիւթներու շուրջ, այլ անկեղծօրէն եւ քաջութեամբ կը գրէ այդ տագնապներուն եւ տուայտանքներուն մասին, պահելով իր թարմութիւնը՝

«Կը խորհիս, թէ սարսափելի պէտք է ըլլայ,  
Որ կիրքերը դեռ պար քրոնեմ ծերութեամբ մէջ.  
Մահացու մեղք չէիմ անոնք մատաղատի օրերուս,  
Անոնցմէ գատ ես ի՞նչ ունիմ, որ երգելու խթան ըլլայ»:

Ինչպէս, իր մասնովութեան եւ սպրեւիկեղծին մէջ, մեծ տեղ գրուած է սեռը, անոր պարզեւած խնձիրը եւ անորմէ ծնած տուայտանքը.

«Սեռն ու մահը այն միակ բաներն են, որոնք կարող են գրադեցնել լուրջ միտք մը»:

1923ին կը պարզեցատարուի Նոպլեան մրցանակով:

Փարիզ կը մեկնի՝ իբրեւ պատգամաւոր իրլանդական բնակիչին, որուն անկախ հանրապետութեան խորհրդարանի առաջին անգամը եղած է:



1928ին լրջա կը տեսնէ The tower մողովածունը Հոս ազէն հասուն եւ խորունկ բանաստեղծն է, որ կը մտորէ կեանքի կրճատքներուն եւ մահուան մասին, իր ամբողջ աւիշը կ'առնէ իրլանդական հողէն եւ կը գրէ խիստ ազնուական ոճով մը:

Իր կեանքին վերջին օրերուն գրած է բարեկամի մը:

«Մարդ կրնայ նշմարտութիւնը բովանդակել, բայց չի կրնար գիտնալ գայն. ես պէտք է բովանդակեմ գայն իմ կեանքիս ամբողջացմամբ»:

Կը ծնուի 1939ին, Յրտեսա:

1948ին, իր կտակին համաձայն, մարմինը կը փոխադրուի Իրլանտա եւ կ'ամփոփուի Տրամպլիֆի եկեղեցւոյ բակին մէջ:

### ԼԵՂԱՆ ԵՒ ԿԱՐԱՊԸ

Յանկարծակալ թեւհարում: Հսկայ թեւերն կը գամեն խարխափումը աղչկան. մութ քաթերը կը գգունեն Ջիստերը իր. ծածրակն անոր կտուցին մէջ բռնուած Եւ կտրծօքն անոր իր կտրծօքն ղէմ անօգնական ազուցուած:

Ինչպէ՛ն հիմնել այս սարսափած եւ դողդոջում մատնեցող Շքեղութիւնն այդ փետրասլոյ սկարացող գիստերէն. Նետուած հոսքին մէջն սալտակ ինչպէ՛ն չգգալ իր մարմնով Օտարութի սրտփները կրծքավանդակին մէջէն:

Դողդոջում մը տողերուն մէջ կը սերմանէ Փլած պատը, այրած տանիքն ու աշտարակը, Ազամեննունը մահացած:

Այդպէս գերուած,

Տիրապետուած մթնոլորտին բիրտ արեամբ Իմաստութիւնն ալ ուժին հետ կրնա՛յ հագնիլ Աղբիկն այնտեղ անտարբեր լճուղէն առաջ:

### ՆՈՐԵՐ

Այս շատ նշանաւոր հնչեակը բանաստեղծը հաւանաբար ներշնչուեք է Միքելանժի մէկ գործէն:

Յունական առասպելը այստեղ օգտագործուած է, կանկա՛ծ տակ առնելու այն կարծիքը, թէ քրտուցիւնն ու չեղափոխութիւնը մաքրագործելու յատկութիւն ունին: Վերջին երկու համարներուն մէջ ակնարկութիւնը կ'երթայ Տրովազայի անկումին, որովհետեւ, Ջեսի կոչմէ բանաբարտելէ հոգը, Լեզան ծնունդ տուաւ Հելէնին:

### ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՊԻՋԱՆԹԻՈՒՄ

#### I

Այս երկիրը ծերերուն չէ: Երկտասարկներն Իրարու գիրկ, բուռնները — այս մահացող սերունդները — Իրենց երգին, ծառերուն, Լուսսիներու ջրվէժները եւ ծովերը՝ բիւնիկներով աուցում, Ձուկեր, հաւիթի եւ մարմններ, ամառն ամբողջ Կը դասանին ինչ սերած է, ծնած է եւ կը մեռնի:

Համամուտային ցանկութեան կարթուած, կրօնները  
Կ'անտեսեն շօնարացոյ իմաստութիւնը:

## II

Ծերունի մը վաճառքի է, ուրիշ ոչինչ,  
Եւ գզգզուած վերարկու մը նետուած ցիցին.  
Եթէ հոգին ծափ չգայնէ, չերգէ բարձր եւ անլի.  
Կարկտանին իրաբանչիւր մահկանացու իր հագուստին.  
Երգելու դպրութիւն չկայ, սերտել միայն  
Կոթողները իր անձնական շփեղութեան:  
Եւ ուրեմն ճաւարկեցի ծովերն ամբողջ ու հասայ  
Պիզանթիումի Բաղաբը այս սրբագամ:

## III

Իմաստուններ, Աստուծոյ սուրբ կրակին մէջ դո՛ւ կեցած՝  
Ինչպէս ոսկի խճանկար մը սրմի մէջ,  
Իշէ՛ք ձեր սուրբ կրակէն, պառտւո՛րնեցէ՛ք դէպի վար,  
Եղէ՛ք դայրներն հոգիս իմ երգին:  
Կործանեցէ՛ք սիրտս՝ հիւանդ ցանկութեամբ  
Եւ հաստատուած կենդանիի մը մեռնող,  
Որ չի զիտեր, թէ ի՞նչ է, եւ սարէ՛ք զիս  
Յախտեանի նարտարութեամ:

## IV

Բնութեան երբ դուրս գամ, իմ մարմինս  
Սովորական որեւէ բան պիտի չըլլայ,  
Այլ ձեռ մը, գոր ոսկերիզները կրէսեան  
Ծեծած ըլլան ոսկիով եւ ոսկիով կիտած գայ՞մ՝  
Ծնած կայսրն արթուն պահելու,  
Կամ ճիւղի մը զետեղուած՝ դայրայելու Պիզանթիումի  
Պարոններում, տիկիներում,  
Անցած, անցնող եւ գալի՛քի մեղեդիով:

### ՆՈՐԾԻՐ

*Այս քերթուածը բանաստեղծին երրորդ շրջանի առաջին գործն է, վերցուած՝*  
*The tower հաւաքածոյէն:*

*Պիզանթիումը միսրիք քաղաք մըն է, ուր կհանքը կը վերափոխուի արունասի,  
ձահէն հոգ: Յետ-ձահու կհանքը հապուղէպորէն այսքան հմայիչ ներկայացուած է:*

### ՄԱՀՈՒԱՆ ԵՐԱԶ

Երագեցի որ մեռեր էր, օտարտաի այս տեղը,  
Ոչ մէկ սովորական վայրի մօտիկ.  
Գամեր էիմ դէմքին վրայ տախտակները  
Այդ շրջանի զիւզացիք.

Եւ զարմացած ցաներ էլն մեմոքեամը մօտիկ  
 Գնոց մը եւ մոնիս  
 Եկայ, վալստեայ խաչիմ վրայ արձանագրեցի,  
 Մարդմ ուրիշ ընելիք չունի,  
 «Ամ ատելի գեղեցիկ էր, Բամ Բու սէրդ առաքին,  
 Տիկիմն այս ծառերուն մօտիկ...»  
 Ու դիտեցի սգացող աստղերը վերի  
 Եւ սգացող գեփխոսիմ ուշք դրի...

### ՏԵՅՎԻՏ ՀԸՐՊԸՐԹ ԼՈՐԸՆՍ

(1885 - 1930)

*Տէյվիտ Հըրպըրթ Լորընսի մահէն ետք կինը կը գրէր.*

«Ի՞նչ որ տեսած էր, ապրած եւ ճանչցած, իր գրութիւններով փոխանցեց իր միտմանը, կեանքի, ասրելու յոյսը տուաւ ամուսնաց... հերոսական եւ անգին ճակատ»:

*Տի. Էյչ. Լորընսի անունին հետ կը սիւշուի Lady Chatterley's lover վէպը եւ յիշատակը ա՛յն տակնուվրայութեան, որ այդ կիրքին տպագրութիւնը առիւրտեցաւ եւ հեղինակը դասափարութեան կանչուեցաւ, որովհետեւ շատ անբարոյականօ նկատուեք էր: Ահա թէ մարդիկ ինչպէ՞ս կ'ընդունեն Նուէրը, զոր իր կեանքին գնով ըրած էր հեղինակը:*



Այստեղ չենք ուզիր մանրամասնորէն խօսիլ այդ վէպին մասին: Բայց ի՛նչ որ ատենին անբարոյութիւնս կաշուեք էր, մարդուն անհեղձութիւնն է իր նմանին հանդէպ: Գիրքը կը խօսի այլ եւ կ'ընչ յարաբերութիւններուն մասին, սակայն անոր իւրաքանչիւր սուրին մէջ ներկայ է տաղանդը, որ գիտէ տարբերել զեղեցիկը զսեփեցիկէն, զգագումները՝ կիրքէն եւ մարդկայինը՝ կենդանականէն:

Տէյվիտ Հըրպըրթ Լորընս հանքագործի մը շրջանը գաւաին էր, որուն զգացական կապը իր ուսուցչուհի մօր հետ եղած է խորունկ եւ ազդեցիկ: Տան մէջ տիրող ձգտուած մթնոլորտը իր անկրօնաբան ունեցած է Լորընսի վրայ, մա՛նսականց կիներու հետ ունեցած իր հաղորդակցութեան պարագաներուն:

1914ին, Նոթինկհամ Իւնիվըրսիթիի դասախօսներէն մէկուն՝ Զրիտայի հետ կը փոխուի եւ մինչեւ իր կեանքի վերջաւորութիւնը կ'ապրի անոր հետ:

1915ին լույս կը տեսնէ իր The Rainbow վէպը, որ կ'արդիւրօ՛ւ անոր էջերուն տեղ զտած սեռայնութեան պատճառով: Նոյն տարին գիրքը կը վտարեն իրենց բընականէն՝ իրրիս կերման լրտեսներ:

Լորընս երկար ճամբորդութիւններ կը կատարէ դէպի Իտալիա, Աւստրալիա, Նոր Զելանտա, Քալիֆօրնիա, Մեքսիքօ եւ Նիւ Մեքսիքօ:

1926ին կը վերագրուայ Իտալիա եւ շա՛նոր շոր տարիներուն կը ճամբորդէ Եւրոպայի զանազան ուստանները, թօքախաէն բուժուելու լուսով: Կը մեռնի 1930ին, Զրանսայի Ալնս շրջանի սանատորիումին մէջ:

Լորենսի գործերուն մէջ (վէպ, վիպակ, ճամբարական նոթեր, յօդուածներ, պատմութիւններ) բանաստեղծութիւնը շատ յաճախ երկրորդական դիրք կը գրաւէ: Սակայն իր կեանքի անկիրակապարձային շրջաններուն, իր գրական բերքը բանաստեղծութիւնը կ'աւելնէ:

Իր բանաստեղծութիւններուն (գրիթէ հապար քերթուած) մեծ մասը դժբախտաբար անյաջող կը համարուի: Սակայն ինչ որ կը մնայ քննադատական մարտնչէ մը հարց՝ հարկաւր քննարկելու, մեկի աւելի եւ իրատուէք կու տայ զինք զիսելու իրրեւ մեծ բանաստեղծ մը, որ ո՛չ միայն կը գրուէ ընթերցողը իր գործին ինքնուրոյնութեամբ ու զեղծակամութեամբ, այլեւ հետագայ սերունդներուն վրայ նաեւ կը կզէ իր գրողը (Թէտ Զիւկ):

«Ձգացական իրապաշտութիւն»։ ահա թէ ինչպէ՛ս կ'որակուի իր գործը, ուր ճշմարտութիւնն ու զգացումի թէժութիւնը կը պայթին ցնցող երեւակայութեան մը շրջանակին մէջ:

Լորենսի համար անբան կարեւոր չեն բանաստեղծական լեզուն, ոճը, կատարելութիւնը, թէեւ իր բոլոր արձակ բանաստեղծութիւններն ալ հեղասահ հոսք եւ ներքին կշռոյթ ունին, որքան բանաստեղծական պահը, երբ «եռզլն, միտքն ու մարմինը միաստեղ կը դրուին բամաստեղծական պահու մը մերկ տրոփիմ մէջ...»:

Թերեւս Լորենսի զխաւոր սաղանիցը կը կայանայ զգացումի ամբողջական անմիջականութիւնը ճարտարութեամբ փոխանցելու իր կարողութեան մէջ:

Լորենս միակ բանաստեղծն է, որուն գործերը մաս կազմած են թէ՛ Ճիւրճերն եւ թէ՛ Երեւակայապաշտ (Imagist) բանաստեղծներու հաւաքածոներուն: Վերջին խմբակին ետեւորուն մասնակիցներէն կ'աւելնէ նաեւ Ուիլիամ Պալսլըր Երթց:

Եթէ իր վէպերուն մէջ Լորենս իր ամբողջ ուշադրութիւնը կը կ'գործնացնէ ճարպկային փոխ-յարաբերութիւններուն վրայ, իր բանաստեղծութիւնը կը սեւեռնէ մարդուն ներաշխարհը, առանձնութեան եւ զանազան հարցադրումներէ ծնունդ առնող տուայտանքներու մէջ:

Բանաստեղծական իր յուսպոյն գործերը (ինչպէս Tortoises, Snake, Bate, Bavarian Gentians) ամփոփուած են Birds, beasts and flowers (1920-1921) հաւաքածոյին մէջ:

Լորենսի արձակ բանաստեղծութիւնը (free verse) պէտք չէ շփոթել սպիտակ բանաստեղծութեան (blank verse) հետ: Իր ոճը՝ յազոցած կրկնութիւններով, գուգահեռներով եւ ներքին կշռոյթով, աւելի ծօռ է Ուոլթ Ուիթմէնի՝ գործին եւ, անոր քերթողութենէն անդին անկնիւրդ՝ աւետարանական սաղմոսերգութեան:

Լորենսի յուսպոյն քերթուածները կենդանի, բայց ոչ-մարդկային էակներու մասին են:

Կենդանիներուն նուիրուած իր քերթուածները կը գտնեն արձակ բանաստեղծութեան իրենց յարմար ոճը, ինչպէս օրինակ՝ «Մժեղը»: Կարճ եւ երկար տողեր իրարու կը յաջորդեն, յարձակումի եւ նահանջի հետեւողութեամբ: Նոյնը կարելի է ըսել «Ձղըլկ» եւ «Օձ» քերթուածներուն համար, ուր զիրար ամբողջացող, սպարոզ եւ օձապտոյտ տողերու յաջորդականութիւն մը կը գտնենք:

Արձակ հատուածի մը մէջ Լորենս կ'ըսէ.  
«Մարտը չի կրնար ապրիլի Բառսի մէջ: Կենդանիները կրնան: Կենդանիներն ունենալ ամէն բան Բառս է, պարբերական Բառսի մը շարժերէ դուրս»:  
Հեղինակը կը փորձէ մտնել այդ քառուին մէջ, զգալու համար այդ աշխարհը կարելի հարազատութեամբ, ու կը շեշտէ.

\*Wall(er) Whiteman (1819-1892) ամերիկացի բանաստեղծ, որ եղած է անգլերէնով ազատ լսող կիրարկող առաջին բանաստեղծը. իր զխաւոր հաւաքածոն՝ Leaves of grass, հետապնդումի ենթարկուած է, սեռային հարցերը անկեղծ եւ պարզ ձեւով անբարձրացնելու համար:

«Վաւերական արուեստագէտը Բառսիմ մէջ իսկ կրնայ յատկանշական երեւոյթներ գտնել»:

*Հորընսի բանաստեղծութիւնը հարցերուն (ինչպէս օրինակ՝ ձեւի եւ խորքի, կամ բանաստեղծին ու բանաստեղծութեան փոխ-լարաբերութեան հարցը) լուծում բերող գործ չէ. ընդհակառակն, այդ հարցը նոր դիտանկիւններով եւ սուր կերպով ցուցադրող ամբողջութիւն մըն է: Հակառակ անոր, որ գրեւտեղ արդիական է լաճախ հնարոյս գարձուածքներով եւ իր գործին մէջ հղած ապրումի անկեղծութիւնն ու թէժութիւնը բնաւ չեն ապահովեր գործին բանաստեղծականութիւնը, հակառակ այս բոլորին, իր բանաստեղծական ընթացի լուսարոյնը ինքզինք կը պարտադրէ կենդանական փոխադրանքուն ճշգրտութեամբ («Օձ», «Մժեղը», «Կրիւս-Ոճր», «Էսայէն»), սիրոյ կարգ մը փոխադրանքուն խտութեամբ («Պատշգամիւ վրայ», «Երիտասարդութեամ մը միացը») եւ մահուան փոխադրանքուն տաղ-նապահար ուժականութեամբ («Մահուամ ճաղ»):*

*Հորընսի բանաստեղծական առաջին հաւաքածոն լոյս տեսած է 1913ին՝ Love, poems and others խորագրով:*

**ԿՐԻԱՅԻ ԿԱՆՉ**

Կը կարծէի, թէ համըր է  
Ու կ'ըսէի, թէ համըր է,  
Բայց իր կամըն լսել էի:

Այն առաջին մեղմիկ կամըն  
Կեանքի անտակ աղջամուղէն դուրս եկած,  
Այնքան հեռու, այնքան հեռու խեղճութեամ պէս,  
հարկաւոր ծագող երգիւմ  
Հեռու, հեռու, հեռու կամըն:

Ծայրագմութիւնը կրիային:

Ինչու՞ յաշուած ենք մենք սեռի յաշակայալին,  
Եւ ինչու՞ չենք եղած ամբողջ, ամբողջացած մենք մեր մէջ,  
Այնպէս՝ ինչպէս սկիզբէն էինք,  
Այնպէս՝ ինչպէս ինք եղեր էր, մամկութեամբ մը կատարեալ:

Այնքան հեռու լսելի՞ էր,  
Թէ հնչեր էր կեանքստիւթիւմ ուղիակի:

Նորածնիւմ կանչէմ ալ վաստ  
Ճիշ մը,  
Ունոց,  
Ու ցնձերգ մը,  
Մահուամ սեռիւր,  
Ծննդոցի աղաղակ,  
Կամ հեգութիւմ, խոնարհութիւմ  
Եւ բոլորը այնքան մեղմիկ, այնքան հեռու,  
աղջամուղջիմ սակ սուրսկում,  
Կոնի կամ, յաղթերգութիւմ եւ սուր հանոյք ու մահուամ երգ սողացող:

Ի՞նչու՞ քույր պատուներ էր,  
Արծաթեայ նի՛չ հոգւոյն պատուած բաղանջին,  
Արու հոգւոյն թաղանթին,  
Պատուած՝ կամշով մը մեղեդի ու սարսափ:

Խաչելութիւն,  
Արու կրիան, որ կը յարի թամբը էգին,  
պատ խրճիթին,  
Բարձր ու պիլիկ, արծիսի պէս լայնատարած, ելած հասած իր խրճիթէն,  
Կրիայի մը մերկութեամբ  
Ձիգ պարանոց ու ձգուած մկաններ, արծիսի պէս լայնատարած  
էգ խրճիթին  
Ու խոր, գաղտնի, թափամցող պոզ էգ  
պատերուն,  
Որ կը հասնի ու կը պրկէ, որ կը հասնի սագմապահար ու կը պրկէ  
խոր պրկումով,  
Մինչեւ յանկարծ գուգառլուման գեմիթին մէջ մրճահարող ոստումներով  
իւր պէմքը, օ՛հ,  
Իր պրկումէն, պարանոցէն կը քակէ  
Ու կը կանչէ այդ դիրաբեկ աղաղակով՝  
Ամհումօրէն լսելի,  
Իր ծեր—մարդու վարդագոյն ու քաջուած բերնէն  
Հոգին սուրբ լիբով  
Կամ գոչելով *պէնթէքուսթէ* եւ սուրբ հոգին ընկալելով:  
Իր գոչումը եւ յուլի համդարտումը՝  
Տիեզերքի բուզակամ լուսիւնը  
Դեռ շարձակուած, վայրկեանէն ետք, յանկարծակամ ցնցող շարժը  
գուգառլուման, յետոյ իսկոյն  
Ամասելի, մեղմ կամչը —  
Այսպէս ընդհատ ու շարունակ, մինչեւ վերջին կեմսանիւթը իմ մարմնինս,  
Այ կը հալէի մայրասարերին մէջ կեանքին եւ գաղտնիքին:

Կը հարուածէր ու կը կանչէր  
Կրկին, կրկին այդ պատուած ու դիրաբեկ կամչը կրկին  
Եւ շարժէն ետք իւրաքանչիւր միջճարար մը երկար ու լուռ,  
Յալտեմոսիւն կրիայի,  
Յարատեմոսիւն սուղակուն,  
Եւ լայն տրոփ յամառօրէն յաջորդ պրկումը սպասող:

Կը յիշեմ դեռ սողայ էլի,  
Երբ լսեցի օճի քելմին մէջ բոնուած գորտին կամչը,  
Կը յիշեմ երբ առաջին հեղ եւ լսեցի գարման մուտքին  
ծեր գորտերու կրկնացը  
Ու կը յիշեմ վայրի բաղին բարձր կամչը գիշերներու  
խոչափողէն՝ շուրի լիճէն ալ անդին,  
Կը յիշեմ եւ առաջին հեղ, գիշերային մացառոյն տակ,  
սոխակներու ծակող կամչը,  
որ հոգիին խորքը ցնցեց,  
Կը յիշեմ եւ նսպատակին վայրկեան ճիշը,  
եւր կ'անցնէի անտառներէն,

Կը յիշեմ ես Երինջը՝ իր տաճարեան մէջ յամառօրէն ու  
 ամարգեղ եւ սմայլը, սրբոց ծեր,  
 Կը յիշեմ ես իմ առաջին սարսափս, երբ կը լսէի  
 սոնոցները կայտարուած՝ սիրատուտը կատուներուն,  
 Կը յիշեմ ես կամչը վայսցած ու վիրատը հովաստակին  
 ու մեսաղեայ կայծակները  
 Եւ փախուստս՝ նիչ ու լացէն ծննդկան մօր,  
 վայնասունէն կարծես թուի,  
 Եւ ներքնապէս ունկնդրելով գառնուկի մը նոր մայիւնիմ,  
 Մանուկի մը առջի նիշիմ  
 Եւ իմ մօրս մնջիկ երգիմ,  
 Եւ առաջիմ թեմոր Երզը՝ շատ եռանդուն, շատ երիտասարդ  
 Եւ շատ վիճով համբազործիմ,  
 Օտար լեզուի նոր տառերը  
 Շրթումքներուն մութ ու վայրի:

Այս բոլորէն շա՛տ աւելի,  
 Այս բոլորէն դեռ շա՛տ նուազ  
 Այս վերջիմը՝  
 Օտար, սկար գուգման կամչը՝  
 Իր ծայրայեղ վիճակիմ մէջ այս արուէն,  
 Տկար կամչը եզերքներէն կարծես եկող  
 կեանքի հետս հոբիգանիմ:

Խաչափայտը  
 Ճակարակը, որուն վրայ մեր յայտնիք կը կոտորի  
 Սեռը, ոյ կը մասնատէ մեզ՝ իբրեւ ամբողջ, կը լկէ մեր  
 յայտնիքը, կը խոցէ մեզ  
 Եւ կը կորզէ մեզմէ՝ ճիշ մը:

Սեռը, որ մեզ կը վերածէ խոյ ձայներու եւ կը մղէ մեզ  
 խորերէն կանչելու, ամբողջացման ձգտելու,  
 Երգելու եւ կանչելու: Կրկին-կրկին երգելու, պատախաճանդելու,  
 գտած ընկալու:

Կը մասնատուիմք, վերամբողջանալու, երկար ատեն փնտռելէ  
 Յսի կոյսուածը,  
 Նոյն կամչը՝ կրիայէն կամ Քրիստոսէն, Օգիրեսեան կամչը  
 Ինքնակրուովս:

Ինչ որ ամբողջ է կը մասնատուի  
 Եւ ինչ որ մասնատուած է կը գտնէ իր ամբողջութիւնը՝  
 կրկին տիեզերքիմ ընդմէջէն:

**ՆՈՒՅԻՐ**

«Կրիայի կամչ» բանաստեղծութիւնը կրիաներու նուիրուած շարքի մը (վեց քերթուած) վերջինն է: Շարքին առաջին երեք քերթուածները կը նկարագրեն նորածին կրիայ մը եւ կը բնութագրեն սևաբոյն սիւնիկներին մէջ: Յաջորդ երկուքը՝ արու եւ էգ կրիաներու նուիրուած, կը ծառայեն իբրեւ նախերգանք վերջինին:

*Հնգինակը կրցած է, իր ոտղանդին շուրհու, երեսոթապէս աննշան փորձառութեան մը ընդմէջէն, դրեւարի կեանքի հանդէպ ունեցած իր փիլիսոփայութիւնը, եւ մտածումները՝ սեռային ուժականութեան բնույթին մասին:*

*Հազուապէս են այն հեղինակները, որոնք կրցած են հարազատօրէն ներկայացնել սեռային արարքի ընթացքին արժեքայոյ հաճոյքի եւ բրտութեան խառն վիճակները: Իսկ մանրամասնութիւններու այսպիսի պրկուած կեդրոնացում կարելի չէ գտնել անգլիական բանաստեղծութեան մէջ:*

### ՊԱԻԱՐԵԱՆ ՓՈԿԵՐ

Ասէմ մարդ չէ, որ իր տամ մէջ փոկեր կ'ունենայ,  
Մեղկ Սեպտեմբերին հանդարտ եւ տխուր Մայրալմասի մէջ:

Պատարեամ փոկեր, մեծ եւ մթազոյն, միայն մթազոյն՝  
Ջահի պէս օրն մթնցնող, տխուր կապոյտով փութոյի թախտին,  
Կողարկուած, ջահամմամ իրենց մութի ցոլքով կապոյտ,  
Տարածուած վար եւ կէտերու վրայ լայնցող, ներմակ օրում  
սահամբին տակ այդէն լայնցած  
Ջան ծաղիկը կապոյտ ծխտ մթութեան, վութոյի շփոթութեան  
մութ կապոյտ:

Սեւ լամբարներ՝ սրահներէն Տիսի վառող մութ կապոյտ  
Եւ մութ սկառի, կապոյտ մութ մը, Տիմիթրի. տժգոյն լամբեր՝  
իրան լոյսը ներծծող:

Առաջնորդեցէ՛ք սրբեմն, առաջնորդեցէ՛ք զիս ճամբուն:  
Հասցուցէ՛ք փոկ մը եւ տուէ՛ք ջահ մը,  
Թող տուէ՛ք զիս առաջնորդել կապոյտ երկնիւղ ջահովն ծաղկին,  
Վար անելի՛ անելի մութ սանդղակներէն, ոպ կապոյտը մթնած  
է կապոյտի վրայ,

'Նոյնիսկ ետն՝ ոպ Բերսէվոնը կ'եղբայ հիմա միգամած Սեպտեմբերին,  
Դէպի անտեսիլ իրաւը, ուր մթութիւնն արթնցած է մութի վրայ  
Եւ Բերսէվոնը ծայն մըն է լակ,  
Կամ մութ մ'անտես՝ խոր մութին մէջ պայտորուած,  
Փութոնեան թեւերու խիտ բախիծի կլրքով մեխուած  
Շփեղանքին մէջ մթութեան ջահերու եւ մթութիւն ցօյեղով՝  
մոյր հարսին եւ իր վեպին:

### ՆՈԹԵՐ

*Լաւագոյն ջերթուածը՝ ծաղիկներու մասին:*

*Բերսէվոնը չտն աչջիկ մըն էր, Տիմիթրիի դուստրը, ու ծաղիկներ քաղած միջոցին առեւանդուեր էր մութ աշխարհի գահակալին՝ Տիսի կամ Փութոյի կողմէ եւ տարուէր վար՝ անոր գահակալութեան մէջ ապրելու:*

*Ջերթուածին մէջ կը նկարագրուի այս ծաղիկներուն զարմանալի, ինքզինք պարսազող ուժականութիւնը եւ անոնց ամբուսեան շահեր» ըլլալու կազափարը համոզիչ կերպով կը բացայայտուի:*



**ՄԱՀՈՒԱՆ ՆԱԻՉ**

Քու մահաւանդը մալը արդեօ՛ր շինե՛լի ես, շինե՛ր ես,  
Պէտք է շինել մալը մահուան, որոն պէտք պիտի ունենաս:

Արշալոյսին՝ մատիք անտես ծովու ակիմ  
խաղալութեան եւ շինէ քու մալը մահուան,  
Փոքրիկ մալը, որ քու եզրից պիտի տանի  
Ուլեւորութեան մը վերջին, անհասնում, այնպէս խաղաղ, գեղեցիկ,  
Ծովերու վրայ վերջին:

Երբ օրը գայ, որ պիտի գայ,  
Խորիկ խաղաղ ամար մասին, արշալոյսին,  
Վերջին օրը, մաւրկութիւնը այն երկար  
Ճամբորդութեան, պահուած ծովերու վրայ՝  
Դէպի վերջին հրաշքն մտայման:

Մոռացո՛ւմ... Հրա՛շք վերջին...  
Երբ մենք գմեզ ամբողջութեամբ կը վստահինք  
Անծանօթին, ու կը սարսիմք  
Մահուան նաւերէն մեր վտրիկ՝  
Բացարձակ մոռացումին:

Շինէ՛ մալը քու մահուան, օ՛մ, շինէ դուն գայն հիմա,  
Աղօտ, խաղաղ խոհերով եւ ձեռքերով հանդարտ,  
Ատաղձներն անք կապելով աղբամուղջին,  
Ատագաստները բանալով լառ ու անտես մաւրկութեան,  
Որ մահուան մէջ պիտի բացուի տիեզերքին  
Ջեփխումներուն, որոնք պիտի փոխիկ մալը իր հոգիով  
Ծփացընեն դէպի հրաշք կէտը վերջին:

Եթէ կ'ուզես ապրիլ խաղաղ երկրագունդի երեսին,  
Որեմն՝ մալը քու մահուան պէտք է շինես, ըլլաս պատրաստ  
Նաւարկութեան համար երկար, ծովերուն վրայ վերջին:

**ՆՈՒԹԵՐ**

*Մէկը հեզիմակի ժախք քերթուածներէն, որ մահուան եւ անդինականին հանդէպ կաշուն պիքորտում կը ցուցարբրէ եւ փոխանակ վանելու իրմէ նման մտածումներ, քաշարար կը մտանայ անոնց:*

*Իր հաղուպիտ քերթուածներուն նման, այս քերթուածն ալ իր առդերով կը յամենայ մեր մտքերուն մէջ՝*

«Շինէ՛ մալը քու մահուան, օ՛մ, շինէ դուն գայն հիմա,  
Աղօտ, խաղաղ խոհերով եւ ձեռքերով հանդարտ...»:

(Շար. 1)

**ՄԱՐՈՒՇ**



Հայ մանրամկարչության գամձերը ստար արուեստասէր շրջանակներում ներկայացնող քանկարժէք հրատարակութիւններու ծիրէն ներս, 1891ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն լոյս տեսաւ Սիլվիա Անէմեանի ֆը-

րամներն Manuscris Arméniens Enlumines du Catholicossat de Cilicie մեծածաւալ ու շքեղ հատորը, Գալուստ Կիլիկիոյ կեան շիմարկութեան Ուրական օժանդակութեամբ:

Գարեգին Բ. Վեհափառի յառաջարանով բացուող այս կոթողական հրատարակութիւնը կը բաղկանայ երկու մասէ: Առաջին բաժինով՝ մեծածաւալ 137 էջերու տարածքին, Սիլվիա Անէմեան մասնագիտական նշգրտութեամբ կ'ուսումնասիրէ եւ կ'արժեւորէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հայ ձեռագրաց հաւաքածոյն տասներեւութ ձեռագիրներէն իր առանձնացուցած եօթը ձեռագիրները՝ իբրեւ ընդհանուր նկարագիր ունեցող առանձին խումբ մը: Ապա, յաջորդական 24 եւ 84 էջերով, ընթերցողին կը հրամցուին գումատր եւ սեւ ու ներմակով կատարուած արտատրպումներ ուսումնասիրուած ձեռագիրներն՝ Կիլիկեան մանրամկարչութեան մասին առարկայական ու տեսանելի գաղափար մը փոխանցելու յստակ Ոգատակով:

Ստորեւ կու տամք Գարեգին Բ. Կաթողիկոսի յառաջարանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

**Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն**

*Ոոր գոհունակութեամբ կ'ողջունենք ի լոյս ընծայումը այս շքեղ հատորին, որուն բովանդակութիւնը նոր լոյս մը կ'աւելցնէ այն պայծառագոյն վկայութեանց, որոնք կը պատմեն հոգիին յաղթանակը նիւթին վրայ: Հայ ժողովուրդի մշակութի ոյճ պատմութիւնը՝ ինք՝ հանդիսապարտութիւնն է այս յազ-*

*թանակին: Կ'ապացուցէ Քրիստոսով հուսկուած ճշմարտութիւնը, թէ՛ «Ոգի առաւել է քան զկերակուր, եւ մարմին՝ քան զհանդերձ» (ՄԱՏԹ. 2. 25), եւ թէ՛ «Նոգին է կեանդամարար» (ՅՈՂ. 2. 84):*

*Ներկայ ժամանակներուն, երբ արժեքներու շփոթանք մը կայ մարդկային*

կհանքին մէջ, երբ նիւթական իրնրու եւ նիւթապաշտական ճաշակներու յաճախանք մը անսահման կերպով իր ընթացքն է աւելի, երբ սոսկ զպայարանքնեքու պարագրումին մէջ ինկող մակերեսային երևույթներու նախընտրանքը մարդոց կհանքին մէջ յարաճան զարգացմամբ կ'առաջանայ, այս եւ նման հատորներու ի լոյս ընծայումը ոխստի մը զովութիւնը կը յիշեցնէ քոյր աւնոց, որոնք տակաւին կը պահեն ներքին զպայարանքը հոգեկան, իմացական, բարոյական, մշակութային-զեկարուեստական, մէկ խօսքով՝ շեշտօրէն մարդկային արժէքներու հանդէպ:

Կարելի է այժմ ըսել, որ այլևս միջազգային ճանաչման հասած հայ մանրակարգական արուեստը այդ հոգեկան արժէքներու աշխարհէն կը խօսի, եւ՛ կը խօսի տիրակա՛ն Լաւնով: Վերջին տասնամիակներուն, քաղմաթիւ հասարակնք, որոնցմէ շատերը զեղարուեստական բարձրորակ հրատարակութիւններ, լոյս տեսան թէ՛ Հայաստանի (Երեւանի) եւ թէ՛ աշխարհի ալլազան երկիրներու եւ քաղաքներու մէջ, Ճրանսա, Ամերիկա, Անգլիա, Իտալիա, Խորհրդային Միութիւն, Աւստրիա, Զուիցերիա, Գերմանիա, Պոլսիա, Ֆրանսիա, Երուսաղէմ, Պէրտի, Գահրի եւ այլ վայրերու մէջ, ալլազան լիզուներով, լուսանկարչական գունաւոր թէ՛ պարզ նկարազարդումներով, որոնք լայն խաւերու մէջ տարածեցին եւ ծանօթացուցին հայ ձեռագրական ու մանրանկարչական ժառանգութիւնը: Օտար թէ՛ հայ հրատարակչական տուններ մշակութային արժէքներով հետաքրքրուող շրջանակներուն, աշխարհի շորս ծագերուն, ներկայացուցին Երեւանի, Ս. Էջմիածնի, Երուսաղէմի, Վենիսիի, Վիեննայի, Նոր Զուրաբի, օտար թէ՛ հայ թանկարաններու, մասնաւորապէս, համալսարաններու, գիտահետազոտական կեդրոններու եւ անհատական սեփականութիւն կողմ հայ ձեռագրներու հաւաքածոներու մանրանկարչական գանձերը՝ լայնագոյն շարկումով: Եզայկական մանրանկարչութիւնը քաղաքացիութեան իրա-

ւունք սապաւ համայնադարաններու եւ արուեստի պատմութեան նուիրուած հատորներու մէջ:

Մծծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սեփականութիւն կողմ եւ անոր հոգաբարձութեան տակ գտնուող հաւաքածոն ցարդ կը մնար դուրս ուսումնասիրութեան եւ հրատարակութեան այդ շրջագրէն: Բնակածօրէն, հաւաքածոյի ձեռագրներէն ոմանք առանձնապէս ուսումնասիրուած էին անհատ գիտնականներու եւ մասնագէտներու կողմէ: Առանձնակի յօդուածներով եւ զբոյցներով ձեռագրներէն ոմանք բացուած էին գիտական աշխարհին: Ուսումնասիրութեան եւ ծանօթացման այս տեսակէտէն՝ ամենէն յատկաշարժան հանգրուանը կզաւ Անթիլիասի հաւաքածոյի ամբողջական ներկայացումը, Ձեռագրաց ցուցակի համայնապարփակ, մանրամասնապէս նկարագրութեամբ, գիտական աւելաներու հիման վրայ, խղճամիտ պատրաստութեամբ Կիլիկիան Ս. Աթոռի միաբաններէն Անուշաւան Վրզ. Գանիէլեանի: Գործը հրատարակուեցաւ մեծադիր հատորով մը, ընտիր տպագրութեամբ, գիտական օրինակելի բժախնդրութեամբ, Գալուստ Կիլիկիեան Հիմնարկութեան բարերարութեամբ, Անթիլիասի տպարանէն, 1984ին, «Մայր ցուցակի հայերէն ձեռագրաց Մծծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան» խորագրին տակ:

Բայց Անթիլիասի հաւաքածոյի մանրանկարներու աշխարհը թէ՛ գիտական եւ թէ՛ զեղարուեստական տեսակէտէ՛ կը մնար դեռ գոց աշխարհ մը հանրութեան համար: Հատրնտիր մանրանկարներ, առհասարակ սեւ ու ճերմակ եւ շատ հազուադէպօրէն գունաւոր վերաբառագրութեամբ, ուսումնասիրութեան առարկայ կզած էին. բայց այդ բոլորը շատ հեռու էին հարազատ, վաւերական եւ ամբողջական պատկերացումը ապէ՛ Անթիլիասի ձեռագրական հաւաքածոյի մանրանկարչական բաժնին:

Ահա այդ բացն է, որ այժմ կը պոստի այս հատորի հրատարակու-

թեամբ, որ գործն է Միջին Արևելքի քրիստոնէական (յասկապէս յայն օրմտաքս եւ յայն կաթողիկ) արուեստի, մասնաւորապէս իկլմներու եւ բիւզանդական ընդհանուր մանրանկարչական արուեստի ու հայ մանրանկարչութեան ամէնէն հմուտ եւ ձեռնհաս ուսումնասիրող եւ մեկնարան Միլլիթա Աճէմեանի։

Հատորի բովանդակութեան մասին մեր կողմէ ոչինչ կարելի է աւելցնել։ Հեղինակին կողմէ գրուած ներածութեան էջերուն մէջ սպասելի կերպով տրուած են հարկ եղած ծանօթութիւնները եւ զեզարուեստական վերլուծումները։

Մենք այստեղ պարտք կը զգանք միայն նշել, թէ ի՞նչ խոր հասկացողութեամբ, ամբողջական պատկերացումով, պատմական լայն տեղեկութիւններով, ճշգրտաբար, բծախնդիր եւ մանրամասնեայ նկարագրութեամբ, մա՛նաւանդ զեզարուեստական արժէքի պարզարանումով եւ մանրանկարչական ոճի եւ ոճային առընդդէմանց ճշգրտումներով եւ նշումներով յագեցած հատոր մըն է ան եւ բացայայտ վկայութիւն մը հեղինակի արժանիքին։ Մենք կ'ողջունենք այն ամբողջատեսական մօտեցումը, որով հեղինակը իրագործած է իր աշխատասիրութիւնը։

Կիլիկիան աշխարհը հայ մանրանկարչական արուեստի ամէնէն բեղուն եւ բարձրորակ կեդրոններէն մէկն է եղած։ Այստեղ, Կիլիկիոյ մէջ են իրագործուած հայ մանրանկարչութեան այն բարձր արտայայտութիւնները, որոնք իրաւունք տուած են Կիլիկիան շրջանի ԺՊ դարը հռչակելու հայ մանրանկարչութեան սուկեզարը։ Միլլիթա Աճէմեանի այս լայնածիր եւ խորագնին ուսումնասիրութիւնը՝ Անթիլիասի հայ ձեռագրաց հաւաքածոյի տասնհուսիս ձեռագիրներուն եւ անոնց մանրանկարչական տուեալներուն, կարեւոր շարժում լոյս կը սփռէ Կիլիկիան մանրանկարչական արուեստի պատմութեան վրայ, մա՛նաւանդ այս հատորին մէջ նկարագրուած եւ վերլուծական հայեացքով ներկայացուած առաջին հօթը ձեռագիրներու պարագա-


լին, որոնք հեղինակին կողմէ ներկայացուած են արդէն արդէս առանձին խումբ մը։

Եստուիկ ուշադրութեան եւ ընդգրծումի արժանի է նաեւ այն միւս մօտեցումը, որով հեղինակը իր լայն հմտութեան բերումով իր ուսումնասիրած ձեռագիրներու մանրանկարչերուն պատմական եւ մա՛նաւանդ արուեստի ու ոճի առընդդէմները այլ մանրանկարչական կեդրոններու եւ աւանդութիւններու հետ կը յայտնաբերէ, ըլլաւ անոնք Մայր Հայաստանի թէ՛ Կ. Պոլսոյ եւ կամ մինչեւ իսկ Իտալիոյ մէջ գործող կեդրոններ կամ անհատ գրիչներ եւ ծագողներ։ Հայեցակէտի այս եղանակը իր ուսումնասիրութեան կու տայ աւելի լայն տարածք, քան պարզ նկարագրական եւ զուտ պատմական մօտեցումը։ Այս մեթոտով իր ուսումնասիրութիւնը զուտ կու զայ մասնակի գործ մը ըլլալէ եւ կը դառնայ հայ մանրանկարչութեան ընդհանուր պատմութեան մեծ նպաստ բերող գիտական երկասիրութիւն մը։


Եստաշարանի մը նեղ սահմաններուն մէջ բնական եւ կարելի չէ աւելի առաջ երթալ եւ գործին բոլոր արժանիքները թուել եւ մեկնաբանել։ Այդ աշխատանքը կը պատկանի մասնագետներուն, գրախօսողներուն եւ ընթերցողներուն։ Մենք պարզապէս կ'ողջունենք այս գործը՝ որպէս ամէնէն հարողատ, գրեթէ ամբողջական, ներկայացում մը Անթիլիասի ձեռագրաց հաւաքածոյի մանրանկարչական գործերուն եւ անոնց արժեքներուն, եւ որուն համար շերտերէն կը շնորհաւորենք աքնաջան հեղինակը, որուն բծախնդիր եւ լուզանապատ աշխատանքին անձնական վկաներէն մէկը եղանք անցնող տարիներու ընթացքին։



Քաղցր պարտք կը զգանք Մեր շնորհակալութեան եւ երախտիքի խօսքը արձանագրել այստեղ, ուղղուած՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան վարիչ մարմնին, որ կարեւոր նշուի-



Ս. Մարկոսի դիմանկարը



...և Աստուածաշունչի առաջին էջը

բատուութիւնը մը մեծապէս սատար հանդիսացաւ այս հատորի տպագրութեան: Ասով, կը հաւատար, Գալուստ կիւղիկէնիան Հիմարիութիւնը մշակութային եւ հայագիտական իր քաղուժաւաւորութեանց եւ իրագործումներու սակի շլթման նոր օղակ մը աւելցուց:



Լիբանանի անցնող տասնեւփոյ տարիներու մաշող եւ շատիչ տագնապէն օրէ օր զուրտ գալու եւ վերականգնումի ու բնականոնացման ընթացքին մէջ յառաջանալու այս օրերուն, Մեզի մասնաւոր հաճոյք կը պատճառէ այս հատորին ճշգրտագիտութիւնը: Տառապանքի, քանդումի, խռովութեան, անկութեան եւ անապահովութեան, երբեմն մինչեւ իսկ յուսալքութեան փորձութեան այդ տարիներուն շատ բան քանդուեցաւ Լիբանանի մէջ, շատ բան կանգ առաւ եւ շատ բան ալ նահանջ արձանագրեց: Հազա՛ր փառք Աստուծայ, որ պատահազմի էջը փակուեցաւ: Յանսի գոնե՛րը

թող ի սպաս փակուած մեան Լիբանանի համայն տարածքին վրայ...: Անքերը լսեցին: Թող միշտ լուսւած մեան...: Հիմա, երբ վերականգնութեան շունչով կը վերարացուի կեանքի եւ ստեղծագործութեան նոր ուղին, Փիղիքական վերակառուցումի եւ շինարարութեան պարտքն առաջ, ամենէն էական, կենսական անհրաժեշտութիւն է, առօրեայ հացին հետ վերանաշակիչ օկե՛նոզամի հացոք, որուն համը սկսեք էք ուժաթափիլ մեր քիմքերուն վրայ: Հոգեկան ու բարոյական, մշակութային եւ գեղարվեստական արժէքներն են, որ իմաստ եւ գեղեցկութիւն, մարդկայնութիւն եւ անմահութեան ճաշակ կ'ընծայեն մարդ էակին:

Լիբանանը օրեւէ ստեղծ աւելի այսօր կարիքն ունի այդ հոգեկան սնուցման: Մեծի Տանն Կիլիկիոյ զարաւոր Կաթողիկոսութիւնը, 1930էն առիկն Անթիլիասի մէջ վերահաստատուած եւ վերանաշակած, շունց նշխրակ անցնող տասնեւհինգ տագնապալից տարիներու ընթացքին բոլոր տեսակի մեծ ու փոքր զէնքերու եւ ուժերբոյ իւլացուցիչ եւ

քանդարար ձայներուն և պարկերուն  
զիմաց՝ Հելլոսն պահել Ուզիմն ձայնը,  
կրօնական-հիերոքական իր առաքելու-  
թեան առնթին անպարար զրմոդ իր  
ձամուրդի իր գարնիվանքով և իր մշա-  
կութային ալլազան սպասուարութիւն-  
ներով:

Այսօր երջանիկ է ան և շնորհա-  
պարտ առ Աստուած, որ ի վիճակի կը  
գառնայ այս հատորով հանրութեան  
հրամցեհու զվեղումի հացօէն պատառ  
մը, իր շտեմարան-գանձատունէն զորս  
բերուած և հայ ժողովուրդի հոգիով  
շագախուած և արուեստովը մատուց-  
ւած:

Լիբանանը շատ տառապեցաւ հացի  
պակասէն անցնող տասնհինգամեակի  
ընթացքին: Հիմա հացը վերապէս տառ-  
տացաւ մեր բոլորի սեզաններուն վրայ:  
Թող միշտ առատ մնայ: Բայց ևս կը  
տեսնեմ, որ ֆրիզիքական հացի առա-  
տութեան մէջ դեռ կայ սոյլը հոգեւոր  
հացին: Ընդունինք, որ այս մարդին մէջ  
դեռ ահաւոր ազբատութիւն կը տիրէ  
մեր շրջոս դին: Աշխարհայեցողութեան  
(sécularisme) ծայրայեղ աստիճանի սպ-  
եցութեան փորձութեան մէջ կը  
տուաշտինք և շատերը արդէն գերի-  
նեքն են դարձած այդ «անհրեւոյթ  
թշնամուտին»: Սպասողական ընկերու-  
թեան մը (société de consommation)  
չատուկ փետուրներ են հպած շատերը՝  
հաճոյապաշտութեան, անխորհրդապաշ-  
տութեան և պերճասիրութեան սլաք-  
ներէն վիրուտ: Մակերեսալուսաշտու-  
թեան, շալլակեցութեան վայոյ հան-  
զբնաւէտութեան ախտերը ապական-  
եալ մթնոլորտի միջոցովներուն հետ  
մոցութեան են ելած...

Այս բոլորին մէջ ևս այս բոլորին  
զիմաց՝ հոգեւոր հացի պէտք ունի այս  
ժողովուրդը, որպէսզի կարենայ վերա-

գտնել իր առողջութիւնը: Ես կը հուա-  
տամ, որ նիւթիկէն հացի առատութենէն  
և շալլ ու սանկարձակ, անիմաստ և  
անհակահշիտ գործածութենէն կ'առա-  
ջանայ մեր վատառողջութիւնը, որուն  
զարմանումին համար նիւթիկէն դե-  
զիրու օգտակարութեան խարկանքը մեզ  
լմորոհեցնէ: «Էնդետր պեղօի պէտք  
ունինք: Մեր ամէնէն մեծ և միսթիֆ  
սուրբերէն Ս. Գրիգոր Նարեկացին իր  
պիրքը կը կոչէ «Էնդետր դեղ» և  
«սպեղամի», հոգիին մէջ մեղքէն զար-  
նուած և ախտացեալ մարդուն համար:

Երբ այս հատորին մէջէն կը մտա-  
ծեմ անցեալ դարերուն ապրած և գիրք  
ձեռագրած ու մանրանկար ծաղկած ծա-  
նօթ ու անծանօթ ունեւորուն, այս ձե-  
ռագիրներն ու մանրանկարները արժե-  
ւորած, աչքի բիրի պէս պահած, խնա-  
մած և պաշտպանած ժողովուրդին մա-  
սին, հեղ մը ևս կը տարուիմ մտածելու,  
որ հակառակ բոլոր զարեհու հայա-  
ծանքներուն, շարքերուն, տառապանք-  
ներուն, այդ զվեղումի հացն» է, որ  
առաջ և աննուած պահած է մեր ժողո-  
վուրդը...

Այս հատորով այդ «հացօէն պա-  
տուիկ մըն է ահա, որ կը բաժնենք վե-  
րապրած հացութեան, անոր նոր սե-  
րունդին, Լիբանանի մեր բոլոր եղբայր-  
ներուն և քոյրերուն, անխորհր, և բո-  
լոր անոնց հետ, ո՛րք ալ ըլլան և ի՛նչ  
ազգի ալ պատկանին, որոնք այդ «հա-  
ցօին համէն համ առնել գիտեն:

Թող այս հատորը ըլլայ Մեծի  
Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան  
լէնթիլիոս վերահաստատման ԹՕամ-  
եակին նուէրը իր անպարտելի ժողո-  
վուրդին, անընկճելի Լիբանանին, և  
բոլոր անոնց, որոնք հայութեան մէջ կը  
տեսնեն այդ «հացօին սպասարկող ազգ  
մը:

22 Յուլիս, 1991  
Անթիլիաս

ԳԱՐԵԳՆԷ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ



### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

### ԿՈՐՈՒՍՏ ՄԸ

Օրկուշաքթի, 18 Նոյեմբեր 1991ի երեկոյեան, երկարատեւ կիսանդութեան վը ետք, Պոսթըմի կիսանպանոցներէն մէկուն մէջ մահացաւ իր ողջ կեանքը հայ մշակոյթին ու գիրին մոիրած ժիրայր Ղարիպեան, խոր սուգի մատնելով Պոսթըմի եւ, աւելի լայն առումով՝ Մասաչուսէց մահանգի հայոյթինը, որ սիրոյ եւ յարգամբի ազնիւ գագցումներով կապուած էր հայ գիրի եւ խօսքի այս խանդավառ մոիրեալին:

Տարօրինակ եղաւ կեանքի ժապաւէնը *«Բագիե»*ի առաջին տարիներու թիւերում մէջ իր զրակամ առաջին փորձերը ստորագրած Ղ.ժիրայրիին, որ իր ծննդավայրէն՝ Պաղտաւտէն մինչեւ Լոնտոն եւ Պարսկաստանէն մինչեւ Մ.Ն.տեսանցներ իմբգինմք մոիրեց մշակութային, լրագրական գործունէութեան, իր ժամանակը յատկացուց հանրամուէր աշխատամքներու, բայլ պահեց մեր մշակութային-հասարակական կեանքի կլամող կշոռոյթին հետ՝ մուսաները դարպասելու իր ներքին պահանջին գոհացում տալու փոխարէն: Գիտակցքած մոիրում մը, ու իր հագեկամ բարարարութիւնն ու երջանկութիւնը փնտոնեց հաւաքական մուսումներու եւ համահայկական պահանջներու իրականացման փաստին մէջ՝ հագիւ լուսանցքային ժամանակ տրամադրելով արձակագիր Ղ.ժիրայրիին: Եւ, ընկանամարար, արձակագիր Ղ.ժիրայրը միշտ մնաց անկատար խստում, եւ տարիներու թաւալումին գուգահեռ՝ աւելի եւ աւելի յստակացաւ դիմագիծը կուսակական, մշա-

կութային եւ ազգային գործիչ ժիրայր Ղարիպեանին:

ՅՕական թուականներում Լոնտոնի մէջ համալսարանական մասնագիտական ուսում ստացած ժիրայր Ղարիպեանի կեանքը այնուհետեւ եղաւ յարատեւ վագք ու հեմք: Յար եւ մնամ Գաշմակցութեան մարտով իրենց անձերը Հայաստանի եւ Հայ ժողովուրդի ազգային խոէալներու իրականացման մոիրած գրչի սպասարկումներում՝ ժիրայր Ղարիպեան երկար տարիներ եղաւ *«Այլք»*ի խըմբագիրներէն, ստորագրելով հրապարակագրական հայրեմաշումը յողւածներ եւ վարելով խմբագրապետութիւնը *«Այլք պատանեկան»* շաբաթաթերթին: Ապա, հագիւ Միացեալ Նահանգներ հաստատուած՝ ան հիմնեց Պոսթըմի Հայկական Անկախ Ռատիոկայանը, որում առաջին յայտագիրը սփոռեցաւ 11 Հոկտեմբեր 1980ին: Այս թուականէն սկսեալ, Մասաչուսէցի հայութիւնը Հայաստանին կապող այս բեմը եղաւ փնտոնուած կայան մը, իսկ անոր հիմնադիրն ու վարիչ տնօրէնը՝ մշակութային ու ազգային համրամըւեր ծառայ մը:

*«Հայրենիք»* օրաթերթի եւ *«Հորիզոն»* շաբաթաթերթի հաւատարիմ աշխատակիցներէն հանդիսացող ժիրայր Ղարիպեան, *«Հայրենիք»*ի «զբրական մշակութային էշ»ին մէջ լոյս տեսած եւ ստորեւ ընթերցողին հըրամցուող գրախօսականին պատճէնը դրկած էր մաւս *«Բագիե»*ին, հրատարակութեան խնդրամքով: Մեր անսիպներու թղթապամակէն դուրս հանելով, մամուլին կը յամձնեմք ժ. Ղարիպեանի վերոնշեալ գրութիւնը՝ յարցելու համար մեր հիմ աշխատակիցին եւ *«Բագիե»*ի մնայուն բարեկամին կամքն ու յիշատակը:

**ՆՈՐ ԳԻՐՔԵՐ**

**“Ինչպէս հայիոյեմ...”**  
**(Հեղինակ՝ Պօղոս Սնապեան)**

«Համազգային»ի «Վահէ Սէթեան» ազարանէն լոյս տեսած եւ 97 էջեր հաշուող «Ինչպէս հայիոյեմ...» հատորը հաւաքածոյ մըն է 15 գրուածքներու, որոնք լոյս տեսած են 1955-1986 երկարող տարիներուն, «Քազիմ»ի, «Ազդակ»ի եւ «Ազդակ Եւրօպայ»-ի «Գրոշակ»ի մէջ: Միայն «Հնդկահայերի Ժողովուրդ» գրուածքը անտիպ է: Հատորին խորագիրը՝ «Ինչպէս հայիոյեմ», իրականին մէջ ասոյնին պատմութեան խորագիրն է, որ կը վերաբերի Յակոբ Օշականի կեանքէն փրցուած յուշի մը: Երուսաղէմի Հայոց պատրիարքութիւնը Օշականի գրական եւ ուսուցչական քառասնամեայ վաստակին յորելանք տօնելու զազափարը կը զդանայ: Դանակցութիւնը խնդրազատ է զազափարով: Ընդհանրապէս ճակատը հաւար փրցնելու նոր առիթ մը կը գտնէ եւ կը սկսի գրօհի: Ի տես այս ազմուկին, խաչակրութեան ու շքրուելիք բաներու, մահու շափ տխուր Օշական կ'ըսէ իր սիրելի աշակերտներուն.

«Կ'ուզեմ, որ Դաշնակցութեամ հայիոյեմ: Ինչպէ՛ս հայիոյեմ Դաշնակցութեամ: Զէ՛» որ Վարուժանը այդ կոտակցութեամ անդամ էր: Զէ՛» որ Սիւսանթոն եւ Սեւակը անդամ էին: Երուսաղէմ, Զարգարեանի, Գեղամիմ կոտակցութեամ ինչպէ՛ս հայիոյեմ ես»:

Ապա վերջին ու եզրափակիչ նախադասութիւնը.

«Դաշնակցութիւնը մեր մահատակներուն քափօրմ է: Ինչպէ՛ս հայիոյեմ Դաշնակցութեամ...»:

Ահա թէ ուրիշ բխած է այս հատորին խորագիրը: Եւ պէտք է հաստատել, որ շնորհի գրագէտ Սնապեանի ոճին եւ ունեցած քառապաշարին, հատորին ամէն մէկ էջը նոյն թափով, նոյն ուժգնութեամբ, նոյն ոգեւորութեամբ եւ նոր ակնկալութիւններով

կ'ընթերցուի: Հայ լեզուն սիմֆոնիայի մը նման կ'ունկնդրուի: Արձակ բանաստեղծութիւն մը ըլլայ կարծեք: Սնապեանի բոլոր գործերն ալ կըտլոյթ ունին իրենց մէջ: Պատմութեանը ուժգին թափով կը սկսին, կ'ալեկոծին, կը փրփրին եւ նոյն հզօրութեամբ կ'աւարտին: «Ինչպէս հայիոյեմ...» գործը, զգալի է, կը հետապնդէ յստակ թեմա մը ու կը ձգտի այդ թեմային մեկնաբանութեան եւ առարկայական պանծացումին: Թեման՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է եւ անոր անանձնական զազափարաբանութիւնը: Եթէ իր «Ամմիս սատամայացումը» կարգաւոր, իր անձին ընդմէջէն եւ օրինակով կը զգանք այդ օրերուն տեղի ունեցող զազափարական լարումը պայքարը Դաշնակցութեան դէմ, որ ասանամեակներ շարունակուեցաւ ու պղտորեց հայկական Մփիւղքի ազգային միասնութիւնն ու անդորրութիւնը: Այս քիչ ետք Օշականի «Աստուած կ'իջնէ» գրուածքին ներկայացումը ի յայտ կու գայ. դերասույց պարուն Պերճը դերերը կը բաժնէ ու կը պատահի հրաշքը: Սնապեան աշակերտին կը տրուի հրեշտակի դեր մը. «Ռախիսութեմէս չկրցայ քննադատ: Իմ օգիմբս վամբի արժամատուր աշակերտը կը համարելի: Տղաքը կը նախանձելիմ իմօր»:

Իսկ տիրացու Արամայիսը, երբ կը լսէ Պօղոսին տրուած հրեշտակի դերը, կը մթազնի զէմքը ու ձայնը կը խոստանայ.

«Մա՛ է վերցնելու իրեշտակի դերը: Դա անմար բամ է: Մի՛թէ դաշնակցականը կարող է իրեշտակի լինել: Սրա՛ն մայիլ, սրա՛ն, իսկը սատամայի է մամուտ»:

Անանց բացատրութեան, հրեշտակի գերը կը փոխարինուի սատանայի գերով ու բոլորը կը սկսին Պօղոսը սատանայօ կանչելու ներկայացումը տեղի



կ'ունենայ, աշակերտը ինքզինք կը գի-  
րագանցէ սատանայի գերսով, եւ...

«Պահ մը իծծի թուեցաւ, թէ ա-  
մեծալաւ դերը իմս է: Որոշեցի լաւ  
աստամայ մը ըլլալ: Ելա՛յ»:

Պատանի Սնապեան այդ օրերուն  
քաշնակցական չէր կընար ըլլալ, բայց  
քաշնակցական կը զգար ու կ'ապրէր:  
Սատանայի փոխարհրական պատկերով,  
զրազէտը կ'ուրուագծէ հալածանքի ան-  
հեթեթ աչի նիզակները, որոնք կ'ուզ-  
ղբէին Դաշնակցութեան, այս կամ այն  
պատճառաբանութիւններով:

Նոյն է պարագան ու պատկերը իր  
«Եւ ապա դառնամ? Եւ դարձեալ  
փառաբանեմ? աւագակները» գրուած-  
քին, որ նախ՝ Դաշնակցութեան գոր-  
ծունէութեան գնահատականն է.

«Հազար վերբերէմ յառաջացած  
էիմ հազար կուտակումներ, որոնց  
ծայնը եղաւ Դաշնակցութիւնը,  
պատմական իրաւունքներու վերատի-  
րացման կողմ, մարդկային արժանա-  
պատուութեամ ազադակը, որ մոգա-  
կան յողանքի մը պէս հնչեց ու ա-  
նասպարացի մը պայթեցուց մոյմ  
վերբերով խոցուած, արդարութեամ  
մոյմ պապակներով տաղուած, մոյմ  
շնչատութեամ կարօտ բոլոր հոգիներ-  
ուն մէջ, որոնք իրարու եկան ու  
կազմեցին ցեղիմ միանոյլ կամբը»:

Ովկիանոսի հսկայական ալիքներուն  
նման զրազէտը կ'ուրուագծէ Դաշնակ-  
ցութեան մարտական թէ ստեղծագոր-  
ծական ճակատներու վրայ կատարած  
նուաճումները, Դաշնակցութեան ընծա-  
ները հայ ժողովուրդին.

«Այս ընդհանուր յեղաշրջումին,  
մարդացումին, հայացումին, աստ-  
ածացումին մէջ, գաղափարախօս-  
ներու, կազմակերպիչներու, հերոսնե-  
րու, բաժաստեղծներու կարգին,  
Դաշնակցութեամ պատմութեամ ա-  
մէնէմ սխրալի բաժինները կը համ-  
դիսաման մախկիմ աւագակներու է-  
ջերը, Արաբոյի էջը, Արաբոն կամ-  
խած աւագակ Գեալջօ Մամուկի էջը,  
Դաշնակցական խեղճի էջը, Աէլաօ  
Պոզոսի էջը, Մխոյի, Վարդաւի, Ար-  
թիմի, Թաղոս Ամիրովի, Փեթարայ

Ախոյի ու Փեթարայ Իսրոյի էջերը,  
որոնց սկիզբը, ըմբացքն ու լուսապը-  
սակայիմ աւարտները հաւամարար  
Ուխտեցաց շումիմ յեղափոխութեամց  
պատմութեամ մէջ»:

Եւ «Աւագակներու» նուիրուած փա-  
ռարանների այդ ոգեշունչ թափով,  
զրազէտը կը կատարէ Դաշնակցութեան  
գնահատականը, որ, խորքին մէջ, կը  
կրկին՝ արձակ բանաստեղծութիւն մըն  
է:

«Յեղափոխութեամ պսակը...»,  
Վանի հերոսամարտին և Սարդարա-  
պատի ճակատամարտներու հսկային՝  
Արամ Մանուկեանի գնահատականն է:

«Ահաքելչական օրհնութիւնը  
Դաշնակցութեան ծննդու և ծնծագոր-  
ծութիւններու արիւթիւնն է: Հայաս-  
տանի մալրաբազաքին մէջ կայացած  
Դաշնակցութեան Թրդ Ընդհանուր Ժո-  
ղովին, պաշտօնապէս մահուան կը դա-  
տապարտուէին՝ Թալիսթէն մինչև  
Սախա Հայիմ փաշա, Պեհաւտիս Եա-  
քիբէն մինչև Ազմի պէկ, բոլոր ծնծ ա-  
րիւնարքունները, թուրք արգանդէն վի-  
ժած 19 աւագ, 19 հրէշ: Աբահչիկի կեր-  
պով զրազէտը կը գրէ.

«Թուականը 19 էր ու Հայաստա-  
նը ազատագրուած էր, լոյս էր այդ  
պահում, որեւէ լուծ չկար մեր վրայ,  
այլ մեծ յոյս կար, որ կտորակուած  
հայութեամ տեղ մոր հազարներ պի-  
տի ծմիմ, անբակուած Բաղաբներում  
տեղ մորեր պիտի ողջունեն Լուսա-  
արչի կամթեղը, հրոյնուած արտերը  
վերստիմ պիտի արձակեն իրենց  
ծարձակ բարիքը ո՛ղջ հայոց երկրիմ  
վրայ, Հայաստանը պիտի ապրի:  
Հայութիւնը պիտի ապրի: ...: Օ՛,  
Սողոմոն Թեհլիրեան, Օ՛, գուգապա-  
տիւ ըմկերներ իրեմ, Երկամեան,  
Թորլաքեան, Եիրակեան»:

Եւ այս էջերուն շարքը մէկ շունչով  
կը կարգացուի, լիցքաւարում մը կը  
զգաս, թարմութիւն մը կը շնչես: Ասոր-  
հայի ու փոքր մարդոց դաւերն ու հա-  
լածանքները, շարութիւններն ու վա-  
ստութիւնները ստիգ տակ կ'առնես,  
կ'անտեսես, ու պահ մը դուրսը բարձր  
ու հպարտ կը միախառնուիս գոհարն-

բող հոգիներու, զազափարապաշտ ու հայրենասէր հայրդղիներու փազանդին, որոնց անանձնական զոհարարութիւնը նոր ճամբաներ կը ճեղքէր զայլքին համար: Այդպէս չէ՞ ելած հայոց նորագոյն պատմութիւնը: Հապա՞ պատմութեան կերտիչներուն երթը մինչև այսօր, նեաարեայ Հայաստանը, Հայաստանի մաքստոյ հայրդղիները:

Իր տեսակին մէջ նորութիւն մըն է «Եւ աշխուժմ եմ արեզակումք» գրութիւնը, դուրսդրական սրճարանին մէջ տեղի ունեցող բանավէճը: Գրականութեան ու զազափարականի մէկութիւնը թէ՛ անոնց հետադարձը իրարմէ:

«Գրականութիւնը այդ աստուածներէն ու աստուածային բաներէն պէտք է հեռու պահել»:

**Պատասխանը.**  
«Հոս կուսակցական կ'ըլլամ մարդիկ ազատ ընտրութեամբ, գործելակերպի, ապրումի, ետևադի իմքնեկ մղումով, ու այդ բնակացութիւնը ձեռնտու է գրականութեան»:

Ապա, կրօններու եւ կուսակցութիւններու միջեւ գծուած զուգահեռականները, որոնց լարուածութեամբ կը հետեւիս:

«Ընդհանուրիմ ծառան» խորագրով վերջին այս գրութիւնը, կտորներէն միակ անտիպը, թէ՛ պատմումի իր տեսակին մէջ եւ թէ՛ իմաստութեան մը յայտնարարումով, կը մնայ վաւերական էջ մը ակիւտաբան զազափարակական գրականութեան մէջ:

Կրկին փոխարեքական իմաստով մեկնարանուած, բայց այս անգամ ուզողակի բացայայտութիւն մըն է պատմութեան ճիւղերը: Հարցը կը վերաբերի դուքս Կարլ Ապուստիսին, անոր մարդկայնութեան եւ իշխանաւորի բարեգործութիւններու լիսնամեակին, եւ «Ճառուտոյի եւ «Վերթեր»ի տիպերահոյակ հեղինակ Եոհան Վոլֆգանգ Կէթլէ կ'ըզրակացնէ.

«Պէտք է տօնեմք մեծ դուքսին իշխանութեան յիսնամեակը: Անոր

այդ տիրապետութիւնը պարզապէս մշտական ծառայութիւն է եղած: Եթէ այդ այդպէս է, թող ես իշխանի մը ծառան ըլլամ: Ի՞նչի համար առնուազմ միտքարակամ է, որ ես ծառայ եմ այնպիսի իշխանի մը, որ իր հերթին ընդհանուրիմ ծառան է»:

Եւ վերջին նախադասութեամբ մը, ահաւասիկ, գրագէտ Պօղոս Սնակեան կը գրուէ իր գիւտը.

«Մեծ դուքսին տեղ՝ հոգիներում վայ անկէ երկու անգամ անելի տարիներ իշխած Դաշնակցութիւնը դնելով ու յիշելով Դաշնակցութեան անհամար ու անշափելի ու պամծալի ծառայութեանց գումարը, իրաբանչիւր դաշնակցական եւ Դաշնակցութեան համակիր իրաբանչիւր ոք ինձի պէս պիտի ըսէ անտարակոյս, ինչպէս ըսած էր իմ հայրս ու ըսած էին մերայիններում ու մերձատրոներում հայրերը երէկ, ինչպէս պիտի ըսէ վաղը եւ անելի հեռաւոր օրերու իրենց որդիներէն, բռններէն ու ծոռներէն իրաբանչիւրը, թէ՛»

«Ինձի համար առնուազմ միտքարակամ է, որ ես ծառան եմ Դաշնակցութեան, այնպիսի՛ կուսակցութեան մը, որ իր հերթին ընդհանուրիմ ծառան է...»:

Հ.Յ.Դաշնակցութեան հիմնադրութեան 100ամեակին ձօնուած լուսագոյն էջերէն մին կրնանք սեպել այս պատմութեանը:

«Ինչպէս հայիտեմ...» Հատորը մշտական ներկայութիւն մը կը մնայ հայերէն գիրքը փնտաղներու գրագրականներուն մէջ:

Գրագէտ Սնակեանի այս էջերը նոր սերունդին զազափարական դաստիարակութիւնը խորացնելու լուսագոյն ակունքներէն մէկը կարելի է սեպել, զէպի արմատները առաջնորդող եւ այդ զազափարական արմատներէն ինքզուրուելու հաւատքով հզօրանալու, նկարագիր կերտելու, իրաւ հայրենասէր դասնալու համար:

(Պոսթրին, Նոյեմբեր, 1980)

ԺԻՐԱՅԻ ՂԱՐԴԵԱՆ

# Ժիրայր Աթթարեանի «ՎԵՐՋԸ... ՅԱԶՈՐԴՈՎ» գիրքը

Ստեղծագործական հոլովոյթում երբեմն լինում են պահեր, երբ արուեստագէտը ձերբազատում է զգացական տուհալներից, սիրտած տեսութիւններից ու դասական օրէնքներից եւ վիրադառնում քնութեան, քնակալին ու բիրտ իրականութեան: Այդ պահերին գործը ձօնակնում է ճշմարտութեան, արասցուցելով կեանքը այնպէս՝ ինչպէս որ է: Այդ պահերին արուեստը ձօնակնում է բնութեան, իսկ եզակի դէպքերում՝ ստեղծում մի քան, որ նախապէս գոյութիւն չէր ունեցել: Խօսքը, քնականաբար, լաւի ու վատի, յաջոյի կամ անյաջողի մասին չէ, այլ՝ ստեղծագործական այն երեսօյթի, որ եզակի է, ինքնատիպ ու անկրկնելի:

Ժիրայր Աթթարեանի գրականութեան մէջ տակաւին ապրում է նախամարդու այդ քնազգը: Մեծ մանուկն է կանգնած աշխարհի առջեւ՝ ի տես քնութեան հրաշալիքների: Ամէն ինչ ու ամէն մի երեսօյթ տուտպելական համեմատութիւններ են ստանում, ստեղծւում են լոյսի ու խաւարի հակադրութիւններ, ուժեղ սէրեր ու ուժեղ ատելութիւններ: Դիցարանական այդ պահերին տիեզերական չափանիւններն են հասնում գրողի մարմնական ու հսկան ընկալումները: Աշխարհը դառնում է գրախոս կամ զոտիք: Միջին ճամբայ չկայ սեւի ու սպիտակի միջեւ, այլ գոյն չկայ: Կայ Աթթարեանի աշխարհը, որը մեր աշխարհը լինելով հանդերձ, ինքը կարծէք այդ աշխարհի քնակիչը չէ: Յախտեանական դժգոհն է նա, ինքն է մենակ աշ-

խարհի դէմ, յատկապէս նոր աշխարհի դէմ, նոր աշխարհի բարբերի ու հասկացողութիւնների դէմ: Այդուհանդերձ, իր դժգոհութիւնը քուրսն է իր ստեղծագործական կրքերի: Առանց այդ կրքերի նա չի կարող ապրել ու ստեղծագործել:

Եւ մի՞թէ իրաւ արուեստը բողբոջ չի ստեղծւում: Արուեստի բոլոր մեծ գործերը բողբոջի մի-մի կոթողներ են ընդդէմ անարդարութեան, բռնակալութեան ու հոգեկան ստրկութեան: Արուեստագէտի պարտականութիւնն է քանդել այդ շղթաները: Մտացեալը ձեւ է, կառույց ու մշակոյթ: Հիմնականը միշտ յիդաշըջումն է, ներքին ու արտաքին ապաստարումը: Եւ որովհետեւ չի դափտիական է Աթթարեանը, այսպէս էլ ոչ քանդում, զոնէ բացարձակապէս աւթաթող է անում վէպի ու պատմուածքի բոլոր օրէնքներն ու ընդունուած կանոնները՝ յոյն դասականներից սկսած մինչեւ Չարլզ Դիքենզ, Չեխով, Մօպսսան ու Ծլորեր: Նա գրում է այնպէս՝ ինչպէս չի գրել ոչ ոք: Ստեղծում է իր ուրույն օրէնքը: Եւ արդէն ի՞նչ են գրական ձեւերն ու կանոնները, եթէ ոչ մեծ գրողների ստեղծած ինքնուրույն կառույցները, որոնք դարձել են ուղեցոյց ու օրինակ, մինչեւ որ վրայ են հասնում Գաբրիէլ Գարսիա Մարքէզ, Վիլեամ Մարոյեան կամ Ռէյժընդ Քարվէր՝ ստեղծելով իրենց ուրույն օրէնքները:

Ժիրայր Աթթարեանի «Վերջը... յաջորդով» հատորը բազկացած է II պատմուածքներից, որոնց մեծ մասի

*Թատերաբեմը Ամերիկան է եւ սրունց ենթախումբ շարունակ ներկայ են Հին Աշխարհը, Լիբանանն ու Արեւմտեան Հայաստանի խորհրդատու շունչը: Հատորը խորհուրդդ է, մերթ սահուն, մերթ քարքարոտ, հրեմն անփոյթ՝ չմշակուած դաշտի պէս, հրեմն ալ հրաքանչ՝ բլուրից այն կողմ բացուող արշալոյսային համայնապատկերի պէս: Բռնազբօսիկ ճիւղ չկայ, գրական որեւէ դպրոցի կնիք ու դրօշմ չկայ, ամէն ինչ բնական ու նախնական: Սակայն շատ չպիտի տարուի Աթթարեանի քնական գրելաձեւից, որովհետեւ արտաքնապէս տարբարային նկատուող պատկերներն ու պարբերութիւններն հոտին յաճախ կանգնած է հմուտ արուեստագէտը, որը կախարչական գաւազանի մի քանի հարուածով աշխարհներ է ստեղծում, աշխարհներ տապալում:*

*Ահա մի հատուած «Գրեցէ՛ք բացակայ» պատմուածքից, որ հեղինակը տալիս է կայարանի պատկերը, եւ ուր նիւթեղէն կտուցից արտակը՝ առկայ են մարդկային անգոհանքները.*

*«Եւ արդէն Բանի մը այսպէս քամեր կամ մեկնողիմ համար: Քամի մը այսպէս դռնարտփումներ: Դրժարութեամ մեծագոյնը, մեկնողիմ համար, երբ ո՛չ գիշեր է եւ ոչ ալ ցերեկ, երբ ո՛չ մութ է, ոչ ալ յոյս, երբ ամկայուն կեցած եւ ձգած բաներուդ եւ գիտելիքիդ պիտոք, ամյստակ սահմաններում մէջ: Երբ տակալիմ չես մեկնած, երբ տակալիմ տեղ մը չես հասած: Երբ ինքզինքդ ամորոշիմ մէջ մետուած, կորսւած կը զգաս:*

*«Շուրջս ամբողջ այս տեսակ մի խուլ, ամյստակ ազմուկը, այդ տեսակ մը բզզիմը, որ կայարան մը կը յատկանշէ: Կառայումներ, որոմք կը հասնին, իրարանցում, աղմուկ յարուցանելով, ուրիշներ, որոմք մեկնելու կը պատրաստուին մոյճման եւ անլի ժխորով ու իրարանցումով: Եւ ամբոխ մը, ամբոխներ, մայրկայիմ յարափոփոխ յորձանքներ, ամէն, ամէն ուղղութեամբ: Մարկայիմ ալիք մը, որ կը խուժէ սա մէկ միջամբէն,*

*ուրիշ մը, որ կը հալի միս քարավիմ վրայ: Ջոյգ մը ահա, որ կը բաժնուի, երածեշտ կ'առնէ իրարմէ, մէկ ու միակ մարմնի մը պէս իրարու սեղմուած: Երբուկ մը անընդհատ թաշկիմակը կը շարժէ: Կայարանն է, կայարանն է անտարակոյս ապիկա: Հոն ուր կը ծծիմ, ըսկիզբ կ'առնեն պատմութիւններում ամէնէն գեղեցիկներն ու գրաւիչները: Հոն ուր մասն կը վայնագործիմ տրտմութիւն բոլոր գեղեցիկ պատմութիւններում ամէնէն յուզիչներն ու տրտումները: Իրեմք իրեմց մէջ մէկական եռանկար, կեանայորդ աշխարհներն են եւ երոպակամ մեծ օստամներու երկաթուղայիմ այս մեծ կայարանները, ամէն վայրկեամ հետու, հետուոր աշխարհներ մեկնող, աշխարհներէն ետ դարձող իրեմց կառայումներով:*

*Յաջող պատկերներ ունենալով հանդերձ, այս պատմուածքը կաղում է հոգեբանական զարգացման տեսակետից: Տիպարները չեն ամբողջացել, ուրոշ անհատականութիւն չեն ստացել: Ինչոր քաղցրիկ կեղծարտութիւն է տիրում նրանց յարաբերութիւններում:*

*Փոխարէնը՝ գլուխ-գործոց է «Ռապալտո» պատմուածքը, որ կենդանի կերպով արուած է Պէլլուիթ հեռագրատան կեանքը 1960ական թուականների սկիզբներին, մասնաւորապէս պաշտօնանների առօրեայ աշխատանքային հեքը, նրանց յարաբերութիւնները, նրանց սէրն ու յուսախաբութիւնները, բուրն էլ թակարդուած ընկերութեան քաղցրիկ նահեմում: Պատմուածքը զարգանում է բնական, զուսպ, գերծ հետարական յայտարարութիւններից ու ծայրայեղական բնորոշումներից: Արդէ զասական մի սքանչելիք է այս գործը, որ կախարդում է ընթերցողին: Մի հատուած.*

*«Առաւօտը ծայր կու տար արդէն, երբ գործը ձգեց: Առաւօտ մը, սովորական, հասարակ, միս բոլորիմ պէս, առանց բանաստեղծութեան, առանց ոչիմի, զիմք մախորդող բոլորիմ մմամ: Ժիշդ այն առաւօտներէն, ուր քամերով յոգնութեան եւ մոյճման*

մը ամբողջաբան բեռն անկ, կայ-  
 օճէ՛ք այլևս անբանացած, Բանդուած,  
 թուշուճներու անուտեան հմայիչ  
 երգը մոյճիսկ լսելու ակամը մնացած  
 չէր ըլլար իրեմ: Ամմիջապէս որ  
 տում հասաւ, Սամի իր բունը պատ-  
 րաստելու ամապարամբիմ ինկաւ: Ա-  
 մէմ միջոց ի գործ դրաւ, հմարթներ  
 գտաւ, կառուցելու համար խաւար  
 գիշեր մը»:

*Աթթարեանի գրիթէ բոլոր պատմը-  
 ւածքներում ակնբարի է հոմանիշ բառե-  
 րի եւ նոյնանիշ ածականների գործա-  
 ծուծիւնը: ԼՅԲԳ դարի այդ պերճանքը  
 խոցելի պիտի նկատուէր ունէ այլ գրո-  
 ղի մօտ, սակայն իր արուեստի պարու-  
 նակութեան մէջ այդ երեւոյթը դառնում  
 է բնական, նորնիսկ անհրաժեշտ՝ ամ-  
 բողջացնելով իր սերը, որը յայտուան է,  
 համապարփակ ու պայթուցիկ: Կրքի  
 աշնայիս հեզոզ կայ իր մօտ, որ կար-  
 ծէք բառերը չեն բաւարարում արտա-  
 յայտելու իր ներաշխարհը: Հետեւաբար  
 մէկ ալիքը չաշորդում է միւսին, մէկ  
 յորձանքը կլանում է միւսին:*

Մի քանի օրինակ. «Տեղ մը համ-  
 գիստ չկայրեմալ մնալու, տեսարար  
 տեղ փոխել պարտադրող այդ տե-  
 սակ մը ախտը, ամկասկած: հոռովի,  
 ամհամադարտութեան, օրօրոցէս իսկ  
 գիս այդ տեսակ վիճակներու մէջ  
 մետած եւ տեսարար հալածող այդ  
 մոյճ անէծքը, շատ վստահաբար, որ  
 ո՛չ միայն տունէ, երդի՛քէ, երկրէ,  
 Բաղա՛քէ միշտ դուրս մետուելու,  
 միշտ դուրս փայտելու տագնապնե-  
 րում մէջ մետած է գիս, այլեւ ըրած  
 է այժմպէս, որ թշնամամբ, կատաղի,  
 վայրագ ոտխոսեր դառնամբ ես ու  
 համգիստ, համդարտութիւն, կայու-  
 մութիւն ըսում բամերը»:

*Մի այլ օրինակ.*

«Օրհասական վերջիմ կոխ մը  
 կարծես կը մղուի շուրջի, գէճքեր կը  
 շաշեմ, թնդամօթներ կը գոռամ,  
 ոտմը ու գոդակ ամվերք, անընդհատ  
 ակամջիդ տակ կարծես կը պայ-  
 քիմ... կարծես այդէմ Բանդուեցաւ,  
 կործանեցաւ ամէն բան, վաղը այ-  
 յես արեւ չի ծագիր...»:

*Մի այլ օրինակ՝ բառ-պատկեր յոր-  
 ձանուտ գետի.*

«Այդ լացը, Աստուած իմ, այդ  
 լացը...: Երկիմբներում, գետիմներում  
 ամբողջ վիշտը, թախիծը, տխրեցրե-  
 ցներում դեռ սփոփամբ չումեցող, դեռ  
 ծանրագոյն ամբողջ ցաւը, կակիծը  
 այդպէս ամտէր, անպաշտպան, ցեմ-  
 ցուտեպատ գոյութեան մը զլխում  
 ծանրացած...: Երկիմբները, գետիմ-  
 ները չէին դիմամար, ո՛ր մնաց տա-  
 կալիմ Պշարամ ու ես...»:

*Աթթարեանի այս հատորի չաշող  
 գործերից է նաեւ «Օփում փիլզ» պատ-  
 մըւածքը: Այտեղ այլևս Նիւ Եորքն է.  
 Նիւ Եորքն է՝ իր բազում երեսներով ու  
 ահաւելի հակասութիւններով: Աթթար-  
 եանի հերոսները ընկել են այս վիթխա-  
 րի պատաղո՛ւքի մէջ, շլմել, ընդարմա-  
 ցել: Արեւելքի գաղջ վերջալսանները վա-  
 յելած այդ մարդիկ չեն կարողանում  
 ընկալել Նիւ Եորքը, իսկ քաղաքը առ-  
 նում է նրանց իր ափերի մէջ, դէս ու  
 դէն չպրտում, անողոր Նիւ Եորքը, որը  
 չի հանդուրժում երազ ու տկարութիւն:  
 Հրաշալի էջեր ունի Աթթարեանը Նիւ  
 Եորքի մասին: Նա իր ուշագրութիւնը  
 սուսնում է առօրեայ մասնաւոր երե-  
 ւոյթների վրայ, այդպիսով մասնաւորից  
 հասնելով ընդհանուրին: Օտարութեան  
 զգացումը շեղքի պէս կախում է Նիւ  
 Եորքում եւ Աթթարեանի տիպարները՝  
 Հրաշքն ու Քէթին եւ մնացեալ անուն-  
 ները շարունակ գեզգերում են այս կա-  
 մաւոր աքսորում: Ընթերցողը ակամա-  
 յից սկսում է կիսել Հրաշքի անշատակ  
 մենութիւնը՝ զգալով քաղաքի դաժան  
 թաթի ծանրութիւնը: Այդպէս է Նիւ  
 Եորքը: Եթէ ընկրկես, կը խորտակի  
 քեզ: Իսկ Հրաշքը, գրիթէ երկու տասն-  
 հակ տարիներ Նիւ Եորքում ապրելով  
 հանգերէ՝ տակաւին իրեն օտարական է  
 զգում Ամերիկայում:*

*Հատուած մը.*

«Բայց ի՞նչ օգուտ բամալի, կըր-  
 պամբ, ի՞նչ օգուտ պատ ու պատմէչ  
 ու մոյճիսկ պարիսպ այդ միւս տե-  
 սակ ամապահով զգալում դիմաց...  
 Այս իրիկում Հրայր դարձեալ իմբ  
 իր ամէն պաշտպանելու, իմբգիմբիմ

դէմ կղպուելու պէտք կը զգայ: Այսօր դարձեալ իր արտուճ, իր սեղանէն, մահճակայէն, իր սեռեակի՞ն շորս պատերէն եւ ի՞նքն իրմէ, ինքն իր ամձէն դուրս փայտելու այդ տեսակ մը խոնճապ տուող պահանջքը եկած կառչած է մորթին, թափանցած միմչեւ էութեամբ գաղտնի խորերը...»:

«Վերջը յաշորդով՝ պատմուածքը հա դառնում է Նիւ Եորք-Պէյքոթ առանցքի շուրջ: Այստեղ ձեռն ճերմակ շրային է՝ Լիբանանի կարօտը սրտում: Պէյքոթ է զնում իր տունը գտնելու, սակայն այդ քաղաքում հա իրեն աքտորական է զգում: Փաստօրէն, շրայքը աքտորական է ամէն տեղ: Այս պատմուածքում աւելի շեշտակի է Ժիւրալը Աթթարեանի արուեստագէտի շաղախը: Իր հոգու խորքից են բխում անդունդները, ուստի եւ՝ միանգամայն անկեղծ են Նիւ Եորքի նկատմամբ ունեցած իր զգոհութիւնները, թէկուզ հա դրանք մտնեն քարացած նախապաշարումներէ: «Նիւ Եորք կոչուած Բաղափիմ թեթեւալիկ կիճերում պէս», մի տեղ նշում է հեղինակը: Մի՞թէ Նիւ Եորքի բողոք կանաչք էլ թիթիւտիկ հա: Աքտորական շրայի դառնութիւնն այնքան խորն է, որ իր մաղձը շարունակ թափում է Նիւ Եորքի գլխին: Սակայն պէտք է անմիջապէս շեշտել, որ շինծու հա ոչ մի տող, մասնում կամ զարգացում չկայ այս գրքում: Կարելի է ստել, որ դաժան է նաեւ Աթթարեանի անկեղծութիւնը:

Յատկանշական է, որ գրական յատկանիւթներէրից ու գիտերից միանգամայն զերծ լինելով, այս գիրքը միաժամանակ ցայտուն կերպով գրսեւորում է Աթթարեանի արուեստագէտի նկարագիրը:

Ահա թէ ինչպէս է ծագում արշալույսը Պէյքոթում.

«Ելաւ պատշգամ: Ճիշդ այժմ ժամն էր, Պէյքոթ Բաղափի ճիշդ այժմ եզակի պահը, ուր լոյսն ու մութը ողջագութումի մէջ են, հրաժեշտ կու տան իրարու, հրաժեշտ կ'անեն իրարմէ եւ երբ երկիմբ ու գետիմ

համատարած բոթեան մը մէջ շունչերնին բռնած մեծ դէպքի մը կարծէք կը սպասեն: Գիտէր, հիմա լոյսը շուտով ի՞նքզինքն բաշխել պիտի սկսէր: Գիտէր, որ տարուան այս եղանակին, Սաճճիճի ճախ ուսին վրայէն արեւը յաճկարծ պիտի դուրս ցատկէր: Եւ արդէն ահա, իրեն այնքան հաճելի, այնքան ծանօթ տեսարանը կը պարզուէր իր դիմաց: Միջերկրակամը, կապոյտ, անսահման եւ իր փէշերում, հաւատարիմ պահակներու պէս շրջանակ կազմած՝ Լիբանանի լեռները, զունագեղ տարազներ հագուած: Նոյժ տեսարանը, այնպէս՝ ինչպէս դիտած էր ամէն առաւօտ, տարիներ շարունակ եւ որ հիմա...»:

«Եւ մայ սիւսքը... մի ետր պրատըր, մի արմիմիլըն... արմիմիլըն՝ խորագրով պատմուածքը լըրագրական բնոյթ ունի՝ նկարագրելով Մեծ Եղեռնի եօթնասունամեակի առթիւ Ուաշինգտոնում տեղի ունեցած համազգային համախմբումի հանդիսութիւնները: Պատմուածքում մուտք է գործում մի սեւամորթ փորձելով հասկանալ սգահանգէսի խորհուրդը: Աւելի լաշոյ կը լինէր գործը, եթէ հեղինակը խորանար սեւամորթի հոգեբանութեան մէջ՝ զարգացնելով նրա կերպարը:

«Մումեայի պատմութիւն» գործը փաստօրէն երեք պատմուածք է՝ առաջինը պատմողի փորձառութիւնը հիւանդանոցում եւ մահուան ներկայութիւնը ամէն մի անկիւնում: Երկրորդը՝ հայ մի բժշկի ապարդիւն շանքերը փրկելու երիտասարդ մի կնոջ կեանքը, եւ երրորդը՝ լինացի Օէնկի թիւր հասկացողութեան հետեւանքով ստեղծուած զանազանական վիճակը: Պատմութիւններից հա ոչ մէկը լրումի չի հասնում, սակայն երբքը միասին ստեղծում են զանազան-բերդական լարուած մի մթնոլորտ, ուր իւրաքանչիւր պահը մի բարակ կամուրջ է մահուան ու կեանքի միջեւ:

«Այստեղուամը սուտակամ է... սուտակամ» վերնագրով պատմուածքում թոււմ է, թէ Աթթարեանը իր տարերքի մէջ է՝ վեհանքն, առատածեան ու

աքանչիւրէն մանակ: Պատմութեանը գրուած է հանրապետի, թեմեւաբնակարանի և շերտութեան: Սակայն արտաքին կոնտակտները թաւիշի տակ բազմաթիւ փոշի կան, կարօտի, օտարութեան և արմատախիլ եղած լինելու ցանկ, որոնք ընթացողը ընկալում է ժպտի ու արցունքի միջոց:

Ամերիկան արհեստական այն աշխարհն է, ուր նոյնիսկ կազանդ պապաները իսկական չեն, այլ վարձուած դերակատարներ, ուստի և երկու ընկերուհիներին՝ Սիլվիայի ու հեյլենակի դուտեր հիասթափութեան պատճառը: Երկու աղջնակները կրած հոգեկան բեկումների միջոցով Աթթարեանը պատկերել է վերջին տասնամեակներին Մերձատր Արեւելքից Ամերիկա գաղթած հայերի հոգեբանական սազանդանքը: Ահա թէ ինչ է գրում հեյլենակի դուտերը՝ ի տես նիւ Եորթի Ռաքֆիլըր Սենթրըրի կենտրոնում բարձրացուած տեսածատի և նրա շուրջը վիստոզ կազանդ պապաների:

«Աղջիկս մոռցած էր ծառը, անոր շուրջ տիրող իրարացումը եւ իր ամբողջ էութեամբ տարուած կը թուէր փողոցի միւս անկիւնի մոտ գտնուող ծառի: Աղջկանս ամբողջ ուշքը այդ փողոցի անկիւնի խառնուրդն անցնէր գամգակ զարնոյ կաղանդ պապաներում էր: Անոնցմէ մէկը, գիրուկ, կարծուկ մէկ հասարակ, սեսնեմ մէկ ալ դրա գամգակը մէկիսի ու գմաց նստալ վանառատան դրան անկիւնը, աթոռակի պէս բանի մը վրայ: Եւ յետոյ... յետոյ... Վորումը հանեց, գլխարկը հանեց, թշուառ, նազատ գլուխ մը մէջտեղ բերելով եւ սկստ սանտուիչ մը ոտել: Իսկ աղջիկս, որ յափշտակութեամբ նամակ ալ պարտադր կը դիտէր, անարեկուած ձայնով մը:

«— Պապա, պապա տես, — ըստա, — սուտականները... սուտականները...»:

Յաջորդ երկու պատմութեանը՝ «Նամակ կաղանդ պապուկին» եւ «Նամակ ստիպողաբար առ կաղանդ պապան», նոյն մանկական կախարակա-

կան աշխարհի թովանքն են ներքուստ: Մէկ տարբերութեամբ սակայն: Այդ թովիչ աշխարհի ենթահողը նորից հայութիւնն է, Հայաստան, արտաքին ու հայի անվերջ տարագրութիւնը երկրից երկիր, անտուն, անօթեան: Երկուտրեակ փոքր հորալոններ՝ Արամն ու Հրայրը լոկ խաղալիկ չեն ուզում կազանդ պապայից, այլ նաեւ, ու աւելի հրատապօրէն՝ սէր, զգուանք ու Աստուծոյ ձեռք հայ բոլոր մանուկները վրայ: «Ուրիշ բան մըն ալ ունիմ ըսելիք կաղանդ պապա, բայց ասիկա գաղտնի է, շատ, շատ գաղտնի է, խօսք պիտի տաս, մարդու չես ըսեր: Մեզի բերելիք մուկներուդ տեղ Հայաստանի մեր եղբայրներու խոշոր, խոշոր գէնքեր... տար: Գիտես, այն մոր տեսակ մը գէնքերն, որոնք թշուամից կ'այրեն, կը վերջացնեն, թշուամի փոշի նոյնիսկ չեն ձգեր: Եթէ անոնցմէ չկրցար գտնել, Սասունցի Դաւիթիմ երկայնա ու սուր դամակներն հաստ մը գտիր ու Հայաստան տար, այն դամակներն ալ անագին կրակ կը հանեն, գէշ մարդերում գոլթները կը փրցնեն կը նետեն»:

Յանկալի կը լինէր, եթէ Աթթարեանը կազանդ պապաների այս շարքը լրացնէր և առանձին հատորով լոյս ընծայէր՝ հոգեկան հանրապետութեան տարիքով ու նաեւ հոգեպէս բազմաթիւ մանուկներին: Դրանցից իւրաքանչիւրը հայեցի գիտակցութեան մի-մի պատգամ է՝ առանց քարոզչութեան, հասանելի ու անմիջական:

«Ուրախ պիտի ըլլաս պապ... ուրախ» խորագրով պատմութեանը քնարերգութիւնն է հօր և դուտեր կենտրոնի մանկութիւնից մինչեւ հասունութիւն, երբ ծնողի համար գաւազը մշտնջենական մանուկն է հին ու պայծառ օրերի: Վարպետ է Աթթարեանը զգացմունքային պոսթիւմներ կերտելու մէջ, յատկապէս երբ գալիս է բաժանման պահը, երբ մոկտում է սիրուց ցաւը: Այս պատմութեանը կան բազմաթիւ պահեր, երբ մարդը մենակ է աշխարհում, երբ ինչնիսկ շրջապատում է հարազատներով, ընկերնե-

բով ու բարեկամներով եւ որովհետեւ Աթթարեանը կեղծել չգիտէ ո՛չ կեանքում, ոչ էլ գրականութեան մէջ, ուստի եւ՝ նրա խօսքը անմիջապէս քանկում է գիմաջինի ներաշխարհը՝ նրա առջեւ բացելով հարազատ ապրումների ու լոյզերի մի ամբողջ յորդանաստ գետ:

Հոգեբանական զուգահեռներով է կերտուած այս պատմուածքը: Մի մակարդակի վրայ առօրեայ, աննպատակ կեանքն է, հարսանիքի վարպետայն պատրաստութիւնը: Միւս մակարդակի վրայ մարդու կեանքն է, որ ձեռքից գնում է եւ ոչ ոք չգիտէ: Երջանկութիւնն ու սղբերգութիւնն այս զուգորդութիւնն է, որ ցնցիչ է:

Հատորի վերջին պատմուածքն է «Վըժիմիա մայ լավ» գործը, որը նայնպէս, փաստօրէն, երկու գրուածքներ են, երկու զխառար տիպարներ՝ ամերիկուհի էլլինն ու թափառաշրջիկ Վերբինիան, երկու հակապատկերներ, կենցաղային երկու բեւեռներ, որոնք սակայն մաս են կազմում ամերիկեան հասարակական կեանքի, ուստի եւ՝ ամբողջացնում իրար: Ծատ գիպուկ է էլլինի կերպարը, իսկ աւելի հարուստ՝ թափառաշրջիկ կնոջ, երբեմնի գեղանի Վերբինիայի աներակ կեանքը: Ասալինը մարմնաւորում է ամերիկեան եսակենտրոն կենցաղն ու հոգեբանութիւնը, երկրորդը՝ հասարակարգի ալլասերման հետեւանքով ստեղծուած մարայկանների ու թափառաշրջիկների դասակարգը: Ամերիկայի մանրանկարն է այս, որի արանքում մի կերպ գոյատեւում են հայերը՝ շանալով պահպանել իրենց ազգային նկարագիրն ու մշակութային ժառանգութիւնը: Արդէն ամբողջ գիրքը այս բախումների արնազանգն է:

Ներքին ժայթքումներով է գրուած Ժիրարը Աթթարեանը: Այդ իսկ պատ-

ճառով լուսայի պէս թափուած են իր խօսքերը, մերթ թէժ ու կրակ, մերթ կոպիտ ու բիրտ, սակայն միշտ անկեղծ ու իրաւ: Գրական ժանրերի մարդը չէ Աթթարեանը: Նա ստեղծել է իր ուրոյն գրական սեռը, ուր զազափարը աւելի կարեւոր է՝ քան ձեւը, եւ ուր ճշմարտութիւնը աւելի հրամայական է՝ քան գեղարուեստական մարզանքը: Ահա թէ ինչու նրա արձակը թէ՛ բանաստեղծութիւն է, թէ՛ հրապարակագրութիւն, թէ՛ վիպասանութիւն եւ թէ՛ լրագրութիւն: Կարեւորը խօսքն է, մտքի ու զարգացումի փոխանցումը, որքան կարելի է ուղղակի, ուժեղ ու բարձրադու:

Ահա մի պատկեր Նիւ Եորքից.

«Այսպէս կ'իջնէիմ ստորերկրեայ կառաշարժիմ անվերջամալի սամդոյսմերէմ վար: Առաջիմ օրէն Հըրայրիմ այնպէս կը թուր, որ մեքեմակամ այս սամդոյսմերէր երկրագունդը կը փորեմ, կ'իջնեմ միմջե խաւարմերում անվերադարձ, վերջիմ խորերը, ուրկէ այլեւս սատամամ միայն գիտէ իմչպէս գոյու ելլի:

«Բարեւոմ մը ամբողջ բազմութիւմ եկած ու խոնուած է կայարամի Ոկուդիմ խոնաւ, մզոտած կամարմերում տակ: Երկրագունդի չորս ցամաքմերում դեռ չլուած, շայտմուած վայրերէմ, ու Բարտեւիմ հագի ծամօք չեւ գիտեր իմչ միքօրեակամմերում խոնաւտեսակ ու խոնաւգոյմ ցեղերը, իրենց սեւով դեղիմով, թուխով ու թխագոյմով եկած ու կուտակուած եմ Յահիմի մը պէս, ՄԱԿԵԻժմի այս Ոկուդիմ մէջ»:

Ասացի չէ՛, որ Աթթարեանը համակ հրաբուխ է:

ԹԱԿՈՐ ԿԱՐԱԳՇԵՑ



**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ**

**ՎԱՆ ԿՈԿԻ  
ԱՆՁՆԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**



Վերջերս, Հոլանդացի Ուիլբրիսթ շրջանի քաղաքապետութեան արխիւններուն մէջ գտնուած են արձանագրութիւններ, որոնց հիման վրայ արուեստի պատմագէտ մը՝ Ատրոն Եխն եղբայրացուցած է, որ Վինսենթ Վան Կոկի եզրոր ուղեգրային սիֆիլիսի հիւանդութեամբ մահամերձ ըլլալուն լուրը կրնայ ըլլալ պատճառը աշխարհահռչակ գեղանկարիչին անձնասպանութեան:

Վան Կոկի կրտսեր եղբայրը՝ Թիօ, մտային հիւանդութեանց դարմանտան մը մէջ մահացած է նկարչիյն տնձնասպանութենէն վեց ամիս առաջ: Արուեստի պատմագէտին համաձայն՝ Վինսենթ Վան Կոկ շատ սերտ կապեր ունեցած է իր եղբոր հետ, որուն կ'ապաւինէր զգացական թէ նիթական տեսակէտէ: Թիօ Վինսենթի գիղանկարները ծախիլու մեծ աշխատանք կը տանէր:

Վինսենթ Վան Կոկի անձնասպանութեան պատճառը ցարդ խորհրդաւոր մնացած է: Կարգ մը մասնագետներ կը կարծեն, թէ ան արդէն խիլոպար մըն էր...

Հակառակ արուեստինպատմաբանին այս նոր մեկնութեան, Վան Կոկը խե-

լագար մը նկատող մասնագէտները կը շարունակեն կառչած մնալ իրենց տեսակէտին եւ հանճարեղ գեղանկարիչին գործերու վերլուծման համար իբրեւ մեկնակէտ կ'ընտրեն խելագարութեան վարկածը:

**ՀԱՅԿԱՎԱՆ ԽԱԶՔԱՐ ՄԸ՝  
ՎԻՆՆԱՅԻ ՄԷՋ**

Վիննայի Ս.Անտոնիոս տաճարի հրապարակին վրայ զետեղուած է հայրենի քանդակագործ Վաչէ Պետրոսեանի մտայնացման արդիւնքը հանդիսացող տպաւորիչ խաչքար մը՝ իբրեւ երախտագիտութիւն երկրաշարժէն տուժած Հայաստանի օգնութիւն ցուցարձրած աստրիացի ժողովուրդին: Մխիթարեան միաբանութեան հայրերու կողմէ կատարուած օրհնութեան եւ օծման արարողութեան ներկայ գտնուած են կրօնական, դիւանագիտական եւ միութնական ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

«Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթին մէջ հրատարակուած թղթ-թակցութենէն կ'իմանանք, որ այս խաչքարի իրականացման մէջ մեծ դեր խաղացած է վիննայի մտաւորական շերտը Մատէր, որուն մասին խօսելով քանդակագործ Վաչէ Պետրոսեան կու տայ հետեւեալ տեղեկութիւնները. «Նա հայոց պատմութեամ ու գրականութեամ պիտակ է: Վերջերս աւարտել եւ հրատարակութեամ է պատրաստել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի գերմաներէմ ամբողջական քարգմանութիւնը»:

Ինչ կը վերաբերի 3.12 մեթր բարձրություն ունեցող խաչքարին, անոր վրայ քանդակուած է հայ մանուկ մը՝ մէկ ձեռքին հայկական եկեղեցւոյ մը պատկերը, իսկ միւսին՝ կեանքին խորհրդանիշ ձիթենիի ճիւղը:

«ԳՈՒՐԱՆ»Ը  
ՊՍՏԿԵՐՍԱՋԱՐԴԵԼՈՒ  
ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆԸ

Քաջմիջին երիտասարդ արուեստագէտ մը՝ Պապա Ուշման, Պոճղէի իր բնակարանին պատշգամին վրայ ձեռնարկած է հսկայական աշխատանքի մը: Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ան պիտի գեղանկարէ «ԳուրաՕ»ի 114 պուրաններն 6666 սուրբը:

Պապա Ուշման նպատակադրած է գծել 350 պատուտ, սրսկցմէ 300ը ամբողջացուցած է: 32 տարեկան պծանկարիչը մտադրած է իր ծրագրիւր ամբողջացնել 5-6 տարուան ընթացքին:

Իսլամական Սուրբ Գիրքին գեղանկարներուն պիտի միանան արարերէն, Փրանսերէն, պարսկերէն, հինախ, պենկալի, կուժարագի, մարագի եւ ուրտու լեզուներով «ԳուրաՕ»էն քաղուած պարբերութիւններ եւ անզերէնով յատուկ քաջարութիւններ:

Ուշման ծրարած է իր պծած նրկարները սպել, «որպէսզի ամէն մարդ օրինակ մը ունենայ», ինչպէս կ'ըսէ ինք:

Իսլամութիւնը չի քաջալերեր պատկերներու օգտագործումը կրօնքի մէջ: Նախապէս, «ԳուրաՕ»ը շորժուն պծանկարի ժապաւնի վերածելու աշխատանք մը թեր ու պէժ կարծիքներ ստեղծած էր իսլամական աշխուհին մէջ:

ԱՆԳՎԻՈՅ ԱՐՔԱՅԱԿԱՆ  
ՀԱՒԱՔԱԾՈՆ

Էլիպապէթ թագուհին յատուկ թուլատուութեամբ՝ անդիտական պատկերասփիւռի «Ձենըլ Է» անկախ կառուելու սկսած է պատրաստել վեց յատագիրներէ բաղկացած պատկերասփիւռի շարք մը՝ հանրութեան ցուցադրելու համար բրիտանական թագաւորութեան արեւտի գործերու հարուստ հաւաքածոն:

Բրիտանական եւ ճափոնական նախաձեռնութեամբ պատրաստուած այս շարքը հանրութեան սեփականութիւնը պիտի դարձնէ քաղմահարիւր անձանօթ պատուաներ: Պիտի ցուցադրուին թագաւորական ընտանիքի անդամներուն դիմանկարները եւ թագաւորական ընտանիքի անդամներուն հետ սիրային յարաբերութիւններ ունեցած կիներու դիմանկարներ եւ աւելի համարձակ պատուաներ:

Թագուհին արուեստի գործերուն ընդհանուր պատասխանատուն լայտնած է, թէ 7000 պատուտ հաշուող հաւաքածոյին մեծամասնութիւնը կը ցուցնէ արքայական ընտանիքի մտերմիկ պահերը: Այս գեղանկարներուն շարքին է սիրահարուած վիճակով պատկերուած Վիքթորիա թագուհին գիմանկարը: Վիհաշուք եւ ժուժկալ թագուհի մը նկատուած Վիքթորիան, այլ պատուտ մը մէջ, կ'երեւի արձակ մագերով եւ փարթամ հագուստով, իսկ երրորդ գործի մը մէջ՝ իր նորածին մանչը գիեցնելու վիճակով:

Յայտապիլրին պատրաստութեան համար (որուն նկարահանումը պիտի արժէ շուրջ 2 միլիոն արղար), լուսանկարիչները շրջած են արքայական 6 սուների եւ նկարահանած՝ Ռամպուտի, Ռիպէնսի, Թիթիանի, Ռէյնուտի եւ Կէլնպարոյի նման աշխարհահռչակ գեղանկարիչներու քաղմահարիւր պրօքներ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

«ՄԻՋՆԱՐԱՐ – 5»

(արձակ)

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԾԻԱԾԱՆ

(բանաստեղծութիւններ)

ԼԻՐԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ)  
Տարեկան բաժնեգին

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին

40 Ամերիկեան տոլար

باكين  
 مجلة شهرية : ادبية فنية وعلمية  
 المدير المسؤول  
 السيد ارتين كارنيك قزانهجيان

•

PAKINE  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
 Dr. A. HAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ

Խմբագիր  
 ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրութեան անդամ  
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ:  
 Centre Culturel SHAGHZOYAN  
 Bourdj Hammoud — Liban

